



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1655

1656

1657

1658


4  
-12

2011

# ԱՆԻԾԵԱԼՆ

ՀԵՌՆԱԿ

\* \* \* ԱՐՐԱՅ




ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՅՈՐ ՉՈՐՈՐԴ

ՏԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԷՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏՀՏԷԱՆ



ԶՄԻՌՆԻԱ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԷԱՆ

1875

## ԱՆԻՇԵԱԼՆ



## ՄԱՍՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՄԵԾ ԹԱՏՐԸ. ՄԵԾ ՊԱԵՔԱՐԸ

Ա.

ԼՈՒԻԶ Ի ԲԱՐԻԶ

Լուիզին փախուստը՝ Նոր-Տափ մենաստանէն՝ չափազանց զարմանք պատճառեր էր թելվիկաց : Իր մաքսանենդներուն և աւազակներուն կողմէ վատ հուշակ առած լեռներու մէջէն ո՞վ կը խորհէր երթալ նորատի աղջիկ մը գողնալ : Ի՞նչպէս ճարպիկ Տընին իր մարդուն օձիքը ձգեր էր և չէր մտածեր՝ նուիրակին օգնութեամբ՝ ժուլիօն ձերբակալել՝ այն օրն որ Ալիէրպ ներկայանալուն՝ զիւրին էր կասկածիլ որ Լուիզի թաղստեան վայրն իրեն յայտնի էր : Այդ համբակ ոտիկանութեան գործ էր, և երկրի մը մէջ ուր անձնական ազատութիւն չկայ, ո՞վ պիտի մտածէր այս ձերբակալութեան արօրինաւորութեան վրայ :

Թելվիկները կատղեր էին : Քաջ զգացին թէ ինչ հետեանք կրնան ծագիլ յԵւրոպա՝ հառարակաց կարծեաց մէջ երբ իմա-

ցաւեր թէ Թաւրոյի քրոջ վանարդելութեան մէջ փոքր ՚ի շատէ մանակցութիւն ունեցեր են, մանաւանդ այն միջոցին որ պաղ- ղնական դատարաններն այս տեսակ վանարդելութեան դատերով կ'հնչէին . . . :

Թէզվիղները կ'վախնային մանաւանդ մտածելով թէ ինչ զայ- րոյթ պիտի դրդուէր Քրանսայի մէջ օրիորդ Գլավիէրի վանարդե- լութեան և աղատութեան պատմութիւնն երբ ինքն իր բերնով զայն պատմէր մանաւորապէս ժէզվիղաց թշնամի ընկերութեան մը մէջ: Աղատական լրագրութիւնն որ միշտ անյաղութեամբ կը փնտռէ այսպիսի լուրեր, որ անչափս անպատիւ են վերապատուե- լի հարց համար, այս վիպական արկածը՝ որ տասն և իններորդ դարու մէջ անհաւատալի կ'թուէր, պիտի հրատարակէին և բիւ- բառը ընթերցողներու զայն պիտի մեծարէին: Այս իրական վտանգ մ'էր, պէտք էր անոր առաջն առնուլ:

Օր մ'որ Լուիզ՝ Լուպերէն բաժնուէլէն ետև՝ երբ սա Հռոմ կ'երթար, Լիօն հասաւ՝ դեռ նորարոյժ, անկից Բարիզ անցնե- լու համար. բաւական զարմանք զգաց երբ իջած պանդոկին մէջ օտարական մ'իրեն մօտեցաւ. և յայտնեց թէ իրեն յետին ծայր կարեւոր բան մ'ունի հաղորդելու:

Լուիզի առաջին մտածմունքը թուաւ իր եղբօրը վրայ: Արդեօք կարող եղաւ դանել մէկն որ իր դժբաղդ քրոջ լուրեր հաղորդէ իր վրայ: կարելի է իսկ, ո՞ր երջանկութիւն, որ իր աղատութեան լուրերը պիտի տայ այս մարդուն բերնով: Աւստի այս մարդն ընդունեց:

— Չեզի հետ անկեղծօրէն պիտի խօսիմ, օրիորդ, ըսաւ նա, ես վերապատուելի ժէզվիղ հարց մէկ պատգամաւորն եմ: Բայց չեմ գար ձեզի իբրև թշնամի. ընդ հակառակն, ձեզի խաղաղու- թեան պայմաններ առաջարկելու կ'գամ:

— Խօսեցէք, պարոն:

— Պարտիմ նախ ձեզի բան մը հարցընել: Կ'կարծէք թէ վե- րապատուելի հարց մատ չունին \* \* \* կոմսուհւոյն ձեզի գէմ բրաժներուն մէջ անխորհուրդ եռանդեան մը ժամանակ:

— Բան մը չգիտեմ:

— Լաւ ուրեմն, օրիորդ, իմ անձնական նոյնպէս միաբանու- թեան պատուոյն վրայ կրնամ հաստատել որ այդ գէպն իմացան Սէնդ-Ալանտէնէն մեկնելէդ ութ օր ետքը:

— Ի՞նչ օղուտ ունի այդ ձեր ըսածն ինձի:

— Ահաւասիկ օղուտը. վասն զի հիմակ յօգուտ բարութեան, ուրիշ գայթակղութեանց առաջն առնելու համար, է՛հ, Աստուած իմ, արդէն շատ գայթակղութիւններ կան՝ չափազանց կարեւոր է անցելոյն վրայ քօղ մը նետել: Աերապատուելի հարք շատ հզօր են, անոնց մնասել դժուարին է, աղմուկ հանելով անոնց գէմ մարդ ոչ ինչ չափ հիր: Օրիորդ՝ հաւանական է որ ձեր ազնիւ սիրտը շատ կ'անդոնէ վրէժխնդրութիւն մը: Ասկից զատ՝ քրիս- տոնեայ աղջիկ մ'էք և կարծեմ թէ ձեզ պիտի վերաւորեմ եթէ նախատանայ ներում տալ քարոզեմ: Եւ եթէ վերապատուելի հարց կողմէ նախատինք մ'եղաւ, զԱստուած վկայ կ'բունեմ, որ բոլորովին ակամայ է: Աւստի պաշտօն ունիմ հաշտարար միջոց մ'առաջարկել ձեզ: Բաւական է որ պարզապէս բերանացի խոս- տանաք, այնքան մեծ հաւատ ունիմ ձեր խօսքին վրայ, հանդար- տօրէն քաշուիլ որ և է փոքրիկ քաղաք մը, կամ լաւ ևս զիւղ մը, և անդ անցած դացածին վրայ յաւիտենական քօղ մը նե- տել: Աերապատուելի հարք կարծուածին չափ խտտապահանջ չեն: Չեր հօրաքեռ ձգած ցիկեանս եկամուտին հազար Փրանք ևս աւելցընելու յօժարամիտ կ'գանուին:

— Միթէ ձեր բոլոր առաջարկելիքն այդ էր:

— Բայց, օրիորդ, ամենէն էական բանը մոռցայ: Աերապա- տուելի հարք որ Հռոմի մէջ հզօր են, իրենց վրայ կ'առնուն եղ- բայրդ Հաւատաքննութեան բանտէն հանել տալու հօդը, ուր եր- բեմն կալանաւորն երկար տարիներ կ'մնայ, այս պայմանաւ որ քաղքին մէկ վանքը քաշուի և անդ հանդիստ իր կեանքն անցընէ:

— Պարոն, իմ եղբօրս անուան չեմ կրնար խոստում մը տալ: Իսկ իմ անձնականիս նկատմամբ՝ ժէզվիղաց կողմէն չեմ կամիր բան մ'ընդունիլ. լաւ ևս է թշուառութիւնն ու մահը քան թէ իմ յափշտակիչներուս բան մը պարտաւորիլը: Իսկ \* \* \* կոմսու- հւոյն գալով՝ նուիրական յիշատակ մ'անոր համար պահապան մ'է:

Իմ մօրս քարեկամուհին եղող անձին անունն երբէք բերանս չպիտի առնում :

— Լաւ մտածեցէք , օրիորդ , կարելի է վերջէն զՂՁաք որ ժէզվիդաց միջնորդութիւնը մերժեցիք 'ի նպաստ ձեր եղբօրը :

— Այդ բանն Ատուծոյ կ'իթողում : Երթաք բարեաւ , պարոն : Այս խօսքն այնպիսի ձայնով մ'արտասանեց Լուիզ որ պատգամաւորը չհամարձակեցաւ խօսակցութիւնը շարունակելու :

Գործակատարը քաշուեցաւ : Տընին էր այն որ' Իտալիայէն 'ի դարձին՝ և ժէզվիդաց զօրապետին կողմէ՛ զաղտնի հրամաններ առած՝ յաջողեր էր Լուիզի տեղը դտնել Լան-լը-Պուրիի զիւղաքաղաքին մէջ :

Արդ Լուիզ քաջ հասկընալով ժէզվիդաց ոստիկանական ճարտարութիւնը , դիտեց որ այս մարդն իրմէ չէր բաժնուեր : Այսպարանը դանուեցաւ նա և օրիորդին հետ կառախումբը մտաւ այն օրն որ նա Բարիզ կ'երթար : Մինակ ամօթխածութիւնը չներեց իրեն երթալ նոյն կառքին մէջ նստիլ :

Երբ Լուիզ՝ կառք մը բռնեց որպէս զի Կրընէլ-Սէն-Ժէրմէնի փողոցը՝ պանդոկ մը իջնէ , Տընի կառքով իրեն ետեւէն կ'երթար : Հետեւեալ օրը նա սենեակ մը փնտուեց և բնակեցաւ : Ահա ժամ ետքը՝ ժէզվիդներն իմացան որ օրիորդ Քլավիէր Պարուէր փողոցը թիւ 5 տունը կ'բնակէր :

Այս տունը հանդարտ ու լուին էր . երբեմն քսան ժամու մէջ կառք մը չանցնիր Պարուէր փողոցէն որ մաքուր , հովասուն , բաւական լայն էր , սալարկներ ունէր , բայց փողոցին վրայ նայող քանի մը տուներու ճշմարիտ առանձնութիւն մ'է աղմկալի Բարիզին ծոցը . վերաւոր հողիներու սահմանեալ ապաւէն մ'ուր կ'զան աշխարհէս հետու ապրելու , խորհողներու՝ որ պէտք ունին առանձնութեան , փախստական սիրահարներու՝ որ նայուածքէ կ'երկնչին :

Օրիորդ Քլավիէրի նստած տունն երկու մաս ունէր . մին փողոցին վրայ կ'նայէր կառադռնով մը , ոնդ կ'դտնուի գոնապաւնին օթեակը . միւսը սալարկեայ փոքրիկ դաւթէ մ'անդին՝ տխուր և անշնորհ , և չունէր աչաց ախորժեղի բան մը , ոչ կապոյտ ան-

թառամ՝ ծաղիկ , ոչ սրածե տերեւերով քանի մը հիրիկ , ոչ խոնարհ շահպարակ մ'որ դարնան առաջին օրերն իր ոսկեղոյն բաժակները բանայ :

Լուիզի բնակարանն իրեն պէս պարզ էր և իր համեստ հարստութեան համաձայն : Մտից կողմն երկու ոտք քառակուսի բակ մը , սրահիկ մը , երկու խուց , մին բացակայ եղբօր համար — երբ մարդ սիրէ միշտ կ'յուսայ — միւսն իրեն համար . ասկից զատ՝ դրան դիմացը՝ փոքրիկ խորշ մը՝ որ խոհանոց կ'կոչուէր աւելաբանութեամբ : Բոլորն ալ չորրորդ դստիկոնը կ'դտնուէր :

Արդարև՝ դողարիկ մաքրութիւն մը կ'տիրէր անդ , և եթէ եղբայրն ալ անդ լինէր՝ Լուիզ մը պիտի դառնար՝ Սէնդ-Յվանտէնի երիցատան մօտ :

Լուիզ իրկունը կ'դառնար տունն երջանիկ կամ տրտում . երջանիկ եթէ 'ի նպաստ իր եղբօրը կառավարութեան արդահատութիւնը դրողեր էր , տրտում՝ եթէ յաջողութիւն մը չէր գտած : Այն օրն որ պաշտօնապէս իմացեր էր թէ դիւանադիտական հեռագիր մը կ'պատուիրէր դեսպանին ծուլիօն պահանջելու , խեղճ օրիորդը ծուր դրեր էր . և իր անշուք բնակարանն իրեն համար լուսաւորուէր էր որպէս թէ Ալհամպրայի մէկ մոզական սրահը դարձած լինէր :

Բարձրագիր անձերէն մին , որոց մէջ Լուիզ պաշտպաններ շահելու աշխատեց էր , Պարոնուհի Գիւրապէլ կ'դտնուէր , որ կայսրուհւոյն մէկ սրտակից քարեկամուհին լինելով՝ յատուկ շնորհ մը կ'վայելէր արքունիքը , թէև պաշտօնով մը կապուած չէր անդ : Իր մօրը կողմէ՝ Սէն-Ժէրմէնի մեծատոհմ գերդաստանի մը վերաբերելուն՝ այս ընկերութեան մէջ շատ յարաբերութիւններ ունէր : Հետեւապէս պարոնուհին աշխարհիս մէջ սքանչելի ցիրք և ազդեցութիւն ունէր :

Լուիզի անունն իրեն անձանօթ չէր : Տիկին Գիւրապէլ թնդանօթածիզ զօրաց զօրապետի մը դուստրն էր , և բաւական սերտ մտերմութիւն ունէր Քլավիէրի ընտանեաց հետ : Մեծ արժանեաց տէր տիկին մ'էր : Երկու հազուագիւտ ձիրք ունէր՝ նրբամտութիւն և քարեսրտութիւն : Լուիզին վշտաց սաստիկ մասնակից ե-

դաւ և արտաքին գործոց պաշտօնէին ուղղեալ ջերմագին յանձնա-  
րարական գիրեր տուաւ անոր :

Լուիզ չարաչար չգործածեց պատուական Գիւրապէլ պարոնու-  
հւոյն իրեն ցոյց տուած սիրալիր ընդունելութիւնը : Երբեմնակի  
այցելութիւններ՝ զոր մեծ տիկինը միշտ կարճատե կ'զտնէր, չնա-  
շելով այն զուարճութեանց և գործոց մըրկին որու մէջ կ'ապ-  
րէր, այս զերար հասկընալու արժանի երկու կանանց մէջ՝ մտեր-  
մութեան զօր մը հաստատեցին՝ որ Լուիզին համար զօրաւոր մխի-  
թարութիւն մ'եղաւ՝ իր առանձնութեան ժամանակ՝ մեծ քաղքին  
մէջ : Պարոնուհւոյն աղյեցութեան վրայ գրեր էր մանաւանդ Լուիզ  
իր եղբորն աղատութեան յոյսերը, և պարոնուհւոյն՝ որ իր նորա-  
տի բարեկամուհւոյն վրայ վիպասաններու, բանահիւսններու և նկա-  
րիչներու երազած հոգւոյ և մարմնոյ յեղեցկութեան խտեղանքը  
դտեր էր՝ օր ըստ օրէ անոր կ'կապուէր և ոչ հոգ ոչ բարեխօ-  
սութիւն կ'զլանար երբոր ժուլիօյի օգտին համար քոյրն իրեն կը  
գիմէր :

Տիկին Գիւրապէլ թէ արբունեաց և թէ ընկերութեանց մէջ  
պատմեց՝ հետաքրքրաշարժ պարագաներով՝ Լուիզի վանաբոցելու-  
թեան վէպը, ժուլիօյի ձեռք թատերական աղատումը, Փօրքա-  
տիի Նօրր-Տամր գասին վանդակները խորտակելով :

Լուիզ և ժուլիօ ժամանակին գիւցազունները դարձան այս բա-  
քիցեան աշխարհին մէջ որ այնքան կ'տենչայ նոր նոր բաներու :

Բ

ԱԶԵՏ ԵՐԿԻՐ

Իաքօմօն ինչ կերպով ժուլիօյի խուցը բանալու համար բա-  
նալին ճարեր էր : Այսպիսի բան մը Հռոմէ վաստ ուրիշ տեղեր  
չատ գժուարին պիտի լինէր : Բայց անդ՝ անկարելի բան մը չկայ :  
Իեւ անցածներս՝ պապական իշխանութեան քիթն տակ նշանաւոր

դատի մը թղթերը չգողցան : Զնդանի մը բանալին գտնելն ալ  
մեծ ճարպիկութիւն մը չէր :

Աւասիկ եղելութիւնը :

Հաւատաքննութեան բանտերուն զլխաւորը փետրուար երկուքի  
կուռոյն մէջ սպաննուեր էր : Անոր տեղն անցնողն էր Մօնդալտօի  
հին մաքսանենդներէն մին, որ այս արուեստին մէջ շլաջողելուն՝  
Հռոմ եկեր էր իր աւուր պարէնը ճարելու ծառայութիւն ընե-  
լով : Ալիգէրպի նուիրակին կողմէ յանձնարարական գիր ունէր,  
և ասոր վիպադրին շնորհիւ, Նիդոլօ Հաւատաքննութեան բանտա-  
պահի բարձր պաշտօնին հասեր էր : Այս իրաւ է որ Նիդոլօ  
ճշմարիտ Հերակլէս մ'էր, առիւծի նայուածքով մարդ մ'ու տաս-  
նապատիկ աւելի ահուելի քան որ պէտք էր անվնաս արարածներ  
պահպանելու համար՝ ինչպէս Աատարինէլլան, Ալիգէրպի զեր-  
բնատեսն ու բարի ծուլիօն :

Երբ Իաքօմօ համոզուեցաւ որ հռոմայեցի ոստիկանութեան մէջ  
ոչ ոք կասկածեր էր թէ ինք բանտի սոսկալի յարձակման մաս-  
նակից եղեր էր — վասն զի այն օրը, շինծու մօրուքի և ներ-  
կուած յօնից շնորհիւ, իր դերին յարմար կերպարան մ'աուեր  
էր — սկսաւ բանտին բոլորտիքը թափառել՝ որպէս զի նոյն վայ-  
րը լաւ մը քննէ : Սակայն այս բարձր պատերուն բոլորտիքը շրջիլ  
բաւական չէր, բաւական չէր տեսնել այն դռնակն ուր այնքան  
արիւթեամբ հրազէն պարպեր էր, պէտք էր ներս մտնել :

Աղոր օր՝ Իաքօմօ մեծ յանդգնութիւն գործածեց : Ուժգին զար-  
կաւ դռնակին՝ և բարձրադալիս, անխուով խնդրեց տեսնել բան-  
տապետը : Իր անունը տուաւ, ըսաւ թէ Ալիգէրպէն է, և հե-  
ռաւոր աղղական՝ տիկին Լօրա Տօնիի, որու Հաւատաքննութեան  
բանտերը գտնուին իմացեր էր :

Բանտապետը դռնակին առջև զանի ընդունեց և վերէն վար  
արձուի աչօք զանի չափեց :

— Տիկին Տօնին մարդու հետ գործ չունի, պատասխանեց նա  
նորեկին :

Յետոյ վրայ բերելով :

— Բայց Պապոս սաստա՞ չկայ — այս էր Պենետիկ ժ.Ձ.ի երդ-

ման ձևը , չղարմանանք ուրեմն եթէ Հաւատաքննութեան մէկ բան-  
տասպետը նոյն երդումը կ'զործածէր — քաջդ իմ , կ'երևի ինձ  
որ քեզ կ'ճանչեմ :

Իարթօն կարծեց թէ մատնուեցաւ . բայց առանց այլայլութիւն  
մը ցոյց տալու , անվրդով նայեցաւ այս մարդուն և սպասեց :

— Դո՛ւ Իարթօնն ես :

— Իսկ դո՛ւ , ո՞վ ես : Անշուշտ քեզ ուրիշ անդամ տեսած  
պիտի լինիմ :

— Նիդոլօ :

— Ուրեմն իրարու ձեռք սեղմենք . Վէդրալայի ընտիր ծաղիկ-  
ներն ենք :

Արդարեւ՝ իրենց երիտասարդութիւնը միասին անցուցեր էին :  
Միասին աշակերտեր էին մաքսանենդութեան ծանր արուեստին :  
Յետոյ զատուելով՝ իւրաքանչիւրն իր տաղանդը զործածեր և շատ  
տարիներէ 'ի վեր զերար չէին տեսեր :

Ուստի իբրև վաղեմի բարեկամներ իրարու հետ տեսակցեցան :  
Իարթօն բոլորովին երկիւղը փարատելով՝ յաշտպան լեզու մը  
զործածեց :

— Նիդոլօ , դու անշահ պաշտօն մը կ'վարես այս տեղ : Արո՞ղ .  
ուրիշ մարդիկ փականքի ներքե կ'պահես : Բայց դու ալ բանտի  
մէջ ես : Այս տեղ մարդ չէ կարող մտնել այնքան զիւրութեամբ  
որքան կարտինալի մը սենեակը : Մեր լեռները շատ աղւոր են :  
Ուրեմն արի երթանք միասին ազատ օդ շնչենք . դու գեղնած ես ,  
նիհար ես :

— Բայց ստակ կ'շահիմ :

— Լա՛ւ , թո՞ղ այդ բաները : Քեզ կին մը պիտի գտնեմ : Բա-  
րի և խոշոր կին մը քեզն փոքրիկ օժիտ մը պիտի բերէ , դու  
առանձին տուն տեղ պիտի ունենաս : Ես անպատճառ պիտի քա-  
չեմ հանեմ քեզ այս տեղէն :

— Դիւրին բան չէ , ես ապրուստս ապահովցուցած եմ այս  
տեղ : Առաջին օրերը բանտապետի պաշտօնը տաժանելի երեցաւ  
ինձ . և ասկից զատ՝ զարմանալի բան մ'երեցաւ ինձ , որ քանի  
քանի անդամ մազ մնաց բանտ պիտի մտնէի , բանտը փակուիլ

որպէս զի այնպիսի խեղճ մարդոց վրայ հսկեմ որ ճանձի մ'ան-  
դամ վնաս հասցընելու յանցանքը զործելու անկարող են : Հի-  
մակ՝ վարժեցայ : Բայց դարձեալ ի՞նչ ընեմ դաշտերու մէջ :

— Խաչ վկայ , մարդ ազատ է անդ :

— Ի՞նչ ըսեմ , Իարթօն : Մարդս եղական կենդանի մ'է : Ես  
այս ստրկութեան վարժեցայ :

— Լաւ ուրեմն , քանի որ դու իմ բարեկամն ես , խօսէ ինձ  
այն խեղճ Լօրայի վրայ , որ մեր լեռներու մէջ մեծ անուն հա-  
նեց : Տեսայ անոր մեկնիլը խել մը սատանաներու հետ :

— Այո՛ , պատիւ ունիմ այս շնորհալի տիկնոջ ծառայել : Սոս-  
կալի մարդարէութիւններ կ'ընէ ինձ : Գիտես որ , իր միակ տենչն  
է մարդարէանալ . դու զիտես այս բանս , քանի որ իր ազգականն  
ես : Ամէն անդամուն որ իր կերակուրն իրեն կ'տանիմ՝ խել մը  
բաներ կ'թափէ և ես մտիկ չեմ ըներ : Խօսքը մեր մէջ , կարծեմ  
թէ քիչ մը փախուկ է :

— Անոր հետ զաղղիացի մ'ալ կար . միթէ հո՞ն է :

— Ա՛հ , այո՛ , քահանայ մը : Ե՛հ , այն գառնուկի պէս հեղ է :

— Ի՞նչ է յանցանքը :

— Ո՛հ , իր յանցանքը , մարդ այս տեղ յանցանքի համար  
չնետուիր : Այս խեղճ պատանին՝ պարկեշտ մարդ մ'է անտարա-  
կոյս : Բայց Հուովի մէջ շատ խիստ ենք մէկ քանի բաներու համար :

— Միթէ դատաստան չըրին :

— Ա՛հ , ի՞նչ կ'ըսես , դատաստան : Տեղ մը շուտ դատաս-  
տան չլինիր և մանաւանդ այս տեղ :

Եւ ապա ծանր ձայնով մը յարեց .

— Ահա , Իարթօն , տես վարն իր զնդանը , առաջինն է ան-  
կիւնը . երկրորդը Լօրա տիկնոջն է :

Իարթօն զնդանին դիպքը քննեց և բակին վրայ նայող պատին  
բարձրութիւնն աչքովը չափեց :

— Վ'երևի ինձ որ վայրագութիւն պատէն դիւրաւ վեր կ'ելուի :

— Վեր ելնէ՛լ . վայ , դու խենթ ես : Վայրագութիւն աստ  
զարդի համար է : Նախ պէտք է զնդանէն դուրս ելնել . արդ  
մեր կալանաւորներն երբէք դուրս չեն ելներ :

— Եւ ոչ իսկ օգ ծծելու համար :

— Ո՛չ : Ա՛րեւի թէ պէտք չունին ծծելու : Ա՛տենես , Իաքօմօ , Հաւատաքննութեան երբեմն ունեցած բանտերուն չեն նմանիր ասոնք : 1848ին տեսայ : Այս տեղ ամէն ինչ առ ժամանակեայ է : Երբ մի անգամ այս անիծեալ դաղղեացիներէն աղատինք , մեր պալատը պիտի երթանք և մեր փոքրիկ աղւոր ստորերկրեայ զնդանները պիտի բռնենք : Այս տեղ չուղեցին ծախս ընել , վասն զի շատ երկար չպիտի տեէ մեր արդի բնակութիւնը : Նոր դռներ և զօրաւոր փականք , այս միայն պէտք էր : Եւ կ'նայիս որ այս փականքը նոր են :

— Այո՛ , եթէ բանալիներէն դատեմ :

Եւ՛ այս պահուս՛ Իաքօմօ սկսեր էր նայիլ ակիշէ մը կախուած բանալիները՝ Նիդոլօի նեղ և ցած սենեկին մէջ :

— Կրո՛ղ , այո՛ , ահադին են այս բանալիները : Մի՛թէ ամէն խցիկ իր յատուկ բանալի՛ն ունի :

— Ա՛հ , ո՛չ : Աւասիկ առաջին դաւթին զննդաններուն բանալին . տասն երկու զնդան կ'բանայ :

Եւ Նիդոլօ իր բարեկամին կ'ցուցնէր ամէն մէկ դաւթի բանալիները :

Այս արշաւանքին ատեն՝ Իաքօմօ՝ որ հետազննին աչք մ'ունէր , ամէն մաքսանենդներուն պէս՝ առաջին բակին բանալին զններ էր , և զարմանալի արագութեամբ իր ձեռքն ունեցած կակուղ մամի կտորի մը վրայ գրոշմեր էր : Ապա քիչ մ'ատեն ևս բանտապահին հետ խօսեցաւ , մեծ ազատամտութեամբ զանի յորդորեց՝ այլ ՚ի զուր , որ իր արուեստը փոխէ , թէ և բնաւ փոյթը չէր այս բանը , և դուրս ելաւ ըսելով .

— Մնաս բարեաւ , Նիդոլօ , Աէդրալա չգացած պիտի գամ վերստին քեզի հետ խօսակցելու : Մնաս բարեաւ , կ'յուսամ :

Բանտէն ելնելէն ետեւ՝ Իաքօմօ դարբնի մը խանութը դացեր էր : Անոր պատմութիւն մը հնարեր էր , ինքզինք Սան-Քլարօի դքսին բարապան կոչեր էր , շտեմարանին բանալին կորուսեր էր , որու մէջ դքսին ընտիր դինին կ'գտնուէր , չէր կամեր որ դուքսն իր անհոգութիւնն իմանայ : Գործաւորին ցոյց տուեր էր բանա-

լինն ձեւը : Որովհետեւ Իաքօմօ ստատօրէն վճարելու խօսք տուաւ , դարբինը բնաւ կասկած չունեցաւ այս պատմութեան ստուգութեան վրայ : Ի հարկէ աւելի դժուարին է որսալ դարբին մը քան թէ հոռիական զիւանատան որ և է պաշտօնաւոր մը : Բայց դարձեալ ստակի խնդիր մ'էր այս , և ստակէ զուրկ չէր Իաքօմօն : Հետեւեալ օրն Իաքօմօ եկաւ բանալին առնլու :

Վճարելէն ետեւ՝ դուրս ելնելու վրայ էր , երբ յանկարծ միտքը փոխելով՝ դարձաւ և դարբնին ըսաւ .

— Եթէ երբէք այս բանալին չյարմարի , կ'հաճիս տալ ինձ Բաշա՛ն մը որպէս զի դործածեմ :

Դարբինը նախ ո՛չ ըսեր էր : Բայց Իաքօմօ իր դրպանէն քանի մը սկուտ հանեց , այն ատեն դարբնին վերջին կասկածները ցրուեցան , և Իաքօմօ բանալին ու Բաշա՛նն առած՝ ելաւ գնաց այն արշաւանքն ընելու որու վախճանն արդէն տեսանք :

Ժուլիօ՝ փողոցն ընկնելով բոլորովին շուարած , որպէս թէ երազէ մը կ'արթննար , ուժգին ցնցուեր էր Իաքօմօի երկու բարեկամաց ձեռօք , որ օձուտ փոքրիկ ձամբէ մը զարնելով շուտ ընդ փոյթ՝ ժամանակին խոյս տուին : Ժուլիօն քաշքշելով տարին քան թէ քալեցրնելով մինչև քաղքին դուռն ուր ձիերը պատրաստ կեցած էին : Պահ մը սոսկալի վարանման մէջ մնացին : Ո՛ւր էր Իաքօմօն . պէտք էր սպասել անոր : Պատին վրայ ելնելու համար ելնարանը չէր դործածած : Արդեօք ներսի կողմէն բռնուե՞ր էր թէ ոչ հնարքով մը խոյս տուեր էր : Արդեօք կուտելու ատեն սպաննուե՞ր էր : Ժուլիօ իր ազատարարին սպասել կ'ուզէր . բայց միւս երկու մարդիկ՝ որ աւելի փորձառու էին , արագօրէն մեկնելու որոշումն ըրին : Հռոմի բոլոր ոստիկաններն իրենց ետեւէն պիտի սնդէին : Չափէ դուրս անխոհեմութիւն պիտի լինէր անդ աւելի երկար ժամանակ մնալ :

Ժուլիօյի երկու մարդիկ՝ առաջնորդի մը հետ՝ Ռօքու-Սան-Ստեֆանօի ձամբան բռնեցին , Ապէնինեան լերանց մէջ դանուող առաջին աւանը , Սուպիաքօէն անդին՝ Նափոլիի սահմանագլխուն վրայ : Պապական ոստիկանները կարող չպիտի լինէին անոնց հասնիլ :

Լուսէր, առջի օրէն՝ Ռօքա-Սան-Ստեֆանօ կ'սպասէր տենդային անհամբերութեամբ. այս նոր փորձին արդիւնքը և այս փորձն ալ վերջինն էր զոր իրեն դրամական նեղ վիճակը՝ քաջասիրտ Իաքօմօի օգնութեամբ կարող եղած էր 'ի դործ գնել:

Քանի մեծ եղաւ ժուլիօյի զարմանքն երբ Նափուլիի մէկ աւանը մտնելով առաջին լսած ձայնը դաղղիացիի մը ձայնն էր, որ իրեն պոռայ. Պարոն ժուլիօ: Բոլոր ճամբորդութեան ժամանակ իր երկու ընկերներն ուրիշ տեղեկութիւններ չէին կրցած իրեն տալու եթէ ոչ Սաբինա պանդուխտի մէջ պատահած իրողութեան պատմութիւնը: Այս երկու կտրիճներն 'ի սկզբան կարծեր էին միամտաբար թէ իրենց բարեկամն աղջիկ մ'առուանդելու համար զիրենք բռնած էր: Այսպիսի արշաւանքներ ընելու վարժած էին, բայց Հասարակութեան Բանակն կալանաւոր մը յափշտակել շատ ծանր դործ էր, և այս դործողութիւնը դիւրաւ յանձն չպիտի առնուին՝ եթէ Իաքօմօ, քաջ գիտնալով թէ այս անունը միայն ինչ սարսափ կ'ազդէ հոռոմայեցի ժողովրդեան, այս մասին լուր թիւն պահած չլինէր: Անկից առաջ պատահած յանդուգն ձեռնարկութենէ տեղեկ չէին, և անտարակոյս Լուսէրի անունը բնաւ արտասանած չպիտի լինէին:

Ուստի հանելուկ մ'էր այս ժուլիօյի համար: Գաղղիացին առաջ անցաւ, արեղային ձեռքը սեղմեց սրտաթունտ ուրախութեամբ: Ժուլիօ մութէն չէր կարող այս նոր անձին կերպարանն որոշել և իր ձայնը՝ այլայլութենէ փոխուած լինելով՝ իրեն յիշողութենէ ելեր էր:

— Ես Լուսէրն եմ, այն անձը զոր 'ի Սէնդ-Ավանտէն աղատեցիր: Հոռոմ եկայ այս պարտքս վճարելու: Բայց ո՞ր է Իաքօմօն:

Ժուլիօ ամէն բան հասկըցաւ: Լուսէր իր ազատարարն էր:

ԴԱՐՁԵԱԼ ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Ժուլիօ, որ այնչափ ատեն մարդոց հաղորդակցութենէ զրկուած էր, անհնարին անհամբերութեամբ կ'սպասէր որ Լուսէր այս անցած դարձած տարօրինակ դէպքերու բացատրութիւնն իրեն տայ, որ ասոնց մէջ մեծ դեր խաղացեր էր, և ամէն բանէ աւելի իր քրոջ վիճակն իմանալ կ'ուզէր:

Լուսէր պատմեց անոր Լուիզին սահմանադրուին անվնաս հասնիլը, Սափուա գալը և Լան-լը-Պուրկի մէջ ունեցած սրտաշարժ տեսակցութիւնը. վերջապէս Հոռոմը մէջ ըրած ջանքն և դաղղիական դեսպանին անարդիւն ճգունքը պատկան կառավարութեան մօտ:

Փետրվարի 2ին պատահած հրացանաձուլութիւնն անոր մեկնեց. Իաքօմօ երկու անգամ իր ազատարարն եղած էր, և դժբաղդաբար չէին կարող տարակուսիլ որ իր անձնութեան զոհ դացած չլինէր բանտապետին հետ ունեցած կուռոյն մէջ:

Երկու գաղղիացի քահանայք վեհանաձն ընդունելու թիւն մը գտան Ալէլէզա վերապատուելի հօր մօտ, որ Ռօքա-Սան-Ստեֆանօի վանոց գէտն էր: Այս քահանան ազատական դաղափարներ ունէր և վերին կղերին յետադիմական կարծեաց զիմադրելու արիութիւնը ցոյց տուած էր:

Ծանր տենդ մը շատ ատենէ 'ի վեր ժուլիօն կ'տառապեցընէր: Աղատ կենաց, լեռներու մաքուր օդին, ամենօրեայ կրթութեան վարժած մարդը յանկարծ՝ վայրի կենդանիի մը պէս՝ ինքզինքը դտաւ նեղ բնակարան մ'որու օդն երբէք չէր նորոգուեր, և այն տեղ քիչ մը շարժելու համար հազիւ կարելի էր քանի մը քայլ առնուլ: Տարաբաղդ ժուլիօն բոլորովին անձանտ լմարդ մը դարձեր էր: Անոր առոյգ ձակատը խորշոմեր էր, իր մաղեքը ճերմկեր

էին և բոլոր մարմինը գրեթէ հլուծեր էր, այն տունկին նման որ ժամանակ մը ջերմութենէ և լուսէ զուրկ կ'մնայ: Հաւատաքննութեան ատենը ծուլիօն բռներ էր երբ նա ուժեղ և կայտառ էր, վեհանձն մաքսանեցին ձեռօք բացուած զնդանն ազատ կ'արձակէր զանի գրեթէ ծերունի մը:

Լուսէր՝ Լան-լը-Պուրկէն մեկնելէն և Հոռոմ գալէն առաջ Լուիլի հետ խօսքը մէկ ըրեր էր ամէն շաբաթ կանոնաւոր կերպով անոր գրելու: Իր խոստման հաւատարիմ մնացեր էր: Ժուլիօյի բարեկամին դիրքը հինգշաբթի օր կ'հասնէին Հոռոմէն 'ի Բարիզ: Ի՞նչ ուրախութիւն էր Լուիլին համար երբ Ժան-Ժաք-Ռուսօյի փողոցը զնալով նամակ մը կ'դնէր թղթատունն որ իրեն գէթ անձնուիրութեան գործ մը կ'սլատմէր, եթէ անմիջական ազատութեան յոյս մը չէր հաղորդեր:

Լուսէրի սձը կիկերոնեան չէր: Անոր մէջ քիչ մը դիւղացիի, զինուորի և եկեղեցականի գոյն կար: Կամակիւն ընդհանուր հովը զինուորական էր, գաղափարներուն հիմը լաւ: Ահա անոր մէջ կ'երևէր լեռնային:

Լուսէր բնաւ չէր իմացած 'ի Հոռոմ՝ որ իր բոլոր նամակները սրագական ոստիկանութեան կողմէ կ'կարգացուէին: Լուիլ հասկըցեր էր այս բանս՝ պահարաններուն քիչ շատ պատուածքէն, և գիւրին էր դիտել որ Լուսէրի կնիքին տեղ շինձու կնիք մը կը կոխէին: Այս սրագական կառավարութեան ներքե՝ որ այնքան աւոյշ, հայրական անուն ունի, ընտանեաց գաղանիք, սրտի գաղտնիք, մինչև անգամ խղճի աւելի նուիրական գաղտնիքը կ'սլոճուին կոշտ ոստիկանութեան մը ձեռօք, որոնք կ'վճարուին երկրիս վրայ Քրիստոսի փոխանորդը համարուած մարդուն կողմէ: Ոչ ոք այս լրտեսութենէ կ'սլոճի և գաղղիական զօրաց 'ի Հոռոմ՝ հաստատութենէ, մինչև այս վերջին ժամանակները, նոյն իսկ մեր զօրաց հրամայող բարձր սպայից կանանց նամակները պէտք է որ աննշան լինին եթէ չուզուիր որ Անդոնէլի կարտինալը Հոռոմէն գրուածները չկրկնէ ամենէն գաղտնի մտերմութեան մէջ: Ժամանակակից պատմութեան մէկ նշանաւոր պարագայ մ'է այս որ պէտք է անտես չարնել որպէս զի իմացուի թէ քաղաքակրթութեան

որ աստիճանին մէջ կ'գտնուի այն իշխանութիւնը զոր մշտնջենաւորելու կ'փափաքին ոմանք նոր Հոռոմի մէջ:

Լուսէր բնաւ մտքէն չէր անցըներ որ իր նամակաց օրինակները Շանսլէրի եպիսկոպոսարանը կ'ղրկուէին և թէ իրեն դէմ ծանր ամբաստանութեան նիւթ կ'գառնային: Գիւրին է գուշակել որ իր ազատ և աներկիւղ ոճով այնքան վտանգաւոր բաներ կը գրէր որ իր նախկին գործերով նուազ կասկածելի մարդ մ'անգամ կրնար 'ի կորուստ մատնել:

Աւասիկ իր նամակներէն մին՝ որ Հոռոմի նկատմամբ շատ գովասանական չէն, և որ քայանայապետի ոստիկանութեան կողմէ կարգացուեցաւ:

«Գիտեն արդեօք, սիրելի բարեկամդ իմ, Լան-լը-Պուրկի թեմին առաջին երէցը, որ թէև երկրորդ երէց մ'իր գլխաւորին մեծարանք պարտաւոր է նուիրապետութեան կարգին մէջ, տղու մը պէս ծիծաղք բռնեց նամակդ կարգալու ատենս: Ո՛ր իմ սիրական զուակս, ինչպէս դիւրին է տեսնել որ գեւ դպրոցին գրասեղանէն կ'երևես, որ տակաւին լի են այն պատրանօք որ մի առ մի պիտի փարատին և այս ալ շատ շուտով: Վասն զի ուղիղ սիրտ և շատ խելք ունիս: Կ'փափաքիմ քեզի համար որ քայքայման օրը՝ հաւատքդ միւս բաներուն հետ չկորսնցընես:

«Հաւատ ինձ, հոռոմէական վիճակները չգացի մի միայն Պապին ջորին համբուրելու համար: Ուրիշ նպատակ մ'ունէի (ուրիշ անգամ պիտի պատմեմ քեզի այս բանս): Այս նպատակիս հասնելու մօտ եմ: Ինձի քանի մ'օր ևս պէտք է, և այս միջոցին գործ չունիմ: Արդ իմինիս պէս անհամբեր բնաւորութեան համար՝ անգործութիւնը տանջանք մ'է, և այս տանջանքը մեղմելու ու այս ակնկալութեան ժամերն անցընելու համար ուրիշ լաւագոյն բան մը չունիմ ընելու եթէ ոչ բարեկամի մը գրել:

«Ինձի բազմաթիւ խնդիրներ կ'առաջարկես, իզնէ այնքան բացատրութիւններ կ'խնդրես որ եթէ այս դրովս ամենուն պատասխանելու ելնեմ՝ հատոր մը լեցընել պէտք պիտի լինի: Սակայն գիրս կարելի եղածին չափ համառօտ ընելու պիտի ջանամ:

«Ա՛րքան ինձ որ հռոմէական հիմնարկութիւններն աւելի զերազանց են քան թէ միւս ժողովրդոց հիմնարկութիւնները : Ա՛շուր հաւորեն զիս որ այնպիսի երկիր մը կ'գտնուիմ, ուր հասարակաց բարքը, եկեղեցւոյ զերապանձ ուղղութեան հետեւելով՝ աւելի ստէպ և օր ըստ օրէ մօտեցած են Աւետարանի երկնային զաղափարին :

«Գիտեմ թէ ուսկից առած ես այս աղւոր խօսքը, սիրելիդ իմ երէց, Աւէյօի մէջէն : Այդ լաւ նմանութիւն մ'է բայց ճիշտ չէ :

«Անտարակոյս կղերն է որ օրինադրեց այս ժողովուրդը, կղերն է որ զանի դաստիարակելու պաշտօնն իր վրայ կ'առնու : Մարդն իր ստացուածքն է ծննդեան միջոցին (անոր ստացուածքն է ստէպ ուրիշ շատ իրաւամբ, այս զաղտնի կ'ըսեմ քեզի) զանի կ'մկրտէ և միայն զերեզմանին դուռն անորմէ կ'հեռանայ : Չկայ ընտանիք մ'որ իր անդամներէն շատերը քահանայ կամ եղբայր չլինին և Հռոմի փողոցներուն մէջ վխտացող վանականներն ու արեղաները տեսնողը պիտի կարծէ բնապէս որ Քրիստոսի կրօնը բնաւ տեղ մ'այնքան լաւ չեն վարդապետեր հետեւապէս այնքան լաւ չեն պահեր որքան յաւիտենական քաղաքը :

«Լաւ, իմ սիրելի արեղաս, որպէս զի լաւ հասկընաս թէ ի՞նչ կերպով հասարակաց բարքը Աւետարանի երկնային խորհրդանշանն էր Թոմէան, զիտցիր որ իրենց քակտումէն առաջ՝ հռոմէական վիճակաց մէջ չորս հինգ մարդասպանութիւններ կ'լինէին, և ժողովուրդը չորս միլիօնի կ'հասնէր : Ի Ֆրանսա՝ երսուն հինգ միլիօն բնակիչներով՝ օրը մէկ սպանութիւն անգամ չէր պատահեր : Եւ սակայն Նափոլէօնեան օրինադրով կառավարուելու և համալսարան մ'ու աշխարհական ուսուցիչներ ունենալու դժբաղդութիւնն ունինք :

«Այստեղում որ, մինչդեռ Ֆրանսայի մէջ սպանութիւն մը պծողալի բան մ'է, Իտալիոյ մէջ, միայն թէ սպաննիչը քահանայի կամ վանականի դէմ չշարժէ իր զանակը, կ'ըսեն թէ այն մարդասպանը չարկութեան ժամ մ'ունեցեր է և այլ ոչ ինչ : Հարիւր մարդասպաններէ արդարութեան ձեռքը միայն քսանը կ'անցնի : Բնաւ վկաններ չկան այս բաներու համար : Ի՞նչ օգուտ, այսպիսի չնչին բանով մը պարկեշտ մարդու մ'անիրաւութիւն մը

ըրած չեն լինիր : Գողնալու համար չէ որ կ'սպաննեն, այլ վրէժ լուծելու, և կ'երևի թէ Աւետարանի երկնային խորհրդանշանն այս բաներու մէջ գործ չունի :

«Պարտիմ ըսել որ զողերը նուազ յարգ ունին յիտալիա քան թէ մարդասպանները : Ժողովուրդն ուրիշ ստացուածոց համար կարգէ դուրս եռանդ չունի : Միայն արահետներու և՛ առանց բացառութեան՝ ամէն վարչային իշխանութեանց մէջ կ'զողնան :

«Աչքդ մեծ մեծ կ'բանաս, իմ սիրելի երէցս, և կ'սկսես հատալ թէ որչափ որ հռոմէական վիճակաց բնակիչներն էկեղեցւոյ անօթական ուսուցիչներն են և չեն կարողար ոչ Գառը ոչ Աշխարհի կարգէ լրացնելը, դարձեալ մանր սուրբեր չեն : Հաւատալի եղիւր որ Աստուծոյ միւս պատուիրանները նոյն թեթեւութեամբ կ'զործադրուին որչափ մի քողմար և մի սպանանէր պատուէրները : Գիտես ի՞նչ է ասոր պատճառը, պատճառն այս է որ աստ՝ բաւական է միայն որ կաթոլիկներ գտնուին և հատան ոչ միայն Պապին անսխալականութեան ՚ի մարմնաւորս և ՚ի հողեւորս, այլ նաև եղևարց, վերջէն՝ եթէ կարենան՝ քրիստոնեայ պիտի լինին :

«Միթէ կ'երեւակայե՞ս որ այս տեղ Աւետարան կ'բարոզեն : Օ՛հ անդր, որո՞ւ փոյթն է Աւետարանը : Այնչափ հրաշքներ կան պատմելու, այնչափ հրաշազործ տիրամայրներ կան տօնելու, այնչափ հին և նոր սուրբեր հուշակելու որ ուրիշ բանի զբաղելու ժամանակ չունին : Ուրիշ բան է Յիսուս Քրիստոս և իր Աւետարանը :

«Իսկ եկեղեցւոյ պատուիրանաց, իսկ արտաքին արարողութեանց դալով՝ անտարակոյս հռոմայեցիք աւելի հրահանգիչ են քան զաղղեացիք : Պապին հպատակաց մէջ՝ երեք մասն աւելի զայթակղութիւն կ'զգան երբ տեսնեն որ պահք օր իրենց զբացիներէն մին վառելի թե մը կ'ուտէ քան թէ երբ տեսնեն որ թշնամոյն զանակի հարուած մը կ'տայ : Այս վերջին պարագային մէջ՝ անոր կ'օգնեն իսկ որ Պապին փատուորներէն զանի ազատեն, առաջին պարագային մէջ՝ Հաւատաքննութեան ատենին զանի մատնելու պատրաստ պիտի դանուին, վասն զի քաջ զիտեն որ հռոմէական վիճակաց եպիսկոպոսութիւնը, 1855ին ՚ի Լօրէէօ գումարուելով՝ հրովարտակ մը հրատարակեց որով մանր կ'նկարա-



արեան յիշատակներ միտքս կ'ըրէ : Այլ սակայն Պաշտօնի ժողովին (Convention) մարդիկ հաւատաքննութեան ընդօրինակողներն եղան , և կասկածելիներու օրէնքը հաւատաքննութեան հրովարտակներուն մօտ շատ մեղմ են : Այն չէր հրամայեր տղոց և կանանց որ իրենց հայրերն ու ամուսինները մատնեն՝ մահու սպառնալեօք , և սակայն հաւատաքննութիւնը կ'հրամայէր :

«Սէն-Տընի գերեզմանաց սոսկալի սրբապղծութիւնը դարձեալ ընդօրինակութիւն մ'է : Հաւատաքննիչ վանականները գերեզմանները բանալ տալով՝ հերետիկոսներուն զիակները ճամբաները կը նետէին : Իշխանաց ոսկորտիրը , իրենց կենդանութեան ժամանակ անուղղափառ վարդապետութիւններ դաւանելուն համար չարագուեցան . ըստ կարդի գաշնաւորականք ալ թաղաւորաց մոխիրները , ազատութեան այս մեծ հերետիկոսները հովին նետեցին : Պաշտօնի ժողովը մեր փառայեղ յեղափոխութեան աղտն է , հաւատաքննութիւնը կաթօլիկութեան աղտն է , բայց աւելի նողկալի , շատ աւելի արկնալի աղտ մը : Քաղաքական սարսափն երկու տարի տևեց . հաւատաքննական սարսափը դրեթէ հինգ դար տևեց :

«Իսկ պաշտաման արարողութեանց դալով՝ որոց վրայ կ'խօսիս ինձ , իրօք շատ դեղեցիկ են 'ի Հռոմ : Բայց ասոնց մէջն ալ ուղիղ բանին հակառակ ձևեր կ'տեսնեմ : Այս շքեղութիւններն աւելի թատերական են քան թէ կրօնական : Պապը վարդապետական աթոռին վրայ՝ ամպհովանիի մը ներքե՛ երբ մարդիկները կ'կրեն՝ հնդկային կուռքի մը պէս կ'երևի ինձ : Հետաքրքրութեան զգացում մը կայ իրաւ , բայց քրիստոնէական զգացումը մութ կ'մնայ : Ի՞նչպէս կարելի է Գալիլեացի ձկնորսին յաջորդը տեսնել այն պապին վրայ :

«Պապն իրապէս մեծ է երբ Հռոմի Ս. Պետրոսի պատշգամբին վրայ կանգուն՝ քաղաքն ու աշխարհը կ'օրհնէ : Անդ՝ արդարև կաթօլիկ աշխարհին հոգևոր իշխանն է , և այս բարձր աստիճանին առջև բոլոր մուսներն ողորմելի կ'երևին :

«Գարձեալ , սիրելիդ իմ արեղայ , այն Սիքստինի մատրան մէջ՝ չափազանց խորթ բան մը կայ , երաժշտութիւնն է . ո՛չ , կը

սխալիմ , երաժիշտներն են , «բարանները : Ի Հռոմ՝ սրբավայրին մէջ կանանց՝ ըստ հին սովորութեան՝ երգել ներելի չլինելուն , թէև Սուրբ-Պողոս՝ թոյլ կ'տայ անոնց որ դուխնին դոց մարդարէանան եկեղեցոյ մէջ , ասոնց հիանալի ձայնին տեղ «սարաբաներ» ձայնը կ'գործածեն : Եւ ահա այս անարգ մարդոց դասուն պարտաւոր է Պապն իր Սիքստին մատրան երգերուն կատարելագործութիւնը : Միայն թէ այս կատարելութեան համնելու համար՝ կ'թողուն և կ'քաջալերեն յանցանք մը : Բայց 'ի Հռոմ ամէն ինչ ներելի է , Պապն իշխանութիւն ունենալով՝ ըստ կանոնական իրաւանց՝ արձակել թէ Աւետարանէն , թէ առաքելական օրէնքէն և մինչև իսկ բնական իրաւունքէն : Քաջ նկատե՛ որ եթէ «սարաբաները» փոխանակ Պապին մատուռն երգելու , Ալիդգորի մատրան մէջ երգէին՝ Գալիլի սաղմոսները , հերետիկոս Ալիդգորիայի համար , պապութեան պաշտօնարկունները մեծ աղալակ ու վայնասուն պիտի արձակէին և բողոքականութիւնը պատասխանատու պիտի ցոյց տային այն յանցանաց համար զոր Մովսէս մահուամբ կ'սպառժէր :

«Արդաւ չխօսելու՝ իմ արմատացեալ սովորութեանս համեմատ՝ Սիքստինի մատուռէն կ'ելնեմ , «սարաբաներ» վրայ թափած արտասուքս կ'սրբեմ և հռոմէական կառավարութեան կ'դառնամ :

«Ա՛րեսես թէ այժմ փորձով համոզուած եմ որ Հռոմի մէջ ամենէն շատ պաշտօններն աշխարհականք կ'վարեն » : Այդ իրաւ է , սիրելիդ իմ արեղայ , բայց բառերու վրայ չհամոզուինք , կ'աղաչեմ : Աշխարհականք պաշտօններ ունին , բայց իշխանութիւն չունին : Հռոմէական վիճակաց մէջ՝ նախորդ դէպքերէն առաջ՝ եօթնութ հազար պաշտօնատարներ կային : Գեւ այսպէս է , դիտեմ որ բոլոր գերապարտեալ տեարք , քահանայ չեն , թէ կարող են՝ երբ որ կամին՝ պատմուճանը , իրենց մանուշակաղոյն դուլպաները թողուլ և կարգուիլ , բայց այն ատեն իրենց պաշտօնէն հրաժարել կ'սպարտաւորին , և այս արտաւոր կառավարութեան մէկ անկանոնութիւնն այս է որ աշխարհականներէ չափազանց սոսկալուն՝ իբրև կառավարող մարմին՝ եթէ մարդ մը բարձր պաշտօնի մը հանէ

պէտք է որ այդ մարդն եկեղեցական զգեստ հաղնի, որ ամուրիութեան մէջ ապրի՝ առանց ընդունած լինելու բաւիչ շնորհը՝ քահանայական օծմամբ, շնորհ մ'որ միշտ ազդեցիկ շնորհ մը չէ ողջախոհութիւն պահելու: Եւ Աստուած միայն գիտէ թէ ինչ զայթակղութիւններ կ'ծնին իրաց այս աղւոր վիճակէն:

«Երբ Պիոս Թ. աթոռն ելաւ, պահ մը յուսացին որ պապական կառավարութեան առանդական զեղծումները պիտի դադրին: Այս սնտախի յոյս մ'էր: Եթէ Պիոս Թ. ունենար իսկ հաստատ բնաւորութիւն մ'որմէ զուրկ է, այս բարեկարգութիւնն անհնար էր իրացնել: Մարդ մը միայն Օկիասի այս ախոռները չպիտի կարենար մաքրել: Ասկից զատ՝ լուսամիտ պապի մը՝ որ իր ժամանակին ողին կ'ձանչէ, վանքի մը խուցէն ելնող կրօնական մը կ'յաջորդէ, վանականութեան պահած բոլոր հին նախապաշարումներով տոգորուած, և այնուհետև դործը վերստին սկսելու է:

«Յեղափոխութիւնն որ մարմնաւոր իշխանութիւնը պիտի տապալէ, այս փտուն հիմնարկութիւններն ալ պիտի կործանէ, որոց ներքև Գրիստոսի եկեղեցին կ'տարու բերի ողջ ողջ թաղուած մարդու մը պէս, որ փորձ կ'փորձէ խորտակել այն պատանքն որու մէջ կ'խղզուի: Թաղաւոր-պապն իտալացոց կ'վերաբերի, առանց մարմնաւոր իշխանութեան պապը բոլոր կաթողիկոց պիտի վերաբերի: Մարմնաւոր պապութեան կռիւններն այնպիսի աղէտալի իրաց վիճակ մը բերին, որ իտալացի մը միայն կարող է ելնել Ս. Պետրոսի աթոռը: Եւ այս բանս՝ սիրելիք իմ աբեղայ, կարծեմ թէ չափազանց տաղտկալի է Հոգւոյն-Սրբոյ որ կ'կուչուի, ինչպէս ամենքնիս գիտենք, կարտինալաց ժողովին մէջ պապերուն ընտրութեան աւթիւ:

« — Հոյին-Սուրբ, կ'ըսեն անոր, պապ մը կ'ուզենք, մեզ լուսաւորէ. Եկ'—ր, «բարեւ հոգի»: Միայն, քաջ իմացիր, իտալացի մը պիտի կարենաս ընտրել: Կարելի է աւելի լաւ կ'ընայիր գտնել ուրիշ տեղ, և իրաւացի պիտի լինէր որ երկու միլիօն հողիներու հողւոր վեհապետն երկրիս մի և նոյն անկիւնէն չընտրուէր: Բայց անդ մարմնաւոր փոքրիկ իշխանութիւն մը կայ զոր պարտ է պահպանել, և որ վտանգի մէջ կ'ընայ ընկնիլ անկիւնացի,

դաղղիացի, սպանիացի պապի մ'ընտրութեամբը: Ուրեմն, Հոյի Սուրբ, վար իջիր և իտալացի մ'անուանէ: Ահա մեծ դժուարութիւն մը Հոգւոյն-Սրբոյ համար:

«Յեղափոխութիւնը զԱստուած պիտի աղատէ:

«Եւ, դարձեալ, միթէ սիրուն առասպել մը չէ՞ Հոգւոյն-Սրբոյ միջամտութիւնը պապերուն ընտրութեան մէջ: Կարտինալաց ժողովին (conclave) պատմութիւնը հետաքրքրաշարժ յայտնութիւններ կ'ընէ այս մասին: Պենետիկ Ժ.Վ. սրբակեաց մարդ մը, թէև իր զուարթ խօսից մէջ բաւական ազատ էր, միթէ Հոգւոյն-Սրբոյ կ'գիտէր, երբ ժողովին մէջ կ'ըսէր, գործածելով բաւ մը զոր չպիտի թարգմանեմ. Se volete un buon coglione, pigliatemi.

«Այո՞, սիրելիք իմ աբեղայ, ամէն ինչ առասպել է՝ ի Հռոմ: Անդ՝ կ'կրկնուին բոլոր զըոյցներն որով մարդկութիւնն իր որորանին մէջ քնայուցին: Բանահիւսական սրբոց վարք, վանուց առանձնութեան մէջ յօրինուած, անվաւեր մասունք, հին դիցաբանութեան չափ առասպելական առանդութիւններ, ահա տակաւին Հռոմ այս բաներս կ'ընծայէ հասունցած ընկերութեան՝ որ այս ստութիւնները կ'մերժէ. վասն զի կ'զգայ որ այսուհետև իրեն պարտաւոր են ճշմարտութիւնը: Երբ մի անգամ եկեղեցին՝ այս երկրային հողերէ աղատի, այն ատեն թերևս նոր ճամբայ մը մտնէ, և ինչպէս որ Լաբորսէր ըսաւ, քրիստոնէութիւնը սկսիլ զբանափոր դամբաններու և կոստանդիանոսի մէջ: Այս բանս կ'փափաքիմ իրեն համար և քեզի համար անբաւ երջանկութիւն:

«ԼՈՒՊԵՐ»:

Բարեբաղդաբար՝ Լուպէր անխոհեմութեամբ մինչև ժուլիոյի ի նպատակ մտածած արշաւանաց մասին ճշգրիտ տեղեկութիւններ չէր հաղորդեր Լուիզին: Իրենց մէջ որոշուած քանի մը խօսքերը բաւական էին Լուիզի հասկըցնելու ինչ որ պարտ էր երկնչիլ կամ յուսալ: Բայց բնաւ չէր քաշուեր աղատօրէն խօսելու թէ մարդոց և թէ իրաց վրայ, երբոր այն աղատութեան խնդրոյն հետ վերաբերութիւն չունէր: Իբ լեզուի այլանդակութիւնները Լուիզի

չըթանց վրայ երբեմն թպիտ մը կ'ըրեին, բայց այդ խօսքերն 'ի կորուստ պիտի մատնէին արտասանող քահանայն :

Լուսկերի վերջին դերն այս եղեր էր .

«Երկու ժամն Հռոմէն պիտի հեռանամ : Այս իրկուն ազատ հող պիտի կոխեմ' և ուրիշ շատերու հետ գրեթէ պիտի ըսեմ . Roma rebata, fede perditā. Հռոմ տեսեալ, հաւաս կորուսեալ : Եւ մանաւանդ Հռոմի մէջ՝ երբ մարդ՝ կարտինալ, դերապայծառ, զող կամ՝ մուրացկան լինելու պատիւը չունի, ազատութեան համար կ'բորբոքի և կ'յուսայ սիրով որ քիչ ասեմէն աշխարհիս թագուհին պիտի լինի : Ուրեմն, օրիորդ Լուիզ, ազատութեան մէջ շատ բան յուսանք» :

Երկրորդ օրը՝ Անքոնայէն ուղղուած հեռագրական լուր մը հետեալը կ'պարունակէր .

Ռօմ - Սան - Սքէֆանօ .

«Լուսկերի և Խաբօսի շնորհիւ ազատեցայ : Այս վերջնոյն վիճակին վրայ շատ հող ունիմ . Լուսկեր Լան-լը-Պուրկի կ'դառնայ : Քանի մ'օր հանդստանալէն ետև՝ Բարիզ դալու ճամբայ պիտի ելնեմ» :

Արդարև Լուսկեր՝ երկու օրէն ետև՝ զոր անոյշ ուրախութեան մէջ անցուց, ժուլիօյէն զատուեցաւ և դէպ 'ի Գուրէն դիմեց Մարլի ճամբով : Իր արձակուրդին պայմանաժամը, զոր իրեն տրուած էր Շանպէրի արքեպիսկոպոսարանէն՝ երկար ատենէ 'ի վեր լմրնցած էր : Պարտաւոր էր ըստ կարի շուտով պաշտօնին տեղը հասնիլ :

Ժուլիօյի երկայն ամիս մը պէտք եղաւ որպէս զի բանտին մէջ քաշած վշտալի տառապանքը դարմանէ : Հայր Ալիլէդան իրեն համար ամենէն մտադիր բժիշկը նոյնչափ անձնադիր բարեկամն եղաւ : Յաջորդական սիտիլումներ, կարճ շրջադայութիւններ, ստամոքսի երկարատև զրկանաց յարմար սնունդ, կենդանութիւն բերին այս հաւատաքննութեան զնդաններուն մէջ գրեթէ մաշած մարմնոյն :

Ժուլիօ կարծէր թէ Լուսկեր հանդարտօրէն հաստատուած է

Լան-լը-Պուրկի պաշտօնին մէջ, և քահանայէն Ալպեան լեռներէն անցքն իմացընող նամակի մը կ'սպասէր, երբոր երկու նամակ պարունակող ծրար մը, մին Լուիզի, միւսը Լուսկերի կողմէն՝ հասաւ իրեն Բարիզէն :

Լուիզ՝ իր սրտի անհամբերութեան մէջ՝ կ'պաղատէր եղբայրն որ իր վերադարձը փութացնէ . այն ատեն պիտի հանդստանար եթէ ինքն անձամբ իր սիրական մարտիրոսը խնամէր :

Լուսկերի նամակն իրեն ծանր լուր մը կ'հաղորդէր .

«Իմ արժանի բարեկամն,

«Բնաւ չէիր յուսար անշուշտ որ ինձմէ Բարիզէն դրուած գիր մը ստանաս : Կարծէիր թէ լեռի մը վրայ եմ, անշուք քահանայական պաշտօնի մէջ, որ է քանի մը խեղճ գեղացիներու հոգևոր խնամատարութիւնը : Բայց բնաւ մի կարծեր : Պարտաւոր եմ պատմել քեզի անցած դարձածը :

«Լան-լը-Պուրկի հասնելով՝ իմ երէցիս դէմքը բոլորովին այլապլած դտայ : Արքեպիսկոպոսարանէն ձեզ կ'ուզեն, ըսաւ ինձ, Շանպէրի դպցէք : Լան-լը-Պուրկի երէցը չէք ալ, յաջորդ մը ունիք :

«Ուզեցի պատարագ ընել . երէցն ինձ պատասխանեց .

«— Այլ ևս քահանայական պաշտօն չունիս :

«— Ինչպէս չունիմ, զոչեցի, միթէ առկախեալ եմ, միթէ արդիւրամծ եմ :

«— Չդիտեմ, ըսաւ երէցը, բայց արքեպիսկոպոսարանի մէկ նամակն ինձ կ'յայտնէ որ այլ ևս թեմին մէջ զործ չունիս : Բայց դարձեալ, կարող ես զործն իմանալ Նօրին Գերապատուութենէ» :

«Անոգուտ էր այս բարի մարդուն հետ վիճարանիլ : Ելայ Շանպէրի դպցի :

«Այն տեղ կռիւ, և մեծ կռիւ բրդաւ : Գիտես արդէն իմ բնաւորութիւնս, թէ և չես կարող երևակայել թէ ինչ սոսկալէ ծայրայեղութեան կրնայ տանիլ զիս : Արքեպիսկոպոսարանին փոքրիկ սրահն՝ ընդունուեցայ : Ինձ իմաց տուին որ քահանայական պաշտօնս առած եմ և թէ ինձ արձակուրդի թուղթ մը պիտի տան :

« — Բան մը չեմ հասկընար այդ արձակուրդի թղթէդ , ըսի դերասպատիւ առաջնորդին : Ես ի՞նչ յանցանք գործեցի :

« — Ես պարտաւոր չեմ քեզ համար տալու իմ տեսչութեան գործոցս մասին : Ես բոլորովին աղատ եմ քեզ ընդունելու կամ ճամբելու :

« — Չէ թէ առանց պատճառի , դերասպատիւ տէր :

« — Բայց պատճառ հազար հատ ունիմ , թողլով քու Տ . . . ի մէջ ունեցած նախորդ վարմունքդ որ հրաշալի բաներ չեն . Հռոմի մէջ բռնած ընթացքդ բաւական է :

« — Իմ ընթացքս , տէր իմ , բայց արժանի ընթացք մ'էր , և կ'համարձակիմ ըսելու , բարոյն արիական նախանձախնդրութիւն մ'էր :

« — Նորին Սրբութեան պապին կառավարութեան կարծիքն այդ չէ : Քեզի դէմ խիստ ծանր ամբաստանադիր մը ստացանք :

« — Այդ ամբաստանադիրն ինձ պիտի հաղորդէք անշուշտ :

« — Ամենևին : Ի՞նչ յանդիմութիւն որ ստորակարգեալ մ'իր գլխաւորէն կ'պահանջէ որ Հռոմի հետ ունեցած թղթակցութիւնը ցուցընէ » :

« Գլուխս կ'տաքնար հետզհետէ :

« — Ի՞նչ , ըսի սրբազանին , ինձի դէմ ամբաստանութիւն մը ունիս և չե՞ս ուզեր ինձ հաղորդել : Չե՞ս ուզեր ինձի դէմ եղած գանդատներն իմացընել . պիտի դատապարտեն զիս առանց մտիկ ընելու : Ո՛չ , այդ կարելի չէ :

« — Այո՛ , պարոն , այդ կարելի է : Իսկ եթէ կ'ուզես յանցանքդ իմանալ , աւասիկ , քահանայի անարժան ընթացք մը բռնեցիր . անարդ մարդոց հետ տեսնուեցար , Պասլը , կարտինալներն ու ժէզվիզները բանբասեցիր , և որ մեծն է , պապին աշխարհական իշխանութեան դէմ դաւ գրիր 'ի Հռոմ , եկեղեցւոյ թշնամեաց հետ միացար , դաւադրութեանց վրայ ուրախացար և մասնաւորապէս փետրվար 2ի ժողովրդային ցոյցին վրայ : Քու բոլոր ըրածներդ իմացան : Մինչև անդամ կաշառատութեամբ որսալ ուզեցիր Նորին Սրբութեան պապին սպասաւորող Եպիսկոպոս մը , որ քու առաջարկութիւններդ մերժեց սրտմտութեամբ :

« — Ո՛հ , այդ մասին , ընդհատեցի , կ'սնդեմ որ սուտ է , ինքն ուզեց կաշառ ուտել և այս գործին վարժ է : Իմ առաջարկութիւններս չմերժեց : Մինակ իմ ստակս գողցաւ :

« — Սուրբ մարդ մը կ'ըզպարտես , պարոն . իբրաւունք ունեցաւ քեզ ոստիկանութեան մատնելու :

« — Ո՛հ , այդ ճամբան ուրիշները բացին . գողը լրտես կ'դառնայ , ինչպէս յայտնի է , մանաւանդ հռոմէական վիճակաց մէջ ուր բոլոր կառավարութեան անդամները քիչ շատ գող ու լրտես են » :

« Ա'իմանաս , սիրելիդ իմ Ժուլիօ , որ զիս կորսուած տեսնելով յարմար առիթ գտեր էի իմ արքեպիսկոպոսս զայրացընելու : Սուրբ բարկութիւնները միշտ ձաղըելի կողմ մ'ունին , և կ'ուղէի քիչ մը զուարճանալ :

« Իմ Սավոյացիս կատղեր էր :

« — Աւասիկ Բլավիէր անուամբ օրիորդի մը դրած նամականիդ բոլոր պատճէնները : Ասոնք ամենածանր ամբաստանութիւններ են :

« — Տէր իմ , ըսի այն ատեն ծանրօրէն , չկայ այս նամակաց մէջ բաւ մ'որ բոլոր աշխարհի պատկառանաց արժանի կնոջ մը վայել ակնածութեան հակառակ լինի :

« — Շատ ազէկ , ըսաւ արքեպիսկոպոսը : Բայց ասկից դուրս , քու չար ողւոյդ յայտարար բաւական ապացոյցներ կան , ուստի փոխանակ ինձի դէմ սրտմտելու , եթէ արդարասէր լինէիր , երախտադիտութեան խօսքեր պիտի արտասանէիր այն ներողամտութեան համար որով դեռ ևս քեզի հետ կ'վարուիմ ~~արջակոբոյ~~ մը տալով » :

« Եկաւ վայրկեան մ'որ բարկութենէս սաստիկ յուզուած՝ վասն զի այլ ևս չէի ծիծաղեր , այս մարդուն վրայ պիտի յարձակելի և իր անտանելի անիրաւութիւնը քաւել պիտի տայի :

« — Սրբազան , քու ~~արջակոբոյ~~ , դու քան զիս լաւ դիտես , լուկ թղթի կտոր մ'է : Եպիսկոպոս մը զիս չպիտի ընդունի առանց յանձնարարութեան մը : Պիտի տան ինձ այդ յանձնարարական դիրք :

« — Իմ պարտքս պիտի կատարեմ :

«— Շարունակ բարութանք կ'փնտռես, սրբազան : Քեզն կը հարցընեմ որ եթէ, ուրիշ եպիսկոպոսի մը ներկայանալով, կարող պիտի լինիմ անոր հաւաւտել թէ պիտի զրեւ անոր զես յանձնարարելու համար : Այս պարզ հարցում մ'է : Պատասխանի մը պէտք ունիմ : Քաջ կ'իմանաս որ անհետեւ թեման մը պիտի լինէր տասն եպիսկոպոսարանի դուռը զարնել, միշտ նոյն խօսքը լսելու համար . «Միթէ եպիսկոպոսդ քեզն համար պատասխանատու կ'մնայ» :

«— Կ'ուզես որ համարձակ խօսիմ . ո՛չ, չպիտի քեզ յանձնարարեմ : Հուովը չափազանց անարդեցիր, և այդ անարդանքը բոլոր եպիսկոպոսական դասուն կ'վերաբերի : Քաջ յիշէ որ հոռմէական ոստիկանութիւնը զիտէ թէ ինչպէս անցուցիր վերջին օրերդ 'ի Հուով :

«— Ուրեմն այդ մահալճիւ մ'է, սրբազան :

«— Ինչ որ կ'ուզես սեպէ » :

«Եւ բաւական անբաղաքավարութեամբ բարեւելով, ինձ կերպով մը հասկըցուց որ դուրս ելնեմ :

«Ես բնաւ զինքը չբարեւեցի :

«Գրագիր մը ներկայացուց ինձ աբշաբէր մը զոր առի իբրև թուղթ մ'այս անձունի վարչութեան յապաղոյց, որ արտօնողի մը կը տայ քահանայի մ'ուրիշ թեմի մը մէջ ընդունուելու, այս լռին արդեւմամբ որ այդ արտօնողին անօրուտ պիտի լինի և զայն կրօն արքեպիսկոպոսարանի մը մէջ չպիտի ընդունուի : Քաջ համոզուած լինելով որ ժեզվիղաց միաբանութեան գէմ շարժող քահանայ մը ֆրանսայի և ոչ եպիսկոպոս մ'ընդունելու արիասրտութիւնը պիտի ունենայ, իմ քահանայական զգեստներս առի, հնակարկատի մը ծախեցի քանի մը ֆրանքի, որպէս զի մինչև Բարիզ դնալու համար կարքս վճարեմ :

«Ահա այժմ Բարիզ կ'դանուիմ, այսուհետև քահանայական պաշտօնէս հեռու, չեմ համարձակիր ըսելու որ քահանայ մ'եմ, չեմ կրնար իբրև քահանայ ներկայանալ վասն զի զիս պիտի վճարեն և հալածեն իր զնդանէն խոյս տուող եղբունագործ մը նկատելով զիս :

«Այս ամենը սրտնեղութեան մը ժամանակ, հոռմէական ոստիկանութեան տուած ծայրայեղ լուրերուն վրայ, իմ ոսկիներս գողցող և ապա զիս ծախող վատազգիին ըրած մասնութեանց վերայ պատահեցաւ : Իմ քահանայական պաշտամանս գէմ բնաւ ապօրէն գործ մը չըրի : Իմ կեանքս անարատ եղաւ : Եւ սակայն այն Հուովի մէջ քանի քանի դիւրութիւններ կան անկարգութեանց մէջ ընկնելու : Եթէ պոռնկանոցներն արդիւնալ են, բարեսիրտ միջնորդներ կարող են գտնել : Բաւական է որ անոնց հետեւիս և քու կամայք համեմատ քեզ Սոգոմ կամ Կիթէր պիտի առաջնորդեն : Բայց իմ բոլորտիքս տեսնելով այնպիսի անձինք որ կ'մոռնան թէ քահանայ են, և յիշեցի իմ քահանայութիւնս : Եւ առանց իմ անձնական կեանքս քննելու 'ի Շանպէրի զիս ընդունելէն ետև, առանց դատաստանի որու մէջ կարող էի ինքզինքս պաշտպանել եկեղեցիէն զիս կ'վճարեն :

«Հիմակ, դնա նայիմ, դնա, Լուպէր, վաճառանոցի մէջ ուսերդ բեռ կրելու վարժեցուր, պատրաստէ ձեռքդ Բարիզի սալարկին համար քարեր կտրելու, և կամ, եթէ բաւական ուժեղ և քաջասիրտ չես քանի մը սուով ապրէ՝ զոր դողոցուն ողորմասիրութիւնը փողոցին մէջ քեզն պիտի տայ, քանի մը հացի կտոր, փողոցի աղբին հետ խառնուած, որ առաւօտ դռնապաններու կողմներէն թափած պիտի լինին, և քանի մ'ամիս այս վշտալի մարտիրոսութիւնը կրելէն ետև՝ դնա մեռնելու հիւանդանոցը՝ ուր դիտութիւնս 'ի զուր պիտի ճգնի՝ երբեմն ողջ ու կայտառ մարմնոյ վրայ անօթութեան ըրած աւերամենքը դարմանել :

«Փառք Աստուծոյ, բարեկամդ իմ, այդ տխուր վիճակին մէջ չեմ : Յիշեցի որ մարդ մ'եմ, թէ աշխատութիւնը պատիւ մ'էր և թէ պէտք էր աղքատած քահանան պարկեշտ գործաւորի փոխել : Տպարանի մը մէջ պաշտօն դտայ՝ Բիկալի պաշտօնը գործարաններուն մէջ : Իմ երեսաց քրտինքով կ'ուտեմ հացս, և Աստուծոյ ներկայացուցիչներուն չպիտի տամ՝ զիս անօթութենէ մեռնելու վիճակի մը մէջ տեսնելու հաճոյքը :

«Քրտնք վրայ բան մը չեմ զրեր, քանի որ ինք քեզ կ'զրէ : Իրեն և քեզ արժանի կերպով զիս ընդունեցաւ : Պարտաւորեցայ

իր վեհանձն առաջարկութիւնները մերժել : Գուք ալ այժմ՝ աղ-  
քատ էք . ինչո՞ւ համար վճարել տամ ծառայութիւն մ'որ իմ  
արդէն ձեզի պարտաւոր եղածիս մէկ թեթե հատուցումն էր :

« Բրոջի չափ անհամբերութեամբ քեզի կ'սպասեմ : Եկաւ հա-  
սաւ այն ժամը՝ որ՝ քեզ մարտիրոսութեան հասցընող հալածան-  
քէն զօրացած , մանաւանդ զօրացած լինելովք այն երկայն խոր-  
հրդածութիւններով՝ որ միայն կարող եղան զնդանի սոսկալի տա-  
ռապանքդ մեղմել , պարտաւոր ես դրօշակդ պարզել :

« Այն մեծ ներշնչութիւնները զոր 'ի քեզ կ'զգաս և որոց հաղորդա-  
կից եղայ 'ի Ռօքա-Սան-Ստեփանոս , կարող են այս ժամուս իրա-  
նալ : Այս տեղ ամէն ինչ կ'մարի մեր բոլորտիքը . կրօնական աշ-  
խարհը միայն զիակ մ'է զոր կ'չուլանիչն ժեզվելոյնն ու իր արուստ  
արբանեակները , ամէն դոյնի և ձեւի վանականները : Աին յայտնի  
է ինձի համար որ այս ամէն բանէ կեանքը խոյս կ'տայ : Գիտեմ  
որ կ'կարծես թէ տակաւին քրիստոնէական ժողովանոցին մէջ դոյզն  
ինչ կենսական ոյժ կայ : Ես այսուհետեւ այդպէս չեմ խորհիր :  
Համակրութեան , հայրութեան , անձնուիրութեան եղած տեղը գնա-  
լով՝ ստոյգ եմ ճշմարտութեան գնալ :

« Մնաս բարեաւ , բարեկամք իմ : Մեզի համար օրհնեալ ժամ  
մը պիտի լինի այն երբ Սատանի ճիրաններէն յարութիւն առ-  
նողը Բարիդ հասնի , այս զեղեցիկ Բարիդը՝ որ մտածութեան , եր-  
ջանկութեան և ազատութեան կայսնն է . ուրեմն առաջին օրուան  
սպասենք :

« Չեր բարեկամք ,  
« ԼՈՒԳԵՐ » :

Գ

ԿԼԹՈՒԼԻԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ժուլիո՝ թէև յետին ծայր տկար էր , Ռօքա-Սան-Ստեփանոսի  
աստիճանական սրտապարանք թողուլ և ճամբայ ելնելու որոշեց այս

նամակները ստացած օրուան հետևեալ օրը : Յաջող ուղևորու-  
թենէ մ'ետք՝ Ֆրանսայի հողին վրայ , ուր հաւատաքննութիւնը՝  
թէև իր արտօնութեանց մէջ բոլոր աշխարհի վրայ իրաւունքներ  
կ'ստանանէ , փաստորներ չունի , կարող ենք հետևել Ժուլիոյի :  
Ահա վերջապէս հասաւ այն քրոջը մօտ , զոր վանատան մութ  
շրջապատէն կորզեց հանեց : Պարուէրի փոքրիկ սենեակն այժմ  
այս երկու ազնիւ հողիներու սրբավայրն է , զորս հալածանքը  
մեծցուց և զոր Նախախնամութիւնը , ըստ երևոյթին՝ այս գործոց  
համար պատրաստեց որ ամենէն մեծ հողիներու վրայ պարտ կը  
գնէ , առաքինութեանց վստահոյնը . անձնուրացութիւնը :

Ինչպէս որ Լուսէր մտածեր էր՝ Ժուլիոյի խորհրդածութիւն-  
ները Սէնդ-Վվանտէնի առանձնութեան և իր գերութեան ժամա-  
նակ՝ անարդիւն չպիտի մնային : Իր բոլորախէր ժողովեց բազմա-  
թիւ խորհողներ և կրօնական մատենագիրներ՝ զոր սաստիկ վիրա-  
ւորեր էին անդրալեւոնեայ լրագրութեան բուռն հակումները : Ռ-  
մանք անուանի Լաբորտէրի Նոր Բուսուլութեթին գործակիցներն  
եղեր էին : Իրենց նշանաբանն էր միշտ կաթոլիկութեան և ազա-  
տութեան դաշնակցութիւնը : Այնքան ապարդիւն փորձերէ ետք՝  
հարկ էր առաջադրել այն մեծ , սոսկալի խնդիրն որու լուծումէն  
կախում պիտի ունենայ արևմտեան աշխարհին կրօնական ապա-  
դան : Աղաթական Կաթոլիկը՝ բարձր կղերին կողմէ դրեթէ երեսի վը-  
րայ ձգուած դատի մ'ազնիւ և անկեղծ ակոյեաններու գործին ե-  
ղաւ :

Աղաթական Կաթոլիկին առաջին թիւերն եւրոպական մամլոյ կողմէ  
ընդհանուր համակրութեամբ ընդունուեցաւ : Ժուլիոյի անունը՝ ծրա-  
դրին ստորագրողը , Հաւատաքննութեան զնգանին մէջ իր երկա-  
րատե գերութեան յիշատակը , իր փախստեան հրաշալի կողմը ,  
որով ամէն սիրտերը յուզուեց էին , իր անժխտելի տաղանդը , այն  
քաջութիւնն որով վեր կ'հանէր դրօշակը՝ Հուովի մէջ ատելի ,  
ուր Գրիստոսի անունը նոր կ'միանայ ազատութեան անուան հետ ,  
այս ամէն սպրազանքը բացառիկ հուշակ մը տուին լրագրին :

Ժուլիո՝ իբրև ատենաբան՝ իր միտքը վստահութեամբ ընդլայնե-  
լու ձիրքն ունէր : Նոյնպէս բանակուուի մը թեթև և կծու գրիչն  
5

ունէր , և Ասիոյի կէտեօսանք լրացրին ստէպ հարուածներ տուաւ , որ միանգամայն դառն էին ու նուրբ և որու ներքև հակառակորդը միշտ վերաւորուած կ'մնայ :

Ժուլիոյի յատակագիծը պարզ և ընդարձակ էր : Եկեղեցւոյ և Պետութեան բաժանումը , Պետութեան և Եկեղեցւոյ փոխադարձ շահուց համար , խղճի ազատութիւնն որ Աւետարանի մէջ բացայայտ հրատարակուած է , նոյն իսկ Քրիստոսի խօսքով և դործերով , իր անէծքը թափելով՝ անհաւատ քաղքի մը վրայ , երկրային հոգեբէ ղերծ պապութիւն մը , Եպիսկոպոսութիւն մ'որ իր իրաւունքը պարտ էր ճանչել պապութեան յաջորդական յափշտակութեանց առ թիւ , ահա ասոնք էին յատակագիծին ընդհանուր տարերքը զոր նոր թերթը կ'հրատարակէր աստուածապետութեան , քահանայապետական և Եպիսկոպոսական բացարձակ իշխանութեան դէմ որ Եկեղեցւոյ միակ իրաւունքը դարձեր էր : Աւերջապէս զազդիական Եկեղեցին էր՝ երբեմն քաղաքական իշխանութեան անոր վրայ դրած շղթաներէն ազատ՝ առաջին դարուց եկեղեցւոյ վարդապետութեանց վերադարձն էր , որու աղէտալի խոտորումներն արտագրեցին Արևելքի հերձուածը , և վերջէն՝ Եւրոպայի մէջ բողոքական բարենորոգութիւնը :

Գիւրին է հասկընալ թէ ինչ ներդործութիւն պիտի ունենար կրօնական աշխարհին մէջ երբ Ժուլիոյի լրագիրն երևցաւ :

Ն

ՔԱՀԱՆԱՅԵԱԿԱՆ ԳՆՁՈՒՆԵՐ

Բարիցի արքեպիսկոպոսարանի նշանաւոր աթուոն բարձրաստիճան պաշտօնաւորաց մէջ՝ կ'դտնուի Պ. Տածիչը : Եթէ քահանայ ես և իր բարձր պաշտօնին ստուգաբանութիւնը կ'ուզես , անմիջապէս պիտի տեսնես որ քեզ յարաջ պանելու սահմանուած է : Այսպէս անսականին համար : Արդարև՝ քիչ հսկելու , ՚ի հարկին քիչ

աաստելու և ստէպ քիչ վար իջնելու պաշտօն ունեցող մարդ մ'է : Մինչև անգամ տածիչ մը արքեպիսկոպոսի մը մօտ՝ դատարանի նախագահի պաշտօն կ'վարէ : Թէ միոյն և թէ միւսին համար՝ ամբաստանեալը միշտ յառաջագունէ յանցաւոր է . մին մահուան պատիժը կ'հանէ , միւսը փիլոնը կ'առնու : Բարեբաղդաբար՝ եթէ տածիչը խստապահանջ է , Եպիսկոպոսը կրնայ ներողամիտ գտնուիլ , և փոխարինութիւնները կ'հաստատուին : Բայց դարձեալ , վայ այն խեղճ քահանային որ ինչ և է տածիչի մը հետ անհաշտ կ'դտնուի :

Ստոյգ է որ տածիչի մը վիճակը շատ անգամ տաժանելի է : Եթէ կարենար ամէն բան ըսել՝ պիտի իմանայինք որ իր կունակը սոսկալի դործ մ'ունի : Իր վրան է , բաց ՚ի քանի մը բարի քահանաներ որ խոնարհաբար կ'դան իրենց արտօնազրկըր ստորագրել կ'տան , երկու աշխարհի քահանայական ղնչուներու պաշտօնը :

Թատերական իրողութեանց բոլոր զիւցազուններն , որոց համար ապիկար ոստիկանութիւն ունեցող երկիրներու մէջ , ուր մարդկային արդարութիւնն անդօր է , կամ նոյն իսկ ոստիկանութիւնը կ'օգնէ յանցաւորաց որ սահմանադիւնէն անցին , վաան զի ամենակաթողիկ երկիրներուն խնայել կ'ուզեն գայթակղեցուցիչ դատեր , բոլոր արևելեան սուտ Եպիսկոպոսներն որ , երկայն մօրուք մը դրած՝ անխուով լուութիւն մը կ'պահեն , զազդիարէն չեօսելու համար , և իրենց հետ ունենալով գրագիր մ'որ պարտի զիտնալ հայերէն , արաբերէն , ասորերէն լեզուները , Ֆրանսա կ'դան որպէս զի շահաւէտ ժողովարարութիւն ընեն Լիբանանու , Բերիոյ կամ Անտիօքի խեղճ քրիստոնէից համար , որոց տուններն անգամ տրուղներն այրեր են , բոլոր սուտ վանականներն որ միշտ իրենց երկայն մօրուքով կ'դան՝ գիւրահաւան Բարիցի ժողովրդէն հայցելու կարմել մը , ուխտաւորներու պատսպարան մը շինելու համար դրամ , Պերբայի կամ Թափոր լերան վրայ , սուտ թղթեր կրող , Եպիսկոպոսաց շինձու յանձնարարագիրներ կրող քահանաներ , բոլոր աւաղակներն որ քսան վիճակէ անցած , քսան Եպիսկոպոս և հարիւր թեմեր խաբած են՝ յունվարի առաջին օրէն մինչև Սէն-Սիլվէսգրի օրը կ'դան պաշարելու այն դահլիճը , որ

այնքան բաներ լսեց և որ այս նշանագիրը կ'կրէ . Տածիչին դահ-  
լինձը : Պէտք է որ այս տածիչը զանազանէ պարկեշտ մարդը խա-  
բերբայէն , ճշմարիտ մօրուքը սուտ մօրուքէն , պատուաւոր քահա-  
նայն աւաղակէն : Պէտք է որ վերցրնէ արևելեան սուտ եպիսկո-  
պոսին պատմութեանը , կարծեցեալ վանականին կնդուղը , կարծե-  
ցեալ աբբային երկայն վերարկուն , պէտք է որ չորս աչքով  
կարկայ աշխարհի ամէն երկիրներու մրոտած թղթերը , պէտք է  
որ դիտակով նայի կնիքները , որոց մէջ ամէն անսակ խաչեր ,  
ամէն բարբառով նշանագիրներ հիանալի պարզութեամբ կ'երևին ,  
որպէս զի արժանի և ակնածու լինի ճշմարտապէս յարգելի մար-  
դուն հետ , և խաբերային ըսէ . Պէտք ունիմ մտածելու :

Այս աշխատութիւնը շատ ծանր է :

Արդ՝ յամի Տեառն հաղար ութ հարիւր վաթսունը մէկին , երբ  
այս մեր պատմելիք գէպքերը կ'անցնին , Բարիզի Արքեպիսկոպո-  
սարանին Տածիչը Պարամինոս աբբան էր : Չոր , սրածայր գլխով ,  
միջակ հասակով եկեղեցական մ'էր նա , թէև քանի մը սպիտակ  
ցանցաւ մագերով զարդարուած , բայց և այնպէս պարզմիտ երբ  
մարդ անոր տկար կողմը բռնել զիտէր և եթէ առաւօտուն իր  
պառաւ անտեսուհւոյն հետ սղտիկ կուի մը չէր ունեցած կամ  
թէ իր Նինա կատուն թոյլ տուեր էր որ զինքը փայփայէն :

Ժեզվիղներն իմանալով՝ հռոմէական ոստիկանութեան միջոցաւ՝  
թէ Ժուլիօ՝ Իաքօսօին ճարտիկութեամբն Իտալիոյ տէրութեան  
սահմանագլուխը հասեր էր , և թէ անտարակոյս Ֆրանսա պիտի  
վերապառնար , նոյն իսկ Բարիզ , Լուիզը գտնելու համար , ըստ  
այնմ իրենց կարգադրութիւններն ըրին :

Ժողովով որոշուեցաւ որ պէտք էր ամէն ինչ 'ի գործ դնել  
Ժուլիօն եկեղեցական իշխանութենէ ընդունել չտալու համար , ա-  
պա թէ ոչ Ժուլիօն կարևորութիւն պիտի ստանար նախ իր ճշմա-  
րիտ տաղանդով , և իր արկածից հանելիք աղմուկէն կղերական  
դասուն մէջ :

Եթէ կարելի լինէր արքեպիսկոպոսարանը համոզել որ Ժու-  
լիօյի առջև ամէն եկեղեցի գոցեն , իր յարաբերութիւնը կղերին  
հետ աւելի քիչ՝ մինչև անգամ անկարելի պիտի լինէր : Շատ քիչ

կ'տեսնուին մարդիկ արդիւեալ քահանայից հետ : Այն ատեն միա-  
բանութեան պատիւը զերծ պիտի մնար : Ի՞նչ փոյթ էր եթէ Ժուլիօ  
և իր քոյրը մեծ աղմուկ հանէին ամբարիշտ աշխարհի մը մէջ :

Մանաւանդ՝ պէտք էր որ այն վատանուն Ժուլիօն՝ այնքան զրա-  
ւիչ ատենաբան մը , որ Տ . . . քաղքին բոլոր բնակիչներն իր  
խօսքովը թովեր էր՝ բնաւ բեմի մը վրայ չէնէր : Ժուլիօ կարող  
էր , ժամանակէն առաջ զինքը հասուն գործող փորձանքներէն ե-  
տև՝ յանկարծ իր թռիչքն առնուլ և բարիզցոց յիշել տալ՝ որ  
Լա Գօրտէրի անպատրաստից ճառերով մոլորած էին , թէ , սուրբ  
միաբանութեան անձուէր մամլոյ վիզլուկին չնայելով՝ իրենց հայր  
Ֆէլիքսը՝ իր փառասէր ոճով , արուեստիւ շինուած երկար պատ-  
մութիւններովը՝ տակաւին այս փայլուն ատենաբանին չկրցեր էր  
հասնիլ :

Շատ դժուարին էր ուղղակի երթալ զերապատիւ կարտինա-  
լին և խնդրել որ այն վտանգաւոր քահանան մերժէ : Թէև ժեզ-  
վիղներն այսպիսի յանդուգն առաջարկութիւններ ընելէ չեն կա-  
սիր , սակայն կան սահմաններ ուսկից հաղւ ուրեմն անցնելու կը  
հաւանին . և ամէն եպիսկոպոսունք , մանաւանդ կարտինալները ,  
շուտով չեն զիջանիր թողուլ որ անոնք իրենց թեմերը կառա-  
վարեն : Գարձեալ՝ կարտինալ արքեպիսկոպոսն որ այնքան բարե-  
բարոյ էր , բնապէս խիստ անկողմնապահութեան մը սահմանին  
մէջ պիտի մնար . մեծ յանցաւորին դէմ իր վրայ ինչ սպաւո-  
րութիւն որ ընէին , Յիսուսեան միաբանութեան նկատմամբ՝ վաղ-  
անցուկ պիտի լինէր : Ժուլիօյի դէմ խստութեամբ վարուելու հա-  
մար լինելիք յանձնարարութիւնները՝ այսպիսի մեծ եկեղեցական  
իշխանութեան մը դէմ վերաորիշ չլինելու համար , չափաւոր  
պիտի լինէին . բայց միւս կողմէն՝ կասկածելի էր որ Ժուլիօ եր-  
թար ուղղակի արքեպիսկոպոսը տեսնէր :

Աւելի խոհեմութիւն սեպուեցաւ Պարամինոս աբբային միտքը  
Ժուլիօյի դէմ զրգուել :

Ամենէն նրբամիտ , ճարտար և վարպետորդի կրօնաւորը Պա-  
րամինոսի վրայ զըկեցին . այս է հայր Ֆիշէ : Երբեմն այս եկե-  
ղեցականը կ'տեսնէր Սէն-Ժէրմէնի արուարձանը , Շանդնէյի

գ. քուհուհոյն բնակարանը : Այս տիկինը վերապատուելի հօր փիլօթէն էր , բայց իր աղջկան , Աէզէրի կոմսուհուհոյն խոստովանահայրը Պարամինոս արքան էր :

Շանդնէյ գ. քուհուհոյն մեծ ապարանը , Բուադիէյի փողոցը , Պարամինոս արքային բնակարանին մօտ էր : Երբեմն անդ զերբար կը գտնէին . կրօնական աշխարհին միութեան կեդրոնատեղի մ'էր :

— Այս շաբաթ ձեզ տեսնելու պատիւը պիտի ունենամ , ըսեր էր հայր Ֆիշէ Պարամինոս արքային :

— Այս բարի հօր անոյշ աչքով պիտի նայիք անշուշտ , ըսաւ առանձին խօսակցութեան մէջ Աէզէր կոմսուհին՝ Պարամինոս արքային , ձեզմէ խնդրելէք մ'ունի :

Ինչպէս կ'տեսնուի՝ փոքր առ փոքր դործը կ'եփէին , բայց դարձեալ պէտք է ժէզվելու լինիլ կամ ոչ ինչ : Եւ չկար վերապատուելի հայր մ'որ միաբանութեան ողին իրեն չափ ըմբռնած լինէր :

Հետեւապէս՝ իր ամենէն անոյշ կերպարանն և ամենէն հրապուրիչ լեզուն առնելով՝ Պարամինոս արքային տունը գնաց : Գիւանադիտութենէ առնուած՝ երկայն նախապատրաստութիւններէ ետք՝ որպէս զի իր այցելութեան բուն նպատակը ծածկէ , և քանի մը բարեգործական ձեռնարկութեանց յաջողութիւնն ապահովելու համար հայր Պարամինոսին միջնորդութիւնը խնդրելէն ետև՝ Պարամինոս արքան սրտովին խոստացաւ կատարել , կարծելով թէ իր ծուխին ուզածն այս է միայն , հայր Ֆիշէն խօսքը դարձուց Խտալիոյ դործոց , Պասլին կողմէ բանադրուած սոսկալի յեղափոխականներու վրայ , գլուխ ունենալով՝ Աիբդօր Էմինուէլը , մահալճիւններուն , փետրվարի 2ի ժողովրդային յուզման վրայ : Աերպատուելի հարք Հռոմէն նամակներ ստացեր էին որոց մէջ շատ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կային այս իրողութեանց վերայ : Գաղղիացի քահանայ մը , զոր Շանպէրիի գերապատիւ կարտինալ արքեպիսկոպոսն արդիւելու փութացեր էր , այս վերջին գործողութեան մէջ դաւադրի գեր խաղացեր էր : Աերջապէս պատմեց նա հայր Պարամինոսի թէ ուրիշ գաղղիացի քահանայ մը , Հաւատաքնութեան ասենին կողմէ բանտի դատապարտուէն ետև՝ իբրև կրօնարանի մը բռնաբարիչ , իր բանտէն խոյս տուեր

էր : Նոյնպէս յաւելուց թէ այս քահանան , որ արդէն S . . . ի վիճակէն արտաքսուեր էր , Յիսուսեան միաբանութեան դէմ ըրած զըպարտիչ յարձակումներուն և դատապարտելի դրուածներուն համար , Նափոլիի անպիտան քահանայից կողմէ ընդունուէն ետև՝ այս միջոցիս Բարիզ կ'գտնուէր , ուր Պասլին աշխարհական իշխանութեան դէմ կ'դաւադրէր , և լրաղիր մը կ'պատրաստէր խղճի ազատութեան , մամլոյ ազատութեան , Եկեղեցւոյ և Պետութեան բաժանման մասին արդէն դատապարտուած վարդապետութիւնները պաշտպանելու համար : Այս քահանան՝ Ժուլիօ Քլալիէր անուամբ , ստոյգ եմ որ , յարեց ճարտարամիտ հայր Ֆիշէն , արքեպիսկոպոսական իշխանութենէ պիտի մերժուի : Բարիզը բարեպաշտ ժողովրդեան մէջ մեծ զարմանք և զրեթէ գայթակղութիւն մը պիտի պատճառի եթէ այսպիսի մարդ մը Եկեղեցւոյ սեղանն ելնէ և քարոզելու հրաման ստանայ :

— Գեւ չտեսայ զինքն յարքեպիսկոպոսարանն , բայց ուրախ եմ որ այդ տեղեկութիւնները քու բերնէդ կ'իմանամ :

Թէզվիկը՝ աւելի ևս չպնդելով՝ քանի մը մարդավարական սնուտի խօսքեր ևս արտաբերեց և թողուց զնաց :

Իր նպատակին հասեր էր :

Ժուլիօ՝ շատ փորձառու լինելով՝ դիտէր թէ ինչ ընդունելութիւն պիտի գտնէր 'ի Բարիզ : Գիտէր որ իր հզօր հալածիչներն անդ են՝ և ինչպէս ամենուրեք եպիսկոպոսաց դատուն կ'աիրեն : Լուպէրի վիճակն 'ի Շանպէրի իրեն բաւական ազդարարութիւն մ'էր իր ունենալիք վիճակին վրայ : Արդէն լաւ մը մրոտած պիտի լինէին զինքը Բարիզի արքեպիսկոպոսին մօտ : Սակայն կ'ապաւինէր այն նախախնամութեան որ զօրաւորաց սիրսն իր ձեռացը մէջ ունի . և որովհետև՝ իր բոլոր կենացը մէջ Եկեղեցւոյ բնական գլխաւորաց դէմ կ'ծու զգացում մը , բառ մը չէր ըսած , և հետեւապէս ինքզինքն անպարտ դիտէր , հասկըցաւ որ պարտաւոր էր իր անձնական և քահանայական պատուոյն համար , ամէն ճիգ թափել որպէս զի մինչև վերջը կատարէ՝ քրիստոնեայ ընկերութեան մէջ՝ իր ստանձնած եկեղեցական պաշտօնը : Մարտիրոսի արիութեամբ պատրաստ էր կրելու իր յայտնած և կղերին մէջ

շատ մարդոց ծանր եկած դաղափարները , բայց այս մարդիկ բո-  
լոր կղերը չէին կազմեր : Կարող էր գանել և անշուշտ պիտի  
գտնէր ոմանց մէջ անկողմնասիրութիւն և արդարութիւն :

Առ խոհեմութեան՝ նախ Ա\* \* \* ի բարեսիրտ եպիսկոպոսին դրեց  
և անորմէ յանձնարարական դիր մը խնդրեց :

Արքեպիսկոպոսը փոքր 'ի շատէ տեղեկութիւն ստացեր էր հա-  
ւատաքննութեան պատմութեան և ըստ երևոյթին բաւական ծանր  
երևցող կուսարանի խորտակման գործին վրայ , և այս գործը  
լըջօրէն գատեր էր : Պատճառ մը չունէր ժեղվիկաց և Հաւա-  
տաքննութեան ատենին վէճին միջամտել : Բնաւ չէր ճանչնար  
հոռութեան միաբանութեանց իրաւասութիւնը , և եթէ բարձրա-  
ձայն չէր ըսեր , բնաւ ձեռքէն առիթ չէր հաներ գործնապէս ընդ-  
վիզելու Հոռոմի արքունեաց չափազանց պահանջումներուն դէմ :  
Քաջ գիտէր որ կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեայք ,  
մտացի մարդիկ՝ Թուլեոյի համար համակրութիւն զգացեր էին :

Ինչ որ արդէն պատահեր էր 'ի Տ . . . իր աչաց առջև կա-  
րեւորութիւն մը չունէր : Ուստի՝ ճշմարիտ բարեսիրութեամբ ըն-  
դունեց Քլավիէրի Թուլիօ արեղան և անոր քահանայական պաշ-  
տօն յանձնեց : Ըսաւ անոր շնորհալի կերպով .

— Աէն—Լուի ուսումնարանը մօտ օրերս կորոյս իր երկրորդ  
ողորմաբաշխը . քեզ անոր պաշտօնը կ'յանձնեմ :

Գարձեալ այս անգամ ժեղվիկները կորուսեր էին իրենց խաղը :  
Քսկ հայր Պարամինոսին գալով՝ արքեպիսկոպոսին հետ քառորդ  
մը խօսակցելէն ետե՛ անոր կողմն անցեր էր :



ՆԱԽ ԶՐՊԱՐՏԵՑԻՔ

Բայց ժեղվիկներն ինքզինքնին պարտեալ չնկատեցին . ոչ ինչ  
չինայեցին որպէս զի արդիւնն Թուլիօն անուն ստանալու դրակա-

նութեան մէջ , բեմին վրայ փայլելու , Բարիզի կղերին կողմէ՛ սի-  
րալիւր ընդունելութիւն մը տեսնելու , իբրև ժամանակակից հոչա-  
կաւոր քահանայ մը : Այս նպատակին հասնիլ , իրենց ուխտին  
մէկ թշնամին նկուն ընել , հետևապէս Աստուծոյ ծառայել և ա-  
նոր մեծագոյն փառաց համար աշխատիլ էր :

Ո՛վ որ չէ խորհած վանական սկոլաստիքականութեան նրբու-  
թեանց վրայ՝ կան բաներ որ իրեն դիւական կ'երևին , և սակայն  
դիւրին է անոնց մեկնութիւնը տալ : Չարիք գործել , գիտութեամբ  
գործել , անդուլ ատելութեամբ հալածել , ամէն միջոցներով կո-  
տրել մարդ մ'որու մեզի ներհակ լինիլը զիտենք , Աւետարանի  
վարդապետութեան գուրս բաներ կ'երևին , Աւետարանն՝ որ նա-  
խատանաց ներել , թշնամին իսկ սիրել կ'պատուիրէ : Ուրեմն քրիս-  
տոնէական բարոյականն ինչ ճամբաներէ անցած պիտի լինի որ  
մարմնոյ կիրքը զսպելու նուիրուած մարդիկ , իրենց կամքը սան-  
ձելու , ամենաթեթև չարիք մ'անդամ չընելու , վերջապէս կա-  
տարեալ լինելու ուխտող մարդիկ՝ հրեշտակային , բարի , անոյշ  
մարդ մը հալածելու ելնն , որպէս թէ՛ նա հրէ՛շ մը , անօրէն  
արարած մը , Աստուծոյ և մարդկան թշնամի մը լինէր : Եւ ոչ  
միայն մանաւոր անձինք՝ այլ ամբողջ միաբանութիւններ , ողոր-  
մելի իմաստակութեամբ մը՝ զոր տղու մը բանականութիւնն ան-  
գամ չկրնար ընդունիլ , այսպէս հալածիչներու , զրպարտիչներու ,  
մարդասպաններու դերը կ'խաղան : Ա՛նպաննեն , որչափ որ կարելի  
է սպաննել լեզուի սրով , բանսարկութեան թոյնով . և այս կ'ը-  
նեն՝ առանց դժկամակութեան , առանց խղճի խայթ զղալու , ա-  
ռանց խղճովին յանդիմանութիւն մը զղալու այս մասին որպէս թէ  
Աստուծոյ օրինաց դէմ ամենաթեթև բռնաբարութիւն մը չին ըներ :

Այս գաղտնեաց խորը մանենք :

Եթէ Թուլիօ՝ այս աշխարհիս մէջ հրեշտակ մը լինելու տեղ  
մարդասպան մը , Տամօլար մը լինէր , եթէ՛ իրկունը՝ Բօստի փո-  
ղոցին մէջ ժեղվիկ հարց մին՝ մշուշն՝ ուշ դարձած ատեն՝ վար  
նետէր և դաշունի երկու հարուած տար , ժեղվիկը շնչատառ-  
այս հրէշին պիտի բէր . Եղբայր իմ , քեզի կ'ներեմ , և մեռնե-  
լու ատեն այս վատազգիին համար պիտի աղօթէր :



Բայց եթէ քաղաքային ընկերութիւնը՝ միջին դարու չարաշուք օրերուն գառնալով՝ դատաւորական իշխանութիւնը քահանայի ձեռքը տայ և թողու որ փայտակոյտներ կանդնեն անոնց համար զոր Հաւատաքննիչը հաւատոյ մասին մոլորեալ կ'հրատարակէ, այս կրօնաւորը՝ եթէ իրեն յանձնուէր փայտը պատրաստել, զոհը կապել, կրակը գնել, բանդագողաշական խնդութեամբ այս դահճի պաշտօնը պիտի կատարէր :

Քստմնելով կ'ընկրկիս :

Սակայն այս ըսածս շատ դիւրին է մեկնել :

Ասոր մէջ միայն անսողական սխալմունք մը կայ : Որսորդն որ զնդակը կ'նետէ սև կոյտի մը վրայ՝ զոր բարձր խոտերու ետևը կ'տեսնէ, կարծէ թէ զայլն մը կ'զարնէ և սակայն եղբօր մը, բարեկամի մը կ'զարնէ. միթէ զանի մարդասպան պիտի հրատարակես :

Կրօնաւորը կ'ներէ թշնամոյ մը, այս թշնամին անձնապէս զինքը վերաւորեց. փոյթ չէ, մասնաւոր խնդիր մ'է, և կրօնաւորը կ'յիշէ որ պէտք է միւս երեսը մատուցանել : Ըսենք՝ ի զովեստ իր հաւատոյն՝ որ շատ անկեղծութեամբ կ'ներէ : Բայց Հաւատաքննութեան դատապարտեալը՝ Աստուծոյ թշնամին է : Եւ կրօնաւորն Աստուծոյ դատաստանը կ'ստանձնէ : Կարծէ թէ այս բանիս համար երկրիս վրայ է : Եւ ընկերութիւն մ'որչափ թերահաւատ լինի, այնչափ կրօնաւորն իր արարողութիւններն երեսի վրայ մնացած կ'դնեն. որչափ զոյս որ աշխարհն իր ձեռքէն կ'եխէ, այնչափ կատողութեամբ կ'զարնէ յանդուդն հակառակորդներն որ կը խօսին ու կ'զրեն :

Բայց պիտի ըսեն մեզ այժմ, թէ ինչ պէտք են այս վայրագ դաղաններն աշխարհիս մէջ :

Այս ճաշակի խնդիր է : Կան ժողովուրդներ որ անոնց կ'հանդուրժեն : Եւ մեր Ֆրանսայի մասին՝ դրեթէ տասն տարիէ ՚ի վեր կ'տեսնենք որ կիները Տոմինիկեան, Գապուչինեան, Կարմելեան և մանաւանդ վերապատուելի ժէզվիդ կրօնաւորաց հետ կ'մոլին սիրով : Յոսամ որ այս աշխարհիս մէջ չպիտի գանուիմ երբ այն ազգոր միջին դարու սովորութիւնները հաստատեն և Կրէվի

հրատարակին վրայ փայտակոյտներ կանդնեն : Ասան զի սաէպ աշխարհիս մէջ այս խնդիրը կ'առաջադրէ մարդ. եթէ այս պահուս եկեղեցին վարող մարդիկ իրենց հրամանին ներքև ունենալին աշխարհական իշխանութիւնը՝ միթէ դարձեալ իրենց դէմ կեցողները փայտակոյտներու վրայ պիտի հանէ ին :

Պատասխան. Այո :

Շատ անգամ կ'տեսնենք կրօնաւորներ, Ժէզվիդ, Տոմինիկեան կամ Գապուչինեան որ զղեակները կ'դիմեն և իրենց իշխանութեան վրայ պարծենալով՝ իբրև Հաւատաքննիչ կ'մտնեն մատենագրանները՝ ուր տասնութերորդ դարու աւագանին ապաւէն տուած էին իրենց ժամանակին հանձարեղ մարդոց, և անխնայ կ'քաշեն կ'հանեն Մօլիէրի, Մօնթէպիէօի, Պիլֆօնի, Ժ. Ժ. Ռուսոյի, Վօլդէրի դործերը և վայրենի խնդութեամբ կ'այրեն՝ ապուշ կրթած բարեպաշտ կաթոլիկներու առջև :

Գուք ամենքնիդ որ այս դարուս խորհողներուն և մատենագիրներուն շողջողուն պսակը կ'յօրինէք, այժմ կ'հարցընեմ ձեզի, եթէ Ժէզվիդները, Գապուչինները կամ Տոմինիկեանները կարենային ինչպէս այն երանելի ժամանակները՝ իրենց ձեռաց ներքև ունենալ աշխարհային իշխանութիւնը՝ միթէ պահ մը պիտի վարանէին՝ եկեղեցւոյ հին օրէնքն ՚ի դործ գնելու՝ «հերետիկոսաց մոլորութեանց» դէմ՝ հարկ գնելով՝ յանուն Աստուծոյ՝ ահաբեկ դատաւորաց վրայ բոլոր ազատ խորհողները փայտակոյտի վրայ այրելու պժղալի պաշտօնը :

Գու, Պ. Քուզն, որչափ որ ձեմարանական ես, Ժան Հիւսի փայտակոյտին վրայ ընդ քարշ պիտի ստիպուէիր ելնել. դու, Պ. Ժիւլ Սիմոն, քու ամենէն գեղեցիկ դրուածներով. դու, Պ. Ղամարդին, որ Ժօսէնի մէջ ժամանակիս քերթուածը յօրինեցիր, և այն սրտաւուչ հերետութիւնը դարբնեցիր՝ որ՝ լաւագոյն աշխարհի մը մէջ՝ հաւատարիմ շուններն իրենց ամենէն աւելի սիրողներու մօտ կ'գնէ. դու, Ժօրժ-Սան, առնական հանձարովդ, հրատապ դրուածներովդ. դու, Ա. Հիւկօ, քու վսեմ թշնամներովդ՝ այդ ահուելի բոցերուն մէջ պիտի քաւէիք՝ այս կրօնամոլներուն դաբնութեան ձեր դրուածքը չենթարկելնուդ յանցանքը :

Ո՛հ, կ'դողանք ըսելու ատեն, այս անստղտանելի բարքով մարդիկ, Աստուծոյ տրուած ամենէն մաքուր նուէրը պիտի համարէին՝ բոլոր այս մատենագիրներուն ողջակէզը, որ աստուածաբաններէն տարբեր կերպով խորհելու յանդգներ են: Իրենց կենաց ամենէն գեղեցիկ օրը պիտի լինէր այն օրն որ փայտակոյտին բոցը պիտի արծարծէին իր զոհերը լափելու շատ դանդաղ զըտնելով: Նոյն օրն երանութեան արտասուք պիտի թափէին խորանին առջև և պիտի շնորհակալ լինէին Աստուծոյ որ իրենց կեանքն երկարեց եկեղեցւոյ դէմ ըմբոստ անհաւատներու ցեղին բնաջինջ լինիլը տեսնելու համար:

Սակայն ըսենք որ այս Հաւատաքննութեան վերահաստատութեան կուսակիցներու դէմ աշխարհիկ կղերին մէկ մեծ մասը կ'դանուի որ այս պժգալի հակումները կ'մերժէ, և անցելոյն եկեղեցւոյ համար կ'շինին այն բանութեանց համար որոց գիմելու հարկ սեպեց որպէս զի հերետիկոսութիւնն արդիւնէ ժողովրդոց մէջ. ըսենք նաև որ եկեղեցւոյ պատմութեան ամենէն ամօթալի և վշտալի ժամանակները վանական կրօնաւորաց մոլեռանդութիւնը չափէն աւելի անցաւ միւս կղերին մոլեռանդութենէն: Այն իմաստուն վարդապետութիւնը, թէ հաւատը բունի չտրուիր, տակալին մտացի քահանային ծրարիրն է: Ասոնք են Ֆրանսայի եկեղեցւոյ գեղեցիկ աւանդութիւններն երեք դարէ 'ի վեր: Եւ եթէ՝ տասնութներորդ դարուն՝ Նանդի հրովարտակին յետս կոչումն ու բողոքականաց դէմ՝ զգուելի հալածանքը ցաւալի իրողութիւններն, պէտք է դիտնալ որ այս պժգալի անօրէնութեան սկզբնապատճառն այն ժամանակի հզօր ժեզվիզներն են:

Առ 'ի չգոյէ փայտակոյտի, կրօնական աշխարհին մէջ իրեն ատելի եղողներուն դէմ՝ զօրաւոր դէնք մ'ունի, որ է զըպարտութիւնը: Երբ ծուլիօ Բարիզ հասաւ, այդ զըպարտութիւնն արդէն կազմ ու պատրաստ գտաւ իրեն դէմ: Հարկ կար անոր պատիւն ազարտել, անոր առջև դժուարութիւններ հանել, ամենուրեք զգուելի դոյներով զանի նկարագրել, իր անունը քամահրել ընել այն կրօնական փոքր աշխարհին մէջ որ լուսարարներէ, փոքրաւորներէ, ձայնաւորներէ, զանգակահարներէ, սուրբ բա-

ներ ծախողներէ, փոքրիկ զըքածախներէ, կրօնական արձաններ, նկարներ, վարդարաններ, հրաշալի մասունքներ յօրինողներէ կը բաղկանայ:

Անդ էր Տընի՝ իրեն ստորակարգեալ գործակալներովը, որ ամէն տեղ կ'ըսէին որ ծուլիօ կաթոլիկութիւնը պիտի ուրանար, ազատ խորհող պիտի դառնար, թէ Իտալիա գացեր էր նախկին հայր Բասալիայի հետ գաշն գնելու, և թէ այս երկու ուրացողները նոր կրօն մը հաստատել կ'ուզէին. թէ ռամկապետական, կարմիր դասուն կապուած էր: Եւ երբ ջերմեռանդ ընկերութեան յետին խաւերուն իջնէին, այն տխմար և կրօնամոլ մարդկան դասուն, մինչև անդամ կ'ըսէին թէ ծուլիօ դաւադրութեան մը գլուխն է յիտալիա՝ որու նպատակն էր Բասալիան պսպ ընել և կարիպալտին Ֆրանսայի կայսր:

Նոյն իսկ Ղուիզ այս կնճռոտ մանր բանասրկութեանց և ապուշ զըպարտութեանց ցանցին մէջ բռնուած էր: Ստապատիր զրոյցներ հնարեր էին որպէս թէ Ղուիզ կրօնահի եղեր էր և ապա քօղը ձգեր էր. իսկ Ղուպերի այցելութիւնները խիստ նախատական ենթադրութեանց նիւթ կ'ընծայէին: Այս զրոյցները կը պտըտէին գործաւորութիւններու, մեծատուն կանանց սենեկապանութիւններուն, պտղավաճառութիւններուն և թաղին դոնապանութիւններուն մէջ:

Երբ մի անդամ այս վայրահաչ բերանները կ'բացուին՝ անդու թ կ'դառնան: Իրենց համար արատներն անջինջ են. ամէն տեղ և ամէն ժամ իր թոյնը կ'թափէ փերեզակին փոքրիկ կրպակէն, վաճառականին խառութէն, սպասաւորներու նախասենեկէն մինչև հարուստին սրահները, մեծ տիկնոջ զարդարանը՝ ուր դոնապանութիւններուն, սպասուհիներուն, գործաւորութիւններուն, ամէն տեսակ մատակարար կիներուն միջոցաւ որ իրենց դնողներուն քաղաքական կիբքերէն օգուտ հանելու կ'ջանան:

Երբոր աշխարհիս մէջ բարձրագիր մարդ մ'ի կորուստ մատնելու հարկ լինի, պէտք է ընկերութեան ստորին կարգերու մէջ զըպարտութիւնը շրջաբերութեան հանել, քիչ ատենէն երեսը կ'ենէ, և այն ատեն ուրիշ ընթացք մը կ'բռնէ:

Բարձր ընկերութեան մը մէջ ուր հալածանքը դեռ ևս աղնու-  
 ութեան նշոյլ մը կ'սպահէ, ուր ատելութիւնը չնուստանար և  
 անուն մը տղմով աղտոտել չզիտէ, ուրիշ ոճով ամբաստանու-  
 թիւններ բանաձևեր էին, այն հողիներուն հաւասար որոց վրայ  
 կ'ուղէին ներդրածէ: Ասոր համար երեք խօսք հնարեր էին որ  
 անվրիպելի ներդրածութիւն մը պիտի ունենար: Բարեպաշտ կի-  
 ներ, Սէն-Վէնսան տը Բօլի միաբանութեան անդամներ, ժեզ-  
 վիզաց մտերիմներ պաշտօն ունէին, ամէն անդամուն որ Բարիզի  
 ընդհանուր աթոռակալի մը հետ, երէցի մը հետ, որ և է բարձր  
 եկեղեցականի մը հետ դանուէին, բարեպաշտիկ ձայնով մ'ըսելու:

— Ի՞նչպէս, քահանայ մ'որ ժեզվիզաց դէմ դրեց՝ կարող է  
 խորանն ելնել. — Ի՞նչպէս թոյլ կ'տրուի քահանայի մը քարո-  
 ղել որու յայտնապէս Պասլին աշխարհական իշխանութեան դէմ  
 լինին ամէն մարդ զիտէ: — Ի՞նչպէս Բարիզի կղերին մէջ ըն-  
 դունուեցաւ մարդ մ'որ բանտի դատապարտուեր էր Հաւատաքըն-  
 նութեան ատենին կողմէ:

Տարակոյս չկայ որ այս դժասիրական հրահանգը ճշդիւ կատա-  
 րուեցաւ: Միթէ մարդ չարիք ըրած կ'լինի վերապատուելի հարբը  
 պաշտպանելով, որ Աստուծոյ մեծ սպասաւորներն են: Եւ դար-  
 ձեալ՝ զբարտաթիւնը դիւրաւ արձագանք կ'դտնէ, և ամենէն  
 սուրբ մարդիկ կ'երկնչէին անկեղծօրէն՝ այս դժբաղդ քահանային  
 անօրէնութենէ և իր լրագրին հաւատոյ ընելիք չարիքէն: Այս  
 բարեպաշտիկ, կէս աշխարհիկ մարդոց համար, այն մարդիկ որ  
 կրօնի մը հարկաւորութեան կ'հաւտան, բայց անոր կ'հեռակն որ-  
 չափ ատեն որ իրենց դործոց և զուարճութեանց վնաս մը չբերեր,  
 մարդիկ որոց համար եկեղեցի երթալ և Ձատիկը սպահել նորա-  
 ձեութեան, պատշաճութեան խնդիր մ'է, այս զբարտաթիւնն  
 այլաձև կ'ընդունէին: Վանայք իրենց մէջ փոքրիկ սիրուն վէպ մը  
 կ'պատմէին: Ժուլիօ՝ իր տիրուհին առևանդելու համար՝ վանքի  
 մը վանդակները խորտակեր էր:

Է

ՄԱՐԻՕՆ ԼԱ ՇԱՆՊԻՋ

Ձեմ՝ զրեր տղեղ բաներն արգարացընելու համար. աննցմէ  
 կ'ստակամ: Ինչպէս արուեստահնար գործոց, գրեանց, արձանա-  
 դրութեան, կտաւին վրայ տեսնել չեմ սիրեր զանոնք, նոյնպէս  
 չեմ սիրեր բնութեան մէջ: Գրադէտ օրէնսդիրներու մէջ ամե-  
 նէն դասականն ընդունայն կ'ըսէ:

«Ձիայ օյ և ոչ պժգուի երէշ  
 Որ՝ արուեստին հեգուսութեամբ՝ աչաց փորձելի չերէն»:

Չփոխեր այն իմ համոզումներս: Տղեղը միշտ տղեղ է. հրէշ  
 մը միշտ հրէշ է. և եթէ օձը՝ արուեստին հետևութեամբ աչաց  
 հաճելի կ'թուի, պատճառն այն է որ օձը հիանալի արարած  
 մ'է, սքանչելի կերպով ձևացած է, աշխոյժ, դիւրաշարժ, շնոր-  
 հալի և որ արժանի չէ իրեն տրուած նախատանաց, մեր նախա-  
 հայրը փորձելու մտադրելէն՝ ի վեր:

Բայց եթէ տղեղն ինձ ահ կ'ազդէ, երբեմն ալ գութս կ'շար-  
 ժէ: Շարաւոտ կեղևով մը ծածկուած մանկիկը գեղեցիկ չէ. խեղճ  
 մայրը նուազ գործով չսիրեր զանի: Խեղճ մայր, իմ դրութեանս  
 համեմատ իրասէր է: Չըսեր նա, այս բորտաթիւնն աղոր բան  
 մ'է, այլ կ'ըսէ. Ա՛սիրեմ իմ խեղճ զաւակս որպէս թէ գեղե-  
 ցիկ լինէր:

Ուրեմն իրասիրութիւն և իրասիրութիւն կայ: Այս նախաբանն  
 անհրաժեշտ էր որպէս զև Մարիօն լա Շանպիղի վրայ վայելու-  
 խօսիմ:

Ինչպէս որ զիտենք՝ Լուպէր՝ Բիկալի պուլվարին տաքրանին  
 մէջ գործ դատեր էր: Որովհետև այս անսպայ մարդը սուր աչք

ունէր և ամէն բանի ընդունակութիւն , քիչ ատենէն պատուական  
գործաւոր մ'եղաւ :

Ըսենք այժմ թէ ինչ էր Բիկալի պուլվարին գործարանը :

Ճարտարագէտ մը , որ դիպուածով քահանայ եղեր էր և մի-  
լիծնի տէր լինելու ճաշակ ունէր , Բիկալի պուլվարին վրայ՝ ա-  
հագին տախտակներու կմախք մը դներ էր , որոց վրայ ցիր ու  
ցան կ'երևէին քանի մը աչքեր , մէկ երկու հաս ձեռքի մամուլ ,  
և ամենքը տպարանի փառաւոր անունը կ'կրէին : Այս ամենն ոչինչ  
դնով ծախու աւեր էր , այս պարզ պատճառաւ որ բնաւ արժէք  
մը չունէին : Սակայն անդ հաստատուեր էր : Պուալօին առածն  
'ի գործ գնելով՝ տղեղը գեղազարդելու մասին , տախտակները յար-  
դարեր , քայքայած կողմերուն վրայ կտաւի կտորներ դամել , և  
քանի մ'անգամ ներկել տուեր էր : Այս ընդարձակ սայլարանին  
մէկ անկիւնն օթոցով զարդարել տուեր էր և զայն սրահի և դրա-  
սեննկի բաժներ էր . և անդ ունենալով օրինական իրաւունքը , ար-  
տօնագրի մը զօրութեամբ՝ իր և այլոց խենթութեամբ բաները  
տպելու՝ իր Օվէրնիացի սճով շարագրեր էր (վասն զի այս մեր  
մարդը Մօն-Տօրի խաշնարածի մ'որդին էր) խառնաշփոթ ծրագիր  
մը հրատարակեր էր որու նմանը տպարան մը չէր հրատարակած  
երբէք :

Բիկալի պուլվարին տպագրելու , քանդակելու , կազմելու , ո-  
ղորկելու գործարաններն Եւրոպայի մէջ ընդարձակութեան , գե-  
ղեցկութեան և ամբողջութեան կողմէ իրենց նմանը չունէին : Հրա-  
շալիք մ'էր տեսնելու արժանի : Եւ այս ծրագիրը՝ զոր Լավիալ  
աբբան ստորագրեր էր՝ անհատաւոր պաղարիւնութեամբ կ'հրա-  
ւիրէր , սրբազան կարտինանները , արքեպիսկոպոսները , եպիսկո-  
պոսները , բոլոր վերին և ստորին կղերը՝ երբ Բարիզ դան՝ ան-  
պատճառ այցի ելնեն այս հրաշալի գործարանաց :

Պապը միայն հրաւիրուած չէր այս մեծ արուեստահանդիսին :

Լավիալ աբբան՝ իբրև խորապէտ Օվէրնիացի , իր միլիծոնը շա-  
հելու համար՝ մարդկային տխմարութեան վրայ իր յոյսը դրեր  
էր : Առաջին անգամ՝ իր ծրագիրը՝ այլանդակ երեցաւ : Երբոր  
սրբագրուած և աղորցած գուրօ եկաւ՝ արքեպիսկոպոսարանաց և

երիցատուններու մէջ իրարու սկսան ըսել . Պէտք է որ այս ճշմա-  
րիտ լինի , թէ ոչ այս մարդը չալիտի յանդգներ այս բաները ծա-  
նուցանել՝ եթէ միայն տնիկ մ'ունենար : Երկու երեք եպիսկոպոս-  
ներ , հինգ վեց տարուան միջոցի մէջ՝ շրջապատին բոլորտիքը  
մոլորեցան՝ և զիրենք առաջնորդող կառավարները յետին ճար-  
պիկութիւն բանեցընելով՝ ծրագրին համեմատ՝ նշանաւոր գործա-  
րաններուն դուռը դանելու յաջողեցան : Եպիսկոպոսները շքեղ  
ընդունելութիւն մը գտան : Բոլոր բանորներն արդէն հրաման-  
ներ ստացեր էին , այս այցելութենէ ծագելէք շահուն վրայ : Այս  
հրամանները մի առ մի կատարուեցան , ծուներ դրին , թուղթ ծալ-  
լող և կազմող բարեմիտ կիներ , ինչպէս որ են ամենուրեք , սկսան  
վրայէ վրայ խաչ հանել , և փոխարէն օրհնութիւններ ընդունե-  
ցան : Եպիսկոպոսները՝ այս բարեպաշտական յայտարարութեանց  
առջև՝ շատ պահանջող չէին երևեր , և Լավիալի քովէն զմայ-  
լած կ'հեռանային՝ Լավիալ որ ինք ևս յարդ ու մեծարանք չույ-  
լելու , հռոմէական դուռ վարդապետութեանց համար ունեցած  
հաւատարմութիւնը բացատրելու համար կտոր կտոր եղեր էր և  
ժամանակ չէր տուած եպիսկոպոսներուն ուրիշ բան մ'ըսել , ե-  
թէ ոչ , մեծ գործարան մ'է : Երբ գաւառը զարձան , իրենց այս  
ձախող այցելութեան մասին բնաւ պարծենալու պատճառ մը չու-  
նէին :

Լավիալ աբբան՝ տպագրիչ , բնապէս լրագրատետ եղեր էր ,  
և իր լրագիրը , *Կղերնի պահանջագրքը* , անվրէպ կ'յայտնէր որ այս  
ինչ օրն այս ինչ գերապատիւ և վերապատուելի եպիսկոպոսը  
Բիկալի պուլվարին մեծ գործարանները տեսնելու համար այցե-  
թեան եկեր էր :

Միով բանիւ , կաթոլիկ աշխարհին մէջ՝ իբրև հաստատեալ ի-  
րողութիւն կ'հատային որ երկրիս վրայ հուշակաւոր Լավիալի  
տպագրատան պէս աղւոր բան մը չկար :

Բայց բաւական չէր ընդարձակ հիմնարկութիւն մ'ունենալ , մա-  
մուլներ , տաւեր ունենալ , պէտք էր միջոց մը գտնել ուրիշ  
գործարանաց մէջ բանորներուն ընդունած օրողչէքը չվճարել :  
Լավիալ յաջողեցաւ : Ապաստանարան մը բացառ բոլոր արդիւնալ

քահանայից զոր Քրիստոսն ամէն առտու մեծ քաղքին փողոցները կ'նետէ : Անոնց ըսաւ .

— Աւասիկ ձեզի աշխատութիւն . բայց դեռ այս արուեստը չգիտէք : Պէտք է ուրեմն ձեզի աւելի քիչ վճարեմ՝ քան ճարտար գործաւորներու :

Խնդիրը լուծուեր էր : Իբրաի՛ նախախնամական նպաստ մ'էր այս աշխատութիւնն այս ողորմելի մարդոց համար : Ստոյգ է որ վարպետը խիստ մարդ էր և պահանջող, միշտ աշխատութեան ժամուն մէկ վայրկեանի յայտարարման 'ի համար կ'առնուր, բայց օրուան հացն ապահովեալ էր, և սրտի մեծ ուրախութիւն մ'է երբ մարդ անօթութեան դէմ մաքառած է :

Իր ձեռնարկութեան մէջ այս տեսակ հնարք բանեցընելով՝ Լավիալ իր գործերը յաջող վիճակի մէջ դրեր էր : Բայց ախորժակն ուտելով կ'բացուի . շահելի միլիօնները բաւական շուտով չէին հասներ : Ձեռնարկիչն ուրիշ գործ մը սկսաւ : Պատարագներուն առուտունն ըրաւ : Աղէ՛, պիտի ըսես հիմակ, ընթերցող, միթէ պատարագի առուտուր կ'լինի, այդ անկարելի բան է : Անկարելի չէ, և այս տուրևառն այլ և այլ ճամբով կ'ընեն : Օվէրիային ամենէն պարկեշտ ճամբան բունեց : Քահանայ էիր, հարիւր Ֆրանքի գիրք կ'ըրկէր քեզի : Քու սրբատան մէջ երկու հարիւր Ֆրանքի պատարագի դրամ ունէիր, զոր չէիր կարող վճարել տալ : Անոր կ'հասցընէիր երկու հարիւր Ֆրանք, անկից իր զըկած գրեանց գինը կ'ընդունէր : Նոյն պահուն քահանայի մը որ պատարագ չունէր կ'գրէր . — Վճարէ իմ հաշուիս երկու հարիւր Ֆրանք, և քեզի հարիւր Ֆրանքի գիրք պիտի ուղարկեմ : — Պարզ փոխանակութիւն որ ինքնին օրինաւոր է, բայց և այնպէս ահագին գումարներ շահ կ'ըրերէ :

Շահագործութեան ուրիշ ճիւղ մ'ալ կար որ մեր մարդուն ուշագրութենէ չպիտի վրիպէր . այսինքն կղերին սեղանաւորը լինիլ . քահանայից մանր մունր խնայութիւնները կ'ընդունէր, օրինական տոկոսը կ'վճարէր օրին, և դրամադրութիւն իր ձեռնարկութեան կ'գործածէր :

Գրեթէ միլիօնի տէր լինելէն ետե՛ Լավիալ արբան պատիւներ

եստանալու ետե՛ եղաւ : Նորին Վսեմափայլութիւնն՝ ներքին գործոց պաշտօնեայն՝ Պատուոյ խաչն իր գործն այսպիսի ճարպիկութեամբ յառաջ տանող մարդու մը շտալուն անքաղաքավարութեամբ, նոյն իսկ ապերախտ Հռոմ՝ Մեծն Գրիգորի կամ Ռսկի Խթանին ասպետ չընելուն զանի, բոլոր ճիգը թափեց որ կղերական պատիւ մը ստանայ . շատ մ'եպիսկոպոսարանաց դռները զարկաւ, որպէս զի որ և է վիճակի մը կանոնիկոս լինի, և 'ի վերջէ յաջողեցաւ : Իր կենաց մէջ մեծ օր մ'էր այս և իր գրաշարներուն համար այնքան դաժան չգտնուեցաւ : Բայց վերջին փառք մ'ես պիտի վայելէր : Սանտվիչի կղզիներէն՝ բարեմիտ եպիսկոպոս մը Բարիդ գալով՝ նշանաւոր յայտագրին ընթերցման վրայ՝ Բիկալի տպագրատունը զնաց և այնքան թղթի պրակներու վրայ, այնքան հազարաւոր ռիսաներ կապարեայ տառերու վրայ զմայլելով՝ իր եպիսկոպոսական քաղքին, Հօնօլուլուի ընդհանուր աթոռակալ ըրաւ Լավիալ արբան :

Այն օրէն սկսեալ՝ իր դարնեաց վրայ հանգչելով՝ ինքն իրմէ գոռողացած՝ տպագրիչներու այս Ալէքսանդրը, բարի մարդ մ'եղաւ, և իր սայլարանին մէջ երթեկեկելով այնչափ մեծ խստութեամբ չէր հսկեր իր քահանայական դասակին վրայ :

Լուսէր՝ Լավիալի գործարանը մտեր էր՝ ճիշտ այն միջոցին որ Լավիալ Հօնօլուլուի պատուակալ աթոռակալութեան մեղրի ամիսը կ'վայելէր :

— Գու գեղեցիկ պատանի մ'ես, ըսեր էր անոր Լավիալ, որ այն մէջոցին ամենէն զուարթ ժամանակն էր : Արօղ, ի՛նչ ումրաձիգ զննուր կրնայիր լինիլ : Եւ միթէ երէց եղա՞ր : Իմ՝ պատկառելի պաշտօնակիցս, կոչմանդ հակառակ վարուեր ես : Գու Պիրէնեան ես, կեցցես : Լաւ սատանաներ են Պիրէնեանք : Այբուբենի տառերդ գիտես անշուշտ : Քեզ զրաշար ըրի : Արիութիւն և յաջողութիւն :

Լավիալի գործարանին զմայլը՝ որ միայն նեղ ու տղմուտ փոքր փողոցով մը զատուած էր, լուացարարի կայան մը կար : Այս տան գործաւորուհիները՝ թեթևոտն և միշտ շարժման մէջ՝ ամէն վայրկեան տպարանի մարդոց աչքին առջևն էին, և մեր անկեալ

հրեշտակները չէին խնայեր աչք ընել, և ՚ի հարկին՝ խօսք նե-  
անել լուսացուհիներուն : Բնականապէս այնպէս պատահեր էր որ  
այս թշուառները դացեր էին անոնց մէջէն ընկերու հիներ առնլու ,  
զոր ոչ կրօնական և ոչ քաղաքային օրինօք իրենց կողակից ընե-  
լու չէին յաջողած :

Լուսէր՝ այս մարդոց ախուր վիճակին վրայ ցաւեր էր , ու  
բոնք՝ ամուրիութեան ուխտով՝ ամենէն անզսպելի կրից տանջանքը  
կրելու գատապարտուած էին , դարման մը բերելու օրինաւոր մի-  
ջոցէ զուրկ մնալով : Ինքն ևս՝ մեծ ոյժ ունենալով և առոյգ հա-  
սակին մէջ գտնուելով՝ կ'զգար որ մարդ էր , և շատ անգամ այս  
կոշտ սիրոյ օրինակն իր դէսին վարնող փորձութիւն մ'եղաւ ,  
ստէպ և հըր շողիի մը պէս որ առանց որ և է հեշտութեան  
կ'գինովցընէ :

Երբ իրկուն մը՝ յետին ծայր յոյնած գուրս կ'ելնէր տպարա-  
նէն , օդ ծծելու և քիչ մը զբօսնլու փափաքով , փողոցի մ'ան-  
կեան քարին վրայ կռթնած՝ փոքրիկ սքլած կին մը տեսաւ՝ որ  
անշարժ և դրեթէ կ.քած էր : Նախ կարծեց թէ գործաւորուհի  
մ'էր որ իր ընկերուհւոյն կ'սպասէր , կամ թերևս ընկերին : Լաւ  
մը դիտեց և Մարիօն լա Շանպիզը ճանչեց : Մարդկութիւնը ծաղ-  
րաբան է , և իրեն զոհեր պէտք է : Այս զոհերն են տկարները ,  
փոքրիկներն ու ցաւազարները : Գործարանին՝ ինչպէս նաև գնդու-  
ցին վայրագութիւն մէջ՝ միշտ կ'դտնուի մէկն որ միւսներուն նշա-  
ւակն է : Մարիօն ալ լուսացարար կանանց նշաւակն էր : Անոնց  
մէջ նորատի , առոյգ , քաջաւոզ կիներ կային , և ընդ հակա-  
ռակն՝ Մարիօն պառակելի , վախ , տղեղ ու հիւանդոտ էր : Այս  
նիւթական թշուառութեանց իբրև հետևութիւն՝ անպաշտպան էր :  
Տկարներուն մէջ՝ միայն սապատողներն ունին խելք և պատրաս-  
տաբանութիւն : Ուրեմն ամենուն խաղալիկն էր Մարիօն : Քանի  
քանի անգամ՝ ահագին քրքիջներ՝ նորատի աղջկանց աշխատած  
սրահէն ելնելով՝ մեծ խնդութիւն բերեր էր տալազրիշներու դոր-  
ծարանը , և ամենքը կ'ըսէին . — Անտարակոյս Մարիօնն է դար-  
ձեալ որու հետ կ'իյնան :

Այն օրն որ Լուսէր այս ողորմելի կիներ գտաւ անկիւնաքարին

մօտ ընկած , իբրև խեղճ Ազար մ'անապատը նետուած՝ Միայն Մա-  
րիօնի վրայ ծաղը չէին ըներ , այլ լուսացարանէն բոլորովին վառն-  
սեր էին : Աւելի ուժեղ , աւելի ժիր գործաւորուհի մը գտեր էին  
անոր տեղ : Շահը չճանչեր արգահատութիւն : Այժմ՝ անպաշտօն ,  
կարօտ էր և անտուն :

— Ի՞նչ կ'ընես այդ տեղ , Մարիօն , ըսաւ անոր Լուսէր :

Պիրէներանը պատասխան չընդունեց : Խեղճ կինը սրտին խորէն  
հառաչ մը հանեց : Այս հառաչը՝ նոյն պահուն՝ շատ բան կը  
նշանակէր :

- Կարելի է քեզ ճամբեցին :
- Այո՛ , պարոն , կ'մնայ ինձ անօթութեան մեռնիլ :
- Ո՛հ , ապուշ կանայք : Ըսէ ինձ , կ'ուզես տունս անդս շտկել :
- Ո՛հ , յօժարակամ , պարոն :

Եւ իր աչքն որ անուշութիւն մ'ունէին , ամբարձան դէպ ՚ի այս  
այլանդակ տղուն՝ առ ՚ի չոյցէ խօսքի՝ խորին երախտագիտութիւն  
մը յայտնելու :

— Գշտոյի մը պէս տուն տեղ չպիտի ունենաս : Խոհանոց մը  
ունիմ , խոց մը և դրասնեակ մը , ուր դու պիտի պառկիս : Իր-  
կունը մեր ճաշը պիտի պատրաստես : Եթէ այս առաջարկութիւնս  
կ'ընդունիս , ելիւր երթանք :

Պատասխան տալու տեղ՝ Մարիօն ոտք ելաւ , և ընկեցիկ շան  
մը պէս զոր կ'զգուես , նոր տիրոջ մօտ գնաց և տան մինչև հին-  
դերորդ գատիկոնն անոր հետեւեցաւ :

— Աւասիկ այս տեղ թաղուհի ես , օրիորդ Մարիօն : Ազատ  
գործէ , բաւական է որ երեկոյեան թանը լաւ լինի , ուրիշ բան  
չեմ խնդրեր : Փոքր ինչ ցասկոտ եմ . ստէպ քեզի հետ չպիտի  
խօսիմ . բայց որովհետև կարծեմ թէ պարկեշտ աղջիկ մ'ես ,  
քեզ կ'յարգեմ . նոյն սեղանը միասին պիտի նստինք :

Մարիօն կարծէր թէ կ'երազէր : Լուսէրի համեստ սենեկին մէջ  
հաստատուեցաւ : Հիանալի կերպով մաքրասէր կին մ'էր . բա-  
ւական լաւ կերակուր կ'եփէր , տիրոջը ճերմակեղէնն աղէկ վի-  
ճակի մէջ կ'պահէր , և շուկան երթալով խնայութեամբ տան  
մանր մուր բաները գնել զիտէր :

Լուսկերին ուղածն ալ ուրիշ բան չէր. կանանց մէջ լաւագոյն էր այն իրեն համար :

Տարօրինակ գաղափարներ մեր բնատիպ մարդուն զլուխը պաշարեր էին՝ Հօնօլուլուի ընդհանուր աթոռակալին գործարանը մտնելէն ՚ի վեր : Քահանայից այս թիարանին մէջ երկու հարիւր մարդիկ կային , որոց շատն իրենց առոյգ հասակին մէջն էին , որ ամենքը կանանց հետ կ'ապրէին և շատեր արդէն հայր եղեր էին : Լրագիրներու մէջ շատ անգամ կարգացեր էր թէ այս հարձերն իրենց օրինաւոր կիներն ընելու համար փորձող անկեալ քահանաներ քաղաքապետական իշխանութենէ մերժուեր էին , և թէ դատարաններն օրէնք մը դրեր էին մերժելու համար մարդու մը , վասն զի քահանայ էր , ինչ որ չեն մերժեր յետին աւազակին՝ երբ մի անգամ բանտէն կ'արձակուի : Իր պարկեշտ հոգին սրտմտեր էր : Ինքն ևս՝ սրբավայրէն վաճառուելով՝ մուրացողութեան մէջ նետուելով՝ եթէ իր սրտին յարմար կին մը գտնելու կարելի լինէր , պէտք պիտի լինէր կամ մոլութեան մէջ վատթարանալ կամ մարդկային բնազդումներուն ամենէն անոյշ և զօրաւոր բնազդումը զսպել :

Գնաց օր մը Ժուլիօն գտնելու :

— Իմ ամենասիրելիս , քեզի լուր մը կ'բերեմ որ քեզ պիտի զարմացընէ :

— Ի՞նչ լուր :

— Կ'կարգուիմ :

— Խաբեբայ :

— Քեզի կ'ըսեմ թէ կ'կարգուիմ :

— Ճիշտն ըսէ , միտքդ ծիծաղիլ է : Եւ որո՞ հետ կարգուիլ է միտքդ :

— Ե՛հ , աղջկան մը հետ :

— Ի՞նչ ընտանիքէ աղջիկ մը :

— Ընտանիք չունի :

— Ի՞նչ , միթէ պիտականոցէ՞ն դտար :

— Ճիշտ այդպէս . իր անունը կ'ցուցընէ :

— Ա՛հ , ի՞նչ է այդ անունը :

— Մարիօն լա Շանպիլ :

— Շատ լաւ , վայելուչ անուն : Հասցա քու գոմարտիկի ( սիրուհւոյդ ) տարիքը :

— Գուշակէ :

— Քսան տարեկան :

— Ա՛հ , այո՛ , աւելի հեռուն դնա՛ :

— Երսուն տարեկան :

— Չդտար :

— Քառսուն տարեկան :

— Գեւ չհասար :

— Յիսուն տարեկան :

— Գեւ քանի մը տարի աւելցուր :

— Տար երկիր կ'ուղես երթալ պառաւ խենդուկ մը կին ընելու համար :

— Ամենէն : Պառաւ , այո՛ . յիսունը հինգ տարու է : Խենդուկ , չէ բնաւ : Խեղճ կիներն իմ թանս շինելու մասին շատ ճարպիկ է :

— Կատակը մէկդի , Լուսկեր , այդ սնտախ խօսքերդ զիս կ'ընդեն . ուրիշ բանի վրայ խօսինք : Ի՞նչպէս է անուանի կանոնիկոսն և ընդհանուր աթոռակալը , Բիկալի տպարաններու ընդհանուր տեսուչը :

— Աշխարհիս մէջ անոր պէս բարեմիտ մարդ չկայ : Բայց կատակը մէկդի , քեզի հետ ծանր խորհրդայ մը վրայ խօսիլ կ'ուղեմ : Կ'ուզեմ կարգուիլ անվրէպ :

Լուսկերի ձայնէն կ'իմացուէր որ ճշմարտապէս այս որոշումն ըրեր էր :

— Բարեկամդ իմ , այդ սխալմունքը մի ընե՛ր : Քաղաքապետական որ և է պաշտօնեայ չպիտի հաճի քեզ կարգելու : Ասկից զատ՝ եթէ քահանայական պաշտօն չես վարեր , յուսամ որ անոր կարգը կ'յարգես , և այդպիսի դայթակղութիւն մը պատճառելէ կ'ղղուշանաս :

— Ճիշտ անոր համար որ քաղաքապետական իշխանութիւնը պիտի մերժէ՝ այդ իշխանութիւնը պիտի հրաւիրեմ բացորոշ կեր-

պով որ իր կանոնը բացատրէ : Արձաբանութեան յարմար մեծ խնդիր մ'է . կենսական խնդիր մ'է . կ'ուզեմ որ այն վիճաբանութեան ներքեւ դրուի : Աւելի բարձր խնդրոյ մը կ'յարակցի այն , այսինքն մարդկային ազատութեան : Ա'ողաչեմ քեզ հաւատալ որ Մարիօնի ազուր աչերն այս բանին մէջ կարեւորութիւն չունին : Երկիրը ազդելու չափ տղեղ կ'ին մ'է , և մինչև անդամ ունելիքով անոր չպիտի դպիմ : Ափսո՛ս , դու քաջ դիտես , կենացս մէջ մեծ և վշտալի յիշատակ մ'ունիմ : Անոր մէջ ուրիշ սէր մը կայ որու տեղ ոչ ինչ չպիտի յաջորդէ , թող թէ գոհճիկ միութիւն մը , որմէ իզմէ աւելի ստորին մարդ մ'անդամ իրաւամբ պիտի ամչնար : Խեղճ Մարիօն՝ երբ մի անգամ իմ կողակիցս լինի , իմ գաւառիս քաղաքապետին առջև՝ կայս և մարտիրոս պիտի մնայ , կ'երգնում քեզ : Նա իրաւունք պիտի ունենայ տիկին կոչուելու : Խեղճ պառտուր , ամուսնական կապէն միայն այս օգուտը պիտի քաղէ : Սիրոյ զրկանքէն պիտի մխիթարուի իր դուռըութեան ստացած վայելքով : Ապա հարուստ թէ ոչ , կարծեմ թէ բաւական պատուած պիտի լինիմ Մարիօն լա Շանպիզ :

— Այդ մոլորեալ երեակայութեան մ'երազն է , խեղճ Լուպէրս : Պէտք չունիմ այդ ընթացքդ գատել . միայն խորհուրդներով կ'ուզեմ քեզ համոզել : Բայց բացէ 'ի բաց կ'ըսեմ՝ այդ ասորինի գործէն բոլոր ուժովս քեզ դարձնելու պիտի ճգնիմ , ասորինի գործ մ'որ հասարակաց ուշադրութիւնը քու վրայ պիտի հրաւիրէ և կրօնական օրացրութեան բոլոր անէժքը քու վերայ թափել տալու առիթ պիտի լինի :

— Բնաւ փոյթս չէ այդ կրօնական լրագրութիւնդ , ծակուած ճշմարիտ թմբուկ մը : Արժո՛ հոգն է , կ'աղաչեմ , Արթուրէ՛ երբեք և ուրիշ պորչող թերթեր որ ունալու պէտք ունին , ուշադրութիւն դրուելու համար : Այն օրէն որ իրենց գլուխը կուրուսին՝ առօք փառօք թաղուեցան : Ա՛հ , այն իրենց պարապլուսը դարձեալ բան մ'էր . անոր հետ չափուելու , իր բարկութիւնը դիմադրուելու պիտի փափաքէի . բայց այս իրին , յաջորդաց բարկութիւնը , որոց անունը տալու հարկ չկայ , է՛հ , այդ բարկութեան վրայ միայն ծիծաղս կ'շարժի :

— Այո՛ , կարծեմ թէ այս տեսակ մարդերէ երկնչող բնաւորութիւն մը չունիս :

— Ա՛հ , անտարակոյս :

— Աերջասպէս՝ եթէ իրօք , թէև չեմ կարծեր , մտադիր ես այդ խորհուրդդ կատարել , խոհեմութիւնը կ'պահանջէ որ կանխաւ Հոռոմ՝ դրես և խնդրես որ ամուրիութեան ուխտեդ քեզ քակէ : Այս պարտքդ է իբրև քահանայ :

— Սիրելիդ իմ ծուլիօ , այլ ևս քահանայ չեմ : Հոռոմ երթալէս 'ի վեր կղերական կրպակին աղտոտ ծակն ու ծուկն այնքան մօտէն տեսայ որ անոր վրայ բնաւ յարգս չմնաց , դէթ բարեկարգութիւն խնդրելու մասին : Իսկ հաւատոյ խնդրոյն դալով . . . ս՛հ , սիրելի ծուլիօ , դու հաւատդ պահեր ես և շատ երջանիկ ես . իսկ ես եթէ չկորուսի , դէթ շատ տկարացած է . . . : Մէկ խօսքով շատ դո՛հ եմ եկեղեցական կարգէն ելնելուս : Միթէ դիտեն որ սոսկալի բան է ուրիշներուն վարդապետել և չզիտնալ թէ արդեօք այս վարդապետութեան կ'հաւատնք թէ ոչ :

— Ի՛նչ , Լուպէր . եթէ դեռ ևս բարեբաղդութիւն ունենայիր ուսցնելու փոքրներուն և խոնարհներուն՝ Աւետարանի վարդապետութիւնը , միթէ պիտի տարակուսէիր թէ արդեօք այդ վարդապետութեան կ'հաւատաս թէ ոչ :

— Ա՛հ , բարեկամդ իմ , ըսաւ Լուպէր , ս՛չ , Քրիստոսի ուղիղ վարդապետութեան մասին չպիտի ընեմ այս հարցումը : Բայց կայ , ինչ որ մարդիկ աւելցուցին . . . : Այլ սակայն , շարունակեց Լուպէր , քեզի պէս մարդու մը համոզումներու առջև՝ ծուլիօ , իմ թերահաւատութիւնս կ'ընկրկի : Վարելի է որ օրին մէկն որովը ցորենէն , մարդկայինը երկնայինէն բաժնելու կարողութիւնն ունենամ : Գու միայն այս աշխատութեանս կրնաս օգնել , ծուլիօ : Բայց այժմ՝ խնդիրն ասոր վրայ չէ : Հոռոմի վերակոչել՝ մեզ զբաղեցնող խնդրոյ մասին , քու գործդ է : Գու լրացրայեա ես , անոր ուշադրութիւնը հրաւիրէ այն անել ճամբուն վրայ ուր կը թողու մարդկան խիճը , որոնք ամուրիութիւնը պահելու անկարող լինելով՝ ինչպէս որ յայտնի ապացոյցներ տունն , պէտք չէ որ հոռոմի պահելու վիճակին մէջ ձգուին , այլ ընտանեկան կե-

նաց մէջ պարտին մտնել որպէս զև պարկեշտ մարդիկ դառնան , լաւ քահանաներ չլինալով լինիլ : Իսկ ես՝ քաղաքային նկատմամբ կ'ուզեմ քննել խնդիրը : Պէտք է որ դատարանները լուսաւորուին նոր վիճաբանութեամբ մը , նոյն իսկ Բարիզի մէջ , որպէս զև բոլոր աշխարհի մէջ արձազանք ունենայ : Պիտի տեսնես անշուշտ որ առ երեսս իմ՝ դատս վարելու ելած պիտի լինիմ , բայց դաշտփարը յառաջ պիտի երթայ . և եթէ միայն ապագան յարգարեմ , եթէ խնդիրը լուծման վիճակի մէջ գնեմ որով մարդկութեան և առաքինութեան ճշմարիտ շահերը պիտի պահպանուին՝ լաւ գործ մ'ըրած լինելուս խղճի գոհունակութիւն պիտի զգամ :

— Գիտես , Լուպէր , որ ես ալ ճիշտ քու կարծիքդ ունիմ այս խնդրոյն վրայ . բայց միթէ ժամանակը հասած է զայն յուզել և լուծելու :

— Յուզելու ժամը հասած է , այո՛ , այլ ոչ լուծելու : Նոյեմբեր ամսուն ցորենը կ'ցանես , եօթն ութ ամիս կ'անցնի մինչև հունձքը : Բարեկամ , մարդկութեան կենաց մէջ դարերն ամիսներ են : Ա՛տեսնես՝ ժամ է արդ ապագային ահօսին մէջ նետել դաշտփարը . որոշեալ ժամանակին պիտի բուսնի ամէն բան վարող էակին ձեռօք :

Երկու բարեկամք իրարմէ զատուեցան : Ժուլիօ իր քրոջ պատմեց Լուպէրի քմածին հաճոյքը :

— Յիմար է այս խեղճ մարդը , ըսաւ Լուիզ :

— Այս յիմարութիւնը , եթէ իրօք յիմարութիւն է , վեհանձն սրտէ մը կ'ծնի : Նոյնպէս յիմար էր երբ Հուով կ'գար , և կ'աշխատէր՝ իր վերջին թանկը ծախսելով՝ բանտէն զիս ազատելու : Ամէն ազատարարները յիմար են : Բայց պէտք է սիրել և օրհնել այս յիմարները :

Ը

ՍՊԱՍԱՐԿՈՒ ՍԱՐԿԱՒԱԳԸ

Երսուն տարիէ 'ի վեր Բարիզի եկեղեցեաց մէջ իրարու յաջորդող բոլոր սպասարկու սարկաւաղաց պատմութիւնը գրողը պիտի գրէր կենսագրական այնպիսի հաւաքածոյ մ'որ երեակայութիւնն իսկ չպիտի կարենար հնարել : Երբ մեծ տօնի մ'առթիւ՝ կ'տեսնես երէցն որ պաշտօն կ'կատարէ երկու ալևոր քահանայից մէջ որ իրենց հաղած սարկաւաղի ոսկեթել հանդերձն այնքան շքեղ է որքան պաշտօն կատարող քահանային շուրջաւոր , երբ նոյն մարդիկ այս քահանային աջ ու ձախ գին կիցած են առաջին կարգի թափորի մը մէջ , դու հաւատարիմ հանդիսատես կամ աշխարհի մարդ , կ'երեակայես որ մեծ թեմի մը առաջին հովիւր , ինչպէս Սէն-Ռօքի կամ Մատլէնի թեմին , անդ վստմագոյն պաշտօն մը կ'վարէ , իր կղերական դասուն երկու դերասպատիւ պաշտօնաւորներէ , իր հաւասարներէն շրջապատեալ , բայց կ'սխալիս : Ո՛չ , ասոնք ողորմելի մարդիկ են՝ որ՝ ըստ կանոնի՝ պարտաւոր են միայն կիրակի օր ժամը մէկին եղած պատարագէն ետքը ճաշել , և ամէն օր կէսօրէն ետք :

Ո՛հ , սիրուն , աշխարհիկ , բարեպաշտ կին , որ այնչափ ուշ կ'արթննաս , չգիտես դու որ կիրակի օր քեզի պատարագ տալու համար , նոյնպէս շաբաթուան միւս օրերը , այնպիսի ժամանակ մը որ քու հաճոյից և ծուլութեանց յարմարի զուարճութեամբ անցուցած գիշերներուդ , ստրուկ մը անօթութեան տանջանքը պիտի կրէ : Եթէ կին լինէի՝ երբէք չպիտի գտնուէի ծոյլերու այս պատարագին : Սիրոս սաստիկ պիտի տառապէր՝ մտածելով այն ողորմելի մարդուն որու ստամոքսը ջրածոթեան զոհ ընկած է , և ասկից զատ՝ զԱստուած վիրաւորելու պիտի երկնչէի :

Այս սպասարկու սարկաւաղունք երբեմն հէք քահանաներ են :

իրենց քաղաքական կարծեաց պատճառաւ տարադրեալ, լեհացիներ, որ իրենց Գրանսայի եղբարց կ'դան, սպանիացիներ՝ որ այլ և այլ հետամուտներու պայքարին մէջ վտանդի ենթարկած են : Աքսորի հայն անոնց գնել կ'տան :

Երբեմն ալ ժէզվիկաց հզօր միաբանութեան ատելութենէ հաւածեալ մարդիկ են : Առաջին կարգի դիտուն մ'որու անունն եւրոպական է, որ ժէզվիկներէն հեռացաւ շատ տարիներէ՝ ի վեր, այսօր Բարիդի մէկ թեմական եկեղեցւոյ մէջ սպասարկու սարկաւադ մ'է : Անտարակոյս Արակօի և Հիւմպօլտի պաշտօնակիցն այս աննշան վիճակին մէջ պիտի մեռնի, թէև իր դիմանական հրատաարակութեամբ մեծ պատիւ կ'բերէ քահանայական դասուն :

Շատ անգամ սպասարկու սարկաւադունք բարձր հանձարի մարդիկ են, անխոհեմ մտածութիւններով վտանդի մէջ ընկած մարդիկ են . խրոխտ բնաւորութիւններ, որ ծուլութեամբ չեն իրենց թեմին կամ վիճակին բարձր աստիճանաւորաց առջև . մատենագիրներ՝ որոց յանդգնութիւնը դժգոհութիւն տուած է, անձաշակ և անմիտ գրչակներ որ իրենց այլանդակ տեսութիւններով աշխարհը տաղտկացուցին . թշուաւներ որ իրենց սրտին ներշնչութեանց անսալով չկրցան պահել իրենց տկարութիւնները . ուրիշ աւելի դժբաղդ մարդիկ՝ որ իրենց կիրքն արդարացընելու համար սիրոյ պատրուակը չունէին : Ասոնք կշտամբանք կրէին ետև՝ կղերանոցի մը մէջ ապաշխարութեան օրեր անցընելէն ետև՝ իրենց սև ու երկար պատմութեանով բարիդեան սրբատունները սրբելէն, ամէն թափօրի ներկայ գանուելէն, քահանայութեան պաշտաման մէջ ուրիշներու տեղը բռնելէն տաղտկացան : Ասոնք՝ մեծ հանդէսներու օրեր՝ ոսկեղօծ սնդուսով, մետաքսով և պերճ զգեստներով ծածկուած՝ չմեռնելու չափ վարձքով կ'ապրին :

Աղերանոցէն ելնող տղան, զոր եպիսկոպոսը ձեռնադրեց, զոր թեմ մը զրկէ իբրև հովիւ, քահանայական երախտաւորներէ նախագաս կ'սեպուի և անոնց կ'հրամայէ : Նա կ'յաւաջանայ, օրին մէկն երկրորդ փոխանորդ լինելու պիտի յաջողի . աւելի ատեն անցնելուն՝ առաջին փոխանորդ պիտի լինի և մեծ մարդ մը : Սպասարկու սարկաւադը ծերանալով միշտ կ'ընկրկի : Մատէնի և Սէն-

Քլօդիլտի շքեղութիւններէն Աիլէդ, Արընէլ, Մօն-Ռուժ իսկ կ'իջնէ և օրին մէկն այս թշուաւին ոսկորախը՝ գոհհիկ մարդոց ոսկորներուն հետ Վիլիի կամ Քլէլի-Լա-Վարէնի փոսը պիտի նետուին :

Այս ամէն պատճառներով՝ սոյն մարդիկ արդահատութեան արժանի են : Նաև երբեմն, վասն զի պէտք է ամէն բան ըսել, կան չնչին մարդիկ որոցմէ օգուտ քաղել կարելի չէ, և բնապէս այս ցուցամուրթեան հանդէսները լեցընելու կ'դան . երբեմն նաև թուլամորթ և անձարակ մարդիկ՝ որ իրենց մութ կենաց մէջ մոռցուելու կ'գատապարտուին և որոց վրայ ոչ ոք կ'խորհի, վասն զի չգիտեն իրենց արժէքը ցուցընել :

Տեսանք որ արքեպիսկոպոսն ողորմաբաշխ անուաներ էր Թուլիօն Սէն-Լուիի ուսումնարանը : Պ. Պարամինոս՝ ամէն կողմէ թախանձանք լսելով՝ բոլոր եկեղեցական խորհրդին մէջ յայտնեց թէ ինչ մեծ արտունջներու տեղի տուեր է այս պաշտօնը կրօնական աշխարհին մէջ՝ որ կարտինալին միտքը դղրդեցաւ : Գժուարին է դիմադրուել դաս մը մարդիկը զոր կ'յարդենք . ասոր համար քաջասրտութիւն պէտք է :

— Բայց ինչ պաշտօնի գնենք, ըսաւ արքեպիսկոպոսը, վասն զի վերջապէս վատ քահանայ մը չէ :

— Աստուած իմ, վրայ բերաւ աշխուժիւ Պարամինոս, որու մօտ ժէզվիկաց աշխարհական գործակալները վերապիտի գործեր էին, կ'երևի ինձ որ մեծ պատիւ է թեմի մը մէջ զանի սպասարկու սարկաւադ կարգելը :

— Լաւ ուրեմն, այդ գործը կարգի դիր : Աերջէն կ'նայինք : Նոյն օրը Թուլիօ կ'ընդունէր՝ Պարուէր փողոցը՝ Պարամինոսի կողմէ ստորադրեալ նամակ մը, այս օճով .

« Պարոն արեղայ ,

« Արքեպիսկոպոսական իշխանութիւնը, ձեր վրայօք աննպաստ լրեր առնելով՝ կ'ստիպուի ՚ի նպաստ ձեր եղած որոշումն ետ ձգել : Նօլը-Տամ տէ Շանի թեմին սարկաւադ անուանեցին ձեզ : Այս միայն կարելի է ընել ձեզի համար :

«Պէտք է ծածկել որ այս բանով վարձք մը կ'ընդունիք և եթէ ամենաթեթև դանդատ մը լսենք ձեր վրայ թեմին մէջ՝ եկեղեցական կարգէն պիտի զբոսիք :

«Ա'ողջունեմ ձեզ

«ՊԱՐԱՄԻՆՈՍ Վ. Ժ. Տածիչ » :

Այս նամակը չզարմացուց ժուլիօն . ոչ սրտնեղութիւն յայտնեց և ոչ դառնութիւն մը զգաց . Լուիզ առ վշտին լացաւ և հասկըցաւ թէ որո՞ւ կողմէն կ'գար այս հարուածը :

— Թող դործեն , քոյր իմ , Նախախնամութեան դործիներն են : Ճզմուած ողկոյզը չտրտնջար զինքը ճզմողին դէմ . քրիստոնեայ լինինք :

— Չափազանց արիասիրտ ես , եթէ առանց վշտանալու այս նուաստութեան կ'հանդուրժես :

— Երբեմն նուաստութիւնն է որ մարդս զօրաւոր կ'դործէ , իմ Լուիզ : Բռնութեամբ ծուռած կաղնիի ճիւղն աւելի ուժգնութեամբ վեր կ'ելնէ . լարուած աղեղն աւելի հեռուն կ'ներտէ իր նետը :

— Այդ ամէն ըսածներդ աղւոր խօսքեր են . պէտք է ըսել միթիթարուելու համար : Բայց բացարձակ կ'ըսեմ , եթէ մարդ լինէի , մանաւանդ եթէ Քլավիէր ժուլիօ արեղան լինէի , չպիտի երթայի Նօդր-Տամ տէ Շանի փայտէ փոքրիկ եկեղեցին սարկազութիւն ընելու :

— Ի՞նչ զարեթ քրիստոսի տունը նուազ աղւոր էր : Պայ , արքեպիսկոպոս կամ սարկաւազ՝ ի՞նչ են ասոնք Աստուծոյ աչաց առջև : Քահանայական պաշտօն վարել է : Գողողութեան առիթներն աւելի քիչ են անդ քան թէ աստ , ուրիշ բան չկայ : Զբք նազ քոյր իմ , եղբօրդ համար փոքրիկ փորձիչ սատան մ'ես :

Լուիզ պատասխանեց միայն ժպիտով մը զոր վիշտը ճնշեց :

— Իրաւունք ունիս , ըսաւ նա , կին էի , մեծութիւն է փոքրկանալը :

Ժուլիօյի ատենական տաղանդին համար յատուկ յարգ ունեցող մարդոց մէջ կ'գտնուէր Պ. Լիչ , Տ . . . ի կայսերական դատարանին խորհրդականը : Այս դատաւորը՝ իր ունեցած հզօր ազդեցութեանց շնորհիւ՝ իր ճամբան շուտով աւեր էր : Եւ երբ ժուլիօ Բարիզ հասաւ՝ վճռաջինջ ատենին խորհրդական դտաւ զինքը :

Պ. Լիչ մեծ խնդութեամբ ընդունեց էր ժուլիօյի այցելութիւնը : Այլ ևս ՚ի Տ . . . տեսած նորատի քահանայն էր ժուլիօն՝ որու տաղանդը նոր կ'բացուէր . ո՛չ , դժբաղդութենէ անցեր էր , աշնան հրատապ արևին նման որ կ'դեղնեն՝ քանի մ'օրուան մէջ՝ խաղողի ողկոյզներն և զանոնք կ'հասուեցընեն : Աշտալի փորձեր այս մեծ հողին հասուն դործեր էին : Այս ազնիւ դէմքին վերայ պայծառ ու երկնային բան մը կ'երևէր : Յայտնի կ'տեսնուէր որ այս սիրտը հալածանքի հնոցէն մաքուր և մեծ ելեր էր :

Պ. Լիչ իր նորատի բարեկամին համար սէրն աւելցուց . մտերմական յարաբերութիւններ հաստատուեցան դատաւորին և քահանային մէջ : Պ. Լիչ շատ անգամ իր հետը կ'տանէր ժուլիօն զմայլելի զիւղատուն մը , զոր քուրպվուայի և Բիւտօի մէջ կառուցանել տուեր էր : Ստէպ կիրակի օրեր ժուլիօ , որ միշտ դաշտերն եռանդաղին կ'սիրէր՝ իր քոյրը տիկին Գիւրապէլի տունը տանելէն ետև՝ որ Սէնդ-Օնօրէ արուարձանը կ'բնակէր՝ Վէրսայլի երկաթուղին կ'բռնէր որպէս զի Պ. Լիչի զիւղական տունն երթայ ճաշ ընելու , ուսկից իրկունը կ'գառնար տասնմէկի շոգեկառքով :

Պ. Լիչ անկեղծ քրիստոնեայ մ'էր . կրօնի մասին հանդարտ , անոյշ թոյլտուութեամբ լի հոգի մը կ'կրէր և բնաւ յարաբերու-

Թիւն չունէր այն մոլեռանդ կուսակցութեան հետ, ուր կարծեն  
թէ Աստուծոյ հաճելի լինելու համար պէտք է ատել եկեղեցիէն  
դուրս դանդաղ մարդիկը: Իր նիւթական վիճակին, դատաւորա-  
կան դատուն մէջ իր կացութիւնը մեծ համարում կ'ընծայէին ի-  
րեն, և որովհետեւ իր ապարանը Ժուր փողոցն էր, Սէնդ-Էօս-  
տաշի մօտ, իր թեմին դործարանի ընկերութեան անդամ լինելու  
փութացեր էր:

1861ի յիսնեակը կ'մօտենար: Ամէն մարդ զիտէ թէ ինչ կա-  
րեւորութիւն կ'ընծայեն. 'ի Բարիդ մեծ եկեղեցեաց մէջ եղած քա-  
րողներուն՝ ինչպէս 'ի Սէն-Ռօք, 'ի Սէն-Սուլսիս, 'ի Մատլէն,  
'ի Սէնդ-Էօստաշ: Երեք չորս տարիէ 'ի վեր՝ Սէնդ-Էօստաշի  
յիսնեակը Տովնիկեան հօր մը խոստացուած էր որ տաղանդ ու-  
նէր: Պ. Լիչ շատ կ'փափաքէր որ Ժուլիօն Բարիդի մէկ նշա-  
նաւոր բեմն հանէ քարողչութեան համար: Սէնդ-Էօստաշի երէ-  
ցին խօսեցաւ: Նախ՝ քանի մը դժուարութիւններ ցցուց: Յան-  
դըգնութիւն էր ընդունիլ մարդ մ'որ հռոմէական միաբանութեան  
մը կողմէ արտաքսուեր էր և արքեպիսկոպոսն ալ աննշան պաշ-  
տօնի մը մէջ նետեր էր: Պ. Լիչ յաջողեցաւ երէցին բոլոր տա-  
րակոյսները փարատել, և որոշուեցաւ որ Ժուլիօն 'ի Սէնդ-Էօս-  
տաշ բանախօսէ բոլոր յիսնեակի ատեն՝ հինգ շաբթի իրկունը: Կի-  
րակի օրը Տովնիկեանին ձգուած էր: Պ. Լիչ, Ժուլիօն և Սէնդ-  
Էօստաշի երէցը խոսքը մէկ ըրին որ այս որոշումը դադանի պա-  
հեն՝ մինչև յիսնեակի օրն՝ որպէս զի շատ օրեր առաջ՝ անդրա-  
լեւնական աղանդաւորաց արտունջները չղրղուեն: Խոհեմութիւն  
համարեցին իսկ սպեալ ցուցակին մէջ՝ որ եկեղեցւոյ դռները կը  
փակցընեն քարողներուն ժամերը յայտնելու, Ժուլիօյի անունը  
չդնեն: Սէնդ-Էօստաշի ազգարարագրոյն վրայ այս տողերը մի-  
այն կային.

«Յատկապէս մարդոց համար բանախօսութիւններ պիտի լինին  
ամէն հինգ շաբթի օրեր երեկոյեան ժամն իննին»:

Սակայն դադանիքն այնքան լաւ չպահուեցաւ. ըստ որում նեն-  
դամիտ Տընին՝ որ յատկապէս Ժուլիօյի անձը լրտեսելու պաշտօն  
ունէր, յաջողեցաւ տասն օր առաջ իմանալ, թէ Սէնդ-Էօստաշի

հինգ շաբթի իրկուններու բանախօսութիւնները նոյն ինք Ժուլիօ  
պիտի ընէր:

Ահա այն ատեն մէզ վիզները փոթորիկ հանեցին սոսկմամբ: Այս  
լուրը կրօնական դատուն մէջ անհաւատալի արագութեամբ տա-  
րածուեցաւ: Այն հրէշը, այն հանրական դսրովանաց արժանի  
արարածը, այն եղեւնագործը՝ որ Հաւատաքննութեան ձեռքէն  
պրծեր էր, պիտի սկսէր արդէն ծանօթ անժխտելի տաղանդովը  
Բարիդի առաջին բեմերէն մին ելնել քարողել և մէզ վիզաց աստղը  
նսեմել որոնք Նօդր-Տամի բեմը բռնած էին: Նախ այս լուրին  
չհաւատացին: Բայց երբոր իրօք ստուգուեցաւ որ Յիսնեակի առա-  
ջին հինգ շաբթի օրը, ընտիր ունկնդիրներու առջև՝ որ կ'բաղկա-  
նային Պ. Լիչի շնորհիւ, դատաւորներէ, իրաւաբաններէ, դա-  
սատուներէ, զրադէսներէ՝ Պ. Ժուլիօ իր առաջին բանախօսու-  
թիւնն ըրեր էր աննման ճարտասանական ճառով մը որ ամենուն  
հաւանութիւնը գրաւեր էր, այլ ևս անդրալեւնականաց բանակին  
մէջ բարկութիւնը չափ չունեցաւ:

Սակայն ինչ ընել պէտք էր:

Բայց պէտք էր արքեպիսկոպոսարան զիմել, բայց պէտք էր  
սաստիկ գանդատիլ, բայց պէտք էր այսպիսի նախատանաց դայ-  
թակղութիւնը բարձրաձայն հռչակել:

Իրօք արքեպիսկոպոսարանը պաշարման մէջ ընկաւ: Անհամար  
այցելուներ՝ անլուր յուսահատութեամբ, որոց մէջ կային դքսու-  
հներ, մարքիզուհներ, մինչև անդամ ամէն միաբանութեանց  
հայրեր և աշխարհիկ մէզ վիզներ՝ արքեպիսկոպոսին և իր ընդհա-  
նուր փոխանորդաց վրայ թափեցան:

Պատասխան մը միայն, զոր ժողովով որոշեր էին՝ այս դիւրաւ  
դայթակղող մարդոց տրուեցաւ. «Թէ Բարիդի ժողովրդապետները  
յանյիշատակելի ժամանակաց արտօնութիւն ունէին ընտրելու ի-  
րենց քարողիչները Յիսնեակի և մեծ պահոց համար՝ այս ընտրու-  
թիւնն արքեպիսկոպոսարանին հաւանութեան ենթարկելով. թէ  
Սէնդ-Էօստաշի Պ. Ժողովրդապետն այս կանոնը պահեր էր այն  
Տովնիկեանին համար որ իր եկեղեցւոյն մէջ կ'քարողէր. թէ  
արքեպիսկոպոսարանը զլիստ որ քարողչութենէ դուրս տրուած հրա-

հանդներուն վրայ մտածելու պարտ չունէր, և թէ վերջապէս ժու-  
լիօ արեղան՝ բնաւ վճիռ մը, արգելում մը, իր եպիսկոպոսէն  
կարգէն դադարելու հրաման մ'ընդունած չլինելով՝ չէր կարող  
օրինաւորապէս զրկուիլ իր քահանայական պաշտօնէն՝ :

Թեմական իշխանութեան կողմէ տրուած այս պատճառները շատ  
համոզական չերեցան բարեպաշտ խնդրարկուներուն : Մինչև ան-  
դամ մըմուտքին . և եթէ այն յիշատակալիւրները՝ որոց համեմատ՝  
Ժուլիօյի պատմութիւնը կ'զրենք՝ վաւերական են, արքեպիսկոպո-  
սարանի մէկ գրադրին դէմ մինչև անդամ այս լրբենի սպառնա-  
լիքն ըրին . թէ Հռոմի մէջ բարձրագոյն իշխանութիւն մը կար  
քան արքեպիսկոպոսինը, որու կարելի էր դիմել արդարութիւն  
խնդրելու համար : Գրադիրը թէև անուշութեամբ այլ հաստատա-  
մութեամբ պատասխաներ էր . Ա՛սխալիք . Պասլը Բարիզի արքե-  
պիսկոպոս չէ : Թեմական վարչութեան հետ գործ չունի, բայց  
միայն վերակոչման առթիւ :

Այս պարագայիս մէջ ցաւալի էր ժեզվիդաց համար տեսնել  
որ Բարիզի կղերին մեծ մասը դեռ ևս Վալիքան հերետութեամբ  
տողորուած է . վասն զի անդրալեռնեայ աղանդին դրադէաներն  
ու լրադրապետները մինչև անդամ այս «հերետութիւն» բառը գրե-  
լու յանդիներն այնպիսի վարդապետութեան նկատմամբ սը նոյն  
խակ Պօսիւէի, Լուզէրնի, Ֆրէյսինոսի, Շէվրուսի, Աֆֆրի,  
Սիպուրի և վերջապէս Ֆրանսայի ընդհանուր եպիսկոպոսաց կար-  
ծիքն եղած է մինչև մեր օրերը :

Ուստի Սէնդ-Էօստաշի բանախօսութիւնները շարունակուեցան՝  
'ի մեծ դժկամակութիւն և նուաստութիւն ժեզվիդաց, որ արքե-  
պիսկոպոսարանի տկարութեան վրայ դրեր էին իրենց յոյսը : Այս  
քարոզները մեծ համբաւ հանեցին և Լաբօրտէրի Նօդր-Տամի  
մէջ տուած առաջին քարոզները կ'յիշեցընէին, երբ նորատի ա-  
տենաբանը դեռ ևս Սէն-Տովինիկի պատմութեանը հագնելու ող-  
բալի փորձութեան չէր հակամիտած, այն պատմութեանն որ Հա-  
ւատաբնութեան սղալի յիշատակներով պղծուած է պատմութեան  
մէջ :

Իրաւ է որ խորհողն այս պատմութեանին ներքև կ'ապաստանէր :

Ա՛թողուին որ Տովինիկեանն ըսէ ինչ որ չպիտի ներէին որ Լաբօր-  
տէր արբան արտասանէր :

Միւս կողմէ Ազգային Կաթիլի անդրալեռնական դասուն մէջ  
մեծ փոթորիկ հաներ էր : Այս թերթը՝ որ տաղանդով կ'զրուէր  
և եկեղեցւոյ պիտոյից ճշմարիտ դիտակցութեամբ այլանդակ ան-  
դրալեռնականութեան գովարաններուն պատճառարանութիւնը կը  
քանդէր, որ կարծես թէ յատուկ բան գործ ըրեր էին պապա-  
կանութիւնն 'ի կորուստ մատնել ծայրայեղ որոշումներ ընել տա-  
լով : Ածու և միանգամայն չափաւոր՝ պաղ բանականութիւնը՝ իր  
հակառակորդաց եռանդուն իմաստակութեանց տեղ գործածելով  
օր ըստ օրէ ծանր հարուածներ կ'տար անսահման իշխանութեան  
մ'ողորմելի շողքորթներուն և մնացած աղնուախոհ կաթիլիկները  
կ'մխիթարէր եկեղեցւոյ եղած նախատինքնն՝ իր արդի անկման շրջա-  
նին մէջ :

Անդրալեռնականք՝ առաջուանէ աւելի եռանդով դաւադրեցին՝  
օրագրապետին կորստեան համար : Եպիսկոպոսաց դասը համոզե-  
լու ջանաց և յաջողեցաւ մէկ քանիին մօտ՝ Ֆրանսայի հարաւային  
դաւառներուն մէջ, և այս եպիսկոպոսներն իրենց կղերին հրաման  
տուին Ազգային Կաթիլի լրագիրը չընդունելու, և այս պատուէրը  
շուտ մը հրատարակեցին անդրալեռնական լրագիրները : Նոյն-  
պէս Հռոմէն խնդրեցին որ Ազգային Կաթիլի՝ Էնդէտի ներքև  
դնէ և ժեզվիդները պահանջեցին որ հռոմէական վիճակները չմտնէ  
այն թերթն որպէս զի Վալիքան եկեղեցւոյն հիւանդութեամբ չճա-  
րակին :

Սակայն՝ հռչակաւորն Տընի 'ի քուն չէր : Շատ մը խեղճ մար-  
դիկ իր զլուխը դումարեց և խռովութիւն մը յարուցանելու պատ-  
րաստութիւն տեսաւ որպէս զի ստիպէ արքեպիսկոպոսը Սէնդ-  
Էօստաշի բանակցութիւնները զազրեցընելու :

Յիսնեակի երկրորդ շաբաթուան հինգշաբթին՝ Տընի կանուխ  
եկեղեցի հասաւ հարիւրի չափ մարդոց հետ և խումբ խումբ ե-  
կեղեցւոյ միջավայրն և երկու կողմերը դասաւորեց : Իւրաքանչիւրն  
իր խաղալու գերը դիտէր : Արդէն այս տարօրինակ յեղձփոխա-  
կաններն իրենց զլուխը տաքցուցեր էին դինետունները՝ Տընիին

ստակով, և իրենց խոստացուած հինգ ֆրանքը շահելու համար, եթէ իրենց դերը լաւ խաղային, սկսան, երբ ժուլիօ քանի մը բառ արտասանեց, աղմկալի կերպով հաղալ, ատենաբանին ձայնը խափանելու համար բարձր խօսիլ և 'ի վերջէ մեծ ժխոր մը պատճառել, երբ ոմանք կ'ըսէին բարձրագոյն. Անկոյն՝ այդ մարդը, ուրիշներ. Ահոյն՝ արեւաբանը, և ժուլիօյի կուսակիցներու ու հակառակորդներու մէջ պատահած պայթար մը կեղծել: Քիչ ատենէն դու ու գոչումն աւելցաւ: Ֆրանսա՛ այսպիսի պարագայի մէջ՝ ամէն մարդիկ կ'պտան, սրտմտած պարկեշտ մարդիկ ինչ պէս և նոյն իսկ խռովարարները: Ժուլիօ ընդունայն 'ի լուսթիւն հրախրելէն ետև՝ ստիպուեցաւ բեմէն վար իջնել:

Տընի յաղթեր էր:

Այս արկածը մեծ աղմուկ հանեց կրօնական աշխարհին մէջ: Հռոմ դրեցին թէ ժուլիօ բեմէն այնպիսի սոսկալի առաջարկութիւններ ըրեր էր որ բոլոր ունինդիրները սրտմտելով ոտք ելեր և թոյլ չէին տուեր անոր շարունակել իր լուսանքը չէ թէ միայն Պապին այլ անոր աշխարհական և հոգևոր իշխանութեան ընդարձակութեան դէմ: Ժուլիօյի դէմ այս թշնամական ընթացքն այնքան զօրացաւ՝ նոյն ժամէն 'ի վեր՝ որ արբեպիսկոպոսը միւս կրօնական բանախօսութեանց այսպիսի դայթակղութիւն մը պատահելէն երկնչելով՝ Սէնդ-Էօստաշի ժողովրդապետը կանչել տուաւ, և ժուլիօյի կարծեաց ուղղափառութիւնը դովելով հանդերձ՝ աղաչեց որ հինգշաբթի օրուան բանախօսութիւնները դադրեցնէ:

Ժ

ԵՐԵԿՈՅԹ ՄԸ Ի ՏՈՒՆ ՏԻԿԻՆ ԳԻԻԲԱՊԵԼԻ

Բարիւղ դալով՝ ժուլիօ Վէրտլօնի գրած էր Ղուիլին ու իր ազատումն իմացընելու համար: Վէրտլօն պատասխաններ էր նամակաւ մը զոր թերևս սիրագիծ կ'համարէր, այլ սակայն սնտոի

և սովորական խօսքերով լի էր. սրտէ բղխած բառ մ'անդամ չկար անոր մէջ. Ղուիլ քաջ դիտեց այս բանս: Ա՛մսածէր նա որ այս վերջին հարուածն էր իր սիրոյն դէմ և կենացը մէջ ուրիշ նպատակ մը չէր կամեր ունենալ այլ միայն եղբօրն երջանկութիւնը: Հետզհետէ անոր համակերպիլ, իր սիրական ժուլիօյի մտաց հաղորդակցութեամբն իր միտքը զարգացընել, լուրջ ուսմանց հետևիլ, որպէս զի անոր աշխատութեան ձեռնտու դրտնուի, այս եղաւ Ղուիլի յատակադիծը, որու հետևեցաւ եռանդաղին: Բայց օրին մէկը տիկին Գիւրապէլ իմացուց Ղուիլին՝ առանց այս լրին կարեորութիւնն զգալու, թէ Վէրտլօն կարգուեր էր: Ղուիլ անկեղծօրէն կ'կարծէր թէ ամէն յոյս կորուսած է, բայց Վէրտլօնի ամուսնութիւնն իմանալով՝ հասկեցաւ որ սրտին խորը զանի տեսնելու թագուն յոյս մը մնացեր էր իր կամաց հակառակ: Աստի տիկին Գիւրապէլն տունէն ելաւ սիրտը վշտաբեկ:

Իր եղբօրը դէմ եղած հալածանքն ու զրպարտութիւնները սոսկալի տառապանք կ'պատճառէին: Եղկելի Ղուիլին սիրտն ամէն տանջանաց ենթակայ կ'դանուէր և օր ըստ օրէ իր առողջութիւնը կ'կորուսէր: Ժուլիօյի դէմ 'ի Սէնդ-Էօստաշ եղած դաւադրութիւնը սոսկալի հարուած մ'էր իրեն համար: Նորատի քահանային ուղիղ հոգին ախուր տպաւորութիւն մը զղաց այս դէպքէն, վստան զի տեսա՛ առաջին անդամուն իսկ՝ որ դժոխային խարդաւանաց արգիւնք էր այն:

Այս ցաւալի արկածէն շարաթ մ'ետք՝ մինչդեռ ժուլիօ 'ի Բիւսօ էր, Պ. Լիչի գիւղատունը, իր քոյրը կ'ճաշէր և իր երեկոյն տիկին Գիւրապէլի տունը կ'անցընէր: Նոյն իրկունը տակաւին քիչ մարդ կար սրահը, երբ եկան իմաց տուին պարոն և տիկին Վէրտլօնը:

Ղուիլ ոտք ելաւ՝ որպէս թէ ելէկտրական հարուած մը զինքը կ'շարժէր: Նա չէր կարծեր որ Վէրտլօն ու իր կիսն արդէն Բարիլ լինին, սկսաւ զողզողալ, գունատիլ և իր թիկնաթոռին վերայ ընկաւ իր ձեռաց մէջ ծածկելով այլայլած երեսը:

— Բարի իրկուն, իմ առհմուհիս, ըսաւ տիկին Գիւրապէլ՝ նորատի կնկան:

Փոխադարձ քաղաքավարութիւններ ըրին : Տիկին Օկիւստ Վէր-տլոն Գիւրապէլի ընտանիքէն էր : Միակ աղջիկ մ'էր որ հողային երկու միլիոն կալուած բերեր էր՝ իբրև օժիտ՝ փառասէր Վէր-տլոնի , որ երբեմն ժուլիօյի բարեկամն էր , և որ ժէզվիդաց դէմ անոր համար դատ վարեւէն ետև՝ դրեթէ տարի մ'առաջ՝ յանկարծ վերապատուելի հարց ջերմ կուսակիցներէն մին եղեր էր : Իրաւ է որ անոնց կ'արարտաւորէր իր ճոխ ամուսնութիւնը , և երբ փառասիրութիւնը մոռցնել և մասնել կ'տայ սէրը , դեռ ուրիշ փոփոխութիւններ կրնայ առաջ բերել :

Տիկին Գիւրապէլ իր սոցմուհին ներկայ դանուող հիւրերուն ներկայացուց :

— Օրիորդ ժուլիօ Բլավիէր , ըսաւ նա , ցոյց տալով Լուիզը :

— Ա՛հ , շատ լաւ . . . արդէն լսեր եմ . . . ըսաւ շփոթ ձայնով մը նորատի կինը :

Վէրտլոն ծանրութիւն մը դասեց , երջանիկ ամուսնոյ մը կերպարան մը ցցուց , և բնաւ չկորոյս՝ Լուիզի առջև՝ այն համարձակութիւնը զոր կ'ստանայ մարդ փաստաբանութեան աղւոր արուեստին մէջ :

Լուիզ դարոցի մը մէջ կեղծեօք վարուել չէր սորված . թեթեմ մը ծուեցաւ և տիկին Գիւրապէլի ողջոյն տալով՝ դուրս ելաւ :

— Օրիորդ Բլավիէր անհանգիստ կ'երևի , ըսաւ տիկին Գիւրապէլ . վաղը մարդ պիտի զրկեմ իր վրայ լուր առնլու : Լանկատկեան օրիորդ մ'է , հայրենակից մը , յարեց նա , Վէրտլոնի ուղղելով խօսքը :

— Այո՛ , իր եղբայրը կ'ձանչնամ , ըսաւ փաստաբանը . մինչև անգամ դժբաղդ դատի մը համար անոր փաստաբանն եղայ , երիտասարդական բարեկամութեան մը յիշատակներէն յորդորեալ , և այս դատն 'ի հարկէ պիտի կորուսէի , ինչպէս որ իբօք կորուսի :

— Շատ տաղանդաւոր մարդ է նա , ըսաւ տիկին Գիւրապէլ :

— Այո՛ , տաղանդ ունի . . . և խօսելու մեծ գիւրութիւն . . . :

— Մօտ օրերս 'ի Սէնդ-Էօստաշ սոսկալի արկած մը պատահեցաւ :

— Արդէն լսեցի այդ արկածը : Շատ ցաւալի է իրեն համար :

Նոյն պահուն Վէրէր կոմսուհոյն զալուստը կ'իմացընէին , որ Պարամիոսս արբային ծուխն էր և ժէզվիդաց կուսակից :

— Սէնդ-Էօստաշի տխուր դէպքին վրայ կ'խօսինք , ըսաւ տիկին Գիւրապէլ , խօսակցութիւնը շարունակելու համար :

— Ո՛հ , տիկին , ի՛նչ սոսկալի , ի՛նչ անլուր բան : Երբէք այսպիսի դայթակղութիւն մը տեղի չէր ունեցած Բարիզի եկեղեցւոյ մը մէջ : Բայց ինչո՞ւ համար Բարիզի արքեպիսկոպոսն այսպէս թոյլ կ'վարուի , այսչափ տկարութիւն կ'ցուցընէ , չըսելու համար : Շատ արտօնութիւն կ'տրուի Բարիզի ժողովրդապետներուն , որ փոքրիկ բաշաներ կ'դառնան , Կալիբան սկզբունք կը ծախեն և սուրբ աթոռին ու եկեղեցւոյ թշնամիները կ'քաջալերեն : Քիչ մ'ես Ս . Պապին վրայ խօսելու ատեն պիտի ըսեն . Պարոնն Հռովմ , ինչպէս որ վերջին դարու մէկ արքեպիսկոպոս մը կ'անուանէր : Ուստի Բարիզի կղերը շատ զէշ աչքով կ'նայուէ 'ի Հռովմ :

— Ջարմանք կ'պատճառես ինձ , սիրելի կոմսուհիս . ես կարծէի թէ լաւ աչքով կ'նայի Քրանսայի կղերին վրայ :

— Քրանսայի կղերին վրայ , այո՛ , անոնց որ հռովմական սկզբբանց անձնուէր են . բայց Բարիզի կղերին համար չէ . ասոր փորձը կ'տեսնես ժուլիօ արեղայի մասին ցոյց տրուած թոյտուութեան մէջ , ժուլիօ որ Բարիզի մէջ Հռովմ և ժէզվիդաց թշնամի կ'կանգնի :

— Շատ կ'սխալիս , սիրելի կոմսուհիս , ես միշտ ժուլիօյի բերնէն խորին յարգանաց խօսքեր լսած եմ առ Պապն , և միշտ Պիոս Թ . ին վշտալի կացութեան վրայ իր ցաւը յայտնած է ինձ :

— Քանի որ մարմնաւոր իշխանութեան դէմ է , Պապին թշնամին է , վատթար քահանայ մ'է :

— Ես չեմ կարող հաւանիլ այդ բանին . ես շատ կ'յարգեմ ժուլիօ արեղան . իր քրոջ հետ բարեկամութեամբ կապուած եմ :

— Սիրելի տիկին , շատ բարի , շատ ներողամիտ ես : Քու անկեղծութիւնդ 'ի չար կ'գործածես : Այս մարդիկ չպիտի հանեն իրենց զիմակը ձեր առջև . բայց կ'հաւաստեմ որ աղնուական ջջաններու մէջ դու միայն այդպէս կ'խօսիս :

— Գու չես ճանչեր զանի, օր մը քեզ անոր պիտի ներկայացրնեմ:

— Ո՛հ, ի՛նչ տոսկալի բան: Մասնութիւն մը պիտի համարիմ այդ, ըսաւ կոմսուհին ծիծաղելով: Եւ ապա ծանր կերպարան մը դասելով՝ Ա՛րսես որ զանի չեմ ճանչեր: Ո՛չ, փառք կ'տամ որ չեմ ճանչեր. բայց Հռոմի քաջ ծանօթ է: Բաւական մեծ համբաւ ունի աշխարհիս մէջ: Հապա ի՛նչ պիտի ըսես Եկեղեցւոյ մը վանդակին խորտակման վրայ: Այդ Կարիպալտիի արժանի դործ մ'է: Ի՛նչ պիտի ըսես Հռոմի յեղափոխականաց հետ ունեցած յարաբերութեանց մասին, և զինքն աղաատղ դաւադիրներու վրայ: Ի՛նչ պիտի ըսես մեր սուրբ հօր Պապին գեմ գրած կատաղի յօգուածոց վրայ: Կարծեմ թէ հանրաձանօթ է: Օ՛ն անդր, սիրելիք իմ տոհմուհիս, գէշ դատի մը պաշտպան կ'կանգնիս: Քու բարի սիրտդ քեզ կ'արգարացընէ. բայց մեր շրջանին մէջ չարխորհուրդ մարդիկը պաշտպանել պէտք չէ:

— Աստուած իմ, զանի չեմ պաշտպաներ: Բայց ինչո՞ւ համար այնքան խոհական և զգօն երեցաւ ինձ, վասն զի վերջապէս պիտի խոստովանիս որ այլանդակ կերպով կ'ընդդիմանան Հռոմէն մեր կառավարութեան:

— Քու կառավարութիւնդ պարտի Պապին գարձընել ինչ որ իրմէ դողցան: Կարող է ընել, պարտաւոր է ընել այս բանս: Քաջ գիտես, սիրելի պարոնուհիս, որ պէտք չէ սկզբանց գէմ դործել, և քու բարեսրտութիւնդ շատ մեծ է: Արեմն թող մէկ դի ժուլիօ Բլավիէնն ու իր քոյրը: Այս վերջինն այլանդակ օրիորդ մ'է: Ի՞նչ ընելու գնաց յիտալիս:

— Արեմն չգիտես այս խեղճ Լուիզին վանարդելու թեան պատմութիւնը:

— Վանարդելութիւն մը: Ի՛նչ անհեթեթ առասպել: Ի՞նչ պէս հաւատցիր այդ բանին, սիրելի պարոնուհիս: Ա՛նայիմ որ այս մարդոց վրայ քեզի շատ սխալ տեղեկութիւններ տուեր են:

— Ա՛լ այս անգամ բռնեցի քեզ, վրայ բերաւ տիկին Գիւրապէլ, բռնեցի քեզ: Քեզի կ'թողում եղբայրն որու մասին թերեւս իրաւունք ունենաս: Ես ինքս իր զաղափարները քիչ մը ծայրայեղ կ'գանեմ:

— Բասալիա մը, Կալաճծի մ'է:

— Թո՛ղ այդպէս լինի, կ'հաւանիմ: Սակայն այն սիրական Լուիզը, եթէ մի անգամ ճանչես, պիտի ըսես թէ ի՛նչ ազնիւ, ի՛նչ անկեղծ, ի՛նչ ուշիմ է:

— Այո՛, շատ ուշիմ, զիտեմ: Ա՛րսեն թէ իր եղբոր լրացրին մէջ կ'դրէ: Հաւաստի եղիւր որ նա ևս իր եղբորմէ վար չմնար: Բոլոր այս նորակարծիք անձերը վտանգաւոր են: Ասկից զատ՝ շատ բաներ զիտեմ օրիորդ Լուիզին վրայ: Կանոնաւոր կղերին խօսքը մի անգոսներ, փորձառու են և անոնց մէջ ճշմարիտ քահանայներ կ'գանուին: Հին ժամանակաց նուիրական սովորութիւններէն դուրս ամէն ինչ վտանգաւոր է: Շատ ատեն անցնելէն ետե՛ւ միտ առի այս բանս: Ես ալ նոր զաղափարներու կողմը կ'ծռէի: Իմ մօրս տունը տեսած բարի ժէզվիղներն իմ բոլոր պատրանքս ցրեցին: Այժմ պէտք է անոնց կապուիլ լիովին: Սուրբ տապանակին միակ նեցուկներն անոնք են: Եկեղեցին պիտի ազատի երբոր անոնք ամենազօր դառնան: Ես քեզի մտերմաբար կ'ըսեմ որ Պարամիտոս հայրն ալ մէկդի պիտի թողում: Շատ Կալիքան է: Ասկէ զատ՝ աշխարհիկ կղերը հողիները կառավարելու անկարող է:

— Ա՛րսեն թէ փոքր ինչ փառասէր են, այդ ձեր բարի վերապատուելիները:

— Փառասէր, սիրելի բարեկամուհիս, այո՛, փառասէր ՚ի պատիւ Պապին, իր իրաւանց պահպանութեան համար, Աստուծոյ փառաց համար. թէ ոչ՝ աշխարհային ամէն բաներէ հեռու կեցող մարդիկ են:

— Անոնցմէ կ'վախնան:

— Չարասէր լեզուներ, վատ մամուլը, ապականակիւր զրականութիւնը զանոնք աղարտեցին:

— Ո՛հ, այդ շատ իրաւ է:

Եւ Վէրտլոնի ուղղելով խօսքը՝ տիկին Գիւրապէլ անոր ըսաւ.

— Տոհմիս, անշուշտ ժէզվիղներ ունիք ՚ի Տ . . . :

— Այո՛, տիկին, բազմաթիւ են. շատ աղւոր դպրոց մ'ունին:

— Ո՛րչափ բարիք կ'ընեն, այնպէս չէ՛, պարոն, վրայ բերաւ Վէզէր կոմսուհին :

— Այո՛, տիկին, շատ բարիք կ'ընեն :

Երբոր կոմսուհին քաշուեցաւ՝ իր բարեկամուհւոյն ըսաւ մեղմիկ .

— Սիրելիս, զլուշացիր այս ծուլիօյի պէս անարդ մարդոց հետ տեսնուելու : Այս խորհուրդս քեզի կ'տամ՝ բարեգթութեամբ : Մեր ընկերութեան մէջ քու վրայդ կ'զարմանան : Եթէ այսպէս շարունակես՝ ծուռ աչքով պիտի նային քեզ և քու բազմաթիւ բարեկամներդ պիտի դժգոհ ընես :

Այս հարուածը ծանր էր : Տիկին Գիւրապէլի կերպ մ'ազդարարութիւն մ'էր այս ժեզվիկաց հալածանաց ենթակայ գանուող անձինքը չպաշտպանելու համար :

ԺԱ.

ԲԱՀԱՆԱՅԻՅ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Բիկլալի պուլվարը գանուող գործարանին բանուր քահանայն կ'ուզէր ՚ի գործ գնել իր խորհուրդը, որ էր իր տան տնտեսուհի, պառաւ, սղեղ ու ողորմելի արարածին հետ ամուսնանալ : Իր վիճակին քաղաքապետական դիւանատունը ներկայանալով թղթերը տալու ատեն չէր ծածկած գիտմամբ թէ ինք քահանայ մ'էր : Շահապն այս բանս իմանալով՝ սկսաւ զղոյշ մնալ և այն օրն որ Լուպէր հագուած շքուած Մարիօն Շանպիզին հետ՝ որ իր հարսը պիտի լինէր, շահապին պաշտօնատունը գնաց հետն ունենալով նաև գործարանին պաշտօնակիցներէն մէկ քանի վկաներ, պաշտօնակալը բացէ ՚ի բաց մերժեց քաղաքային ամուսնութիւնն ընելու՝ ՚ի մեծ դժգոհութիւն Մարիօն Շանպիզին՝ որ գործն իբրև կարևոր կ'նկատէր :

Լուպէրի ուղածն ալ այս մերժումն էր : Գատաւորէն այս մեր-

ժումը զրաւոր կերպով պահանջեց, և այս դիրն առնլով՝ Սէնի քաղաքային դատարանը գնաց դատ բանալու համար :

Երբոր այս դատը կ'պատրաստուէր, որու յաջողութեան փափաքող էին Բիկլալի գործարանին բոլոր բանուորները, Լուպէր՝ որու նպատակն ասպարդին շարժում մը չէր, Ազատական կաթիլի թերթին գրատունը նամակ մը տարաւ՝ ծուլիօյի համար հետևեալ մտերմական տոմսակը գրելով .

«Սիրելի բարեկամ, ձեզի զիր մը կ'զրկեմ. կ'աղաչեմ թախանձագին որ այս դիրս ձեր լրագրին մէջ անցնէք : Անոր պատասխանատուութիւնը վրաս կ'առնում, կ'ստորագրեմ. ուստի դուք միայն ձեր թերթով անոր հրատարակութիւն պիտի տաք : Չեմ կրնար մերժում մը լսել ձեր կողմէ :

«Լիովին քոյդ, «ԼՈՒԳԻՐ» :

Աւասիկ գիրը .

«Պարոն տնօրէն Ազատական կաթիլի լրագրին ,

«Ուղղափառ, առաքելական և հոռոմական եկեղեցւոյ քահանայ եմ : Հովուական պաշտօն վարեցի Տ . . . ի և Շանպէրի թեմերուն մէջ : Քաղաքական քան թէ կրօնական պատճառներով, և աշխարհական պապութեան ցաւալի խնդրոյն համար, Շանպէրի արքեպիսկոպոսարանն իմ կարգս առաւ : Քահանայական պաշտօնէս զրկուելով՝ իմ օրասպահիկս ճարելու նիւթական միջոցները խորհելու ստիպուեցայ : Քրիստոս իր կեանքը գործարանին մէջ սկսաւ և առաքելական պաշտօնութեան մէջ լմնցուց : Ես կրօնական պաշտօնով սկսայ և գործարանին մէջ պիտի աւարտեմ կեանքս : Այս վիճակէս չեմ գանդատիր. անպատիւ չէ այն, քանի որ Քրիստոս զայն սրբացուց նոյնպէս առաքելները, եպիսկոպոսներ և քահանաներ որ, երկայն դարեր՝ իրենց ձեռաց աշխատութեամբ ճարեցին իրենց ապրուստն ու հագուստը : Ուստի՝ անցելոյն մէջ լաւ ընկերներ ունիմ և կարծեմ թէ եկեղեցին այն ատեն աշխարհիս վրայ մեծ իշխանութիւն պիտի վարէ երբ ա-

ուսջին հովիւներուն աշխատասէր կենցաղավարութիւնն և անշահախնդրութեան օրինակներ տալու սկսի :

«Այս վերանորոգութեան սպասելով՝ թէև յոյս չունիմ մեռնելէս առաջ զայն տեսնել, քրիստոնեայ աշխարհին առջև ակներև անօրէնութիւն մը պիտի յայտնեմ որու ինձի հետ շատեր զոհ ընկած են :

«Միտք չունիմ քննելու՝ եթէ եպիսկոպոսները՝ որ մեզ ամէն եկեղեցական իշխանութենէ զրկեցին, անիրաւ էին. եթէ կրիւք չշարժեցան, եթէ մեր նկատմամբ խոհեմութեան, մանաւանդ զթասիրութեան հրամայած ամէն զգուշութիւններն՝ ՚ի դորձ գրին, վերջապէս՝ եթէ կանոնական օրէնքը պահեցին, որ հին սահմանաց համեմատ՝ տկարները զօրաւորաց դէմ պաշտպանելու նպատակաւ հաստատուած են : Այս սահմաններն անհետ եղան. եպիսկոպոսներն այժմ գերիշխանութիւն կ'վարեն, և մեզի դէմ կը վարեն : Ա՛րնդունիմ որ լիովին իրաւունք ունին, և թէ իրաւանց և խղճի նկատմամբ օրինապէս զրկուած լինինք քահանայական պաշտօնէ :

«Բայց մեզ այսպէս աշխարհիս կենաց մէջ նետելով՝ երբ փորձով հաստատուած է որ հարիւր արդիլեալ քահանայից մէջէն՝ իննըսուն ինն՝ կուսակրօնութեան ուխտը չպահեցնուն համար մեր ժուած են, միթէ եկեղեցւոյն վրայ անհրաժեշտ պարտաւորութեան, արդարութեան և զթութեան պարտ մը չ'մնար մեզ այդ ուխտէն լուծելու որու պահպանութեան պատճառը վերցած է, քանի որ այդ կուսակրօնութեան՝ մեզնէ առնուած պաշտօնին հետևութեամբ ենթարկած էինք :

«Ինչո՞ւ համար մեզի դէմ, որ այժմ սրբավայրէն դուրս ենք, աւելի խստապահանջ պիտի լինի քան թէ միացեալ Յոյն կաթողիկ եկեղեցականաց դէմ, որ Պապին իշխանութեան ենթակայ են, և սակայն անոնց ամուսնանալու հրաման կ'տրուի մինչև անդամ քահանայագործութեան պաշտօնը պահելով :

«Պէտք չունիմ աստանօր վիճաբանելու թէ կաթողիկոսութիւնը հետզհետէ ինչ պիտի շահէր յառաջագէտ քաղաքակրթութեանց մէջ որմէ քահանայական սերունդները կ'անցնին, եթէ դժբաղդ

քահանայն բնութեան նուիրական օրէնքէն դուրս չձգէր, եթէ չզրկէր զանի անխոհեմ ուխտով, ընտանեկան օրինաւոր բերկրութիւններէ, եթէ չգատապարտէր սոսկալի պայքարներու որոց մէջ շատեր կ'ընկճին՝ թէ թաղուն աղտեղութիւններով, թէ մեղապարտ յարաբերութիւններով՝ որ նուազ ամօթալի են քան թէ այդ աղտեղութիւնները : Պէտք չունիմ մէջ բերել արձանագրութիւններու բոլոր աշխարհի կաթողիկ եպիսկոպոսարանները՝ ամէն տարի, ակներև զայթակղութիւններ նշանակելու կ'ստիպուին, կամ եպիսկոպոսաց խոհեմութեամբ թաղուն կ'պահուին կամ ժողովրդոց ամօթխածութենէ կ'քօղարկուին : Ա՛յնթաղբեմ որ ամէն պաշտօն վարող քահանաները մաքուր մնացած են, մեզնէ զատ՝ որ այսուհետև սրբավայրը չենք երևիր, բայց միթէ դարձեալ քրիստոնեայ, եկեղեցւոյ զուակներ չենք : Քահանայագործութեան պատիւները կորուսելով՝ անոր բնութիւնը կ'պահենք զոր անջնջելի կ'սեպեն մեր վարդապետները : Բայց ամուրիութեան ուխտն այս բնութեան մասը չկազմեր : Եկեղեցւոյ մէջ գերազոյն իշխանութենէ կախում չունի այս քահանայական գործը մեզնէ սրբել՝ որ օծման ուժով տարւորուած է, բայց կարող է լիովին, առանց սուրբ հարց և հանրական ժողովոց որ և է օրէնք դրժելու, իր ուխտէն ազատ արձակել և օրինաւորապէս կարգուելու հրաման տալ ամէն քահանայի որ իր եպիսկոպոսէն քահանայական պաշտօնէն զրկուած է կամ ինք անկից հրաժարիլը յայտնած է :

«Այս միջոցիս անցած դարձածը կաթողիկոսութեան նախատինք մ'է : Կարգազուրկ քահանաներ գիտնալով որ գատաւոր մը չպիտի հաճի իրենց ամուսնական միութիւնը վաւերել, վասն զի Պետութիւնը չուզեր Հռոմի անհաճոյ երևիլ, քաղաքային դաշնագիրն ինչպէս աշխարհականին նոյնպէս քահանային համար վաւերական համարելով, սովորաբար հարձեր պահելու կ'ստիպուին : Եթէ իրենց քահանայական ծանր պարտաւորութեանց մէջ կուսակրօն լինիլ չկարողացան՝ ինչպէս պիտի դիմագրէին այժմ կրից սաստկագունին, երբ՝ աշխարհի մարդ գառնալով՝ անսանձ կ'մնան և ամէն ժամ կ'գտնեն իրենց տկարութեան դէմ փորձութիւններ : Արդ՝ այս ամուսնութիւններէն՝ զոր քաղաքային օրէնքը չձանչեր,

կ'ծնին զաւակներ որ հօր և մօր ժառանգութեան իրաւունք չպիտի ունենան, որ անուն մը չպիտի ունենան, և աշխարհիս մէջ պիտի արատաւորին, Պարիսաներ, Պարիսաներու զաւակներ: Միթէ այս կարելի է. միթէ այս արդար է, և ի՞նչ օգուտ ունի:

«Որպէս զի օրինակ հանդիսանանք անոնց որ կրնան ընկնիլ:

«Շատ քիչ ճանչել է մարդկային սիրտը: Գայէք այս դժբաղդներուն հարցույթք եթէ քահանայից տրուած այս նախատինքը զիբենք կեցուցին անգունդին եղբր:

«Գարձեալ պէտք է ըսել՝ անբարոյականութեան համար արդիլուած հարիւր քահանայից մէջէն՝ իննըսունը ինն հատ կայ որոց բարքն արգելման լակ պատրուակ մ'է: Միշտ ուրիշ պատճառ մը կայ, և այս է էական պատճառը. — Անհաղանդութիւն, քաղաքական կարծիք, իմաստասիրական յառաջադէմ գաղափարներ: Քահանայք քաջ գիտեն սր՝ եթէ միայն իրենց եպիսկոպոսաց կամբը կատարելու փութան, եթէ կարելի եղածին չափ խոնարհին անոնց գերիշխանութեան առջև, եթէ հանդիսաւոր պատարագներու մէջ եռանդ ցոյց տան, կրօնական իշխանութիւնը չպիտի նայի ՚ի մօտուստ վարուց անկանոնութեանց, և թէ շատ աղբարարութիւններ պիտի դան արքեպիսկոպոսարանը բարձիթողի մնալու համար: Եւ կ'ուզէք որ պատժուած քահանայի մ'օրինակը, մանաւանդ անոր համար որ լուծին ներքև գլուխը ծռելու յանձն չէր առած՝ այս վատթարացած արարածներու վրայ տպաւորութիւն ընէ: Օ՛ն անգր: Իրենց Գարգիւֆի դերն աւելի լաւ պիտի ունին՝ և եթէ ոչ շնորհ գէթ հանդիստ պիտի գտնեն, եթէ կարող լինին հասարակային գայթակղութեանց տեղի չտալ զոր իշխանութիւնն ՚ի հարկէ կ'սլատմէ:

«Ուրեմն հարկ է խնդրել քահանայապետէն՝ որու սրբութիւնը, բարութիւնն և ազնիւ սիրտը հանրածանօթ է, արդարութեան և արդահատութեան ակնարկ մը նետել այն բազմաթիւ մարդոց վըրայ, զորս պէտք չէ դատապարտ ընել և զորս պարկեշտ մարդիկ ընելը գիւրին է:

«Եթէ կարելի չէ ընդհանուր անօրէնութիւն մ'ընել, որ թերեւս մեծ հոչակ հանէր, միթէ խոհեմութիւն չէր լինէր որ նշա-

նաւոր արքեպիսկոպոսարաններ՝ օրինակի համար Քարիզներ, ուր այնքան արդիլեալ քահանաներ տպաւինած են՝ իբրև հիւրընկալ հողի մը վրայ ուր անծանօթ կարող են մնալ, համարձակին ամենէն առաջ Հռոմէն զաղանաբար խնդրելու եկեղեցականութեան այս ողորմելի արարածներուն համար արտօնութիւն մը, արարածներ որ երկու անիմաստ և բաբբարիկ անօրէնութիւններ թէ քաղաքային և թէ կրօնական ամուսնութենէ կ'զրկեն:

«Պապերը միշտ այս իրաւունքն ՚ի գործ դրած և արտօնութիւնը տուած են: Շատ օրինակներ կրնանք գտնել հին ժամանակաց մէջ՝ թէ մեծ տան մը կրտսեր որդին՝ իշխանական տոհմէ որ կրօնաւոր եղեր էր, կարող եղաւ՝ երբ իր անդրանիկ եղբայրը, որ դերդաստանին աւուան և հարստութեան միակ ժառանգորդն էր, անզաւակ մեռնելուն՝ Հռոմէն հրաման խնդրել աշխարհական լինելու՝ որպէս զի օրինաւոր ամուսնութեամբ՝ անուանի դերդաստանին շառաւիղը չմարի: Մենք միայն մուրացող ենք, բայց մեր հոգին այնքան թանկագին է Աստուծոյ առջև որչափ ազնուական դերդաստանաց հոգիները. նոյն համակրութիւնը պարտին ներշնչել եպիսկոպոսաց որ մեզի պէս աննշան ընտանիքէ ծնած են, որ՝ սակայն՝ տեսապէս մարդոց հաւասարութիւնը կը հրատարակէ Աստուծոյ աչաց առջև: Միթէ կրօնի համար մեծագոյն չարիք մ'է ուրեմն որ անուանի անուն մը մարի մոռացման մէջ, քան թէ այն բազմաթիւ դժբաղդ տղաք իրենց ծննդեան սպօքինաւորութեամբ աղարտին:

«Արծեմ թէ ՚ի վեր հանեցի՝ այս հակիրճ տողերով՝ անիրաւութիւնն որու զոհ ընկած ենք: Թամ է որ վերցընեն մեր վրայէն այն նախատինքն որ հաւատարիմ մնացած քահանայութեան վրայ կ'ժայթքեն: Որչափ շատ լինին այն քահանայք՝ որ քաղաքային կենաց մէջ մտնելով՝ բարի մարդու և պատուաւոր ընտանեաց հայրերու պարտքը պիտի կատարեն, այնչափ աւելի պիտի յարգուին այն մարդիկ որ բաւական զօրաւոր են այս աշխարհիս ամէն բաներէն հրաժարելու, և յօժարակամ սեղանի սպասաւորութեան նուիրուող քահանայի պարտականութիւնը կատարելու:

«Չկայ մէկը, սպարոն խմբադիր, որու քահանայական անսղիւստ

կեանքը հանրածանօթ է, և որու զթուփիւնն աւելի մեծ է քան մաքուր մնալու հաւատարմութիւնը, չկայ մէկն որ ձեզի չափ արգահատող եռանդով այս դժբաղդներուն դատը ձեռքն առնլու յարմար լինի, դժբաղդներ որ այսուհետեւ չեն համարձակիր ձեր պաշտօնակիցներն ըսուելու, բայց ձեզ իրենց սիրտը պիտի տածեն, եթէ ձեր արիական նախաձեռնութեամբ իրենց զանդատանաց արդար հատուցում մը տրուէր: Արդէն ձեր կողմէ մեծ համակրութեան փորձ մը պիտի յայանէք ձեր թերթին էջերն այս նամակին բանալով, որու մէջ այն դժբաղդներուն միոյն բերնով իրենց հողոյն արիւնալի վէրքը յայտ յանդիման նշանակուած են: Մեզի համար բարեխօսել՝ ղեղեցկազոյն զթուփեան գործ մը ընել է:

«Հաճեցէք ընդունիլ և այլն և այլն».

«ԱՌԻՊԵՐ

«Արդազուրկ քահանայ»:

Լուպէրի զիրն եռանդով այլ մեծ զգուշութեամբ դրուած էր: Ախրաւորիչ ակնարկութիւն մը չէր պարունակեր ոչ Հռոմի, ոչ եպիսկոպոսութեան դէմ: Թուլիօ պահ մը վարանեցաւ զայն հրատարակելու: Լուպէրի պահանջումները շատ իրաւացի կ'զտնէր, բայց չէր կարծեր թէ պատեհ ժամանակն է զանոնք առաջ քշելու: Արօնական աշխարհը սաստիկ յուզող ծանր խնդիրներուն առջև՝ խոհեմութիւն էր նոր խնդիր մը մէջ բերել: Եւ միթէ քահանայից ամուսնութեան խնդիրն աւելի օրինաւոր լուծում մը չ'պիտի ստանար հանգարտ անձերու մէջ վիճարանուելով՝ փոխանակ կրակոտ անձերու հակաձառութեան ենթարկելու, յորոց ումանք ընդ առաջ դնալ կ'ուզեն՝ իրենց ճամբուն վրայ լինելէք աւերումները փոյթ չընելով, և ոմանք յետս ընկրկիլ կ'ուզեն և Գրիգոր Է.ին վարդապետութիւնները գրկել:

Անտարակոյս՝ անօգուտ կուլ մը գրգռել էր:

Սակայն Թուլիօ՝ առ Լուպէր ունեցած պարտաւորութիւններէն և իբրև պարզ թղթակցի պաշտօն վարելու նկատումէն յորդորեալ՝ նամակը հրատարակեց:

Ընդհանուր դուռ գոչում մը գրղռեց: Այդ գիրը՝ Թուլիօյի

ներհակ փոքրիկ կրօնական աշխարհին մէջ ամփոփուեցաւ այս խօսքով.

«Աշտարակն կախովիլը քահանայից ամուսնութիւնը կ'պահանջէ»:

Կախովիլ էրիւրաբար նենդածէտ յօդուած մը գրեց, որու մէջ ակնարկեց թէ Լուպէրի նամակը խմբագրական ձև մ'էր՝ արդիւլեալ քահանայի մ'անուան ներքև այնպիսի դաղափարներ հրատարակելու որ հարկաւ խմբագրատեղին ազատական սկզբանց արգիւնքն էին: Ասպ այն կրօնամոլ թերթն իր կրօնական բարձրութենէ՝ մեծ մեծ բառեր նետեց եկեղեցականութեան սրբութեան վրայ, քահանային մաքուր շրթանց վրայ որ սեղան կ'էնէ, և զգուշացաւ բուն խնդրոյն վրայ բան մը գրել, այսինքն քահանայագործութենէ արդիւլուած կամ ինքնովին հրաժարած մարդիկ ամուրիութեան մէջ թողլու անիրաւութիւնը, քանի որ չեն կարող անոր պարտաւորութիւնները կատարել, և կամ այս ուխտէն ազատ՝ կարող էին իբրև պարկեշտ քրիստոնեաներ:

Այս դիպուածը Թուլիօյի դէմ նոր կատուութեանց առիթ տուաւ: Անանուն նամակներ իր տունը կ'տեղային:

Զինքը վարդապետ, հրատարակ, անասի կ'կոչէին, և ուրիշ անուններ զոր միայն ղինետուններու մէջ կ'արտաբերեն մարդիկ, և զոր բարեպաշտ և քահանայական գրիչներ գրեր էին, ամօթխածութեան դէմ գործելու չերկնչելով: Այս նամակներէն շատերը սկզբնատառ մ'ունէին և յետոյ բահանայ բառը:

— Լաւ ուրեմն, կ'ըսէր Լուպէր այս գիրերը կարդալով Թուլիօյի հետ, զրաւ կ'զնեմ որ այս քահանաներն այն մարդոց դասէն են որ շատ պէտք ունին իրենց ուխտէն արձակուելու, ուխտ մ'որմէ ինքնին կ'արձակուին: Միշտ գիտած եմ որ քահանայից գումարումներու մէջ, ուր այս եկեղեցական ամուրիութեան խնդիրը կ'յուզուէր, ամենէն անարատ կեանք վարողներն էին որ բարենորոգութեան մը պէտքը կ'սոստովանէին եկեղեցական բարեկարգութեան մէջ: Իսկ միւսներուն դալով՝ այնպիսի վայնասուն կ'արձակէին՝ քահանայից ժուժկալութեան հարկն ապացուցանելու համար, որ պիտի կարծուէր թէ այս պարկեշտ մարդիկ անկարող էին վրիպելու: Եւ սակայն, ինչքեր երևան պիտի ելնէին,

եթէ արքեպիսկոպոսարաններն իրենց զիւանատան թղթերը հրատարակէին :

Բարիզի արքեպիսկոպոսը՝ Ֆրանսայի ամէն կողմէ ազդու բողոքադիրներ ստացաւ այն թերթին պատճառած գայթակղութեան դէմ, թերթ մ'որ կաթողիկ կ'անուանուէր և որ այսպիսի պժգալի բաներու 'ի նպատտ գրելու կ'ժպրհէր :

ԺԲ

ԼՈՒՊԵՐԻ ԳԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Քահանայից ամուսնութեան մեծ խնդիրը՝ Սէնի քաղաքային դատարանին առջև ելնելով՝ տարօրինակ հուշակ հանեց : Բարիզի եւրեւելի փաստաբաններէն մին՝ իր ճարտասան ձայնով պաշտպաններ էր այս դասն որ քաղաքային ազատութեան հետ յարաբերութիւն ունի : Պատաբանը յառաջ բերեր էր թէ Գրիգոր Է. ինչ գրժուարութիւններու հանդիպեր էր՝ սրբակեցութիւնը քահանայական պաշտաման պայման դնելու համար : Քահանաները՝ մանաւանդ Գերմանիոյ քահանաները՝ պատասխան տուին թէ մարդ են և չէ թէ հրեշտակներ : Պապը ստիպեց զանոնք կամ իրենց կիներէն բաժնուիլ կամ սեղանն ելնելէն դադրիլ : Քահանայից գաղտնի ամուսնութիւնները միշտ կ'շարունակուէին՝ մինչև այն ատեններն որ միջին դարու ամենէն կրօնական ժամանակները կ'համարուէին, այնչափ որ 1212ին Բարիզի կրօնադումար ժողովը հրամայեց եպիսկոպոսաց ստակ ընդունելու քահանաներէն՝ իրենց կանայքն 'ի ծածուկ պահելու համար : Ահա այս աստիճան՝ գայթակղութեանց աղբիւր և անկարելութիւն մ'եղաւ եկեղեցւոյ մէջ՝ այս սրբակեցութեան օրէնքը :

Լուպէր փաստաբանէն ետքը սիսեր էր խօսիլ և խնդրոյն կրօնական ու բարոյական կողմը նկատեր էր : Գատարանը մեծ տպաւորութիւն զգացեր էր այս վայրենի Պիրէնեանին ազդու լեզուէն որ Գանուբի զիւղացին կ'յիշեցընէր :

«Պարոններ, չպիտի յանդդնէի ձեր առջև քանի մը խօսք արտասանել՝ ձեր լսած այս ճարտասան գատակարութենէ ետք՝ եթէ այս խնդրոյն մէջ չզանուէր կէտ մը զոր քահանայ մը միայն կարող է քննել, վասն զի նա միայն իրեն եղած անիրաւութեան զօրաւոր զղացումն ունի :

«Ձեզի փաստերով ցոյց տուին որ ընկերական դրութեան մը ներքև որ՝ 1789էն 'ի վեր՝ ամենուն համար քաղաքային ազատութիւն կ'հրատարակէ, մէկը միայն, բարբարիկ արտողութեամբ և որ օրինադրին մէջ չկայ, հասարակաց իրաւունքէն դուրս ձգուած է : Այս պարիսպը քահանան է : Եղեռնագործն որ քսան տարի թիարան մնացած է, այն ինչ ընկերութեան մէջ կ'մտնէ, իրաւունք կ'ունենայ ընտանեկան կեանքը վարելու և ոչ ոք կ'դայ աւոր ըսելու, երբոր քաղաքապետին զիւանատունը ներկայանայ . Գու եղեռնագործ եղեր ես, ոչ ամուսին կարող ես լինիլ և ոչ հայր : Ինչ որ քաղաքապետական իշխանութիւնները չեն ըսեր ոճրագործի մը, որ աւազակութիւնն և երբեմն մարդասպանութիւնը քաւած է, տխուր արիութիւնն ունին ըսելու, իր ազատասիրութեան վրայ իրաւամբ պարծեցող ժողովրդեան մը մէջ, խեղճ քահանայի մը, սովորաբար հանգարտ և բարեբարոյ մարդ մը, որու միայն յանցանքն եղած է սրտին անսալը :

«Աշխարհի առաջին քաղաքակիրթ քաղքի մը գատարանին մէջ այս զուգակշիւը հաստատել կարենալը՝ 'ի սպառ աղարտել է բաշխական արդարութեան ակներև զլացումը :

«Բայց ուրիշ կարգի նկատողութիւններ ունիմ՝ ձեզի ներկայացընելու :

«Երբոր բարձր գատարանները՝ իրենց որոշմանց մէջ, բացառութիւն մ'ուղեցին պահել ամուսնութեան քաղաքային գաշնագրին մէջ՝ 'ի վրաս քահանային, կամեցան կրօնական խնդիրը պահպանել : Անոնք ըսին առանձին . Եթէ այս դուռը բանանք, հազարաւոր գայթակղութիւններ պիտի պատահին . քահանան իր պաշտօնը չարաչար պիտի գործածէ, հրապարակու պիտի ջանայ և ընտանեաց աղտ պիտի բերէ :

«Պարոնայք, այս այնպիսի սարսափ մ'է որ բորբոքելու հակա-

մէտ դաղըկական երևակայութեանց վրայ ամենայն զօրութեամբ կրնայ ներդրօթել :

«Մտածեցէք մի անգամ՝ որ ընդարձակ երկիրներ կան ուր կաթովիկութիւնը հետզհետէ կ'ծաղկի, և ուր քաղաքային օրէնքը չարդիւրէր կաթովիկ քահանային ամուսնութիւնը : Մէջ պիտի բերեմ Միայեալ-Նահապետ և Եւրոպայի բոլոր տէրութիւններն ուր բողոքականութիւնը կ'տիրապետէ, Անկլիա, օրինակի համար, ուր կաթովիկութիւնն արագ կ'զարգանայ : Միթէ այս բացարձակ ազատ երկիրներու կաթովիկ քահանայն օրինաց թոյլտուութենէ օգուտ կ'քաղէ՞ իր քահանայական պաշտօնէն հրաժարելու համար : Ամենևին . նոյն պաշտօնին մէջ ազատօրէն մտաւ, քաջ դիմաւորով որ կրնար վերստին մտնել հետեւեալ օրն իսկ՝ քաղաքային կենաց մէջ և անդ կ'մնայ ազատօրէն : Եւ ահա այս յարատեւութիւնն է քաղաքայնապէս ազատ ուխտի մը մէջ՝ որ նոյն իսկ կաթովիկ եղող անձանց խորին պատկառանքը կ'դրաւէ : Ասոնք այնպիտի իրողութիւններ են զոր չէք կրնար ժխտել : Եւ եթէ ըսէք ինձ թէ Ֆրանսայի համար մեծ երկիրը կայ որ քահանաները չվարակին այս անմաքուր հիւանդութեամբ, ձեզի պիտի պատասխանեմ . Աւելի լաւ, կաթովիկութիւնն անով կ'շահի, պիտի ազատի այն խիստ տկար և քահանայութեան կոչում չունեցող մարդիկներէն որ չեն կարող իրենց սրբակեցութեան ուխտին պարտաւորութիւնները տանիլ : Յարգանքը պիտի աճի աշխարհի մէջ այն քահանայից համար որ իրենց պաշտօնը մաքուր կ'պահեն և ակնբերե անիրաւութեան մը դադարումը կղերին համար պատկառանք և աղբեցութիւնը պիտի աւելցնէ :

«Աւելի յառաջ կ'երթամ :

«Ֆրանսայի մէջ սովորած ենք՝ ներեցէք ինձ ըսելու՝ քահանային ամուրիութեան մասին մեր ունեցած տղիտութեան պատճառաւ՝ ամուրիութիւնն իբրև կաթովիկ քահանայագործութեան էական պայմանը նկատել : Մեր մէջ, գուեհիկ խօսք մը կայ զոր անգագար կ'ըսենք . — Թող բողոքական պաշտօնեայք կարգուին, ըսելիք չունինք, բայց կաթովիկաց մէջ՝ ուր խոստովանութիւն կայ, այդ կարելի չէ, խոստովանութեան կործանումը կամ անոր սրբա-

պղծութիւնը պիտի լինի» : Ահա այս կ'ըսէ գուեհիկը, այս կը կրկնեն շարունակ առանց խորհելու :

«Ուրեմն չգիտեն թէ կաթովիկ եկեղեցին նշանաւոր ճիւղեր ունի, ինչպէս Հռոմի յունական եկեղեցիները, բոլոր Լիբանան, ուր քահանայք ամուսնացած են, ուր եկեղեցոյ կարգն իսկ կ'պահանջէ որ կարգուին, և ուր խիստ բարեպաշտ ժողովուրդներն այս ամուսնացած քահանայից ձեռօք կ'խոստովանին առանց որ և է վտանգ պատահելու և առանց որ և է դժկամակութեան՝ յոգուտ հողիներու, որ իբրև առաջնորդ կ'զանեն այնպիսի մարդիկ որ կենաց իրերու քաջավարժ լինելով՝ շատ ճարտար կ'զառնան հոգևորապէս վարելու իրենց ծուխերը :

«Եթէ այս իրողութիւնները ճշմարիտ են, ինչպէս որ իրօք են, ինչո՞ւ համար մարդկային օրէնքը պիտի յամառի, կարգէ դուրս պատշաճութեան զգացումով, ամուսնութենէ զրկել այն մարդիկն որ՝ կնկան մը հետ օրինաւորապէս միանալէն ետև՝ չեն պահանջեր որ քահանայագործութիւն ընեն, և խոստովանեն՝ իբրև հողիներու դատաւորներ, այլ կ'ուզեն՝ իբրև բարի մարդիկ՝ ընտանեկան կենօք ապրիլ և իրենց անունն ու ստացուածքն օրինաւորապէս իրենց որդոց ասանդել :

«Պարոններ՝ այս ամենն ամենաստոյգ են : Աշխարհիս վրայ ողորմելի նախապաշարում մը կ'պահէք, մեծապէս կ'օղնէք արժէք տալու՝ մեր օրերը ժողովրդեան մէջ քահանայից դէմ եղած ահարկու առարկութեան մը . այսինքն — Եթէ քահանայք դատարաններէ չվախնային՝ մեծ մասամբ պիտի ամուսնանային : — Այս նախապաշարումն հանրական է, ընկերական յեաին խաւերուն մէջ մտած է : Ամէն կարելի բանավարութիւններն այս մասին ժողովրդեան կարծիքը չպիտի փոխէին : Մէկ նշանաւոր իրողութիւն մը կայ միայն որ կարող է զիրենք համոզել : Այն օրն որ պիտի հաստատուի թէ քաղաքայնական իշխանութիւնները պատրաստ են քահանայագործութենէ հրաժարիլ ուղղը քահանային երդումն ընդունիլ, ընտանեկան շրջանի մէջ մտնելու համար, ժողովուրդը լիովին պիտի հաւատայ եկեղեցական պաշտօնի մէջ մնացող կրօնաւորաց հաւատարմութեան և պատուոյն : Եթէ այդ փորձ մ'է

կաթոլիկութեան համար՝ պէտք է կարծել թէ բաւական զօրաւոր  
և երկնային լինելով կարող է կրել այդ փորձը : Եթէ ամէն  
քահանայք իրենց ուխտը թողուն և սեղանի սպասաւորութենէ հե-  
ռանան , այն ատեն զօրաւոր փաստ մը չպիտի լինի այն որ օրի-  
նաց պաշտպանութիւնը պէտք չէ բռնել կենալ այնպիսի կարգա-  
պահութիւն մը զոր քահանայն չէ կարող այլ ևս կրել և որ ի-  
րապէս օղուտ մը չըբերեր եկեղեցւոյն :

« Պարոններ , մեր կարծածէն աւելի՝ Ֆրանսայի մէջ՝ միջին դա-  
րու դաղափարաց աղղեցութեան ներքև կ'գտնուինք , և 89 մեզ  
անկատար կերպով անկից ազատեց : Իրաւ է որ կրօնից ազատու-  
թիւնը հրատարակեցինք , և եկեղեցին՝ մեր վրայ սլարտ գնելով  
իրեն վարդապետութեանց հաւատարիմ մնալու՝ միայն հոգևոր  
զէնքեր ունի մեզ իր ծոցը պահելու համար : Աշխարհականի բա-  
զուկը չունի որ իրեն օղնութեան գայ և ըսէ անոր որ ուրիշ կրօ-  
նի մէջ աւելի ծանրակշիւ ճշմարտութիւններ կ'կարծէ գտնել .  
հաւտան և մեռիլ : Զանի ազատ կ'թողու : Բայց այս ազատու-  
թիւնը քահանային համար սեղմուած է , աշխարհականին բաղուկը  
վարդապետութեան մը չկապեր զանի , այլ բարեկարգութեան օ-  
րէնքի մը . իրաւ է որ չըսեր անոր , հաւտան ու մեռիլ , բայց  
մարմնէն աւելի մեծ բան մը կ'սպաննէ , հողին կ'սպաննէ : Քա-  
հանայական պարտաւորութիւնները կրելու անկարող քահանայն  
փայտակոյտի մը վրայ չհաներ , սակայն վատահամբաւութեան բե-  
մին վրայ կ'գամէ , այս է հարձակալութեան : Եւ օրէնքն որ ա-  
մենուն համար խղճի ազատութիւն տուած է , միայն քահանային  
կ'մերժէ :

« Իստեցայ , պարոններ , այժմ՝ վճռեցէք : Մտածեցէք ձեզ կաշ-  
կանդող օրէնք մը չկայ օրինադրին մէջ : Արօնից պաշտօնէին 1806  
յունվարի 14ին նամակը չկրնար օրինաց ոյժ ունենալ : Անձնա-  
կան զնհատութիւն մ'էր այն որ ապագայի նկատմամբ ոչ ինչ  
չէր օրինադրեր : Ամէն քաղաքացի իրաւունք ունի օրէնքի մը վե-  
րաքննութիւնը պահանջել երբ անոր դործադրութիւնը մեր բա-  
րուց հետ չհամաձայնիր : Բայց աստ , պարոնայք , վերաքննելու  
քաղաքային օրէնք մը չկայ . մի միայն կրօնական բարեկարգու-

թիւնն է որ քահանայից ամուսնութիւնը կ'արդիւնէ : Եթէ կ'ու-  
ղէք անոր զօրավիզ դալ , այն ատեն հակասական գրութեան մը  
մէջ մի մնաք , աւելի հեռուն դացէք . եկեղեցւոյ տուէք քաղա-  
քային վիճակին արձանագրութիւնները , ստիպեցէք կաթոլիկներն  
որ կաթոլիկի պէս ապրին , խոստովանին , պահք պահեն . լծին  
ներքև մտէք կամ լիովին խորտակեցէք » :

Ոչ բանականութիւնն և ոչ ճարտասանութիւնը ներդործութիւն  
մը չունեցան դատարանին վրայ : Լուպերի խնդիրը բացէ 'ի բաց  
մերժուեցաւ :

ԺԳ.

ԽՉԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Վէզէր կոմսուհւոյն նենդաւոր խորհուրդները մեծ տալաւորու-  
թիւն ձգեր էին տիկին Իւրապէլի վրայ : Նա խելամուտ եղաւ  
որ կամ հրաժարիլ պէտք էր այն ընկերութենէ որու մէջ ա-  
նուն ունէր , որու դովեսան ու պարսաւն իր կենաց վրայ պիտի  
ծանրանար , կամ այն Լուիզէն՝ որ այնքան սիրանոյշ էր , այն-  
քան փարելի , և որու ընտիր ընտիր ձիրքը զինքը հրապուրեր  
էին : Նա կ'սիրէր Լուիզը , նա կ'յարդէր ծուլիօն , հետեապէս  
պայքարն երկայն եղաւ : Իր կնային գողոցութիւնը զրգուեցաւ :  
Բնապէս բարձր ու արդար դաղափարներ ունէր որ կուսակցու-  
թեան որ և է ողիէ ազատ էին : Իրեն այնպէս երեցաւ թէ վա-  
տութիւն էր իբրև ստրուկ հետեիլ այն հին և տիրապետող ըն-  
կերութեան որու նախասրաշարմանց ենթարկիլ և ռխակալութիւն-  
ներն ընդունիլ պէտք էր : Հասկըցաւ նա որ զիջանելով բարո-  
յական ինքնասպանութեան կ'ղիմէր , թէ շարժման կատարելա-  
գործութեան և արդասաւոր խորհուրդներու վերջ պիտի տար՝  
և պիտի ընկնէր մինչև յետին ժամուն՝ անշարժութեան մէջ , ան-  
լոյս պաշտաման մէջ՝ որ միայն անկում մ'եղաւ աւելի փալփոււն  
ճակատադրի մը , անվօր ատելութեան մէջ այն ամէն նոր բանե-

բու դէմ որ՝ այս և ասպղայ դարերու՝ յառաջագիւնութեան ուս-  
կեղէն գոները բանայ :

Գիւրապէլ տիկինը Լուիզ և իր եղբորը հետ տեսնուելով  
մեծցեր էր , և այս բանս ինք կ'զգար , անոնց հետ աւելի լայնա-  
տարր հորիզոններ կ'տեսներ : Նա դթասէր էր՝ ինչպէս են իր  
աստիճանն ու արիւնն ունեցող կանայք , երբ զգայուն և արդա-  
հատող հոգի մ'ունին : Լուիզ Բարիզ զալէն 'ի վեր՝ իր եղբոր  
հետ կ'քննէր գթութեան մեծ խնդիրը , ասոր մէջն ալ՝ գոեհիկ  
ճամբայ մը կար որու մէջ ընդ քարշ կ'քալէին դարերէ 'ի վեր ,  
և որ անհամաձայն էր ընկերութեան նոր պիտոյից և ըզձից հետ :  
Ժուլիօ ասոր վրայ մեծ գործ մը կ'պատրաստէր իր լրագրին մէջ  
հրատարակելու մտօք : Լուիզ այս գործին մէկ քանի էջերը տի-  
կին Գիւրապէլի կարգացեր էր , և այս կնիկան ուղիղ խելքը՝ իս-  
կոյն հասկըցեր էր թէ իրօք որչափ գործնական են Ժուլիօյի դա-  
ղափարները : Իր նորատի բարեկամուհոյն հետ խորհուրդներ յօ-  
րիներ էր , և ամէն այս բաներէն պիտի հրաժարէր որպէս զի  
վերագաւնայ այն գոեհիկ ճամբան ուսկից կարծէր թէ ընդ միշտ  
հեռացած է :

Տիկին Գիւրապէլի հօրն անունը միապետութեան ամենէն հին  
և հռչակաւոր անուններէն մին էր , բայց իր ամուսինը կայսրու-  
թեան մէկ զօրապետի մ'որդին էր , որ իր համբաւը կ'պարտա-  
ւորէր իր սրին և Ա. Նափոլէօնի շնորհաց : Սակայն տիկին Գիւ-  
րապէլ՝ Սէն-Ժէրմէնի արուարձանին մէջ իր ընտանեկան բոլոր  
հին յարաբերութիւնները պահած էր : Այս յարաբերութիւններն  
իր գոռոզութիւնը կ'զգուէին , իր մէկ ոտքը կայսերական արքու-  
նիքն էր , միւսը հին գրութեան կուսակից սրահներուն մէջ : Իր  
հարստութեան , չափաւորութենէ՝ ըրած անյարմար միութեան փո-  
խարինութիւն մ'էր : Չէր կամեր աւրուիլ այն ընկերութեան հետ՝  
որ կ'վերաբերէր իր ծննդեամբ , իր նաափառութիւնը սաստիկ պի-  
տի տառապէր : Թերևս անդ չերեւելու հաճէր , բայց չէր կամեր  
որ բոլորովին անկից դուրս ձգուի : Այս ամէն բաները մտքէն ան-  
ցուց , միտ առաւ ստրկութեան բոլոր նուաստութիւնները , հո-  
ղոց աղատութեան բոլոր ճոխութիւնները , որմէ պիտի հրաժա-

րէր : Յաւեցաւ ընդնշմարած մեծ բաներուն վրայ , ինչպէս որ ա-  
ռաջին սիրոյ վրայ կ'լայ մարդ : Իր նոր իղձերը խեղդեց և կու-  
սուհոյն հրամանին հնազանդեցաւ :

Տիկին Գիւրապէլ խնայաւ որ Լուիզ հիւանդ էր , անոր յար-  
մար տոմսակ մը գրեց , բայց այս տոմսակին անորոշ քաղաքավա-  
րական ոճը Լուիզի համար ազդարարութիւն մ'եղաւ թէ տիկին  
Գիւրապէլի առաջին գորովը պաղեր է : Բարեկամութիւնը , սի-  
րոյ պէս իր կասկածները , իր անձկութիւններն ունի : Ուրիշ եր-  
կու երեք հատ շատ պաղ տոմսակներ միայն իբրև պատասխան  
ուղղութեան Լուիզի նորաբուժութեան ատեն դրած սիրալիք նա-  
մակաց : Այս տոմսակներէն մէկուն մէջ իրեն կ'յայտնէին թէ Պ.  
և տիկին Վէրտօն Տ . . . գարձեր են : Մեծ տիկինը՝ իր յարա-  
բերութեանց և զուարճութեանց մրրկին մէջ՝ ժամ մը չգտաւ որ  
հիւանդ օրիորդին այցիլ երթայ Պարույէր փողոցը :

Երբոր Լուիզ դուրս ելաւ , հաճեցաւ դարձեալ գնալ իր պաշտ-  
պանուհին համարած անձին : Այս ընդունելութիւնը պաղ եղաւ :  
Տիկին Գիւրապէլ Ժուլիօ արեղային անունը չ'խիչեց և Լուիզ  
այս լուութեան վրայ սաստիկ վիրաւորուեցաւ . այս բանս ամէն  
ինչ կ'յայտնէր : Տիկին Գիւրապէլի շրթունքէն սիրալիք խօսք  
մը չելաւ . կիրակի օրուան մտերմական ճաշին ներկայ գտնուելու  
հրաւեր չընդունեց Լուիզ :

Քիչ ատենէն՝ Լուիզ ոտք ելաւ . տիկին Գիւրապէլ բառ մը  
անդամ չըսաւ զանի չթողլու համար :

— Մնաս բարեաւ , ըսաւ Լուիզ և ջլաձիգ ձեռքով սեղմեց  
այն ձեռքը զոր իր հին բարեկամուհին կ'կարկառէր իբրև յետին  
քաղաքավարութիւն մը :

Իր տամուկ աչերը խօնարհեցան :

— Երբէք ոտք չպիտի կոխեմ այս սեմին վրայ , ըսաւ Ժու-  
լիօյի քոյրը :

Եւ սրտաբեկ ու վշտաղին դարձաւ իր Պարույէրի փողոցին հա-  
մեստ տունը :

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ Ի ՏՈՒՆ ՊԱՐԱՄԻՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ժուլիոն լիովին քարոզչութեան պաշտօնէ զրկելը — ըստ ուրում Բարիզի մէջ անկարելի էր որ ժողովրդապետ մը յանձն առնէր Սէնդ-Էօստաշի անկարողութեանց նորոգուիլը տեսնել — բաւական չէր եղած խեղճ քահանային դէմ զիղուած ատելութիւնները մարելու :

Գաւառներէն եկած նամակներ՝ եպիսկոպոսներն հրաւիրեր էին ամէն միջոց ՚ի դործ դնել որպէս զի կղերն արդիւնն վատահամբաւ թերթի մը բաժանորդ գրուելու , որ իտալական միութեան համար իր համակրութիւնը չէր սքօղեր և բարձրաձայն կ'հրատարակէր թէ եկեղեցին մեծ շահ պիտի ունենար եթէ իր հողերը զլուսը մարմնաւոր թաղաւորութեան անօգուտ բեռէն ազատէր : Եպիսկոպոսաց այս ճնշման վրայ շատ մը դաւառական երէցներ իրենց բաժանորդութիւնը դադրեցուցին : Մինչև անդամ քանի մը երէցներ որ Ժուլիոյի թերթը դադանուղողի կ'ընդունէին , եպիսկոպոսաց մասնուեցան և քիչ ատենէն լրագիրը միայն անկախ աշխարհականներ ունեցաւ իբրև բաժանորդ :

'Նոյն պահուն՝ եպիսկոպոսները դանդատելու կ'յորդորուէին թախանձանօք՝ առ Բարիզի արքեպիսկոպոսն՝ այդ դայթակղեցուցիչ թերթին գոյութեան վրայ , որ յուր վարդապետութեանց թոյնը կ'թափէր իրենց թեմականաց մէջ :

Երբէք կացութիւն մ'այնքան դժուարին չէր եղած որչափ Քրանսայի եպիսկոպոսաց , եկեղեցւոյ համար այս աղէտալի ժամանակուան մէջ : Անտարակոյս՝ ասոնցմէ շատերը կ'դիտեն յայտնապէս որ աշխարհական պապութիւնն իր օրն ըրաւ և հալումաշէ կ'մեռնի , և թէ զայն պահպանելու համար ՚ի դործ զբուած բոլոր ճգունք մի միայն անոր օրհասն երկարաձգելու սխի օգնեն : Բայց այս հռոմէական վիճակաց թաղաւորին դատը , այս ասիւնէն յարբէլէ

թաղաւորին դատը (կ'ըսէ մարմնաւոր իշխանութեան աներկեան հակառակող մը) միթէ եպիսկոպոսական եղբարքը դատը չէ . միթէ պարտաւորութիւն մը չէ իրենց համար զայն պահպանելը , և անոր շուրջը սպառազինիլը : Այս բանս ոչ ոք կ'ուրանայ : Եւ անոնք որ այս պարտքը կ'կատարեն , և մեծադոյն մասն է , չափաւորութեամբ , առանց հասարակային նախատիչներ լինելու , յարդանաց և զովեստից արժանի են :

Հատեր կարգացեր էին Ալաբուիան կախուիլ լրագիրը , և կ'գովէին Ժուլիոյի այն վայելուչ ոճն որով ամենէն փափուկ խնդիրները կ'ներկայացընէր : Անոնք գիտէին որ եպիսկոպոսաց պարտիքը կրօնական օրագրապետին պարտաւորութիւններէն կ'տարբերին : Անոնք կ'հասկընային որ Ժուլիոյի լրագիրը ծայրայեղ կուսակցութեանց մէջ փափաքելի փոփոխութիւն մը բերելու նպատակ ունէր , նոյնպէս յուզել այն սոսկալի խնդիրներն որ իրենց ճշմարիտ լուսով կ'երևէին , հաշտութիւն մը բերել իր հողերը իրաւանց մէջ հաստատեալ եկեղեցւոյն և մարմնաւոր իշխանութեան ձկտող իրաւանց մէջ , որու ստացումը միշտ դժնդակ եկեր էր իրեն :

Բայց եպիսկոպոսաց համար հարկ կար միացած մնալու : Անտարակոյս այս հարկին վրայ չափազանց կարծիք ունէին . կ'կարծէին թէ ստիպուած են ամէն երկրորդական նկատումներ զոհել , և մեծամասնութիւնը ստէպ վաւճառն փոքրամասնութենէ մը կը մղուէր որու առաջարկած հրահանգաց կ'հպատակէին անմուռնչ , և ՚ի յարդանս քահանայապետին՝ որ իր զոհերը պաշտպանելու կարող յետին ախոյեան մը կ'նկատէր զայն , որպէս զի եթկպառակութեան նոր որոմներ չձգեն եկեղեցւոյ մէջ :

Ասկից զատ՝ ընկերական մեծ տաղանայներու ատեն՝ թէ քաղաքական լինին թէ կրօնական , թալուկ մը կայ որու ամէն մարդ հաղորդ կ'գտնուի : Արեմն պէտք չէ զարմանալ որ եթէ մէզ վիզաց և անդրալիւնականաց դու ու զոչումին առջև՝ Ժուլիո կալիքան գրօշակին այս նոր երևմանէ երկնչելով՝ ստիպուեցաւ ընկճիլ և զոհուիլ մինչև անդամ այն անձանց կողմէ որ իր բնաւորութիւնն ու վարդապետութիւնները կ'յարդէին :

Եւ արդէն Թուլիօ կ'հարցընէր իւրովն թէ հարկ չէ՞ր թողուլ սկսած մեծ ձեռնարկութիւնները, և թէ՛ թշնամի աղանդաւորներու նիւթած դաւերուն առջև՝ չ'պիտի ստիպուէր նաև հեռանալ դազափարայ շարժման կեդրոնէն և երթալ դաւառի մը մէջ թաղուիլ որպէս զի փոքր ինչ արտաքին անդորրութիւն գտնէ, և միանգամայն թերևս աւելի զայրազին հալածանք, աւելի անողորմ ատելութիւններ: Միթէ լաւագոյն չէ՞ր մաքաւիլ մինչև վերջն այն թատրոնին վրայ ուր միայն պայքարը կարելի է:

1862 յունվարի վերջերն էր:

Օր մը Թուլիօ հետևեալ գիրը ստացաւ.

Բարեղէ արեւելահայաստան

«Պարոն Թուլիօ արեղան կ'հրաւիրուի ներկայանալու զալ երեքշաբթի արքեպիսկոպոսարանը, կէսօրէն մինչ ժամն երկու: Կարևոր բան մ'ունիմ անոր հաղորդելու:

«ՊԱՐԱՄԻՆՈՍ Տածիչ»:

Որոշեալ օրը՝ ճիշտ կէսօրին՝ Թուլիօ արքեպիսկոպոսարանը ներկայացաւ: Նախասենեկին մէջ ուրիշ եկեղեցական մը գտաւ որ իրեն պէս հրաւիրուած էր: Բարիզի շրջակայ թեմերուն մէկուն երէցն էր:

Քիչ ատենէն Պարամինոս եպիսկոպոսին դահլճին դուռը բացուեցաւ և երէցը ներս հրաւիրուեցաւ:

Գահլճին մէջ անցած տեսարանները մեծ և սրտաշարժ եղան:

Երէցը մեղսական յարաբերութեան մը համար ամբաստանուած էր: Գաղտնի տեղեկութիւններ ստացեր էր արքեպիսկոպոսարանն և սոսկալի փաստեր ունէր յանցաւորին դէմ որ յամառութեամբ ամէն բան ուրանալու գրութիւնը բռներ էր:

Այն ատեն տեղի ունեցած վիճաբանութեան մէջ միշտ կ'սնդէր թէ յանիրաւի զըպարտուած է՝ որպէս թէ նախանձորդներ զինքը կ'հալածէին՝ և հրաշալի խորամանկութեամբ Տածիչին ամենէն զօրաւոր փաստերը կ'ժխտէր:

Սակայն հասաւ ժամ մ'երբ՝ իրեն դէմ եղած ծանր ծանր ամ-

բաստանութիւնները կարգայուեղէն ետև՝ երէցը ճշմարտութեան դէմ այլ ևս ըմբոստ մնալ չկարենալով՝ և գիտելով որ Պարամինոսի արդահատութեան մէջ փրկութեան յոյս մը կար՝ ծունր գրաւ և գոչեց:

— Լաւ ուրեմն, այո՛, յանցաւոր եմ, ողորմելի արարած մ'եմ, բայց զիս մի մատնէք ՚ի կորուստ:

Եւ այս խոստովանութեան յարեց իր հուետորութեան թելադրած ամէն պատճառներն որպէս զի իր գատաւորը մեղմէ:

— Այնքան բարեսիրտ էք, կ'գոչէր նա:

Այս վերջին սրտաշարժ կոչումն էր որ Պ. Պարամինոսի սիրտը ծակեց:

— Սիրելի բարեկամդ իմ, անտարակոյս քու կորուստդ չենք ուզեր, և մեր հարցաքննութիւնը գաղտնի պիտի ընենք, ամէն ինչ պիտի պաքակենք: Քանի մը շաբաթուան համար ճամբորդութիւն ընելու պատրուակ մը գտիր և ամէն ինչ պիտի խաղաղի թեմիդ մէջ: Օ՛ն, բարեկամ, սիրտ ան, սաստանին դիմանանք, աղօթենք և մտածենք: Հիմակ դնա՛ ՚ի խաղաղութիւն: Գործը ժողովին մէջ պիտի կարգադրեմ:

Եւ այս մարդը՝ կեղծաւորական տեսակ տեսակ մաղթանք ընելէն ետև՝ կ'ըսէր առանձինն.

— Բարեսիրտ մարդիկ. բաւական է միայն զանոնք քիչ մը շուքորթել զիտնալ: Իմ թեմն կ'պահեմ:

Այնուհետև Թուլիօ ներս մտաւ:

Պ. Տածիչը սառ դէմքով մ'ընդունեց զանի: Արդէն կ'զղջար որ շուտով մեղմացաւ և Թուլիօյի հետ աւելի խստութեամբ և դէղութեամբ վարուեցաւ:

— Պարոն արեղայ, պատարագ ընելու արտօնութիւն չունիս այսուհետև: Այս որոշումն ակամայ ըրինք: Սակայն Ֆրանսայի այլ և այլ առաջնորդներէ այնքան դանդատներ, նոյն իսկ Հռոմէն այնքան նամակներ եկած են մեզի, որոնք քու վարդապետութեանց ըրած տաժանելի տպաւորութիւնը կ'սպարաւեն, որ չենք կարող այլ ևս քահանայագործութեան պաշտօնը վրագ թողուլ: Անշուշտ պիտի ըսես ինձ որ լրագրիդ մէջ դաւանական խնդիրներու վրայ բան

մը գրած չես . այդ իրաւ է : Բայց այս միջոցիս եպիսկոպոսութիւնն իրեն յատուկ ընթացք մը գծած է , և չենք կարող թոյլ տալ որ քահանայ մ'անկից շեղի : Եւ եթէ քանի մ'եպիսկոպոսներ իրենց պաշտօնակցաց կարծեաց լիովին համամիտ չեն , դարձեալ հաստատ որոշած են՝ որչափ որ կարողութիւն ունին , այդ կարծիքը պաշտպանել : Կան ժամեր ուր լուութիւնը բարեպատեհ է , պարոն արեղայ : Կ'ցաւիմ որ՝ քեզի տրուած խորհրդոց հակառակ վարուեցար : Գարձեալ՝ Բարիդի վիճակէն չես : Բարեհաճէ քու եպիսկոպոսիդ հետ հաշտուիլ : Արդեւում մը չէ այս քեզի դէմ : Քեզ իբրև օտար քահանայ կ'նկատենք : Բարիդի արքեպիսկոպոսարանը ստիպեալ չէ ընդունիլ բոլոր այն քահանաներն որոց խելքին կ'փչէ իրենց վիճակէն հեռանալու : Այս որոշումը խիստ պիտի գտնես , բայց կղերին առջև մեր ունեցած խեղճ կացութիւնն է որ մեզ յայն կ'զբոյժէ :

Այս յորդորակին պատասխան մը չկար տալու : Եւ ժուլիօ ոչ ինչ չպատասխանեց : Ոտք ելաւ , բարևեց և մեկնեցաւ :

Ժուլիօ՝ նախասնեկէն անցնելու ատեն՝ ճանչցուեցաւ քահանայէ մ'որ Պ. Պարամինոսին այցելութեան կ'դար : Տ . . . ի մէջ Տալպատի մէկ վաղեմի երէցն էր որ 1848ին՝ հասարակապետական գաղափարաց հակելով՝ Բարիդ եկեր էր , նոյն ժամանակուան վիճաբանութեանց մասնակցելով : Ժուլիօյի այս հայրենակիցն որ տաղանդէ զուրկ չէր , այն ատեն քաղաքական և կրօնական հանդէս մը հաստատեր էր , Ա. Էրանդիէն անուամբ : որու մէջ շատ արմատական գաղափարներ պաշտպաներ էր : Այս հանդէսն աղմուկ հաներ և քանի մը յօգուածներ հրատարակեր էր , և խմբագրապետը կարմիր գրօշակը կ'բարևէր յանուն կաթոլիկութեան , և այսպէս այս մարդն այն ծայրայեղ աստիճանին հասեր էր որ քահանայի մը համար անվայել կ'համարուէր : Ժուլիօն կեցուց և անոր հետ քիչ մ'ատեն խօսակցեցաւ , մինչև որ իր ունկնդրութեան կարգը հասնի :

Ազատական կաթոլիկին քանի մը թիւերը կարգացեր էր :  
 — Ես քու նախորդներէդ մին եմ , ըսաւ անոր , կրօնական լրագրութեան գծուարին պաշտօնին մէջ : Այն ատեն քու ունեցած

տարիքդ ունէի դրեթէ : Ի՞նչ պատրանք ունեցայ : Եւ՝ որչափ որ իզնէ աւելի քիչ կ'սիրախես , հաւանօրէն ինձի պէս անյաջող վախճան մը չպիտի ունենաս : Միթէ քեզ վայրի կենդանիի մը պէս չե՞ն հալածեր :

- Գրեթէ , ըսաւ ժուլիօ :
- Միրելիդ իմ ժուլիօ , շուտով մէկդի ձգէ այդ ապերախտ ասպարէզը : Ամէն ինչ քեզի դէմ պիտի ունենաս . մինչև անգամ բարեկամներդ , եթէ երկչոտներուն կարդնես :
- Ես ինձի համար իմ խիղճս ունիմ , նոյնպէս ճշմարտութիւնը , պատուաւոր մարդոց համարումը , և նոյն իսկ թշնամեացս յարգը :

— Կ'հաւատամ . բայց այդ շատ չնչին վարձք մ'է : Ես ալ ատեն մը քեզի պէս այս աղւոր վարձատրութեամբ մխիթարուեցայ : Գլուխ տուի ժէզվիդական և անդրալեռնեայ հալածանաց դէմ : Եւ երբ վերջապէս՝ օր մը , երեսի վրայ ձգեցին զիս նոյն իսկ պաշտպաններս՝ և մինակ մնացի , բոլորովին մինակ , հասկըցայ որ կարելի չէր կռիւը շարունակելը :

- Ի՞նչ ըրիր :
- Անձնատուր եղայ : Մեղմիկ վարուեցան ինձի հետ , 'բայց հարկ եղաւ շատ նախատինք մարտել : Ստիպուեցայ շողմարարութիւն ընել , և սև ըսել այն բանին որ սպիտակ էր , և քանի մը ամիս կայ՝ կուսակցութեան դաւախան մը տալու համար , պէտք եղաւ անդրալեռնեայ գաղափարաց 'ի նպատ խոշոր հատոր մը յօրինել : Այս հատորը շատ տաղտկալի , թանձր ու գէշ գրուած է , ինչպէս առանց ազատութեան և խղճի դրուածները , բայց չափազանցութեան սահմանէն անցայ , և որովհետև պէտք էր իմ մուտքս անոնց մէջ վճարել , ես ալ առատօրէն վճարեցի : Եթէ իմ զիբքս կարգալէն ետև՝ Պապը Սուրբ Երրորդութեան չորրորդ անձը չնկատեն կաթոլիկները , յանցանցանքն իմն չէ : Ուստի Աստի Կաթոլիկ Երկրագործութիւնը իր ընթացողաց ձանձրոյթ պատճառելու չափ՝ սովորականէն աւելի՝ քաղաածներ տուաւ այն հատորէս Պ. Ռիվիէրի խորհրդածութիւններով հանդերձ՝ որ կ'յայտնէին եկեղեցւոյ զգացած ուրախութիւնը տեսնելով որ իր մոլորեալ զաւա-

կաց մին իրեն կ'գառնար : Մինչև անդամ հաստատեց որ մտացս յաջող այլափոխութիւնն իմ ոճիս վրայ կ'բեկբեկէր , ոճ մ'որ աւելի խորունկ , աւելի ճարտասան եղեր էր և այլն : Այս ամենը կ'աւարտէր անարատ Մարիամու մաղթանք ուղղելով՝ որ , ինչպէս կ'երեւէր , զիս անգունդէն հաներ էր : Այս վիպադրին համեմատ՝ հարկաւ ինձի պաշտօն չէր պակսեր : Փոքրիկ թեմ մը տուին ինձ Ֆօնդնէյ - օ - Ռօդլի մօտ : Այն տեղ հացս դտայ աւելի բարձր ելնելու յուսով :

— Անտարակոյս այդ հացը շատ դառն կ'գտնես : Մեծ ճամբաներու վրայ բաւական դայլախաղ կան կոտրելու :

— Զքնա՛ղ խորհուրդ : Բայց կարծեմ թէ իմ ձեռքերս պիտի վերաւորին այդ տաժանելի աշխատութեամբ : Ա՛խոստովանիմ որ շատ տառապեցայ : Կան վայրկեաններ որ իմ վրայ համարումս կ'նուաղի : Բայց ի՛նչ օգուտ : Մարտիրոս լինելու արիւժիւնը չունեցայ :

— Մնաս բարեաւ , պարոն երէց , քու վրադ կ'յաւիմ :  
Եւ Ժուլիօ դուրս ելաւ արքեպիսկոպոսարանէն :  
Միւս օրը Կաթոլիկ երկրագործին մէջ հետեւեալ տողերը դրուած էին .

«Ստոյգ սղբիւրէ իմայանք որ եկեղեցական իշխանութիւնը Ժուլիօ արեղան քահանայադործութենէ դադրեցուց : Չայն կ'պտըտի նաև որ իր Աղաթախան Կաթոլիկ թերթը քիչ օրէն պիտի դադրի հրատարակուելէն» :

Պ. Լիչ Ժուլիօյի տունը փութաց Կաթոլիկ երկրագործին այս քանի մը տողերը կարդալով :

— Կեցիր , ըսաւ անոր , բան մը չըրիր այդպիսի աղտ մը կրելու համար : Քահանայադործութենէ քեզ կ'դադրեցընեն , բայց քեզն զէմ արդեւման վճիռ մը չկայ : Քու բարեկամաց առջև միշտ անարատ կ'մնաս : Շարունակէ դործդ : Մեր մէջ այնքան բարձր պաշտօն մ'ունիս կատարելու՝ որչափ այն որ քեզ եկեղեցւոյ խորանին առջև հանեց : Մամուլն այսօր մարդոց մէջ միութեան մեծ կապ մ'է : Երբ մարդկային ազգը հին քաղաքակրթութեանց ներքեւ էր , հասարակ ինչոյքն եղբարց միութիւնն էր . ազատներ կը

լինէին մի և նոյն հացը բաժնելով : Քանի յառաջանանք՝ այնքան մարդիկ պիտի փութան՝ ամէն առտու՝ այս հասարակ ազատն իրարու տալու , այս մտաւորական ազատն ամէն նշանակէ ազատ՝ որչափ եղբարց մէջ բաժնուած հացը : Աւրեմն նոր ժամանակաց եկեղեցականութիւնը պիտի շարունակես , և երբ մեր ժամանակն աւկամայ նիւթականութեան հակումներ կ'ցուցընէ , կարևոր է որ քու տաղանդդ ու հաւատդ ունեցող աւարեալներ գտնուին՝ որ անցեալ քրիստոնէական ժամանակները կ'ներկայացընեն , անոր մէջ ինչ որ ճշմարիտ է մեծ և փառաւոր մեզ հաղորդելով՝ որպէս զի կարենան սուրբ դաշն մը դնել ներկայ ժամանակս գտնուող ամէն ազնիւ և մաքուր գաղափարներու հետ : Եթէ հիմակ լրագրութիւնը թողուք՝ յիսուն տարիէ՛ ՚ի վեր ՚ի դործ դրուած արիական ճգանց շղթան պիտի խորակէք՝ և այս ճղանց նպատակն է ձեւապաշտութեան և միստիքականութեան վրայ սահող կղերը սթափել տալ որպէս զի մանուկ աշխարհի , այս է միջին դարու նիւթական ազդեցութիւնը շահելու յուսով լիովին չկորսուի : Ստոյգ չես որ ասկից տասն տարի վերջը աշակերտ մը պիտի ունենաս , արիական սրտի տէր մարդ մը , որ քու վշտադին պաշտօնդ շարունակէ : Այս վերջին փորձին առջև քու վհատիլդ տեսնելով՝ այնպէս կ'երեւի ինձ որպէս թէ զինուորն իր զբօշակը թողլով խոյս կ'սայ իբրև դասալիք :


Ժուլիօ անոր պատասխանեց .

— Թերևս իրաւունք ունիս , իմ պատուական Պ. Լիչ , նորաձին ապագային մէկ քանի նշոյլները քաջ կ'նշմարես : Քաջ միտ առեր էի՝ մամուլի միջոցաւ եղած աւարեալութեան մեծութիւնը , մտաց այն հաղորդակցութիւնն որ ամէն առտու տեղի կ'ունենայ՝ երկրիս մէկ ծայրէն միւս ծայրը , այն թուուցիկ թերթին միջոցաւ , չէ թէ հին պատգամներու պէս մթին և անորոշ թերթ մը , չէ թէ առաջին քրիստոնէից ազգային պէս խորհրդաւոր , այլ լուսաւոր՝ ինչպէս որ մարդկութեան հատուն իմացականութիւնը կ'պահանջէ : Բարեբաղդ եմ որ դու ալ ինձի պէս ապագայ պայծառ լոյսերը կ'ակնարկես , մեր երկպառակութեանց , մեր տապնաւներու , մեր նոր կոխներու մէջէն , որոց համար այնքան

Թանկադին ոյժեր կ'վաճանենք : Բայց կ'զգամ որ իմ պաշտօնս լրացաւ : Հաւատաւոր մարդկութեան պարզ ռաճահորդ՝ քանի մը ժամ անոր պահանջողն եղայ : Աստուծոյ ինձ տուած մեծաւորներն այլ ևս չեն ուզեր զիս , այս կամաց մէջ կ'պաշտեմ , թէև հաւանօրէն իրենք ալ չեն հասկընար անոր խորհրդաւոր նշանակութիւնը , բարձրագոյն կամք մ'որ ինձ կ'հրամայէ մենութեան դաւնալ : Չպիտի քաշուիմ այս բանիս համար : Առ 'ի չզոյէ լրագրին՝ նոյն մտաւորական խնջոյքին հաղորդ գտնուող միլիօնաւոր անձերու առջև պարզուած այս անհուն փուռոյր , տակաւին երկար ատեն՝ պիտի ունենամ այն զիրքն որ սահմանուած է լինիլ մենաւոր այլ սրտակցական եղբայրակցութիւնը : Հաւտա որ իմ գործս չպիտի կորսուի . լաւ ևս ունիմ քաշուիլ այնպիսի անուսնով որ իշխանութեան գէմ ըմբոստ գտնուելու ամբաստանութեանէ լիովին անարատ մնայած լինի : Թուլիօ Քլապիէրի անունը՝ յուսամ թէ մինչև յետին ժամուն մաքուր պիտի մնայ : Բունապետութեան ողին՝ որ կաթողիկոսութիւնը կ'աղարտէ , ինձի գէմ թող յաղթական ելած լինի : Աւելի աղէկ . ճշմարտութիւնը չտարածիր երկրիս վրայ՝ առանց խորտակելու՝ մարտիրոսութեամբ՝ այն կենդանի անօթն որ երկնային անուշահոտութիւնը կ'պարունակէ : Ահա այս պատճառաւ մեծ յայտնիչը վատահամբաւ կախողանի մը վրայ տարածուեցաւ : Բայց կաթողիկ փարիսեցոց այս յաղթանակը միայն իրենց վրայ նախատինք պիտի բերէ : Ա՛ռ զեմ որ պատմութեան արդար գատապարտութեանց մէջ ինձի գէմ գործած վրէժխնդրութեանց յիշատակը գտնուի , ինձ լիուլի մեծարած թունալի բաժակին յիշատակն երևի : Իմ շրթանցս վրայ չկրնար երևիլ տրտունջ մ'այն կոյրերուն գէմ որ այսպիսի յայտնի վայրագութեամբ իմ բաղդս կ'անօրինեն : Անոնց ձեռքը խաղալիկ մ'եմ՝ իբրև վաճառք մը զոր մէկ մթերանոցէ միւս մթերանոցը կ'նետեն , իբրև անատուն մ'որու բեռը փոխած են , իբրև գերի մ'որ ուրիշ տիրոջ մը կ'անցնի : Պէտք են այսպիսի ակներև պատմական օրինակներ , որպէս զի խեղճ քահանային 'ի նպաստ շարժումը , յօգուտ ապագայ եկեղեցական սերնդոց 'ի գործ դրուի : Պէտք է ազատութիւնն որ եկեղեցիէն ելաւ՝ վերստին անդ վե-

րագառնայ : Ախրաւորներէն մին պիտի լինիմ որուն անունն իզնէ ետք իմ գատախաղս պիտի լինի՝ ամենատուրբ գատի մը համար : Առ այժմ՝ պարտիմ ծուիլ , հնազանդիլ , և այլուր փնտռել ապաւէն մը : Նախախնամութիւնը զիս անպաշտպան չպիտի թողու . նա իր գաղտնի խորհուրդներն ունի՝ աշխարհիս մէջ ճշմարտութեան տարածման համար : Նա ինքն իրեն անհաւատարիմ չպիտի գըտնուի :

Այս բացատրութիւններէն ետք՝ Պ. Լիչ Թուլիօյի մօտ չպնդեց : Մինչև անգամ՝ Բարիզի արքեպիսկոպոսին որոշման վրայ Թուլիօյի գտնուած դժուարին կացութեան մէջ՝ Պ. Լիչ առաջարկեց Տ . . . ի մէկ ընդհանուր փոխանորդին գրել , որու հետ սերտ յարաբերութիւն ունէր , որպէս զի Թուլիօյի վերագարձը Պիրէնեանց կողմերը զիւրացընէ :



Ա.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Բարեսիրտ Պ. Լիչ Տ . . . ի եպիսկոպոսարանը գրեր էր խընդրելով որ Ժուլիօն նորէն իր նախորդ թեմին մէջ հաստատեն : Ութ օր ետք՝ շնորհալի նամակ մը կ'ընդունէր նա որով պաշտպան դատարարին կ'այսնէր որ Սրբազանն զԺուլիօն Մէլի երէց անուաներ էր Սէն-Պէյէն վեր գանուած թեմին : Ուստի Պ. Ժուլիօ Բլափիէր կրնար Տ . . . վերադառնալ, ուր պիտի գտնէր պաշտօնին վերաբերեալ թղթերն և ասլա գնալ իր հովուական գործին գլուխն անցնիլ :

Պ. Ժուլիօ և Պ. Լիչ ստոյգ էին որ այս ութ աւուր մէջ երկու արքեպիսկոպոսարանները շարունակ բանակցեր էին :

Երբ առաջին անգամ, Պ. Լիչի բարեկամ՝ ընդհանուր փոխանորդն առաջարկեց որ Ժուլիօյի պաշտօն մը տրուի, արքեպիսկոպոսը գրեթէ սաստիկ բարկացաւ :

— Ես, պարոն արքայ, ինչպէս իմ վիճակիս մէջ ընդունիմ այն յիմարն որ արդէն այնքան հոգեր պատճառեց ինձ : Միթէ կարելի՞ բան է : Ո՛չ, ո՛չ երբէք : Մտածէ անգամ մը թէ ինչ փափուկ վիճակի մէջ պիտի մնամ : Ժուլիօ՛ Բարիզի վիճակէն գրեթէ արտաքսուելով՝ յիս պաշտպան մը գտած պիտի համարուի : Ի՛նչ պիտի ըսեն ՚ի Հռոմ, ուր ժեղվիդները, որ երբէք չեն մարեր իրենց ատելութիւնը, այս ողորմելի պատանին աղարտեցին, սէտք եղածէն աւելի, կ'խոստովանիմ : Բայց վերջապէս յան-

ցանք ալ ունի : Միշտ առանց իր մեծաորաց խորհուրդ հարցընելու գործեց : Վայ իր գլխին, թող հիմակ հետեանքը կրէ :

— Իմ միտքս Պ. Ժուլիօն պաշտպանել չէ Ձեր Սրբազնութեան առջև : Իր գաղափարաց բնաւ համաժող չեմ, ընդ հակառակն՝ ես ալ ձեզի պէս կարծեմ թէ քիչ մ'անխոհեմ է : Խորհրդատես մ'է զոր շատ վտանգաւոր կ'համարիմ՝ այնպիսի ժամանակ ուր քահանայք, եթէ չզսպուէին, շատ մ'այլանդակ բաներ պիտի ընէին կրօնը վտանգի մէջ գնելով : Ուրեմն այս անկախ մարդիկը չեմ պաշտպաներ քանի որ բոլոր վիճակային հովուները կ'ճնշեն զանոնք կարելի եղածին չափ : Բայց այս պարագայիս մէջ խնդիրը սոյն կիտին վրայ չէ : Միայն մէկ իրաւամբ՝ այսինքն Տ . . . վիճակին հպատակ՝ Ժուլիօ կ'խնդրէ վերադառնալու : Ա՛հաաստէ որ Ձեր Սրբազնութեան բացարձակ խօսքին վրայ՝ թէ վերջէն նորէն պիտի ընդունիք զինքը, ասկից հեռացեր է :

— Ո՛հ, այո՛, այո՛, այո՛, ըսաւ արքեպիսկոպոսը . ժամանակաւ Պ. Ժուլիօյի այդ քաղաքավարական խոստումն ըրի անոր ձեռքէն աղատելու ատեն : Բայց հիմակ՝ իր կարծեաց հռչակ տալէն ետև, Հռոմի և բոլոր վիճակաց մէջ անոնց ձգած տպաւորութենէ ետև՝ ճշմարիտը յօժար չեմ ընդունելու, և դո՛հ պիտի լինիմ եթէ երթայ ուրիշ տեղ մը նստի : Մտածէ անգամ մ'որ ապագային մէջ նոր նոր կռիւներ պիտի պատրաստենք, և ես այդ կռիւները կ'քամահարեմ : Ես խաղաղութեամբ ապրիլ կ'ուզեմ իմ վիճակիս մէջ :

— Աղատ էք, Սրբազան, ինչ կ'ուզէք որ պատասխանեմ Պ. Լիչի խնդրոյն :

— Պ. Լիչ աւելի լաւ կ'ընէր եթէ այս բանակցութիւնը վրան չառնուր :

- Ի՛նչ որոշում պիտի ընէ Ձեր Սրբազնութիւնը :
- Այս գործը շատ տաղտկալի է :
- Անտարակոյս, Սրբազան, բայց վերջապէս :
- Բայց վերջապէս . . . բայց վերջապէս . . . : ճշմարիտը, ինչ ընելըս չգիտեմ :
- Ինձ կ'երևի թէ, Սրբազան, ամէն դանդատէ աղատ պիտի

մնայլք եթէ Բարիզի արքեպիսկոպոսէն զիր մ'ունենայլք ձեր ձեռքը՝ որով կարող լինէիք ձեր վիճակային եկեղեցականն ընդունելու :

— Այո՛ , այդ ասպհոյութիւն մը պիտի լինէր : Լաւ ուրեմն , զրենք :

Եւ արքեպիսկոպոսը հետեւեալ զիրը զրել տուաւ .

«Պարոն Տածիչ ,

«Պ. Թուլիօ կ'ընդրէ Տ . . . ի վիճակը վերադառնալու : Աստուծոյ չէ մեզ նորէն պաշտօնի մը մէջ զնեւ զանի առանց Բարիզի արքեպիսկոպոսարանէն նստատաւոր վկայութիւն մ'ընդունելու : Քաջ զիտէք այս քահանային արկածները , քահանայ մ'որ անցած տեղերէն միշտ եկեղեցական իշխանութեան ներգրութիւն և տաղտուկ պատճառած է : Մեզի կ'զիմէ՝ իբրև իր վիճակային եպիսկոպոսին՝ և դժբաղդաբար ճշմարիտ է :

«Ձեր պատասխանին համեմատ պիտի վարուիմ :

«Հաճեցէք ընդունիլ , Պ. Տածիչ , իմ յարգանաց և այլն և այլն» :

Այս նամակը մեծ շփոթութիւն պատճառեց Բարիզի արքեպիսկոպոսարանի ժողովին : Ծանր բան էր մերժել պատուաւոր վկայութիւն մը Թուլիօյի համար : Նախ արդիւնէ էր զանի իր վիճակը վերադառնալու և բանաւոր պատճառ մը տալ Բարիզ մնալու , նոյն իսկ առանց քահանայական պաշտօն վարելու : Միւս կողմէ այս վկայութիւնը տալը բացայայտ հակասութիւն մ'էր աւոր քահանայական պաշտօնը շարունակելու մերժման հետ : Բոյց հարկ էր որ և է պատճառաւ այն մարդէն ազատիլ : Քանի նա Բարիզ մնար շարունակ զանգատներ պիտի լսէին , այսինքն ժեզ վիզաց և անոնց հզօր պաշտպաններու կողմէն՝ որ ամէն օր իբրև պատգամաւոր կ'զային՝ որոց կարգախօսն էր արքեպիսկոպոսարանին մօտ սնդել , մինչև որ այս վտանգաւոր անձն եպիսկոպոսաց դատարանը հանեն և ամենուստեք վճնտեն : Այս վերջին որոշումն ըրին :

Հետեւեալ նամակը զրուեցաւ .

«Սրբազան ,

«Ա՛հարցընէք ինձ թէ ի՞նչ վկայութիւն կրնանք տալ Թուլիօ Գլալիէրի համար , որ ձեր վիճակին մէկ կրօնաւորն է , և որ ատեն մը Բարիզ մնաց : Բնաւ չիմացանք բան մ'անոր վրայ որ իր կենաց և բարուց վրայ կասկածանաց տեղի տայ :

«Հաճեցէք ընդունիլ , Սրբազան , իմ խորին յարգանաց հաստիւն որով մնամ և այլն :

«ՊԱՐԱՄԻՆՈՍ ՏԱԾԻՉ» :

Թուլիօյի այս բարի վարուց վկայադիրը՝ իբրև վարձկան ծառայի մը որ տուն մը մտնելու համար լաւ վկայադիրներ կ'բերէ , այս պատմութեան հետաքրքիր արկածներէն մին է :

— Աւասիկ , ըսաւ Պ. Պարամինոս՝ պահարանի մը մէջ զնելով Տ . . . ի եպիսկոպոսին ուղղելի լակոնական գիրը :

— Աարձ է , ըսաւ եպիսկոպոսն որ ժողովին կ'նախագահէր , բայց խոհական : Աւերջապէս՝ Թուլիօյի ճշմարիտ ծառայութիւն մը կ'ընծայենք կերպով մը Բարիզէն ելնելու ստիպելով . այս տեղ խիստ զօրաւոր թշնամիներու դէմ մաքառելու պարտաւորուած էր : Արեւի է զինք մոռնան այն աննշան պաշտօնին մէջ ուր հարկաւ զինքը պիտի դնեն :

— Թէզվիղները բան մը չեն մոռնար , ըսաւ ժողովին անդամներէն մին :

Բ

ԲԱՐԻՉ , ԲԱՐԻՉ

Լուիզ և Թուլիօ անպատում տրտմութեամբ Բարիզէն ելերէին : Լուիզ՝ իր եղբօր գաղափարներուն և ըղձանաց համակերպեր էր , որ չէր կրնար առանց խորունկ վշտաց , տեսնել որ նա իր խորհրդոց հրածեշտ կ'տար : Պէտք էր բնիկ երկրին բոլոր հրապարակ , այն հզօր սէրն որ բարի բնութիւնը մեր սրտին մէջ կը

Թափէ՛ այն լեռնոտ բարձրադառաներու մէջ՝ ուր թէ խիստ և թէ զգուելի է, որպէս զև ժուլիօյի և Լուիզի բուռն վիշաք մեղ մը, իմացականութեանց այս եղեմէն հեռանալու ատեն :

Բարի՛ղ, Բարի՛ղ : Այս էր երբեմն եղբայր ու քրոջ արտասանած բառը, միակ բառը, Նախախնամութեան իրենց համար պատճառատած նոր բնակարանին մէջ, և իրենց բոլոր ցաւերն այս բառին մէջ կ'ամփոփուէր :

Ըսենք մեր տարադիրներուն բարեկամաց որ Մէլ՝ ուր կ'ըլտնուին այժմ, չքնաղ բնակարան մ'է, տեսարաններու շքեղութեան կողմէ Սէնդ-Վիանտէնի նման, բայց աւելի մեղմ՝ օդ ունեցող վայր մը, վասն զի այնքան բարձր դիրք մը չունի և լերանց կեդրոնական շղթայէն հեռու է, ուր սառնալեռները կ'զանուին :

Երկրատունը մեծ և հանդիսատուն մ'էր : Հարաւային կողմը նայող բարձր սենեակ մը, զոյց, և զարգարան մը, Լուիզին գրեթէ յիշեցուց Պարոյէր փողոցին փոքրիկ տունը : Յաւելունք նաև որ աղւոր պարտեղ մ'ունէր՝ ամէն տեսակ ստղատու ծառերով, որթերով, յարդէ փոքրիկ տանիքին վրայ եղած սիրուն փեթակներով և այն ատեն այս գրեթէ աղնուպետական երկրատան վերայ դաղափար մը կ'ունենանք : Միւս կողմէ՝ թէև Մէլի զիւղը վիճակի մը զիւղ չէր, սակայն իր կարեորութեան և բազմամարդութեան, հետեւապէս՝ այն հասոյթից պատճառաւ զոր կ'ստանար անոր պաշտօնաւորը, լեռին ամենէն լաւը կ'սեպուէր : Աւստի ժուլիօ այն տեղ կ'հասնէր առօք փառօք :

Ասկից զատ՝ ՚ի Սէնդ-Վիանտէն ձգած յիշատակները դեռ ևս շատ կենդանի էին, ուստի և իր համբաւն իբրև արիասիրտ, բարեբարոյ, հեղ, ամենուն համար բարի քահանայ մը Սէն-Պէյլի հովիտն իջած էր :

Բարիղ անցուցած կեանքը բնաւ չէր փոխած իր պարզասիրութեան ճաշակը, աղքատներուն համար համակրութիւնը, ընկեցիկ հիւանդներուն համար իր գութը : Սէնդ-Վիանտէնի լեռնականները՝ որ Սէն-Պէյլի տօնալաճառները կ'իջնէին Մէլի զիւղայիներուն հանդիպելով՝ իրենց վաղեմի երէցին վրայ լուրեր կ'հարցնէին : Զանի կ'անուանէին միայն ժողովրդեան բարեկամ քահանայ :

նայն : Ի՛նչ սրտաշարժ անուն : Անտարակոյս Ռուսօ ասոր վրայ կը խորհէր՝ երբոր կ'ըրէր. «Լաւագոյն բան մը չեմ գիտեր որչափ զիւղի երէց մը» :

Ժուլիօ՝ յօժարակամ սիրով հովուական խոնարհ պաշտօնը սկսաւ վարել : Իր այցելութիւնն ըրաւ Սէն-Պէյլի և հովտին միւս պաշտօնակիցներուն այնպիսի պարզութեամբ և բարեսիրութեամբ որ իր թշնամիներէն զատ ուրիշները կրնային զինաթափ ընել : Իր թեմին ամենէն յետին խրճիթն անդամ այցելելով ակնածական զգացմամբ՝ ցոյց կ'ստար ամենէն փոքրին որ քրիստոնեայ ընկերութեան մէջ տեղ մ'ունի :

Այն թղթերուն մէջ՝ որոց համեմատ այս գիրքը գրուեցաւ, նամակ մը կ'զանենք զոր ժուլիօ Պ. Լիչին ուղղեց երբ լեռնային զիւղը հասաւ : Այս նամակը կ'անցընենք աստանօր .

«Մէլ, Սէն-Պէյլի օր» .

«Սիրելի Պ. Լիչ, միթէ կարծես թէ քեզ մտոցեր եմ : Քոյրս և ես մեր նոր մենաւորութեան անդորրութիւնը քեզի պարտաւոր ենք : Տեսնք վերստին այս սիրական լեռները : Միշտ գեղեցիկ են աչաց, և մեզի համար մխիթարական են, մենք խեղճ վերաւորներ որ խոյս առնինք զիշատիչ զայլերէն, որ չկրնալով մարմինը սպաննել՝ հօգին կ'սպաննեն, որչափ որ կարող են : Այնպիսի յստակ օդ մը կ'ծծենք որ մեր ոյժը վրայ կ'զայ, թէև այնչափ սկարացած էինք, ես շարունակ մտովին աշխատելով, քոյրս՝ իմ պատճառաւ կրած ցաւերով (և այս տեղ գալէս ՚ի վեր իմացայ որ խեղճ աղջիկն ամէն օր անանուն նամակներ կ'ստանար, ամբարիշտ քահանայի մը դէմ լի սպառնալեօք) : Այո՛ւսամ որ մեր կաղմածքը՝ նիւթական և բարոյական տանջանօք խորտակեալ, քիչ քիչ պիտի կազդուրի : Աւերստին պիտի ստանամ այն զօրութիւնն որ՝ այս խիստ կլիմային ներքև անհրաժեշտ է հօգևոր պաշտամանս ներութեանց տակալու համար : Սիրելիը Նախախնամութեան շնորհապարտ եմ, շնորհապարտ եմ՝ քեզի այս պատասխանիս համար ուր կարող են ատեն մ'ապախինիլ տարադիրները :

«Բայց եթէ այս տեղ անդորր եղեմ մ'ունինք՝ մեր հալածիչ»

ներէն հեռի, դարձեալ մեր արտորին վիշտերը կ'զդանք : Մենք մեզի նոր աշխարհ մը կազմեր էինք : Իմ լրագրիս մէջ քահանայական տարրը ներկայ ընկերութեան հետ հաշտեցնելու մեծ գործով կ'զբաղէի : Այդ ուրիշ կեանք մ'էր, սլաշտօնաւորութիւն մ'էր՝ չէ թէ աւանի մը, քաղքի մը, դաւառի մ'անձուկ սահմանին մէջ փակուած, այլ կ'լուսաւորէր աշխարհիս մէջ բոլոր այն կողմերն ուր կ'իմանան մեր դիւրահաղորդ լեզուն :

« Իմ և քրոջս կամաց վրայ իշխելով՝ հրաժեշտ տուի այն փառաւոր սլաշտօնէն որով թերևս իմ բոլոր կեանքս անցընէի : Արծեցի թէ աւելի մեծ, աւելի արժանի գործ մ'ըրած կ'լինի քահանայն հնազանդելով, և երբ մարդիկ ըսին ինձ, ուրիշ տեղ փնտռէ խորանն ելնելու իրաւունքը, կարծեցի լսել Աստուծոյ ձայնն որ չէր կամեր որ կրօնական վիճաբանութեանց անձուկ գաշտին վրայ մնամ, ուր խղճի մտօք եկեր էի իր դատը պաշտպանելու համար :

« Բայց, բարեկամ, ինձ սուղի նստաւ, և քանի կսկծալի են իմ ցաւերս : Առանց դողալու չեմ յիշեր այլ ևս Բարիզի անուսը : Արծէի թէ անդ հաստատուած եմ ընդ միշտ՝ իրարու ստէսը հակառակ կարծեաց տէր մարդոց խմբին մէջ, բայց ամենքն ալ ճշմարտին խուզարիւ, ամենքն անկեղծ էին մարդկային գաղափարներու ելեէջին մէջ : Ասոնք ազնիւ եղբայրներ եղան ինձի համար, և իրենց ծոցը շնորհալի կերպով բացեր էին քահանայն ընդունելու, որ իր քրիստոնէական համոզումներէն բնաւ չէր հեռանար, բայց և այնպէս իր խօսքը դառնութիւն մը չունէր և ոչ մէկ վարդապետութեան դէմ, և ոչ իսկ անոնց դէմ որ իր հաւատը կ'ուրանային :

« Ասթուլիութեան յիմարները կ'տրանջային որ այս մարդոց մէջ եւրոպական հրատարակութեան կ'սլարապէի : Ուրացողութիւն կ'անուանէին զայն : Ամենօրեայ բողոք մ'էի իրենց քինախնդիր հակաձառութեան դրութեան դէմ, իրենց բանադրանաց և հալածանաց անյագ միտումներուն դէմ : Ա'փափաքէի որ ամէն մարդ ազատօրէն դառնայ զԱստուած սլաշտելու, իսկ անոնք ոտտիկանական կարդաբարութեամբ կ'ուզէին հարկ դնել հաւատը : Ա'փա-

փաքէի որ Եկեղեցին մեծնայ իր հլութեան և խաղաղութեան ոգւով, իսկ անոնք կ'ուզէին որ ահարկու լինի, թերահաւատը հաւածէ մինչ 'ի մահ և դիակը գերեզմանէն հանէ : Թէև քահանայն անոր մէջ օրհնեալ ջուր թափած է : Ա'փափաքէի որ քրիստոնեայն սլաշտաստեմ քրիստոնէութեան ծանր և յաջողական այլափոխութեանց, և անոնք իրենց կուսակիցներուն դէմքը գէպ 'ի անցեալ զարձընելով՝ հողիներու վրայ կ'ախրէին սարսափ ազդելով, կոշտ նախապաշարմանց ներքեւ անոնց դող կ'աղղէին իրենք ալ նոյն նախապաշարմանց ստէսը հաղորդ գտնուելով :

« Ի հարկէ այս մարդոց աչքին սոսկալի տեսելութեան առարկայ մը պիտի դառնայի : Ինձի դէմ զօրաւոր եղան : Ինքզինքս անոնց խորամանկութեան և հարուածոց դէմ սլաշտպանելու համար ուրիշ բան չունէին այլ միայն սրտի և կենաց այն պարզութիւնն որ սլաշտարներու ժամանակ բաւական չէն : Ուստի նկուն ընկայ, զօրութեանց անհաւասարութեան հետևութիւնն էր այս : Մարդկային տեսութեամբ ամենէն տկարն էի : Ինչի կ'ծառայէր ճշմարտութիւնն անոնց և իմ մէջ :

« Այժմ զօհողութիւնն եղաւ, ամէն ինչ կատարեալ է : Զոհին վերջին աղաղակը կ'լսես, վերջին մրմունջը : Դու միայն պիտի պահես իմ զօհողութեանս ժամանակ կրած տառապանացս յիշատակը :

« Ո' Բարիզ, Բարիզ : Ազատութեան և կենաց երկիր . Բարիզ նոր Հռոմ, աշխարհի յաղթող, չէ թէ սպառազէն լէյզոններով այլ խորհողներու, դիտուններու և արուեստագէտներու հանդարտ գունդերով : Բարիզ, ընդունէ այս նամակովս, զոր բարեկամ մը միայն պիտի կարգայ՝ այն անձին յետին ողջոյնն որ քեզ այնքան սիրեց և զոր դու երբեմն ընդունեցար քու ծոցդ աննշան, իբրև զօրաւոր քաջերէդ մին, իբրև նշանաւոր մարդերէդ մին : Սրտիս մէջ կ'սլահեմ որդւոյ անջնջելի սէր մը : Դարուս աղմկալի շարժման մէջ երբ մարդիկն ու իրերը կ'տանի՝ Ովկիանու մեծ ալեաց պէս որ անդորրը ծովածոցերու մէջ դիզած բոյսերու բեկորները կ'տանի, անունները շուտով մոռացման կ'գատապարտուին : Քեզմէ չեմ սլահանջեր փառք մը զոր ուրիշ հաղարաւոր մարդոցմէ կո-

դրպատած պիտի լինիմ, որ ինձի չափ եռանդով և ճշմարտութեան սիրով աշխատեցան, բայց թող ինձ այն պատրանքը թէ այն օրը մենութեան մէջ պիտի մարի այս կեանքս զոր միայն քանի մը ժամ քեզի նուիրել կարողացայ, անոնք որ իմ ձեռքս սեղմեցին՝ իբրև ապագային բանառութենէն մին, վերստին պիտի յիշեն իմ անունս զիս սիրող մտացի աշխարհին:

«Իսկ դու, բարեկամ, զիս մի թողուր երեսի վրայ. երբեմն դրէ խեղճ տարագրին: Մերթ ընդ մերթ նամակի մը վերևը «Բարեղ» կարդալով իմ ցաւերս պիտի ամոքին և ինձ հայրենիքը պիտի յիշեցընես:

«Մնաս բարեան».

«ԺՈՒԼԻՍ»:

Գ

ՊԼՊԵՐՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԲԸ

Ժուլիօ ընդունայն յանձն առեր էր մենական կեանքը. ազատ չէր իր հանձարը ճնշելու: Մինչդեռ աւանի մը հեզ երէցը՝ այս աշխարհին տկարներուն և աննշան մարդոց հետ կ'իտնարհէր, ապագային մարդը, խորհողը՝ վշտադին մտատանջութեամբ հանդիսատես կ'լինէր այն կրօնական տրամին փոփոխութեանց որու տարօրէն տեսարանը կ'ընծայէր տասնևիններորդ դարուն վերջերը: Իրեն պէս անկեղծ քրիստոնէի մը համար անտարբեր բան մը չէր տեսնել որ Եկեղեցւոյ զօրաւորները ցնորին, կուրանան որպէս զի կաթոլիկութեան ճշմարիտ շահերը չկարենան նշմարել, մոլար ճամբու մը մէջ մտնեն, այնքան ողբալի որ եղաւ ժամ մը երբ կաթոլիկ եպիսկոպոսութիւնը՝ քանի մը պարագլուխներու երեսէն մուրթերով իբրև վարդապետութիւն ընդունին պապերուն աշխարհական իշխանութեան հարկը:

Ժուլիօ շատ կ'սիրէր Պիոս Թ.ը: Իտալիա, հայր Ալիլէգայի

տունը բնակած ատենը՝ այս արժանի քահանայապետին կենաց վերայ շատ հետաքրքրական լուրեր ստացիր էր: Առաքինութիւնը միշտ քահանայապետական աթոռին վրայ չէ բազմած: Եւ երբ Ժուլիօ՝ կաթոլիկ եկեղեցւոյն գլուխը կ'գտնէր մարդ մ'որ այս բարձր պաշտօնին էական պայմանները կ'կատարէր, իր սիրտը դէպ ՚ի այս մարդուն կ'տանէր զինքը: Ժուլիօ կ'դովէր Պիոս Թ.ը այն վեհանձն շարժման համար՝ որով իր քահանայապետական իշխանութեան սկիզբները, վերանորոգութեանց ճամբան մտաւ և զանի չէր ամբաստաներ՝ երկու ծայրայեղ կուսակցութեանց յարուցած զժուարութեանց առջև ընկրկելուն, զի այսպէս ցոյց տուաւ որ նա աւելի մեծ էր սրտով քան թէ մտքով: Իբրև նախախնամական իրողութիւն մը համարեց որ Պիոս Թ. ժողովի մը մէջ յայտնած լինելուն թէ իր աշխարհական իշխանութիւնը դաւանական խնդիր մը չէր ըներ: Այս խօսքն որ անդրալեռնական կուսակցութեան համար որոշման մ'արժէքն ունէր, ամենէն բուռն կիրքերը մեղմեց քիչ մ'ատենուան համար: Բայց ասոնք քիչ ատենէն խորհուրդ ընելով սիրուն երկդիմութեամբ մ'ազատեցան և կրկնեցին որ՝ եթէ աշխարհական իշխանութեան վարդապետութիւնը դաւանական բան մը չէր, դարձեալ ճշմարտութիւն մ'էր զոր ներքէն չէր ուրանալ առանց մուրթերու:

Ժուլիօյի ուղիղ իմացականութիւնն և տրամաբանական միտքն այս ողորմելի նրբութիւնները մերժեց: Ամօթապարտ մնալով ժամանակակից կաթոլիկութեան համար, եպիսկոպոսութեան պէս ծանրազուլիս դատու մը համար, այս արևմտեան եկեղեցւոյ համար, որ իր փառքն ու պարծանքն ունեցաւ և մեծ մարդիկ ծնաւ, այն նուաաստութեան համար ուր անդրալեռնականութեան յիմարներն իբրև հլու դերիներ կ'վարէին նոյն ինք Պիոս Թ.ը, եպիսկոպոսները, ստորին կղերին մեծագոյն մասը, և պարզ հաւատաւորներուն միամիտներու հօտը, ձեռք զարկաւ այս իրեն համար այնքան պարզ խնդրոյն վրայ լոյս սփռել, ինչպէս որ միշտ պարզ խնդիր մ'երեկցած է կաթոլիկ մեծիմաստ խորհողներու համար, որ նիւթական շահուց զձուձ հողերէն դուրս զայն իմաստասիրած են: Գրիստոնէութեան ծագումէն իսկ բռնելով խնդիրը՝ կ'հաստա-

տէր՝ աւետարանական մատենագիրներէ քաղուած անժխտելի փաստերով թէ երբէք եկեղեցւոյ հիմնադիր Քրիստոսի մաքին մէջ, ոչ առաքելոց մէջ որ քրիստոնէութիւնը քարոզեր էին, ոչ Ս. Պօղոսի մէջ, որու սքանչելի նամականին մեծադին պատմական թղթեր են, եկեղեցւոյ հովուի գերադոյն պաշտօնն երկրային թագաւորութեան հետ միացընելու խորհուրդ մը չդանուեցաւ: Այս իրողութեան ի վկայութիւն՝ Նիկիոյ ժողովէն առաջ՝ երեք առաջին դարերու եկեղեցական մատենագիրներէ ապայոյցյետեք կ'ընէր, և ժուլիօ կ'հրաւիրէր որ այն բազմաթիւ գրուածոց մէջ որ նախնական եկեղեցւոյ վրայ այնքան կարևոր տեղեկութիւններ կ'տան՝ կետարութիւնը պապականութեան միացընելու ամենափոքր նշան մը գտնեն, պապութիւնը՝ որ լիկ իր հոգևոր սահմանին մէջ կ'մնար, և ժուլիօ կ'հարցընէր իւրովի թէ ինչպէս Քրիստոսի, առաքելոց, բոլոր եկեղեցւոյ անձանօթ վարդապետութիւն մը՝ քրիստոնէական տեսութիւն մ'եղած լինի:

Այս կիտիս վրայ յաղթանակելէն ետև՝ ժուլիօ՝ Աոստանդիանոսէն սկսեալ մինչև տասներորդ դարուն գումարուած բոլոր հանրական ժողովներու անժիւ գրուածները, բոլոր սահմանները, պապերուն բոլոր հրովարտակները, կայսերաց և եպիսկոպոսաց ուղղեալ պապական նամակները ձեռք կ'առնուր և կ'հաստատէր որ անոնց ոչ տառին և ոչ ուղոյն մէջ՝ չկար իմաստ մ'որ եկեղեցւոյ զօրութիւնն ու վարդապետութեան անկախութիւնը նիւթական պաշտպանութեան մը յանձնէ, պաշտպանութիւն որով պապերը թագաւորութիւն ձեռք ձգելու միտէին:

Միշտ պատմութեան մէջ յառաջ երթալով՝ ժուլիօ կ'ապացուցանէր որ Հռոմի եկեղեցին բազմաթիւ երկիրներ ստանալով՝ որ վերջէն Ս. Պետրոսի կալուածք կոչեցան, իրաւունք մը չէր կրնար ունենալ Հռոմի մէջ քաղաքական իշխանութիւն մը կազմել, այլ պարզև մ'էին այն կալուածքը բազմաթիւ կղերի մը պիտոյքը հայթայթելու համար. և շօշափելի կերպով կ'հաստատէր նա որ այս ողորմելի երկրիմութեան վրայ էր որ հռոմէական քահանայապետաց աշխարհային իշխանութեան շէնքը շինուած էր: Այնքան հեռու է Շարլմանյի միտքէն Պապը Հռոմի թագաւոր ընելէն՝ որ

Բարեմիան Լուի թագաւորը՝ իր յաջորդը, խնտիւ կշտամբեց Պապը, որ՝ առանց իր հաւանութեան՝ կարևոր վճիռ մը գործադրել տուեր էր:

Ժուլիօ ամբողջ գլուխ մը կ'քաղէր խիստ քիչ ծանօթ դրքէ մը, Ֆէնէլժօնի Բահանայապետին իշխանութիւնը մակագրով, որու մէջ այս մեծ մատենագիրը կ'դուլէր սուրբ պապ մը կայսերաց հնազանդութեան համար, և եօթներորդ դարուն մէջ բացէ ի բաց փափաք կ'յայտնէր որ Հռոմ այն երկրային կալուածները չունենայ, այն աշխարհային իշխանութիւնն որ իր հոգևոր պաշտօնը կը վրդովէր, մարդկային շահուց և դարուս քաղաքականութեան մէջ զինք մտցընելու համար:

Աերջապէս՝ Հռոմի թագաւորութիւնը հաստատելու պատճառ եղող բոլոր պապերը մի առ մի յիշատակելով կ'հաստատէր ժուլիօ որ մտադիր էին ուրիշ կեսարներ շինելու, այլ թագաւորաց պէս թագաւորներ, հռոմայեցի կայսերաց պէս կրօնական պաշտօն վարող, նոյն խիւ Աոստանդիանոսի և իր շատ մը յաջորդներուն պէս որ Summus Pontifex տիտղոսը պահեցին, որ պապութեան առաքելական պաշտաման բացարձակ բացասութիւնն էր, և պապերուն սրբութեան ցանկը յօրինելով՝ բազմաթիւ սուրբեր կը գտնէր այն պապերուն մէջ որ կայսերաց աշխարհային իշխանութեան ներքև էին, և մոլութիւններով աղարտած, բռնասէր, խայտառակ և եպերելի ազգակցական ճոխութեանց հիմնադիրներ՝ թագաւոր պապերու մէջ:

Ժուլիօ այսպէս կործանեց այն առարկութիւնը թէ՛ առանց աշխարհային իշխանութեան՝ հոգևոր պապութիւնն ազատ չպիտի լիննէր, այս իրողութեամբ՝ զոր անդրալեռնականք մէջ կ'բերէին, թէ՛ անցեալ դարուն՝ Եւրոպայի թագաւորաց ճնշումն էր որ կղեմէս ԺԳ.էն խլեց խիստ ծանր ոճով գրուած դատապարտութիւնը ժէզվիկական ուխտին դէմ:

Ուրեմն աշխարհային պապութիւնը՝ որ այն ատեն բոլորովին անվթար էր, հոգևոր պապութեան համար նեցուկ չեղաւ, մինչև անգամ դիւանագիտական ճնշման մը դէմ: Հետևապէս այս աշխարհային թագաւորութեան կ'վերադրեն ազգեցութիւն մը զոր

չկրնար ունենալ, քանի որ եկեղեցւոյ հոգևոր անկախութիւնն երկնային սահմանադրութեանը յարակից է, և երբէք իր ձեռքն ունեցած արտաքին զօրութեան :

Վերջապէս հռոմէական քահանայապետութեան արդի վիճակին զալով՝ ներկայ Իտալիոյ միութեան համար եղած բաղձանաց առջև՝ բացայայտ կ'մեկնէր Ժուլիօ Թէ կաթոլիկութիւնն ինչ մեծ կորուստ պիտի ընէ իտալական ազգայնութեան թշնամեաց կողմը նետուելով : Իր կարծեօք՝ այս ահադին սխալմունք մ'էր և ողբալի, մանաւանդ կրօնական ազդեցութեան նկատմամբ, և չէր երկնչեր ըսելու խօսքը կնքելով :

«Եթէ կէս դարէն բոլոր մտացի Իտալիոյ մէջ թերահաւատութիւնն արշաւէր՝ ազատ խորհողներու այս յաղթանակն ուրիշ բանի չպիտի վերադրեմ բայց եթէ Պիոս Թ.ի և հռոմէական արքունեաց անձարակ քաղաքականութեան, որ կ'ուրանայ այս հայրենասիրութեան խանդն որ Թերակղզւոյն մէկ ծայրէն միւս ծայրը կ'տիրէ» :

Եւ ապա կ'յաւելուր .

«Երանի թէ իմ մարդարէութիւնս սուտ ելնէր» :

Ժուլիօյի զիբքը, որու սպաղորութեան հսկողն եղաւ Պ. Լիչ, անդրալեւնական կղերին մէջ մեծ դժգոհութիւն պատճառեց : Որչափ որ ոճին մէջ չափաւորութիւն, եկեղեցւոյ բարձր պաշտօնէից համար պարտ ու պատշաճ յարգ ու պատիւ կ'երևէր, այնչափ աւելի աչքի կ'զարնէր աղղու և սոսկալի կերպով իր պատճառաբանութեան ոյժն այն անպատեհ զաղափարին դէմ զոր կաթոլիկութեան մէջ ընդունել տալու կ'ճղնէին իբրև պապութեան գերագոյն փրկութիւնը :

Անկարելի պատմել թէ անդրալեւնեայ փոքրիկ սուրբերը Ժուլիօյի դէմ որչափ զայրացան : Ատելութեան ժայթքումներ, անէծք, աղաղակներ էին քայլահայտութեան դէմ, և այս վայնասունն ելէկտրական արագութեամբ Քրանսայի մէկ ծայրէն միւս ծայրը տարածուեցաւ :

Եպիսկոպոսներն ամէն կողմէ նամակներ կ'ստանային . կալեայի աշխարհային եկեղեցին համապումար ժողով կ'կազմէր . իր նախա-

զահը յայտարարութիւններ կ'խմբագրէր որ խոշոր երբեմն ծանր այլ միշտ կծու բառեր կ'պարունակէին : Անդրալեւնական եպիսկոպոսները կ'ներդրօծէին անոնց վրայ որ խոհական ընթացքով մը չափաւորութեան ճամբան բռնած էին, և որ չէին ուզեր իրենց եպիսկոպոսի տիրոջն հրաժարիլ յանդուգն աշխարհականաց առջև, բայց դարձեալ բաժանման պատճառներն աւելի ևս չաւելցընելու համար՝ լուռ կ'կենային դէպքերու թողլով եկեղեցին մաքրելու հոգն և օտարները տաճարէն վանելու : Բայց՝ իրենց եղբայրակցաց կողմէն ստիպուելով Ժուլիօ արեղային վատահամբաւ գիրքը գատապարտելու, այս թախանձանաց կ'զիջանէին շատերը և կ'իստովանէին որ Ժուլիօ դէմ անխոհեմ էր . շատ քիչ մարդիկ բաւական քաջութիւն ունէին անոր բարի խորհուրդները ճանչելու, և այսպէս ատելութեան թափն աւելի կ'սաստկանար որ քիչ ատենէն անհաշտելի հալածանաց պիտի փոխուէր :

Դ

ԿԱՅԾԱԿԸ

Բարիզէն մեկնելու ատեն Ժուլիօյի և Լուիղի զգացած դառնութիւնը քիչ ատենէն մեղմեցաւ : Քանի մը շաբաթէ՛ ի վեր Մէլի երիցատունը հաստատուեր էին, և Ժուլիօ երբէք այսչափ կատարեալ երջանկութիւն չէր վայելած : Երբոր Լուիղի Մէնդե-Ավանտէն էր՝ իր սէրը Վերտլօնի համար իր և եղբօրը մէջ պատանէշ մ'էր, նա բոլորովին Վերտլօնի անձնուէր էր, և Ժուլիօ իր սրտին մէջ երկրորդական տեղ մը կ'բռնէր : Մէրը լիովին հասարակ էր . չթողուր որ ուրիշ զգացում մ'անոր մօտ մնայ . պէտք է որ ամէն մտածմունք, սիրող հոգւոյն ամէն կարողութիւնները դբաւէ, ապա թէ ոչ սէր չէ այն : Ժուլիօ կ'հասկընար այս բանս, և Լուիղի ներկայութիւնն իրեն համար թէ երջանկութիւն էր և թէ վիշտ :

Բայց այժմ Լուիզ՝ իր աղէտաբեր սէրէն բժշկուելով՝ իր հոգին եղբօրը հոգւոյն կցորդեր էր, անոր հետ մտաւորական կեանքով ապրեր էր. Լուիզ ժուլիօ էր և ժուլիօ Լուիզ: Սա՛ որսպէս թէ կ'զգար որ իր նախորդ անտարբերութեան համար պէտք էր ներողութիւն հայցել, իր եղբօրը հետ չքնադ նազանք ունէր, զմայլելի հրատարակներ. զիւզին մաքուր օդն իր վրայ հիւնալի ներգործութիւն մ'ունեցեր էր. իր այտերն որ այնքան ժամանակ դուստտեր էին, վարդագոյն դարձեր էին. և այժմ աւելի դեղանի էր քան այն ատեն երբ Աւերալօն զինքը սիրեր էր: Իր բոլոր աշխուժութիւնը ստացեր էր, կարծէր թէ կ'վերածնէր, երջանիկ էր և ժուլիօյի համար կ'ապրէր: Կա այնքան լաւ զիտէր որ երկրիս այս փոքրիկ անկիւնը՝ իր ներկայութեամբը դեղաղարդ, այս պաշտելի եղբօր համար Եգեմ՝ պիտի դառնար: Երիցատունը կ'երթնէր երկրին աղւոր երգերն երգելով զոր ժուլիօ կ'սիրէր և որով իրենց մանկութիւնն օրորեր էին: Ա՛րեւէր թէ այս երկու էակները՝ թէև բարձր մտքի տէր, երեխաներ դարձեր էին, նոր կեանք մը կ'սկսէին և այս միասիրտ և միակամ կեանք մ'էր:

Ժուլիօ չէր յիշեր այլ ևս իր բոլոր տառապանքը: Բաւական էր որ իր սիրեցեալ Լուիզն անդ լինի, միշտ անդ իր մօտը. բաւական էր որ իր կրօնական պաշտօնը քանի մը ժամ կատարէին ետե՛ կանի դար գանէր և անոր անոյշ ժպիտովն ընդունուէր, աւելի բան մը չէր հայցեր Աստուծմէ: Ամէն օր Լուիզի առողջութեան աղագած անորոշ մտաւորութիւնները կ'ցրուէին: Ո՛չ, իր անոյշ, իր միակ գանձը ձեռքէն չպիտի հանէին:

Գրեթէ երկու ամիս՝ երբ ժուլիօ աշխարհային իշխանութեան վրայ իր զերբը յօրինեց՝ այս սրտակցական և անպատում ուրախութեանց մէջ անցան: Լուիզ կ'հաւաստէ եղբօրն որ բոլորովին կենդանութիւն գտած է գարնան առաջին օրերու ներգործութեամբ:

Եւ սակայն՝ եթէ ժուլիօյի սենեակը մանենք, այն սենեակն ուր առաօտեանէ վեր փակուած է, այն սենեակն՝ որու դուռն երկու անգամ զարնելու զնաց Լուիզ և ուրիշ պատասխան չտալու բայց եթէ, «Սիրելիս, հիմակ պիտի իջնեմ», այս փոքրիկ

սենեակին մէջ որ՝ առաջին անգամն էր որ Լուիզի ձայնին չէր բացուեր, ժուլիօն պիտի զաննէր բայ սեղանի մ'առջև, ցիւր ու ցան թղթերով ծածկուած: Իր գլուխն երկու ձեռաց մէջ յենած է, խորունկ կ'մտմտայ, իր դունատ այտերուն վրայ խոշոր արտասուք մի առ մի կ'զլորին: Հետզհետէ արտասուքը կ'առատանան: Ժուլիօ կ'սկսի հեծեծել, ծունր կ'զնէ և կ'զոչէ:

— Աստուած իմ, կ'տառապիմ, կ'տառապիմ, ո՛հ, ինչո՞ւ համար իմ շրթանցս մօտ բերիւր այս դառն բաժակը: Երբեք մ'է այս, այնպէս չէ, ահաբեւ երազ մը: Լուիզ, Լուիզ, ինչպէս յայտնեմ քեզի... բայց ո՛չ, պէտք չէ որ իմանայ, երբէք: Մարդ լինինք, քրիստոնեայ լինինք, և եթէ պաշտօնեայն եմ Աստուծոյն որ Գողգոթայի վրայ մեռաւ, ես ալ պարտաւոր եմ խաչս կրելու վարժիլ:

Եւ ժուլիօ մտովին կարճ աղօթք մ'ընէին ետե՛ ոտք ելաւ, դեռ ևս դունատ, բայց իր դէմքին սովորական հանդարտութիւն տալով: Վար իջաւ և իր քրոջ ըսաւ.

— Պարտաւոր եմ Արիւզ գնալու, կարելի է որ շատ ուշ դառնամ, մի սպասեր ինձ, աղջիկս:

— Ո՛հ, սիրելիդ իմ ժուլիօ, պէտք է թոյլ տալ ինձ որ դամ քեզ դիմաւորեմ, զիտես որ այս իմ մէկ ուրախութիւնս է, և մեր սիրական լեռներէն առաջին ծաղկանց փունջ մը պիտի բերես ինձ:

— Լուիզ, քեզի ծաղիկներ պիտի բերեմ, բայց արեւ մարը մտնէին շատ ետքը պիտի դառնամ. տունէն դուրս մի ելներ, կ'աղաչեմ, երեկոյեան թարմ օլը, զիտես որ քեզի համար վտանգաւոր է:

— Օ՛ն անգր, ինձի համար վտանգաւոր բան մը չկայ այժմ, ժուլիօս:

— Կ'սխալիս, դեռ այս առտու բաւական հազացիր: Լուիզ, հնազանդէ ինձ, կ'աղաչեմ:

— Պիտի հնազանդիմ քեզի, սիրելի բռնաւոր, իմ առողջութեանս հող պիտի տանիմ քանի որ այդչափ կ'փափաքիս: Բայց կատարեալ է, կամ ասոր մօտ բան մը՝ կ'հաւաստեմ քեզ: Ո՛

եղբայր իմ, քանի բարի է Աստուած որ ինձ նոր կեանք կ'սարդեւէ : Այս սիրական Բարիքը զոր այնքան սիրեցի, ուր այնպիսի աղւոր երազներ տեսայ քեզի հետ, լաւ, կ'տարակուսիմ որ ինձի համար նենգաւոր բարեկամ մ'եղած չլինի : Ամէն օր նոր նոր կակիծներ կ'կրէի, բայց կ'զգամ վերածնելու : Այո, Աստուած բարի է, շատ բարի : Մեր թշնամիներն այս աշխարհիս ինչքն ու պատիւները մեզնէ աւին, բայց Աստուած մեզի ըսաւ . Ջիրար սիրեցէք և երջանիկ պիտի լինիք :

Եւ Լուիզ իր թեւերը ծուլելօյի փաթթելով՝ իր գեղանի գլուխը նորատի քահանային ուսին վրայ դրաւ : Այս վերջինը սաստիկ դունատեցաւ, և նախ զանի հեռացուց, բայց այս առաջին շարժումն այնքան արագ եղաւ որ Լուիզ հազիւ թէ զայն զգաց : Ծուլիօ իր շրթուները քրոջը ճակատին վրայ դրոշմեց և արտօնօք դուրս ելաւ : Լուիզ՝ դրան սեմին վրայ կեցած՝ ծուլիօյի արագ ընթացքը քիչ մ'ատեն զիտեց և ապա՝ ներս մտնելով՝ ըսաւ իւրովի .

— Եղբայրս իզնէ բան մը կ'սլահէ : Աղէտ մը կայ դարձեալ մեզի մօտ :

Այնուհետեւ հազը բռնեց, Լուիզ իր թաշկինակը բերնին տարաւ և երբ քաշեց անոր վրայ քանի մ'արեան բիծեր տեսաւ :

— Ա՛հ, ըսաւ, երեք շաբաթէ 'ի վեր այսպիսի բան մը չէր պատահած ինձ : Աստուած իմ, կարող ես իմ կեանքս առնուլ, այն քուկդ է, բայց ո՞վ պիտի մխիթարէ ծուլիօն :

Եւ Լուիզ լացաւ :

Իսկ ծուլիօ՝ բոլոր օրը լեռը թափառական շրջեցաւ, և երբ երկցատունը մտաւ, հանդարտ էր նա : Լուիզ որ զանի մտադիր կ'զիտէր, բոլորովին հասկըցաւ որ եղբայրը սաստիկ տանջանք կրած է և առաւօտեան նախադրացումները ցրուեցան : Իսկ ծուլիօ ևս հասկըցաւ որ Լուիզ ալ աղէտալի տաղնապ մը կրած է, որ 'ի Բարիք իրեն մեծ ահ ու դող ազդեր էր նոյնպէս 'ի Մէլ առաջին շաբաթները : Առանձին տառապեցան . իրենց հողիներն իրարմէ առանձնացան : Երկցատունէն դացեր էր երջանկութիւնը :

Ծուլիօ բոլոր գիշեր գրեց : Այս դիւրահազորդ բնութիւնն իր ցաւերը պատմելու պէտք ունէր : Ա՛ղտնենք այս էջերուն մէջ ուր

իր սրտին բեկումը դժեց, ուր երեան հափեց արիւնալի վէրքերը զոր պիտի սարտաւորէր ծածկել, այս յուսահատութեան դաղտնիքը զոր ոչ ինչ չէր կարող բուժել :

Եւ մտայ անդորրութիւն տալու համար յոյնութեամբ մարմինս խորտակեցի, բայց եթէ կարող եղայ մաննել այս երկցատունը, ուր երկու ամիսէ 'ի վեր այնքան երջանիկ էի, և իմ անձին բաւական կ'իշխէի որպէս զի Լուիզ չլիտէ այն աւերումներն որ սոսկալի ժամու մը մէջ սրտիս մէջ տեղի ունեցան, բայց անկարելի եղաւ ինձ իմ մտածութեանցս մէջ կարգ կանոն դնել որպէս զի լաւ ըմբռնեմ զզացածս :

«Ապրելի է դրելով կարենամ յաջողիլ :

«Այս առտու արթնցայ՝ սիրտս անհուն ուրախութեամբ լի : Պատահանս բացի, մեր հովիտներուն թարմ ու հոտաւետ օդը մինչև ինձ հասաւ, և սրտի այնպիսի զեղում մը զզացի որպէս մարդ՝ որ ամենուրեք զԱստուած փնտուելու երջանկութիւնն ունի, զանի փառաբանելու և երախտագիտութեան երգ մ'երգելու պէտքը կ'զգայ : Այն մէկ վայրկեանն էր երբ սիրտն ան կողմէ կը յորդէ, ուր ամէն ինչ սէր է, կեանք և յոյս է : Իմ մտքիս մէջ որ և է տխուր յիշատակ չէր կրնար մուտ ունենալ : Սակայն երեւակայութեան մէկ այլանգակ դրդումով իմ միտքս յանկարծ ինձ չարիք ընել ուզողներուն վրայ դարձաւ և այս մտմտութս անոյշ երեցաւ ինձ . վասն զի անոնց նկատմամբ միայն երկայնամտութիւն կ'զգայի և խնդութեամբ կ'կրկնէի որ պարտինք շնորհապարտ լինիլ Աստուծոյ երբ մեզի առելու անկարող սիրտ մը կ'ընծայէ :

«Ահա այս տրամագրութեամբ իմ փոքրիկ եկեղեցիս դացի : Լուիզ պատրաստեր էր խորանը, անօթներն ամենաթարմ ծաղկօք լի էին, և սուրբ պատարագը սկսայ աւելի հաւատով ու սիրով քան զոր չզգացեր էի՝ մինչև անգամ քահանայութեանս առաջին օրերը, որոնք նորընծայ քահանային համար քերովբէական խանդով լի են զոր այն ժամանակ կարծէ թէ միշտ պիտի պահէ :

«Բայց երբ երկցատունը մտայ, Լուիզին հազալը լսեցի, այն չոր հազը զոր այնքան լաւ դիտեմ և որ ինձ այնքան մտառան-

Չութիւն ազդած է : Սոսկալի երկիւղ մը հոգիս վարակեց և առաօտեան այն անոյշ երջանկութիւնն արդէն երազ դարձեր էր :

«Սակայն այս հազն երկայն չտեւեց . Լուիզ առաջարկեց ինձ որ երկայն պտոյտ մ'ընենք դաշտերը : Մերձեցի , առ ահի որ կը յոգնի և ըսի անոր որ այն օրն ընսանեկան թղթերը կարդի դնելու պիտի զբաղիմ : Մինչև իսկ կատակ ըրի ըսելով թէ ժուլիօ Քլավիէրի ազդաբանութիւնը պիտի փնտռէի , և թէ այս նպատակաւ մեր նախնեաց կտակած փոշոտ մագաղաթները պիտի խառնէի : Լուիզ շատ ծիծաղեցաւ այս ազնուապետական գոռողութեան ցոյցերուն վրայ և զինք սրահը թողուցի իր բոյսերուն հետ , ըսելով թէ այն ծաղիկներն իրեն համար աւելի արժէք ունէին քան թէ ամէն իշխանական և դքսական պսակներու ծաղիկները :

«Սենեակս ելայ և իրօք Գուրնիշօնի ինձ յանձնած սնտուկը բացի , որու վրայ դրուած էր Ընդհանրական Բիլիէր : Ամտածէի թէ անոնց մէջ մեր ընտանեաց վրայ թանկագին թղթեր կընայի զըտնել որ մեր խորհրդարանական պայքարներու հետ թերևս վերաբերութիւն ունենային :

«Այս սնտուկը խառնելու ատեն՝ անոր յատակը փոքրիկ արկղիկ մը դտայ բանալեով գոցուած . այս խորհրդաւոր արկղիկն բանալին փնտռեցի սնտուկին մէջ և զայն չգայ : Լուիզը պիտի կոչէի իմ զիւսս անոր ցոյց տալու , բայց չզիտեմ թէ ինչ բնազգում մը չթողուց որ կոչեմ զանի : Այս արկղիկն անծանօթն էր , և անծանօթը միշտ սոսկալի բան մ'ունի : Իմ ձեռքս կ'զողզողար երբոր արկղիկը բանալու միջոյ մը կ'փնտռէի առանց զայն կոտորելու :

«Փոքրիկ փականքը շատ հաստատ էր , սակայն հիւանի մկրատ մը գործածելով՝ լեղուակը բացի և արկղիկն անվնաս բացուեցաւ :

«Իմ աչքիս զարնող առաջին բանն եղաւ իմ հօրս երկրորդ կնիկան պատկերը , այսինքն Լուիզին մօրը : Լուիզ չափազանց կը նմանէր անոր , և կարծես թէ այս կենդանադիրն իրն էր : Իմ շրթանցս տարի եղայրական սիրոյ և գորովալի ակնածութեան զգացմամբ զոր տիկին Քլավիէրի յիշատակին համար պահած էի :

«Այս էր ճիշտ իր տխուր և խոհուն դէմքը : Քանի քանի ան-

դամ իր սենեկին մէջ խաղալով՝ Լուիզի օրորանին մօտ՝ տեսած եմ զինքն որ զաղտնի արտսուք կ'թափէր : Նա զիս շատ կ'սիրէր և երբ կ'տեսնէր այն սիրուն փոքրիկ հրեշտակը դդուելս իր գըրկայը մէջ , ստէպ այս մրմունջը կ'հասնէր . — Արեւի է օրին մէկն այս աղջկանս պաշտպանը պիտի լինի :

«Այնչեմ նաև թէ հայրս ինչ կաթոգին սիրով կ'սիրէր Լուիզը . թերևս նախանձէի եթէ Լուիզ արդէն ինձ համար սիրական էակ մը չլինէր :

«Այնուհետև ամէն ինչ փոխուեցաւ հայրական տան մէջ . տիկին Քլավիէր մեռաւ . Լուիզ եօթն տարու էր : Հայրս մեկամաղձօտ , դէգ , անհանգիստ դարձաւ , և իր քոյրն իսկ կարծես թէ ատելի եղաւ իրեն . կ'երևէր թէ մեծ դժկամակութեամբ կ'հանդուրժէր այս խեղճ օրիորդին տեսութեան : Այս այլանդակ ընթացքը զգացած վշտաց կ'վերադրէին , իր կինը կորուսելով , և անդուժ հիւանդութեան մ'որով կ'տառապէր : Զարմանալի այլանդակութեամբ մը՝ իր սէրն առ իս կարծես թէ ընդ հակառակն օր ըստ օրէ կ'աւելնար :

«Մեռաւ հայրս , և մեր հօրաքոյրը՝ տիկին Քլավիէր երկու օրբոց հոգը վրան առաւ : Հայրս՝ իր մահուանէ քիչ մ'ատեն առաջ՝ իր կալուածքը՝ որ անբաւ էին , փոքր առ փոքր ծախեր էր : Այս գործը՝ իր սեամաղձութեան արդիւնքը կ'նկատէին՝ իր ընտանիքն ու բարեկամները :

«Իր բոլոր դրամական հարստութիւնը Բարիզի մէկ սեղանաւորի մօտ շահու դրեր էր : Քանի մ'ամիս ետք՝ Բարիզ զնաց և երբ վերադարձաւ իմացուց որ բոլորովին կորուսած է ստակները , վասն զի կ'ըսէր թէ իր սեղանաւորը փախուստ տուեր էր :

«Տիկին Քլավիէրի կենդանադիրն տեսքը բոլոր այս յիշատակները միտքս բերին : Արկղիկը քննելու շարունակեցի և իմ հօրս ձեռօք քանի մը էջեր դտայ դրուած . դժնդակ էջեր , և անտարակոյս իր շուտ ընդ փոյթ մահն արդիւլած պիտի լինէր զանոնք բոլորովին ջնջելու : Գաղտնիք մը զոր ինքն իրեն պահելու և իրեն հետ գերեզմանը տանելու կ'փափաքէր անշուշտ , սակայն այնչափ տարիներէ վերջը ահա երևան կ'եղնէր իմ սիրտս վրդու-

վելու և կեանքս թունաւորելու համար : Վասն զի այս թուղթն և ոչ մէկու ուղղուած էր : Գրուած էր այնպէս ինչպէս որ ես այժմ կ'զրեմ այս երեսները, այնպիսի ժամ մ'ուր սիրտն ինքն իրեն յայտնուելու տենչ կ'զգայ : Ասոնք վշտալի մտածութիւններ էին, 'ի սպառ ջնջուած պատրանայ վրայ դառն ցաւեր, աղէկեղ տրտունջներ : Այս երեսներուն վրայ կային կիսաւեր բաւեր, աստուք թափեր էին անոնց վրայ և իմ արտաւրքս ալ կը թափէին :

«Այս կինը՝ զոր իմ հայրս այնքան սիրեր էր, որու բազդը շիներ էր, այս պաշտելի կինը զինքը չէր հասկըցած : Իր ամուսնոյն բացակայութեան ժամանակը, չզիտեմ ինչ սիրոյ տեղի տուեր էր : Իմ հօրս վերադարձէն եօթն ամիս ետք՝ Լուիզ աշխարհ եկաւ : Խեղճ աղջիկն այնքան տկար ծնաւ և քնքայլ, որ ոչ ոք տարակոյս ունեցաւ որ այս զաւակը բնութեան սահմանած պայմանաժամէն առաջ ծնած լինի : Հայրս կասկած մը չունեցաւ, և սոսկալի երկիւղի մէջ էր որ չլինի թէ այս խեղճ նորածինը կուրուանէ, որու արդէն իր բոլոր սէրը տուած էր :

«Լուիզի ծնելէն ետե՛ւ՝ տիկին Քլավիերի առողջութիւնը բոլորովին խանդարեցաւ : Իր մեղամաղձութիւնը, իր թախծութիւնը հօրս մեծ յուսահատութիւն կ'պատճառէր : Կարծես թէ մայրս զաղտնի վշտով մը կ'հալէր ու կ'մաշէր :

«Երբոր օրհասական ժամը հասաւ, այս տկար կինը, որու սիրտն ապականած չէր, ամէն ինչ իմ հօրս խոստովանեցաւ : Պաղատեց որ իրեն ներէ և իր աղջիկը չմերժէ : Հայրս խոստացաւ, բայց նա ևս իր կեանքով պիտի վճարէր կորուսած երջանկութիւնը :

«Այսպէս Լուիզ իմ քոյրս չէ :

«Ասոնք են այս դրուածքին աղէտալի յայտնութիւնները» :

ՔԱՀԱՆԱՅ ՄԱՐԿԸ

« . . . Իմ ամենէն վշտալի յիշատակաց մէջ չեմ գտներ բան մ'որ նմանութիւն ունենայ երէկուրնէ 'ի վեր զղացածիս հետ : Երբոր իմ քոյրս Սէնդ-Վանտէնէն աներեկոյթ եղաւ, սոսկալի ցաւ զգացի, բայց այս ցաւս կրնայի մեկնել : Գիտէի թէ սրտիս ո՞ր թելերը կ'ձգտէին և կ'խորտակէին և ասկէ զատ՝ զանի վերստին գտնելու յոյսն ունէի : Երբոր սուրբ Հաւատաքննութեան զնդաններուն դռներն իմ վրայ դոցուեցան կարծեցի յաւիտենական ողջոյն մը ապլ իմ բոլոր սիրած բաներուս, և ո՞վ կարող էր այս ողջոյնիս դառնութիւնը նկարագրել : Բայց իմ ձեռներս ամբարձի դէպ 'ի այն էակն ուստի ամէն միթարութիւն կ'հասնի մեզ և ազաչեցի զինքն որ որք օրիորդին հայրը լինի, որմէ զատեր էին զիս նորէն իմ հալածիչներս . աղօթքը զիս միթարեց :

«Այս մութ զնդանին մէջ մահն ընդունելու համար հանդարտ մնայի, զայն չէ թէ իբրև ահուելի ուրուական մը նկատելով՝ այլ այլ իբրև փրկութեան հրեշտակ մ'որ յաւիտենական բնակարանին դուռը բանալու կ'զայ առ իս, և անդ քոյրս և ես օրին մէկը պիտի միանայինք : Գիտէի որ ընդ երկար չպիտի սպասէի : Իմ բարեգիտական ուսմունքս իմ կաղմութեանս վրայ շատ ճշգրիտ տեղեկութիւններ տուին ինձ : Լաւ է իմ կաղմուածքս այս պայմանաւ որ յարմար միջավայր մը գտնուիմ : Օդ պէտք է ինձ, լոյս, ծառերու և բոյսերու հոտաւէտ բուրմունքը, բայ արևուն, ընդարձակ հորիզոններ, բնութիւնն իր բոլոր շքեղութիւններովք պէտք են ինձ . անդ միայն կարող եմ շնչել և ապրել :

«Զնդանի մը մթութեան մէջ գտնուելով՝ որուն շնչելի օդը լոկ փոքրիկ դռնակէ մը կիսկատար կ'նորոգուէր, ուր արևուն մէկ ճառագայթն անգամ չէր մտներ, զգացի որ պիտի կորսուիմ, և

դիտէի որ իմ կենացս բովանդակ քայքայման դործը վաղահաս պիտի լինի :

«Արող եմ՝ ժամ առ ժամ՝ այս եռամեայ դերութեանս տառապանքը նկարագրել, նոյնպէս իմ քրոջս վրայ զղացած անձկութիւնս, յուսոյ նշոյլները, իմ հոգւոյս սոսկալի տկարութիւնները . բոլոր այս բաները դեռ ներկայ են մտացս մէջ . վասն զի վերլուծութեան կարողութիւնս միշտ պահած եմ, դիտէի թէ ինչո՞ւ և ի՞նչպէս կ'տառապէի :

«Այժմ չգիտեմ զրացածս : Միտքս սոսկալի թալուկ մը պաշարած է, թերեւս խենթ եմ . . . :

«Ո՛չ, խենթ չեմ, բայց դժբանգ եմ, դժբանգ . . . : Եւ ինչո՞ւ համար դժբանգ եմ : Միթէ Լուիզ անդ չէ՞ր, միշտ անդ . . . : Լուիզ քոյրդ չէ . . . Լուիզ քոյրդ չէ . . . : Ահա այս բանս կ'կրկնեն ինձ չգիտեմ ինչ տեսակ ներքին ձայներ՝ իմ աղէտալի դիտէս 'ի վեր : Այս խօսքն ինձ ճշգրիտ իմաստ մը չեն ներկայացըներ, և սակայն սիրտս կ'ճնշեն, կ'տրորեն, յիս խառնու շփոթ դաղափարներ կ'զրզուեն : Պատրաստ եմ յուսահատուածեան աղաղակներ արձակել, վասն զի ինձ կ'երեւի թէ Լուիզի վերայ դրած երջանկութիւնս՝ այն օրերէն 'ի վեր՝ որ երբ փոքրիկ աղջիկ էր՝ մինչև ցարդ թևերուս մէջ կ'օրորէի զմտի, մարեցաւ . և ապա չգիտեմ թէ ինչ աւիւն կ'ծնի յիս . կարծեմ թէ երջանիկ եմ ըսելու խրովի . Լուիզ չէ՞ իմ քոյրս, իմ քոյրս չէ՞ : Եւ այս եղբայրական սէրն որ ինձի այնքան անոյշ կ'երեւէր ի՞նչ եղաւ . . . : Աւելի ևս քաղցրացաւ : Սէր է այն այժմ, Աստուծոյ ստեղծած սէրը, սէրն որու ամէն արարած հրաւիրեց : Եւ հոգիս անսահման խնդութեամբ կ'ողողի : Եւ ապա կ'սարսուիմ . . . ողորմելի քահանայ . յանցանք մ'է սէրը քեզի համար . . .

«Ինչո՞ւ համար իմ ցնորեալ երեակայութեան երազներուն մարմին մը տալու կ'ջանամ : Միթէ կենացս մէջ բան մը փոխուած կայ : Միթէ այս դիւտը յետագէմ ներդործութիւն մը կրնայ ունենալ : Միթէ այս աղջիկը չսիրեցի՞ սուրբ և մաքուր սիրով : Եւ երբ կ'կարգայի այն հիանալի դէպքը զոր Շաղօսլիան իր Ո՛չէ

դիտէի որ իմ կենացս բովանդակ քայքայման դործը վաղահաս պիտի լինի : թահար մնացի՞ մտածելով որ թերեւս սիրտս Ռէնէի վշտալի կոխներով պիտի տանջուէր : Աւրեմն այս անարատ և արբեցուցիչ դորմը ուրիշ բնութիւն մ'առա՞ն արդեօք : Ի՞նչ կ'նշանակէ այս իմ այլայլութիւնս . ինչո՞ւ համար մերժեցի սեղմել Լուիզի կարկառած ձեռքը լեռն ըրած երկար արշաւանքէս ետք : Ինչո՞ւ համար իր ձայնն այնպիսի ներդաշնակութիւն մ'ունէր որ բնաւ չէի լսած . ինչո՞ւ համար իր մաղերէն, իր զգեստներէն, իր անձնի վերջապէս՝ այնպիսի անոյշ հոտ մը կ'բուրէր որ զիս արբշխ կ'ընէր : Ես թաշկինակը ճակտիս վրայ դրաւ քրտինքս սրբելու և այս դործողութիւնը պաշտելի շնորհքով ըրաւ՝ իր գլուխն ուսիս վրայ գնելով : Քանի քանի անգամ իր տառապալին ժամերուն իր գլուխն այսպէս չէր դրած : Այն ատեն երջանիկ էի . և այսօր այս զգուանքն ինձ չգիտեմ ի՞նչ սոսկալի սարսուռ աղբեց և դառն հեշտութիւն մը : Հրեցի Լուիզը, և կ'երեւի ինձ որ խեղճ աղջիկն այս շարժմանս վրայ զարմանք ցցուց . . .

. . . . .  
. . . . . «Եւ չէ՞ քոյրս, քոյրս չէ՞ ճէ, և չեմ կարող ծածկել որ իմ կենացս մէջ սոսկալի ճղնաժամ մ'անցաւ, նէ ինքզինքս յայտնեց ինձ :

«Իմ երիտասարդական ծաղիկ հասակէս 'ի վեր՝ մաքառեցայ այն հեշտական կրից դէմ որ՝ միտքեականաց ըսածին պէս՝ Սատանի որողայթներ չեն, այլ մարդկային բնութեան անհրաժեշտ հետեանքը, կենաց հեղինակէն տնօրինուած հետեանք՝ կեանքը մշտնջենաւորելու համար : Այս պայքարներն այնքան վշտալի չեղան ինձ որչափ այլոց : Իմ երիտասարդութիւնս ամէն աղտէ անարատ մնաց և չէի կարծեր թէ սուղ կ'զնեմ՝ ներեալ սիրոյ մը խնդութիւնները զոհելով՝ խորանն ելնելու իրաւունքը :

«Քահանայ լինելէս 'ի վեր՝ ամուրիութեան այս սոսկալի ուխտին անխոհեմութիւնը միտ առի : Ֆրամարէն Սրբազանին մօտ վարած ներքին քարտուղարութեան պաշտօնս՝ կրօնական կենաց ողբալի դաղանեաց իսկոյն վերահասու ըրաւ զիս : Տխուր սրտակցական դաղտնիքներ, ծանր խոստովանութիւններ լսեցի և շա-

տեր եկան սլաղատելու զիս որ իրենց համար ներողութիւն հայցեմ: Բայց կղերին մէջ կ'տեսնէի նաև այնպիսի մարդիկ որոց կեանքն անսղիւտ էր, և ինձ անկարելի չէր այս խտեական անարատութեան հասնիլ եկեղեցական սլաղտամանս մէջ: Վերջէն՝ փորձառութիւնը փոքր առ փոքր ցոյց տուաւ ինձ թէ քանի՛ դժուարին էր այս խտեականն իրադործել. սակայն բնաւ չեմ զղջացած զայն իմ բոլոր կենացս նպատակն ընելու:

«Չեմ կրնար հասկընալ թէ ինչպէս մարդիկ զգայական եռանդէ կ'մոլորին: Սակայն եկեղեցական եղբարցս մէջ տեսած եմ այնպիսիներ որ սոսկալի կերպով մոլորած են ուրիշ պատճառ մը չունենալով. ես այս մոլորութենէ հեռու մնալու համար դիտութեան ուսումն ունէի և քրոջս սէրը: Նիւթական էութիւնս մտաւորական էութեամբս չբացընելու կարելիութիւնը կ'տեսնէի և քոյրս իմ քովս էր իմ սիրելու և սիրուելու տենչս գոհ ընելու, տենչ մ'որ զիս միշտ համակած է. այս սէրը միայն ինձ ներելի էր և անոր տուի բոլոր հոգիս: Այս սէրն իմ բոլոր ոյժս կ'կազմէր. անով կ'քայլէի անսայթաք քայլով իմ մտած վտանգալի ճամբուս մէջ: Ի՞նչ բանէ վախ ունէի:

«Եւ ահա բոլոր այս շէնքը՝ զոր յաջողութեամբ կառուցեր էի մէկ վայրկենի մէջ զլիսուս վրայ փլեր էր: Լուիզի ուրիշ կերպարանով ինձ յայտնուեր էր: Նա կին մը դարձաւ ինձի համար և կ'յիշեմ որ մարդ եմ»:



ՔԱՀԱՆԱՅ ՄԱՐԳԷ

(Շարունակութիւն)

«Ութն օր անցաւ արդէն և անկարող եղայ մտքիս ու սրտիս անդորրութիւնը դտնել: Իմ բոլոր կամացս զօրութիւնը կ'զօրծա-

ծեմ որպէս զի Լուիզի առջև իմ աղէկատու տառապանքս ծածկեմ և կարծեմ թէ բոլորովին չեմ յաջողիր: Անտարակոյս զիս այլանդակ կ'գտնէ. ի՞նչպէս կ'մեկնէ արդեօք իմ այս տարօրինակ ընթացքս: Ես որ չէի կարող վայրկեան մ'իրմէ բաժնուիլ, ամէն օր նոր բարոյր մը կ'գտնեմ որ զինք մինակ թողում երկցատուներ. իմ օրերս կ'անցընեմ լեռներու վրայ խելացնորի սէս թափառելով: Ճաշէն ետք՝ երբ տրտում եմ և լռակաց, իմ սենեակս կ'փակուիմ, պատճառ բունելով թէ Պասկերան աշխարհական էշտանութիւնը զբքիս երկրորդ ստպողութեան համար կ'ուզեմ սրբազրութիւններ ընել:

«Գարնան առաջին օրերը հասան. բնութիւնը զմայլելի է, կեանքն աւելի ազատ կ'շրջի երակաց մէջ: Այնպէս կ'երևի ինձ որ օդէն, լոյսէն, բոյսերու անուշահոտութենէ այնպիսի զգայութիւններ կ'ունենամ որ մինչ ցայն վայր անծանօթ էին ինձ: Սիրտս երբեմն կ'բարբախէ ուժղին և այս թրթուռները ցաւ և միանդամայն հեշտութիւն են: Երէկ բոյն մը տեսայ թանձր մացառի մը մէջ. խոտն իմ քայլերուս ձայնը կ'մեղմէր, և կծկեցայ որ թևաւոր սիրուն ընտանիքը դիտեմ: Այնքան մօտ էի որ շունչս կը բռնէի որպէս զի չահաբեկեմ մայրը՝ որ թևերն իր սիրական ձագիկներուն վրայ տարածելով՝ դուրսը մեղմիկ դուրս կ'հանէր բոյնէն և ճիչեր կ'արձակէր: Այս ճիչերը լսուեցան: Արուն սրաթուիչ հասաւ: Այն ատեն էզը շարժում մ'ըրաւ և չորս հինգ հատ թռչնիկներ տեսայ որ նոր ծներ էին և դեռ գրեթէ անձև էին. հայրն սկսաւ անոնց սնունդը ջամբել, մինչդեռ էզը թևերը կ'զարնէր՝ խնդաղին մրմունջով և ինքն ևս կ'սպասէր որ իր սնունդն ընդունի:

«Ո՛ր նախախնամութիւն, զոչեցի. և դողահար, շուարած դետինն ընկայ վշտաղին աղաղակներ արձակելով: Ի՛հ, ի՛նչ, Աստուած իմ, մարդիկը ձեզ սիրել վարժեցընելու համար՝ պէտք էր հրաժարիլ նուիրական նպատակէն որու համար զիս ստեղծեր էիք: Միթէ ամուսնոյ և հօր խնդութիւնները սրբաղին խնդութիւններ չե՞ն: Ա՛րսեն թէ քահանայն պարտի մագրուր լինիլ: Ո՛ հայհոյիչներ, ի՛նչ կ'ըսէք. միթէ անմաքձուր բան մ'ըրաւ ընտա-

նիբբ կաղմելով . ուրեմն ձեր գոռոզ խմաստութեան նայելով Աստուած սխալեր է բերելով . «Չէ բարի որ մարդ մինակ մնայ» : Ո՛ր Աստուած իմ , դուք ըսիք . վայ Բնասարէն և ձեզ չհասկըցան : Հրեշտակներ պէտք են իրենց խորանն երնելու , բայց առանց խորհելու այս ողորմելի արարածներու բազմութիւն անկումները , զի չկրցան մոռնալ որ մարդիկ են , միթէ երբէք ինքնովին չէք հարցուցած , դուք որ աւելի բարեբաղդ՝ ձեր եկեղեցական պաշտօնը չէիք պղծած , միթէ վառվառն բնութեան մը դէմ՝ ձեր միշտ սրբակեցութեան պայքարներու մէջ , կարող էք վկայել թէ ձեր յաղթութիւնները բնաւ չեն բերած ձեր ճակտին վրայ ամօթապարտութեան կարմրութիւնը : Ո՛հ , երբ կրօնաւորն երևակայութեան անըջոյց մէջ , հրատապ ցանկութեանց մէջ ընկած է որոնք զինքը մինչև եկեղեցւոյ մէջ , խոստովանարանը , նոյն իսկ խորանին առջև կ'հալածեն , երբ չչատացած կիրքն արիւնը սրտին ու ըղբղին կ'մղէ , երբ կրօնաւորը՝ իր պաշտօն վարելու միջոցին իսկ՝ իր զրդուեալ զգայարանաց համար փորձութիւններ կ'տեսնէ , և երբ իրկուան իր մենաւոր սենեակը մտնելով՝ հրապուրելի ուրուականներու երամ մը կ'տեսնէ աչաց առջև , որոնք իրեն կ'ըսեն . «Մեղի եկուր» , զիտեմ որ այդ կրօնաւորը ջերմագին կ'աղօթէ առ Աստուած որպէս զի իրմէ հեռու պահէ փորձութիւնը , ստէպ այս բանդագուշանքը ցրուելու համար ըրած ճգունքը զանոնք աւելի կ'ծու ու բուռն դործելու կ'ծառայեն : Բայց վերջապէս մարմնոյ կրակը կ'մարէ , յաղթեց նա , և աղնուարար ծանր մարտիրոսութիւն մը կրած կ'ըլինի :

«Լաւ , չգիտեմ եթէ այս պայքարները՝ որոյ մէջ կրօնաւորը կ'վիրաւորի , կ'բեկանի , աղտոզութիւններ չեն , և եթէ , չնայելով տարած յաղթանակին , աւելի մաքուր կրնայ սեպուիլ այն քրիստոնէայն որ օրինաւոր սիրոյ մը հաճոյքը կ'վայելէ Աստուծոյ իրեն տուած կնկան գրկացը մէջ : Չգիտեմ՝ եթէ Լուծէր վանականը՝ իր անընկճելի բնաւորութեամբ , իր խցիկին մէջ հեշտութեան սատանին դէմ ողորելու ատեն՝ աւելի սրբակեաց էր քան թէ Կատերինէ Պօրայի ամուսին Լուծէրը : Ո՛ր Աստուած իմ , այս պայքարներն իմացայ միայն իմ եղբարցս ըրած խոստովանու-

թիւններէն : Եւ գիտէք որ անոնց մտերմական խօսքեր ըսելու ատենս ինքզինքս անոնցմէ լաւագոյն չէի համարեր և չէի պարծեր առաքինութեան մը վրայ որ ինձ շատ դիւրին էր :

«Լաւն զի , մինչև հիմակ հանդարտ ու երջանիկ ապրեցայ : Իմ կազմուածքս բնապէս սրբասէր է : Մտքի անդուլ աշխատութիւնը , գիտութեան սէրը հեշտական գրգռութեանց առիթ չէին ընծայեր : Բաւական կ'հասկընայի մարդկային տկարութիւնը , բնութեան սոսկալի պահանջումները՝ շատ մը հրավառ կազմածոց մէջ , և հետևապէս սաստիկ կ'ցաւէի այն իմ պաշտօնակցացս վրայ որ բոլորովին նիւթական կեանք մը , և այս է մի շատ կրօնաւորաց կեանքը , զրեթէ անպաշտպան կ'արձակէր հեշտախտութեան սատանին խայթուածոց մէջ : Գարձեալ էս սրտովին կ'ապրէի : Իմ բոլոր սիրային կարողութիւններս այս աղջկան վրայ կեդրոններ էի , իմ քոյրս կ'կարծէի զանի , և ինքզինքս շատ երջանիկ կ'համարէի այնքան եռանդագին և անարատ սրտով սիրել կարենալուս : Եւ սակայն հիմակ : Ո՛ր վշտահար մարտիրոսութիւն կրօնաւորի , որ կարծեց թէ հրեշտակի պէս կ'նիբհէ սրբավայրը և որ այժմ իբրև մարդ կ'արթնայ , վերջապէս քեզ կ'ճանչէմ . . . . .

. . . . .  
 . . . . .  
 . . . . .

. . . . . Վ'սիրէի այս քահանայական կեանքը . անոր համար ինքզինքս ծնած կ'զգայի : Սակայն կուրօրէն չէի վարեր իմ պաշտօնս : Վ'գիտէի որ Եկեղեցւոյ մէջ բարենորոգութիւններ ընելու պէտք կայ , մանաւանդ եկեղեցական ամուրիութիւնը ջնջելու հարկը կ'ըմբռնէի , հին բարեկարգութեան դառնալով զոր արևելեան եկեղեցիք պահած են : Ժամ էր նկատելու որ Աւետարանի մէկ մութ բնաբանը ծուռ հասկըցուեր էր , թէ սրբակեցութիւնն առաքինութիւն կ'դառնար միայն երբ կամաւոր էր , թէ ամուրի կրնար մնալ մարդ ժամանակի մը համար և բայառիկ պարագայի մը մէջ , իբրև իտեական մ'որու դիմել գեղեցիկ բան է , այլ սակայն պէտք չէ որ իբրև օրէնք հարկ դրուի անձի վրայ : Գիտէի որ մեր մի շատ նորատի Գևտայններն այս լծին

ներքե կ'մտնեն, առանց իրենց ոյժը կշռելու կարող լինելու ։ Բաւական առիթ ունեցայ քահանայութեան դադտնի վէրքը քըննել, և ահաբեկ մնացի, և սակայն կ'ըսէի դարձեալ Առաքելին մեր վերջին խօսակցութեան մէջ .

«Եթէ այս սոսկալի քայլը՝ որ մեզ կ'կապէ, առնու պարտաւորէի երբէք, առանց վարանելու կ'առնուի ։ Քահանայն միայն ժողովրդոց բարոյական ուսցընելու բարձր ու վսեմ պաշտօնն ունի ։ Արդարութիւնը, քաղաքային կենաց այս երկրորդ քահանայագործութիւնը, կ'սպասէ պաղութեամբ որ յանցանքը դործուի . պաշտօն չունի առաջն առնու . յանցաւորին կ'ըսէ . Գու յանցանք դործեցիր, յանուն օրինաց՝ կ'սպասեմ քեզ ։ Քահանայն կ'ըսէ մարդուն . Մի մեղանչեր, բայց եթէ մեղք դործես, զղջա՛, և յանուն Աստուծոյ՝ թողութիւն կ'տամ քեզի ։

«Այս բանս ինձ գեղեցիկ և մեծ կ'երեւէր ։ Այո՛, սրչափ սիրեցի քահանայի այս կեանքը, որ հոգւոյ վէրքը դարմանելու կոչուած է և իր եղբարց ըսելու . Ընկերութիւնը քեզ կ'արտաքսէ, բայց Բարի հովիւ պատրաստ է մոլորեալ ոչխարն իր ուսին վերայ դնելու և երկնից բարձունքէն Հայրն անառակ որդւոյն կը կարկառէ իր ձեռքը ։

«Ո՛հ, ինչո՛ւ համար այս անուշութիւնները դառնութիւն դարձան ինձի համար . . . . .

« . . . . . Լուիզ կ'սկսի շատ հոգ ընել իմ նոր ընթացքս իրեն հետ ։ Այն եղբայրական չքնաղ ընտանութիւնը, որ մեր մէջ կար արդէն, ինձի համար սոսկալի փորձ մ'եղաւ ։ Վ'վախնամ որ այս փորձը տանելու համար կարողութիւնս չբաւէ ։ Լուիզի ձեռաց դպումն երջանկութեամբ և երկիւղով զիս կը սարսուէ, և առաւօտեան ու երեկոյեան մեր անմեղութեամբ առած տուած համբոյրները՝ ասկից քանի մ'օր առաջ, այս համբոյրները բոլորովին խելքս պիտի թուցընէին եթէ երկու ձեռք իմ խեղճ սիրտս չըռնէի որպէս զի չկարենայ զիս մասնել ։

«Տասն հինգ օրէ 'ի վեր՝ ամէն բարոյական տաղնապներէ ան-

ցայ զոր մարդու մը սիրտն ու գլուխը կարող կ'լինին տանիլ ։ Ո՛ մարդկային հոգւոյ խորին թշուառութիւն ։ Ի՛նչ մեղսական խորհոհոհներ չլուացայ . ի՛նչ ծայրայեղ որոշումներ ընելու կ'պատրաստուէի ։ Երբեմն կ'ուզէի երեսի վրայ թողուլ Առիզը, բոլորովին աշխարհէ քաշուիլ, վանք մը դնել իմ և մեղաց մէջ և իմ սիրովս անդ մեռնիլ . երբեմն՝ ընդ հակառակն՝ կ'ըսէի խրոմի թէ անխոհեմ ուխտեր չէին կարող Աստուծոյ առջև զիս կապել, և կ'փափաքէի իմ պաշտեալ Առիզս՝ հեռու, շատ հեռու տանիլ . և որովհետեւ բոլորովին ստոյգ եմ՝ որ նա իմ քոյրս չէ, զանի Աստուծոյ առջև՝ կին ընել ։ Քսան անդամ սկսայ և պատուեցի նամակներ որոց մէջ կ'ըսէի . Լուիզ, դու իմ քոյրս չես, իրաւունք ունիմ քեզ սիրելու, և կ'սիրեմ քեզ այնպէս որ երբէք կին մը սիրուած չէ ։ Դարձեալ սկսայ և պատուեցի քսան նամակներ՝ որոց մէջ կ'ըսէի անոր թէ պէտք էր իրարմէ բաժնուիլ, թէ աննահանջելի հարկ մը կ'պահանջէր այս զոհողութիւնը ։

«Եւ որ զարմանալի է, այս իրարու ներհակ մղումները՝ երբ զիս կ'պաշարէին, բոլորովին բանաւոր կ'երեւէին ինձ ։ Թողուլ ընդ միշտ Առիզը, անպաշտպան ձգել զանի և անսէր, յուսահատութեան յանձնել, այս՝ այս էր այն անաչառ պարտաւորութիւնն որու յանձնառու լինիլ հարկ էր ։ Եւ ապա՝ իմ վրդովեալ միտքս՝ առանց որ և է անցումի՝ մէկ ցնորքէ ուրիշ ցնորք կ'անցնէր, և յանկարծ ուրիշ տեսակ մտածութիւններով կ'համակէր ։ Այն ատեն՝ հեռանալ Քրանտայէն, Առիզն իմ կինս ընել, սիրով ապրիլ, իմ ուխտս ոտնահար ընել, խորտակել սեղանն որու վրայ սուրբ պատարագը մատուցի, այս ամենն ինձ իրաւացի, արամբանական կ'երեւէր, չէի կրնար երեւակայել թէ ուրիշ ընթացք մը բռնել հնարաւոր էր ։

«Ուրիշ մտածութիւններ, որ թերեւս աւելի ամօթալի էին, իմ մտացս մէջ կ'ծնէին ։ Անդամ մը իմ սենեկէս դուրս ելայ . . . բայց Առիզի սենեկին սեմն որ հասայ, երկիրը պաղի և զայն իմ արտասուօք թըջեցի . յուսահատութեան արտասուք, խղճի խայթի արտասուք էին անոր համար որ այս նուիրական սեմնս

անյնեւ լով պղծել ուղեցի, կամ վրդովել ուղեցի այն սուրբ ան-  
մեղութիւնն որ Աստուծոյ և եղբօր մը պահպանութեան ներքե՛  
հանգիստ մնալ կ'կարծէր: Այս արտառքն իմ սիրտս մաքրեցին,  
կենսատու ճղնաթամ մ'եղաւ ինձ, և երբոր սենեակս մտայ իմ  
անբունաբարելի սրբակեցութեան երգումս նորոգեցի: Աերջապէս  
կ'հասկընայի որ այս ամենապաշտելի օրիորդն իմ վշտաց և պայ-  
քարներուն անմասն պարտ էր մնալ: Պէտք է որ միայնակ տա-  
ռապիմ: Այս հրեշտակին հողոյն մէջ վրդով և յուսահատու-  
թիւն ինչպէս ձգեմ, Աստուած պահպանէ զիս այսպիսի սոսկալի  
մեղքէ մը:

«Էէք Ղուիզ, այսպիսի յայտնութեան մ'արդիւնքն ինչ պիտի  
լինէր անոր վրայ: Կարելի է զիս նուազ սիրէր: Իմ սրտիս մէջ  
նշմարած նոր զգացումն անշուշտ իրեն սոսկում պիտի պատճա-  
ռէր: Իր սէրն ուրիշ մարդու մը նուիրեր էր երբեմն, ո՛ր գի-  
տէ, կարելի է մինչ ցարդ անոր նուիրած էր: Ո՛ր Ղուիզ, իմ  
Ղուիզ, ուրեմն երբեք չպիտի իմանաս թէ ինչ անդին դանձ մը  
եղար ինձի համար, և դու միշտ իբրև եղբայրդ միայն պիտի կա-  
րենաս զիս սիրել: Լաւ ուրեմն, թող այդպէս լինի: Այս հանդար-  
տիկ ու անոյշ սէրը, միթէ զիս այսուհետև երջանիկ չ'պիտի կա-  
րենայ ընել: Ինչո՞ւ համար չմոռնամ այս դժնդակ դաղանիքն և  
ինքնովին չըսեմ. Նա քոյրս է միայն . . . . Ո՛հ, իմ սիրտս նո-  
րէն կ'բեկանի, Աստուած իմ, Աստուած իմ, ազատէ զիս . . .

. . . . .  
. . . . .  
. . . . .

«Հողոյս խաղաղութիւնը դտնելու համար՝ անդուլ կ'աշխատիմ:  
Փոխանակ խոյս տալու այն անձին ներկայութենէ որ ինձի հա-  
մար միշտ քոյր մը պիտի լինի, աղաչեցի զինքն որ իմ խուզար-  
կութեանցս օգնէ կարևոր գործի մը համար, որ է քրիստոնէու-  
թեան փիլիսոփայութիւնը: Կ'ուզեմ որ իմ քոյրս անդ լինի, միշտ  
անդ, իմ քովս, ինչպէս որ էինք իրարու հետ՝ ի Բարիզ: Իր  
իմացականութիւնն իմինիս մեծապէս պիտի օգնէ, և ասկէ զատ՝  
այս իրեն յանձնած աշխատութեան համար մեծ ընդունակութիւն

մ'ունի նէ: Յայտնեցի իրեն թէ քանի մ'ատենէ 'ի վեր իմ գէ-  
ղութիւնս ու մենաւորութեան փափաքս ուրիշ պատճառ չունին  
այլ նիւթական տառապանք, զոր իրմէ ծածկել կ'ուզէի: Աերս-  
տին սկանք մեր պտոյտները, մեր խօսակցութիւնները. կարծես  
թէ մեր յարաբերութեանց մէջ բան մը չկայ փոխուած: Բայց  
ինձի համար ահուելի և սպառնալից ճիւղ մը կայ: Կ'տեսնեմ  
միշտ այն ճիւղն իմ և քրոջս մէջ, և կարծես թէ Ղուիզ ա-  
նոր նախազգացումն ունի: Ո՛հ, մեր սուրբ բարեկամութեան խա-  
ղաղութիւնն ու երջանկութիւնը, ինչ եղար . . . . .  
. . . . .  
. . . . .  
. . . . .

«Երէկ վատօրէն և անգթութեամբ եսասէր գտնուեցայ: Ան-  
ցելոյն նախանձու զգացումէ մը զրդուեալ՝ Աերտլօնի վրայ խօսք  
բացի: Մինչ ցայն կէտ՝ այս անունն արտաբերելու զգուշացեր  
էի, և անտարակոյս իմ քոյրս նոյն ընթացքը կ'բռնէր: Ղուիզ  
կարմրեցաւ, ապա գոյնը նետեց: Գե՛ն ևս նէ կ'սիրէ զանի. և  
ինչո՞ւ չպիտի սիրէր: Միթէ կարելի է սէրը կորզել սրտէ առանց  
անոր մէջ հետք մը, սպի մը թողլու որու արիւնը միշտ պատ-  
րաստ է հոսելու:

«Գուրս ելայ որ երթամ հիւանդ մը տեսնեմ: Երբոր երի-  
ցատունը դարձայ Ղուիզին աչերը կարմրցած գտայ: Իմ բացա-  
կայութեանս ատեն լացեր էր նէ: Ինչ գժբաղդ եմ որ իր վշտա-  
լի յիշատակները զրդուեցի: Ինչ տանջանք է մեր սիրած միակ  
անձը վշտացընել, և անորմէ ներում չկարենալ խնդրել: Աւա՛ղ,  
Ղուիզ և իմ մէջ կարելի չէր այսուհետև սրտակցութիւնը: Եղ-  
բայր մը կրնար այս սրտին վէրքը քննել սուանց վիրաւորելու,  
բայց ես չեմ իր եղբայրը: '':':»:

ԼԻՄՈՒՅԻ ԿՐՕՆԱԳՌԻՄԱՐ ԺՈՂՈՎԸ

1862 ապրիլի վերջին օրերն էր : Կասքօնյի կրօնական ժողովն 'ի Լիմու պիտի դումարուէր : Ժուլիօ՝ իբրև Տ . . . ի արքեպիսկոպոսին հպատակ՝ այս ժողովին պատասխանատու էր : Երկայն ու բուն նամակ մը դրուեցաւ Ասիոյ երկրորդական մէկ չարահասարակ մէջ, որու կ'նախագահէր այս լրագրին հին խմբագիրը, և այս գիրն \* \* \* արքեպիսկոպոսին ուղղեցին, քաջ զիտնալով որ եռանդուն անդրալեռնական մ'էր և ժուլիօյի անձնական թշնամին : Այս անգամ գրեթէ ստոյգ էր որ Տ . . . ի արքեպիսկոպոսին զյուշաւոր ընթացքը ներգործութիւն չպիտի ունենար և հանդիսաւոր դատապարտութիւն մը վերջապէս պիտի կարկէր այն թշուառ քահանային բերանն որ հռոմէական սուրբ վարդապետութեանց դէմ դրելու անգուսայ եռանդ մը կ'ցուցնէր :

Ժողովը բացուեցաւ 1862 մայիսի 5ին ընդհանուր թափորով մ'որ մայր եկեղեցիէն ելնելով քաղքին գլխաւոր փողոցներէն դարձաւ : Խաչէն ու գրոշակէն ետք՝ կ'դային դպրոցներու եղբարք, մեծ կղերանոցի ժառանգաւորք, քարողիչ քահանայք, գաւառին այլ և այլ միաբանութեանց կրօնաւորները, քաղքին ժողովրդապետները, մայր եկեղեցեաց կանոնիկոսները, քամիէի, Գարբասօնի աստուածաբաններն և այլն և այլն, Տ . . . ի արքեպիսկոպոսարանին օգնական եպիսկոպոսներն որ դաւազաններ և խոյրեր, ոսկեթել նափորտներ կ'կրէին, վերջապէս ժողովին նախագահ եպիսկոպոսը :

Տ . . . ի արքեպիսկոպոսը ճառ մ'ըսաւ Լիմույի և փոքր շրջակայ քաղաքաց մէջ գտնուող ամենէն աղնուական ունկնդիրներու առջև : Տեղական իշխանութեանց համար յատուկ տեղեր, բարձր տախտակամած մ'որու վրայ այս հարաւային երկրին բոլոր գե-

ղեցիկ սեռն իրենց մետաքսէ և ահագին բնակներով ուռած շրջագրեստները կ'պարզէին, այս գումարման կէս աշխարհիկ կրօնի մը դրոշմը կ'ընծայէին որ սասնեխններող դարու կաթոլիկութեան յատուկ յատկանիչն է : Օտի քաղաքապետը կրնար լինիլ բողոքական մը կամ հրէայ մը, զօրաբաժնին հրամանատար զօրապետը կրնար ազատ խորհող մը լինիլ, գատարանի նախագահը Բրուտօնի կամ Ռընանի մէկ աշակերտը, Անհէրլէնի մէկ եղբայրը, այս պատուաւոր պաշտօնատարները՝ իբրև բարձր պաշտօնաւորներ իրենց յատուկ տեղերն ունէին այնպիսի ժողովի մը մէջ ուր եթէ մէկը խոստովանէր թէ Անարատ Յղութեան չէր հաւատար անտարակոյս հերետիկոս պիտի հրատարակուէր :

Ո՛յք էին ուրեմն այս բազմաթիւ ժողովին բուն կաթոլիկները : Անտարակոյս կղերն էր, եկեղեցւոյ սպասաւորները, լուսարարներ, բարասպաններ, ժամկոչներ, տիրացուներ, երաժիշտներ էին կարծեմ :

- Գործարանի ժողովն էր :
- Քանի մը կանայք էին :
- Քանի մը ծերունիներ էին :

Բոլոր միւս ունկնդիրներն աշխարհային մարդիկ էին, հետաքրքիր մարդիկ, անտարբեր մարդիկ, սկեսպտիկեան մարդիկ, թերահաւատ մարդիկ, բայց բարեկիրթ մարդիկ՝ որ պատշաճութեանց կատարեալ զգացումով հաւատացելոց արտաքին թնջկատակութեան կ'հպատակէին :

Այս ժողովին մէջ նախագահին լեարդաւոր ճարտասանութիւնն երկայն ճառի մը մէջ երևան եկաւ, որու բնաբանն էր երկրիս վերաշինութիւնը Լիմույի կրօնագումար ժողովին ձեռօք : Ոչ ինչ չմոռցաւ նա, ոչ անմահ Պիոս Թ. և իր հրաշալի քահանայապետութիւնը, ոչ Անարատ Յղութեան վարդապետութեան հաստատութիւնը, ոչ քահանայապետին ցաւերն որ այնքան անդթութեամբ փորձուեր էին, ոչ գժոխքէն ժայթքած յեղափոխութեան դէմ բանադրանքը, ոչ սպալութեան ապագայ յաղթանակները Ս. Վուսին զօրութեան շնորհիւ, որ ինք միայն, այս աշխարհիս մէջ բոլոր հերետիկոսները սպաննեց :

Հետեւալ օրը՝ մասնաւոր նստի մը մէջ՝ ժողովին տեսնելիք խընդիրներն առաջ բերին : Պ. Տաճիչը պատկառելի կանոնիկոսաց երդում առնել տուաւ : որ ժողովին աստուածաբաններն ու կանոնադէտներն էին , որպէս զի ծածուկ պահեն ինչ որ եպիսկոպոսներն ըսեն և դուրս չհանեն ինչ որ կրնար մնասել ժողովին վայել յարգանաց կամ անձանց պատուոյն :

Յետոյ նախագահներն անուանեցին , նոյնպէս փոխ-նախագահները , գրադիրները , այլ և այլ միաբանութեանց աստուածաբանները : Որոշեցին դումարման օրերն երբ պիտի կարգացուէին հրամանադիրները , և յատուկ միաբանական ակումբներն ուր վիճարանութիւնները տեղի պիտի ունենային :

Երբ այս նախապատրաստութիւններն աւարտեցան , ժողովին աշխատութիւնները սկսան և մեծ գործունէութեամբ յառաջ տարին : Ամսոյն տասին՝ երեկոյնան ժամը չորսին՝ մետրապոլիտ արքեպիսկոպոսին նախագահութեամբը՝ վեցերորդ միաբանութեան գումարումը տեղի ունեցաւ , ուր ներկայ էին եպիսկոպոսներ , խորհրդականներ և աստուածաբաններ : Նախագահ արքեպիսկոպոսը adsumus աղօթքն ըսելէն ետեւ՝ նախորդ գումարման ատենադրութիւնը կարգացուցաւ ժողովին անդամներուն միջոցաւ : Այնուհետեւ երկու վճռադիր կարգացուելով հաւանութիւն փոստայան , մին զէշ լրացիրները կ'արգիլէր , և յատկապէս Շքեւը , Ագլբն և Տերը , որ միօրինակ ամբաստանուած էին և խոստովաներ էին թէ Պապին աշխարհական իշխանութեան հարկը չեն տեսներ , թէ իտալական յեղափոխութեան նպաստաւոր դտնուեր էին , վարդապետութիւններ զոր արդէն պապերն և Գրանդի կրօնական ընդհանուր ժողովը դատապարտեր էին . միւս լրացիրը կ'արգիլէր շրջուն պարերը , ինչպէս բօլան , ճալորբոն և այլն , իբրև մեղսական մտածութիւններ առաջ բերող միջոցներ :

Այս երկու վճռադիրը՝ մեծ խնամօք պատրաստուած էին Պեռնի Մօրիսի կրօնական ժողովին կողմէ . այս ժողովը կազմող իմաստուն ծերերը մտածեր էին որ այս տխուր ժամանակաց բոլոր ամբարշտութիւնը նոյն իսկ սատանային հնարիւք դտնուած այս դժբաղդ կաբաններուն արդիւնքն են :

Ապա \* \* \* ի գերապատուելի և վերապատուելի եպիսկոպոսը , Ֆիդէլ ժողովին նախագահը , մետրապոլիտ արքեպիսկոպոսն , որ համադումար ժողովին նախագահն էր , այսպէս խօսեցաւ .

«Գերապատուելի և վերապատուելի հարգ և ամենասիրելի եղբարք :

Եթմ կատարեալ հաւանութիւնս կ'տամ ձեր այն ինչ հրատարակած վճիռներուն համար այս դարու երկու մեծագոյն պատուհասները շնջելու համար , այսինքն , լրագիրներն ու կաքաւր : Արդի ընկերութիւնը մաշեցընող երկու խորունկ վիրաց վրայ ձեր ունեցած հմտութեան նոր փորձ մը տուիք , վէրքեր որ կարծեցեալ քաղաքակրթութեան վտանգը կ'հաստատեն : Բայց՝ կ'համարձակիմ ըսելու , մեծագոյն չարիք մը կայ , չարիք մ'որ մեզի մօտ է , չարիք մը՝ զոր եթէ ոչ մեղադրելի գէթ դժբաղդ ներողամտութեամբ մեր հարաւային երկիրներու մէջ կ'տիրէ , որոց բնակիչներն իրենց ուղղափառ հաւատքին մէջ անյողգողք են , այս չարիքն է հերետիկոսութիւնը (խօրին տպաւորութիւն) :

«Նոր Անո տը Պրէս մը՝ իբրև գիշատիչ գայլ կ'աւերէ հարան և ժանտ վարդապետութիւններով հողիներն ՚ի կորուստ տանելու կ'ձգնի (շատ ձայներ . Բանադրանք հերետիկոսին դէմ) :

«Հաւատոյ այս կործանիչը , Եկեղեցւոյ և սուրբ աթոռին այս թշնամին , որ անոր դէմ շատ տարիներէ ՚ի վեր հայհոյանք ժայթքելէ չդադրիր՝ Տ . . . ի վիճակին մէկ քահանայն է , ժուլիօ Բլավիէր գարշելի անուամբ : Անցեալ և ապագայ հերետիկոսաց պէս՝ լուսեղէն հրեշտակ մը գարձեր է : Իր կերպերը յետին ծայր համետ կ'երևին , իր լեզուն շատ անոյշ , Եկեղեցւոյ ճշմարիտ շահուց առ երեսս բողոքովին անձուէր : Առաքինութեան , վեհանձնութեան , բարեպաշտութեան , անձուիրութեան այս աղւոր ցոյցերով և փայլուն խօսքերով առ սուրբ աթոռն և առ անմահն Պիոս Թ . որու համար յատուկ պատկառանք կ'կեղծէ , ժուլիօ ուղիղ հողիները կ'խաբէ , միամիտները կ'որսայ , Եկեղեցւոյ ճշմարիտ պիտոյից անտեղեակ մարդիկը կ'մոլորէ , այս կորստեան և կործանման դարերու մէջ (շատ ձայներ . Անէ՛ժք , դարձեալ անէ՛ժք , թող համադումար ժողովը զանի հարկանէ) :

«Եր գրուածներովը մանաւանդ, որ նուրբ թոյնով լի են, մոլորութիւնը կ'սփռէ ամենուրեք: Արդէն առաջին անգամ՝ վատանուն թղթանենդի մը դերը խաղալով՝ հոգեվար ծերունոյ մը խօսքերն այլակերպեց՝ նորոգիչի մը, Եկեղեցւոյ վերանորոգութեանց անխոհեմ խորհրդատուի մը խօսքը դարձնելու, խրոխտ քննադատութիւն մ'ընելու պատկառելի քահանայապետին այնքան սքանչելի և իմաստուն ընթացքին վրայ, քահանայապետ օրու փառքը պիտի հռչակեն դարերը: Գիտենք որ այսպիսի ակնածելի անուան մը զզուելի սրբապղծութիւնը դժբաղդ յաջողութիւն մ'ունեցաւ 'ի Տ . . . թէ ամբարիշտ մարդիկ՝ հաւատոյ թշնամի ընկերութեանց անգամներ՝ այս անարժան խաբէութեան հեղինակին հասարակային գովեստներ տուին, և անոր երեւելի մատենագրի մը համբաւը տուին (ձայներ. Թժժ ժողովն անոր դէմ անէծք կարգայ):»

«Այս բաւական չէ. ճշմարտութեան բեմը պղծեց նոյն մոլորութիւնները քարոզելով 'ի մեծ գայթակղութիւն բարեպաշտ աւկանջներու, և Եկեղեցւոյ թշնամեաց ծափահարութիւններն այս աղէտալի ճամբուն մէջ քաջալեր եղան այս անարժան քահանային:»

«Պապին վիճակաց մէջ իր ընթացքն այնքան դատապարտելի եղած է՝ որ յանդդնեցաւ՝ կրօնական սուրբ կուսարաններու թշնամեաց օրինակին հետեւելով՝ մինչև անգամ՝ դասին վանդակները խորտակելու, ոճիր մ'որու դէմ զինեցաւ սուրբ Հաւատաքննութիւնը, բայց յանցաւորին նկատմամբ այնպիսի ներողամտութեամբ վարուելով, որ դիրին միջոց գտաւ ծուլիօ խոյս տալու պատիժէ զոր հլոթեամբ պարտ էր ընդունիլ եթէ սրտին մէջ հաւատոյ նշոյլ մ'ունենար: Եւ այնուհետև այն օրական պարսաւագրերուն՝ զոր լրագիր կ'անուանեն, դրագիրն եղաւ, աշխարհի առջև շարափառ բեմ մը կանդնեց ուսկից քարոզեց այն ամեն մոլորութիւնները զոր Գրիգոր Ժ. և Պիոս Թ. սուրբ քահանայապետաց կոնդակներով դատապարտուած են:»

«Աւերջապէս իր մեղաց վերջին կիւքը դրաւ՝ հրատարակելով չէ թէ թուրքիկ թերթեր իր ասպականիչ լրագրին պէս՝ այլ զիրք

մ'որու մէջ ստապատիր հմտութիւն մը կ'զիզէ հաստատելու համար թէ Քրիստոս, առաքեալները, առաջին հարք, չեն ուզած որ կաթողիկ քահանայապետութիւնն երկրային թագաւորութեան մը միջոցաւ պաշտպանուի, քահանայապետաց սահմանները մոռնալով՝ որու մէջ հրատարակուած է թէ Պապն երկու սուր կը կրէ, թէ ամէն իշխանութիւն Քրիստոսի տրուած է, հետևապէս Քրիստոսի փոխանորդին՝ երկինքն ու երկրի վրայ (չառ ձայներ. Անէժք հերետիկոսին դէմ):»

«Այո՛, գերապայծառ և գերապատուելի հարք և ամենասիրելի եղբարք, անիծեալ լինի այն քահանայն որ իր քահանայական պաշտօնը պղծեց՝ զուարտութիւն մը հնարելով Եկեղեցւոյ իշխան արքեպիսկոպոսի մը դէմ:»

«Անիծեալ լինի այն քահանայն որ ճշմարտութեան բեմէն դայթակղեցուցիչ վարդապետութիւններ քարոզեց:»

«Անիծեալ լինի այն քահանայն որ բռնաբարեց սուրբ կուսարաններն որ հանրական ժողովներու և պապերու դրած սահմանօք պահպանուած են:»

«Թող անիծեալ լինի այն քահանայն որ արդի լրագրութեան չարափառ վարդապետութիւններով հողիները կ'ապականէ:»

«Անիծեալ լինի Գաթանի և Աբիրոնի հետ, Տապանակի պղծիչ Ովսէի, մատնիչ Յուդայի հետ, ամէն հերետիկոսաց հետ որոց դէմ Եկեղեցին բանադրանք արձակած է:»

«Անիծեալ լինի այն որ Հուովի քահանայապետաց աշխարհական իշխանութիւնը կ'հարուածէ, քանի որ առանց այս իշխանութեան՝ հողեորականն ազատ չմնար:»

«Անիծեալ լինի այն որ Պապին հրահանգ կ'տայ, կաթողիկ եպիսկոպոսաց դաս, և որ մեզմէ լաւ կարծէ զիտնալ Եկեղեցւոյ պատշաճ եղածը:»

«Անիծեալ լինի այն գողողը, հերետիկոսը, սրբապղծիչը, նորոգիչը, անարգ գրչակը, դայթակղեցուցիչ զիրքեր յօրինողը:»

«Անիծեալ լինի այն որ ծուլիօյի վարդապետութեանց կ'հաւանի, այն որ այժմ Տ . . . ի վիճակին Մէլ զիւղի երէցն է:»

Եւ սրահին միջավայրն յառաջանալով և Աւետարան մ'առնելով.

«Ընտրեցէք Քրիստոսը կամ Քրիստոսի պղծիչ Թուլիօն : Եթ՝ կ'բաժնուիմ Թուլիօյէն , անոր անէծք կ'կարգամ , կ'բանադրեմ և Քրիստոսի կ'փարիմ » (բոլոր սրահին մէջ ձայներ կրկնեցին . Մենք Քրիստոսի կ'կապուինք , կ'անիծենք Թուլիօն : Դատապարտութիւն , նզովք) :

Այս ճառն որու ձեերը միջին դարու հաւատաքննչաց վայրենի հռետորութենէ փոխ առնուած էին , մեծ ներդրածութիւն մ'աւուաջ բերեր էր և այս մարդոց խաղաղ դումարումը՝ որ սովորաբար երկչուս են , դիւահարներու խմբակ մը դարձուցեր էր :

Տ . . . ի եպիսկոպոսը քիչ մը ջուր թափեց այս կրակին վրայ : Չէր սիրեր նա \* \* \* եպիսկոպոսը՝ որ Քրանսայի ամենէն կրակոտ եպիսկոպոսը լինելու համբաւն ունէր : Ասկից զատ՝ ճառին մէջ խօսք մը կար որ ուղղակի արքեպիսկոպոսին կ'դպէր : Այս բաւական էր մետրապոլիտը սաստիկ վիրաւորելու :

Անմիջապէս խօսիլ սկսաւ .

«Գերապայծառ և դերապատուելի հարք և սիրելի եղբարք ,

Եթէ հարկ լինէր միայն Թուլիօ արեղային անխոհեմ և մինչև իսկ դատապարտելի վարդապետութեանց դէմ անէծք կարդալ ձեղն հետ՝ ես վերջինը չախտի մնայի անոր դէմ ելնելու . և որովհետև ես իմ վիճակիս մէկ քահանան է , այդ հոգն իմ օգնականներէս միոյն չէի ձգեր : Բայց այս տեղ աւելի բարձր խնդիր մը կայ : Սուրբ աթոռին և քահանայապետաց ձեռք հաստատուած սրբակրօն ժողովներու համար մեր ունեցած յարգական զգայումներով՝ բոլոր քրիստոնեայ աշխարհիս մէջ՝ չարափառ մոլորութեանց վրայ հսկելու՝ միթէ Եկեղեցւոյ մէջ մեզի յատկացուցած չէ՞ք լինիր այն պաշտօնն որ արդի նուիրապետութիւնն Էնթէթի սրբակրօն ժողովին կ'յանձնէ :

«Այնպէս երևելի յանդիմութիւնը պիտի ունենանք որպէս թէ Հռոմի դաս մը տալ ուզենք , և Թուլիօ արեղային դէմ դատապարտութիւն մը ոտնադրութիւն մը պիտի լինի այն իրաւանց վերայ զոր երբեմն եպիսկոպոսական իշխանութիւնը գործածեց , զիտեմ , բայց այժմ գրեթէ անոնցմէ հրաժարեցաւ որպէս զի Եկեղեցւոյ բոլոր ոյժը քահանայապետաց սուրբ և սրատկառելի ձեռքը

յանձնէ : Արչափ որ իրաւացի է ձեր սրտմտութիւնն այն դրուածոց դէմ որոց չարանենպութիւնը Էնթէթի ժողովին նախապահը վերհանեց , կարծեմ թէ առ Հռոմ աւելի անհաճական ընթացք մը բռնած կ'լինինք եթէ Էնթէթի ժողովոյն թողունք որ այս մոլորութիւնները բոլոր կաթոլիկ աշխարհին առջև պարզէ . այն ատեն դատապարտութիւնն աւելի մեծ բռնութիւն պիտի հանէ :

«Միւս կողմէ՝ մեր վարմունքն աւելի խոհական պիտի համարուի : Հռոմ նոյն ինք անուշութիւնն է . երբ կ'դատապարտէ՝ կամաւոր կամ անկամայ մոլորած յանցաւորին կատարեալ դիւրութիւն կ'տայ ճշմարտութեան ճամբան վերադառնալու համար : Բաւական կ'սեպէ որ իր վճիռներուն համակերպութիւն մը ցոյց տայ յանցաւորը : Արեմն չուզեր որ յամառութեան մղէ այն զլուխներն որ ստէպ անդիտութեամբ մեղանշած կ'լինին :

«Թուլիօ արեղան կրնայ դատուիլ այն երազատես և անըջատես մարդոց կարգն որ՝ բարիք փնտուելով՝ վտանգալի չափազանցութեանց մէջ կ'ընկնին : Բայց այս քահանայն՝ որ համբոյր ու անարատ վարք ու բարք ունի , երբէք ամենաթեթև կամակորութիւն չցցուց : Իմ նախորդս՝ նշանաւոր կարտինալին շինձու կրօնական կոալիէ հրատարակութեան ժամանակ՝ Թուլիօ ինձ լիովին հպատակելու յայտարարութիւն ըրաւ որով այս գրուածքին դայթակղութիւնը դադրեցուց , յայտարարութիւն մը զոր կրնայի ձեր հանրածանօթ քրիստոնէական արդարախոհութեան և ներողամտութեան ենթարկել , եթէ կասկած ունենայի որ այսչափ ազմուկ պիտի հանէին այնպիսի գործի մը համար , որ՝ ըստ իմ կարծեաց՝ չէր արժեր որ հանէին (քանի մը ձայներ . Շատ աղէկ , շատ աղէկ) :

«Գերապայծառ և դերապատուելի հարք և սիրելի եղբարք , կը նայիմ որ իմ խօսքերս բաւական կ'լուսաբանեն խնդիրը , ուստի այս նիւթին վրայ աւելի երկար խօսելու պէտք չեմ զգար : Ասկայն՝ կայ նկատողութիւն մ'որ ձեր բոլորովին ուշադրութիւնը պիտի դրաւէ : Այս է թէ մեր դարուն մէջ ամէն սանձ , ամէն բարեկարգութիւն խորսակելու տրամադրութիւն ունեցող մարդոց մէջ պարտաւոր ենք զգոյշ լինիլ և չզրդուել խել մը հրավառ

բնաւորութիւններ Եկեղեցւոյ դէմ ասպատամբութեան դրօշակը բա- նալու : Պէտք չէ որ սպասմութեան դասերն անտես առնենք : Մար- դիկ՝ որ սուրբ դատին ախոյեան կանգներ էին՝ ստէպ իրենց դէմ ելած վճիռներէն սրտմտելով՝ Եկեղեցւոյ մէջ մեծ հերձուած յա- րուցանելու տխուր տեսարանը տուին : Եւ այս մարդիկն Եկեղե- ցւոյ ծոցը հանդարտօրէն պիտի մեռնէին անոնց հետ՝ եթէ սկիզ- քէն՝ այդչափ խստութեամբ անոնց հետ չվարուէին :

«Աստի կ'իսնդրեմ որ ժուլիս աքեղային դէմ արձակուած բա- նադրանաց վճիռը չդործադրուի , այլ միայն համազումար ժո- դովը թող յայտարարէ թէ Էնֆէ+սի ժողովը գործը նկատողու- թեան առնու և վճիռ տայ այն մոլորութեանց վրայ որով այս դրա- դէտը կ'ամբաստանուի» :

Այս ճառին հնարադիտութիւնը յայտ յանդիման կ'երեւի . արք- եպիսկոպոսը ժուլիսն կ'ազատէր ժողովին շանթերէն՝ միանգամայն Էնֆէ+սի ատեանը ղրկելով զանի : \* \* \* Ի խրոխտ եպիսկոպոսին չափը կ'ցուցնէր և ամենուն օգտակար չափաւորութեան լաւ դաս մը կ'տար , այն օրը , այնպիսի երկրի մը մէջ՝ ուր ահուելի դիւ- րութեամբ՝ կարող են դառնալ մարդիկ կրօնական հալածանաց բարբարոսական դրութեան :

Ասկից զատ՝ S . . . Ի արքեպիսկոպոսը սոսկալի Լուպերին տուած խօսքը կ'բռնէր , Լուպեր՝ որու յիշատակը մտքէն չէր հաներ : Իր վրդովալի գիշերները՝ արքեպիսկոպոսը ճիւղաղներ կ'տեսնէր , և միշտ Լուպեր . քահանան էր որ իրեն բազէնով մը կ'երեւէր՝ ձեռքն ունենալով հրայանակ մը և անոր կ'ըսէր . Վսպանեմքեզ եթէ ժուլիօյի դպչիս :

S . . . Ի արքեպիսկոպոսին եզրակացութիւնները մեծամասնու- թեամբ ընդունուեցան և ատենադրութեան մէջ անցան : Որովհե- տե այս մասնագումարին համար , որ համազումարին ամենէն փո- թորկալիցն եղաւ , ուրիշ խնդիր մը չկար . նախագահը ժողովը գոցեց սովորական աղօթքն ըսելէն ետե :

Ը

ՎԻՇՏ

Ապրիլ

«Ո՛ր յուզմունք սրտիս և զգայարանացս՝ դադրեցար իրաւ , բայց ինչ դառն դնով : Երբ վտանգի մը դէմ անդուլ կ'մաքառէի , պայքար մ'որ կրնար դադրիլ եթէ քիչ մը հանդարտէի և խոր- հէի , չէի տեսներ որ իմ ոտից ներքև կերեզման մը կ'բացուէր և այս գերեզմանն իմ երջանկութիւնս , իմ կեանքս , իմ սէրս , իմ Լուիզս , իմ քոյրս պիտի յափշտակէր : Այստեղ ինչ նէ այժմ ինձի համար քոյր մ'է , և քոյր մը միայն : Ինչպէս կարելի ե- դաւ որ շրթանցս վրայ մրմունջը լսուի և մոլեգնութեան մ'են- թակայ դտնուիմ երբ համարձակեցայ Աստուծոյ դէմ զանգատիլ երկրիս վրայ ինձ երջանկութենէ մաս մը չհանելուն համար : Ինչ , Լուիզ անդ էր , իմ քովս՝ և ես երջանիկ չէի : Ո՛ր Աս- տուած իմ , ներէ ինձ և մի պատժեր զիս : Կարող ես այս խեղճ օրիորդին անկողնէն մահը հեռացնել . կարող ես Լուիզի ձեռքը բռնել ինչպէս որ բռնեցիր Յայիրէի աղջկան ձեռքն ու անոր ը- սեւ . Ոտք ելիւր : Բայց արժանի՞ եմ այսպիսի շնորհի մը : Միթէ չանիծեցի՞ այս ճակատագիրս որ այնքան դեղեցիկ էր քու շնոր- հիւդ : Աստուած իմ , ներէ տկար արարածիդ , և ինչպէս Բրիս- տոս ՚ի Գեթսեմանի , պիտի ըսեմ . Հայր իմ , եթէ հնար է , հեռացուր յինէ այս բաժակը :

«Այն չոր հաղը , անողորբելի հիւանդութեան մը սոսկալի նշա- նը , որ առաջին օրերը Լուիզի կուրծքը չէր պատառեր , վերստին երեցաւ : Երեք շաբաթէ՛ ՚ի վեր միշտ երիցատունէն բացակայ դտնուելով՝ իմ բանդագուշանաց որս ընկած և ստուերի մը դէմ ողորելով՝ չէի տեսներ ահուելի իրականութիւնը : Բայց երէկ իմ քրոջ հետ աշխատելու ատենս այդ հաղը վրայ հասաւ , Լուիզ իր թաշկինակը բերանը տարաւ և երբ քաշեց արիւնով ծած-



Բժիշկը պարտաւոր էր ճշմարիտը յայտնել ինձ : Թէև ինձի հետ սոսկալի եղաւ , իմ քրոջ հետ անոյշ և միտթարիչ դատա :

«— Օրիորդ Քլավիէրի համար , ըսաւ նա , վտանդի գիտակցութիւնը կրնայ աղէտալի դառնալ : Միայն կուրծքը հիւանդ չէ , սիրտն ալ տկարութիւն մ'ունի , որ գիտութեան բոլոր հաշիւները կրնայ 'ի դերև հանել : Ծանր այլայլութենէ մը կարելի է որ իսկոյն մարի : Անշուշտ քոյրդ կազմուածքի անբուժելի թերութիւն մ'ունի , բայց բարոյապէս ալ շատ տառապանք կրած է : Կարծեմ թէ յաջողեցայ անոր կասկածները փարատելու , և եթէ ծիւրական ախտ չունենար՝ կրնայի հաստատել որ պիտի յաջողիմ : Բայց սրտի այս հիւանդութիւնը սոսկալի , խորհրդաւոր բան մ'ունի . հիւանդներուն այլանդակ սրատեսութիւն մը կ'ընծայէ որ դժուարին է խաբել և իրենց ջլային զգայնութիւնն այնպէս սուր է որ ամէն տպաւորութիւն վտանդ մ'է : Մարդ ես և քահանայ , պէտք է որ տառապանաց և մահուան առջև արիասիրտ լինիս : Քաջ մտածէ , անխոհեմութիւն մը , մանաւանդ քու կողմէդ՝ կըրնայ քոյրդ սպաննել » :

«Մտիկ կ'ընէի տրտում ու անշարժ . կ'զգայի որ արիւնս կ'սառէր երակներուս մէջ , բայց կ'հասկընայի որ իմ քաջութիւնս կրնար Լուիզին կեանքն երկարել : Բժշկին ձեռքը սեղմեցի իրեն հնազանդելու խոստանալով : Եւ ահա այս պատճառաւ ժպտեցայ և զուարթ դէմք մ'առի քրոջս սենեակը մտնելու : Ո՛հ , ինչպէս իր ակնարկը կ'ըրտեսէր իմ տպաւորութիւններս : Խաբեցի զինքը : Հանդարտ ու խնդումբեքս եղաւ : Իր երկիւղին վրայ կատակ ըրինք : 'Նէ ըսաւ որ առաւօտեան զիպուածէն ես ալ շատ վախցեր էի : Բայց բժիշկը զայն շատ աղէկ մեկներ էր : Իսկ ասորիւ ամսուն՝ մթնոլորտը միօրինակ չէ . առտուներն ու իրկունները խառնաւ են : Մայիսի դեղեցիկ ամիսը զիս պիտի բուժէ , այնպէս չէ՛ , Ժուլիօ :

«Ա՛րեւի թէ Լուիզ այսօր աւելի լաւ վիճակի մէջ է . սրտի բախումն աւելի հանգարտ ու կանոնաւոր է : Երբեմն հիւանդութեանց մէջ դադարման ժամեր կան : Թերևս Լուիզ որոշեալ պայմանաժամէն աւելի ապրի : Եւ ինչո՞ւ այսպէս չյուսամ :

«— Ո՛հ , ինչ աղւոր ծաղիկներ պիտի քաղենք միասին լեռ . վասն զի՛ առանց ինձի՛ չպիտի երթան պտըտելու , պարոն : Եւ ինչ գեղեցիկ խոտերու հաւաքում մը պիտի ընենք , որպէս զի այն խոտերուն տեղը դենք որ չորցան երբոր աշխարհը կ'ըջէիր՝ իբրև միջին դարու ճշմարիտ ասպետ մը , քրոջդ օղնութեան հասնելու համար , քոյրդ որ քիչ շատ խաբեբայ ասպետներէ յափշտակուեր էր , թէև այս ասպետներն իրենց հիմնադիր Խոնաստիոնին պէս՝ սուրբ Առսին ասպետներու տիտղոսը կ'առնուն : Ո՛հ , այո՛ , մայիս ամիսը զիս պիտի ազատէ :

«— Այո՛ , հրեշտակս , քեզ պիտի ազատէ » :

«Եւ ներքին ձայն մը կ'ըսէր ինձ . Մայիս ամսուն պիտի մեռնի նէ , և հաւաքելիք ծաղիկներդ , անոր գերեզմանին վրայ պիտի սփռես :

«Եւ մինչդեռ չարագոյժ ձայնը սրտիս մէջ կ'հնչէր՝ իբրև դամբանական հնչիւն մը , կ'շարունակէի ծիծաղիլ և քրոջս հետ կատակներ ընել :

«Ո՛ Աստուած իմ , եթէ մեղադրելի մտածմունքներ իմ հոգիս արատեցին , այս տանջանքն որ զայն կ'մաշէ միթէ անոնց քառում մը չէ՞ . . . . .

«Լուիզ այլ ևս չէ կարող սենեկէն գուրս ելնել : Հիւանդութիւնն օրէ օր կ'ծանրանայ : Սրտի թրթուռ մներն անդուլ են : Զատկական տօներու առթիւ ստիպուեցայ հեռու մնալ միշտ քրոջս քովէն : Ո՛ Բրիստոս , իմ հոգեվարութիւնս քու հոգեվարքի հետ միացուցի : Քեզ հետեցայ Գողգոթայի վրայ , և անդ թափեցի այն արտասուքը զոր Ս . Օգոստինոս սրտի արիւն կ'կոչէ : Մարդարէից տխուր ողբերը , այն քօղարկեալ նկարները , այն մարած մտմբը , Եկեղեցւոյ այս ամէն սուղը , երբէք այս ամէն արարողութեանց վնամ բանաստեղծութիւնն այնչափ լաւ չէի զգացած : Բայց յարութեան օրը՝ լաւազոյն կենաց համար մեր յոյսերը բորբոքելովը հանդերձ , ինձի համար առանց ուրախութեան անցաւ : Յաղթութեան երգը , «Լեւ-Էան իմ շրթանց վրայ էր , բայց իմ սրտիս մէջ՝ միշտ մահ և իր ստուերները կ'տիրէին . միշտ այս

չարագուշակ աղաղակը . Ասորոսանք իմ, Ասորոսանք իմ, քննող լուրեր  
դեմ, սխտոր է անշն իմ մինչև ցմահ . . . . .

«Լուիզ ուզեց Ջատիի սարտաւորութիւնները կատարել : Երբ  
որ ինձ խօսքը բացաւ, գիւրին էր ինձ գիտել որ նէ կ'ընենէր թէ  
իր խնդիրն ինչ տպաւորութիւն պիտի ընէ իմ վրայ : Այնպէս  
ցցուցի որ իր խնդիրը բոլորովին բնական էր :

«— Սակայն դու գիտես արդէն, ըսի անոր, որ զատկական  
սարտաւորութիւնները կրնան զանց ընել հիւանդները :

«— Ա՛չ, ո՛չ, ըսաւ նէ ինձ, պէտք չէ աւելի ևս սպասել : Երբ  
որ դուրս ելնելու կարողութիւնս ներէ, եկեղեցի պիտի երթամ  
Աստուծոյ շնորհակալ լինելու ինձ այս տեղ այցի դալուն . . . » :

«Հէ՛ք հրեշտակ, ինչ հաւատով կատարեց այս հաղորդութեան  
փառայեղ գործը . . . Աստուած իմ, ո՛րչափ տառապեցայ . . .

. . . . .  
. . . . .

I Մայիս

«Երբոր այս ամիսն աւարտի, քոյրս անդիի աշխարհ պիտի անց-  
նի : Բժիշկն ինձ ըսաւ այս բանս, և չսխալիր : Այս երեսուն մէկ  
օրէն Աստուած ո՛րչափ պիտի շնորհէ ինձ . . . . .

. . . . .  
. . . . .

«Այլ ևս չեմ հասկրնար այն տպաւորութիւնը զոր զգացի ի-  
մանալով որ Լուիզ իմ քոյրս չէր : Միայն սարտաւոր էի զար-  
մանալ, և՛ այս առաջին զգացումն անցնելէն ետե՛ կենացս մէջ  
բան մը փոխուած չգտնել : Յիմար էի : Ես ինքս չէի, և չեմ կա-  
րող այժմ բացատրել այս մտացս մոլորութիւնը : Ա՛հ, թէ որ  
Աստուած Լուիզը պահպանէր, ո՛րչափ երջանիկ պիտի լինիմ միշտ  
իր եղբայրը լինելով : Իր վճիտ ակնարկին առջև՝ մեղսական մտած-  
մունք մը չպիտի ծնէր հողուոյս մէջ : Ինչպէս որ այս աղէտալի  
զաղանիքը գտնելէս ետե՛ ամէն ինչ այնքան մութ երևցաւ կե-  
նացս մէջ, սցժմ ինձ լոյս և երջանկութիւն պիտի թուի : Լուիզի

հետ ապրիլ, ամէն օր զանի տեսնել, անոր հետ իմ խորհուրդս  
փոխանակել, մտաց և հողուոյ կրկնապատիկ կենօք անոր հետ հա-  
մակուիլ, միթէ կայ այս երանութենէ բարձրագոյն բան մը : Եւ  
սակայն այս երանութիւնը զոր իմ վատ հողիս, յիմարութեան  
ժամու մը մէջ, կ'մերժէր, այս երանութիւնն որ իրեն չէր բաւեր,  
և այժմ երկրիս ամէն խնդութիւններէն աւելի վեր կ'դասէ, այս  
երանութիւնն իղմէ պիտի յափշտակուի . . . Լուիզ պիտի մեռնի  
. . . . .  
. . . . .

«Կ'երևի թէ Լուիզ այսօր աւելի լաւ վիճակի մէջ է . սրտի  
բախումն աւելի հանդարտ ու կանոնաւոր է : Երբեմն հիւանդու-  
թեանց մէջ դադարման ժամեր կան : Թերևս Լուիզ որոշեալ պայ-  
մանաժամէն աւելի ապրի : Եւ ինչո՞ւ այսպէս չյուսամ :

«Բժշկին իմացուցի այս իմ յոյսերս :

«— Կ'ուզէն որ ճշմարիտն ըսեմ, պատասխանեց նա :

«— Այո՛, ըսի անոր :

«— Լաւ ուրեմն, խնդիրը շարթի վրայ չէ, այլ օրերու վը-  
րայ : Ճգնաժամէ մը կ'վախնամ . և եթէ պատահի, այն ատեն  
մահը ժամէ ժամ կրնայ հասնիլ » . . . . .

. . . . .

«Մինչ ցարդ կարծեր էի որ բժիշկն ու ես յաջողեր էինք  
խաբել Լուիզը՝ իր վտանգաւոր վիճակին վրայ : Նէ այնքան հան-  
դարտ կ'երևէր : Առանց ապագայ խորհուրդներ յղանալու՝ ինչ-  
պէս որ կ'յղանան սովորաբար ծիւրական ակտէ տառապող ան-  
ձինք, սակայն այնպէս կ'խօսէր որպէս թէ այս ապագան քանի մը  
օրերու վրայ չէր կայանար : Լա՛ւ, ես կ'սխալէի . Լուիզ պահ  
մը պատրանք չունեցաւ . . . : Այս առտու՝ զինքը լաւագոյն դաս  
քան թէ առաջին օրը, դիշերն աղէկ անցուցեր էր, քանի մը ժամ  
հանդարտ քուն քաշեր էր : Եւ գիտութեան վճիռներուն հակա-  
ռակ՝ կ'երևէր ինձ որ գիտութիւնը կ'սխալէր և թէ քոյրս կրնար  
ապրիլ : Լուիզ իմ մտածմունքս կարգաց գէմբիս վրայ :

«— Չիս լաւաղոյն վիճակի մէջ կ'կարծես, այնպէս չէ՞, սի-  
րելիդ իմ Ժուլիօ :

«— Այ՛ն, Լուիզս, աւելի լաւ, շատ լաւ կ'զտնեմ քեզ :

«— Տառապանացս դու՛ւմ'է, շատ է, բայց դարձեալ լոկ դու՛ւմ'է : Քաջ իմացիր, ժու՛ւլիօ, և յուսոյ դէմ՝ յոյս մի ունենար : Ահա, սրտիս ցաւը նորէն կ'զայ :

«— Լուիզ, իմ Լուիզս, ի՛նչ կ'ըսես :

«— Այս կ'ըսեմ, վրայ բերաւ Լուիզ սուղ ձայնով մը և իր դէմքին նիհարութենէ մեծցած աչերն իմ վրայ սևեռելով, կ'ըսեմ ժու՛ւլիօ, որ պէտք չէ զերար խարելով անցընենք մեզի մնացած մէկ քանի օրերը : Ես կ'ըսեմ քեզի, որ դու իբրև քահանայ, պարտաւոր ես պատրաստել զիս մահու : Այսչափ կեղծիք, բաւական, բաւական է մեր մէջ, նոր տառապանք մ'է այդ մեզի համար : Ա՛ իմ սիրական ժու՛ւլիօ, վշտաղին կ'ընողում կեանքս, լոյսը, ծաղիկները, մեր հովիտները, մեր լեռները, բոլոր այս գեղածիժազ բնութիւնն որոց զեղեցկութիւնները քու միջոցաւ ճանչցայ, բայց քանի թեթև են այս վիշտերս քեզնէ հեռանալու վշտացս հետ բազդատելով : Ա՞ դիտէ դեռ ի՛նչ փորձանք պահուած են քեզի համար : Քու զիրքդ՝ զոր այնքան հիացմամբ կարգացի, այդ զիրքն որ Աւետարանի սուրբ վարդապետութեամբ լի է, և որու մէջ ճշմարտութեան նուիրական իրաւունքը կարող եղեր ես զօրել զժբաղդ ծերունոյ մը վերջին պատրանաց պատկան յարգանք, լաւ, այդ զիրքը՝ կ'վախնամ որ քեզի համար նոր հալածանաց պատճառ մը պիտի լինի : Այլ ես աստ չպիտի դտնուիմ ցաւերդ մեղմելու անոնց մասնակից դտնուելով » :

«Լուիզի ձայնը կ'զողզողար . տենդին սաստկութենէ աչերը կը շողային . իր սիրտն ուժգին կ'բախէր :

«— Մի լար, ժու՛ւլիօ, ըսաւ ինձ, իր թևերը վզէս անցընելով : Ես կարծեմ թէ հողին մարմնէն զատուելով վերստին կը դառնայ իր սիրականներուն մօտ : ժու՛ւլիօ, ես քեզի հետ պիտի լինիմ, միշտ քեզի հետ . վասն զի միայն քեզի կ'սիրեմ : Այ՛մ, քու քրոջդ մօտ քահանայ եղիր, արդ ժամ է » :

«Միտքը հասկըցայ . . . իմ զողզողուն ձեռքս ստացաւ մեռելոց վերջին օժումը, և բաւական ոյժ գտայ ըսելու այս հողուն զոր այնքան սիրեր էի . «Ելիր այս աշխարհէս, քրիստո-

նեայ հողի» . . . . .

«Այս արարողութենէ ետք՝ Լուիզ պահ մը կատարեալ հանդարտութիւն դտաւ :

«— Այ՛մ աղէկ եմ, ըսաւ նա ինձ, շատ աղէկ : Թոյլ տու որ քիչ մը քեզի խօսիմ, խօսելով քեզ չեմ յողնիր : ժու՛ւլիօ, հիմակ քեզի հետ մահուան պիտի սպասենք, քիչ մը ժամանակուան համար միայն մեզ իրարմէ պիտի զատէ, շատ կարճ ժամանակուան համար, կարծեմ : Եղբայր իմ, դու շատ տառապեցար, դեռ ևս պիտի տառապիս, և բարոյական ցաւերը կ'սպաննեն, քաջ պիտեմ այդ : Ա՛չ, եղբայր իմ, ո՛չ, ընդ երկար իրարմէ բաժնուած չպիտի մնանք . . . . .

. . . . .

«Գիշերը սոսկալի էր :

«— Այս հոգեվարութիւնը մեզի համար շատ վշտալի է, բայց դէթ ստիպուած չենք այ՛մ ծածկել մեր անձկութիւնները, կ'ըսէր ինձ Լուիզ գողգոջուն ձայնով » . . . . .

. . . . .

17 Մայիս

«— Մտիկ ըրէ ինձ, ըսաւ Լուիզ, երկու հանգարտ ժամ անցընելէն ետք՝ մտիկ ըրէ ինձ : Ա՛ուզեմ քեզի անոր վրայ խօսիլ, անոր վրայ, դիտես, ես բնաւ անոր անունը չէի արտասաներ : Կա շատ չարիք հասոյց ինձ, բայց անոր կ'ներեմ : Եւ ասկից զատ՝ քանի մ'ատենէ ՚ի վեր՝ չեմ կրնար հասկընալ թէ ի՛նչպէս այնչափ սիրեցի զանի : Իր սիրտն իմ՝ սրտիս բարձրութեան չէր հասներ . . . » :

«Լուիզի շնչառութիւնը հետզհետէ կ'ծանրանար : Ասանցուկ մը զանի վերցուցի և իր գլուխն իմ կուրծքիս վրայ դրաւ :

«— Շատ աղէկ, ըսաւ նէ, շատ հանդիստ կրնամ մեռնիլ թեւերուդ մէջ . . . ի՛նչպէս կարող եղայ փափաքիլ քու սէրէդ ուրիշ

սէր մը : Այս ծայրադոյն ժամուս՝ սրտիս մէջ կ'կարգամ . . . :  
Գու իմ կենացս մեծ , միակ սէրս ես , միւսը լսի պատրանք  
մ'էր . . . » :

« Իմ էութեանս մէջ սոսկալի յեղափոխութիւն մը տեղի ունե-  
ցաւ : Անցելոյն այս յիշատակները , այս սլաշտեալ էակը զոր իմ  
բաղկացս մէջ կ'բռնէի և որ յստիտենականութեան սեմին վրայ՝  
կարծես թէ կ'զգար ներբուստ թէ ինչ կրնայինք լինիլ իրարու  
համար , այս ամենը չզիտեմ ինչ տեսակ բանդադուշանաց մէջ  
ձգեց զիս : Լուիզն իմ սրտիս վրայ սեղմնցի : Իմ շրթունքս իրեն-  
ներուն դպան . . . » :

« Ներէ , Աստուած իմ , ներէ և զթն ինձ : Իմ առաջին և վեր-  
ջին սիրոյ համբոյրս , զիակ մ'ընդունեցաւ » :



ԿԱՐՏԻՆԱԼԻ ԽՈՅՐ ՄԸ

Համադումար ժողովը թէև պէտք եղած զուշու թիւններն ըրաւ  
որպէս զի իր ծոյն անցած դարձած խօսքերը դուրս չեւնեն , բայց  
այս զգուշութիւններն անօգուտ եղան : Երգումներ կ'արուին բայց  
չեն պահուիր : Խորհող ժողով մը՝ եթէ միայն երկու անգամէ  
բաղկանայ իսկ՝ իր բնութեամբը գաղտնապահ չկրնար լինիլ :  
Պէտք կ'զգայ ըսելու ըրածը : Լիմույի ժողովին մէջ՝ Թուլիօյի դոր-  
ծը մեծ աղմուկ հանեց կրօնական աշխարհին մէջ : Ոմանք մտա-  
ծեցին թէ արքեպիսկոպոսը շատ աղէկ ըրեր էր արդիւելով որ  
ինքնին աննշան դործի մը մեծ հուշակ մը չհանէ , այլք նոյն իսկ  
եպիսկոպոսաց մէջ , զանի կ'պարսաւէին այս պարագայիս մէջ տկա-  
րութիւն ցոյց տալուն՝ և հաշտասիրութեան և զգուշութեան ողին  
շատ հեռու քշելուն :

Սակայն ամէն ինչ պատրաստ էր կաթողիկէ աշխարհին մէջ 1862  
յունիս 2ին մեծ յայտարարութեան համար :

Առաջին անգամ մը անդրալեռնեայ կուսակցութիւնը Հռոմ  
բերել տուեր էր կաթողիկէ եպիսկոպոսները՝ որպէս զի ներկայ դրս-  
նուին սուրբ Առաքյալ յոսէֆէան վարդապետութեան հրա-  
տարակութեան : Եպիսկոպոսութիւնը՝ իր իրաւունքը մոռնալով՝  
առաջին անգամ մը գացեր էր իր անկումը ստորագրել և պա-  
պական գերիշխանութիւնը հուշակել , հաւանելով որ՝ իր աչաց  
առջև՝ Պապը վարդապետութեան վերածէ Եկեղեցւոյ մէջ վէճի  
ներքև ընկած կարծիք մը : Երբէք ասկից աւելի ճարտար ցանց  
մը չէր լարուած այս բարի եպիսկոպոսաց՝ որոնք՝ իրենց քահա-  
նայական երիտասարդութենէ՝ ի վեր՝ ընկղմած էին եկեղեցական  
վարչութեան թղթերուն մէջ և բնաւ կասկածի չդացին որ այս  
հրաւերին ներքև ծուղակ մը կար աւելի կարևոր վարդապետու-  
թիւն մը հաստատելու համար , անդրալեռնականաց առջև , քան  
թէ Աստուածածնի արտօնութիւնները , այս է պապական անսխա-  
լականութեան վարդապետութիւնը : Ի վաղուց պատրաստուած էր  
այս հարուածը ժէզվիկաց ձեռօք , և կաէզ պարտ գացած ժամա-  
նակն էր որ Պիոս Թ. ի խորհրդականները , Պապին տկար կողմը  
կ'դռնեն , որ միտիքականութեան հակամէտ է՝ և կ'համոզեն թէ  
սքանչելի միջոց մը կար՝ այն միջոցին որ երկրային պապութիւնը  
գահավիժելու վրայ էր , հոյևոր պաշտականութիւնն անչափս մեծ-  
ցրնել , այսինչն բարձրաձայն անսխալական հուշակել ինքզինքը  
վարդապետութիւն մը վճռելով :

Պիոս Թ. որ յարգը կորուսեր էր Աստրիայի բարեկամ անդ-  
րալեռնականաց առջև՝ ազատական կառավարութեան փորձերով ,  
պէտք ունէր բացարձակ իշխանութեան գաղափարներու վերադառ-  
նալուն գրաւականներ տալ : Այս խորհուրդը ջերմազին ընդունեց  
և կայէզէն զրկուեցաւ Պապին մէկ կոնգակն որով կ'յայտարարէր  
թէ կաթողիկէ աշխարհին եպիսկոպոսաց կարծիքը պիտի հարցընէ  
Առաքյալ յոսէֆէան նիւթին վրայ :

Եպիսկոպոսներն ասշեցան մնացին այս կոնգակին առջև : Կար-  
ծեցին թէ Պապն իր պարապ ժամերն անցընել կ'ուզէր այս հին  
աստուածաբանական վէճով : Իրենց երէցները կոչելով խորհուրդ  
հարցուցին : Անոնք ալ իրենց մեծաւորներուն չափ անպէտ լինե-

լով այս խնդրոյն, որ դարերէ 'ի վեր եկեղեցական ուսմանց մէջէն հաներ էին, և լսած լինելով պառաւ կանանց այս աղօթքը «Մարիամ, առանց մեղաց յղացած, աղաչեցէք մեզնի համար որ ձեզնի կ'դիմենք» պատասխան տուին եպիսկոպոսաց որ իրենց թեմերուն հաւատն այս էր թէ Կոյս Մարիամ առանց մեղաց ծնած էր :

Հրոմ ուրիշ բան չէր խնդրեր : Ո՛չ եպիսկոպոս մը, ոչ ժողովրդապետ մը ժեզվիղաց ծուղակը չէր դուշակած : Ատնք իրենց աստուածաբանից միջոցաւ պատմական հմտութիւններ խուզարկել տուին : Անոնցմէ ամենէն նշանաւորը՝ որ վերջէն այնքան աղմուկ հանելով՝ անդրալեւնեայ դասէն պիտի զատուէր, հայր Բասալիա՝ երկու երեք հատոր գրելով հաստատեց որ *անբարբառն ամէն յոյն ու լատին գրուածոց մէջ կ'գտնուէր սուրբ Յովհաննէս Գամասկացիէն սկսեալ* : Եւ սուրբ Պօղոս քաջ ըսեր էր թէ «Ամէն մարդ յԱգամ մեղանչացած են» : Ս. Օդոստինոս քարոզեր էր թէ «Այն միայն առանց մեղաց ծնած էր որ առանց առնական գրկախառնութեան էր յղացած» : Պապեր՝ մինչև անդամ եկեղեցոյ աղուր ժամանակները, Անարատ յղութեան վարդապետութեան դէմ քարոզեր էին : Բայց Ս. Պօղոսին հակառակն ուսցընել, Ս. Օդոստինոսը սուտ հանել, հին երկու դարուց պապութիւնն արդի պապութեան հետ հակասական գրից մէջ դնել, բան մը չէր : Այսօր ո՛վ պիտի կարդայ Ս. Պօղոս, Ս. Օդոստինոսս և պապերուն քարոզները : Ժեզվիղներն այսպիսի փոքր արդելքի մ'առջև չվհասեցան : Պատի՛ որ ժամանակ չունի կարգաւուր, ժեզվիղաց պէս մտածեց. եպիսկոպոսները Պապին պէս մտածեցին, և դաւանական նշանաւոր որոշումն երեան ելաւ :

Երբ մի անգամ դադափարներն այս ընթացքն առին, և ժեզվիղները՝ Ինիվէթ լրագրէն Քրանսայի մէջ մեծ աջակցութիւն գտնելով, իրենց ակնկալութենէ վեր յաջողեցան, ամէն արխափրա քահանայ որ, խնդիրը լրջօրէն ուսումնասիրելէն ետե՛ այս վարդապետութեան հրատարակութենէ ետե՛ իր ազատութիւնն ուզեց գործածել իր կարծիքն յայտնելու, կատարի հալածանաց ենթակայ գտնուեցաւ երբոր այս կարծիքը ժեզվիղաց կարծիքին հակառակ ելաւ :

Ամէն մարդ կ'յիշէ հալածանքը զոր հանեցին դժբաղդ Լապօրտ արբային դէմ որ այնքան մարուր բարբ ու վարբ և օրինական բարեպաշտութիւն ունէր, որ՝ վերջէն՝ Բարիզ անօթի պիտի մեռնէր՝ իր համոզմանց զոհ ընկնելով :

Անդրալեւնականը իրենց հնարքը ուղմագիտապէս պատրաստեր էին, և երբոր եպիսկոպոսները միացան, մեծ ճառ մը լսելու հաճոյքն զղային, ճառ մ'որ այս մտօք կրնար թարգմանուիլ .

«Պատկառելի հարք յԱստուած, այս տեղ եկած չէք ձեր եղբորը յեպիսկոպոսութեան՝ Պապին հետ վճիռ տալու : Եկած էք միայն Պապին առջև ձայնաւոր դասու աշակերտաց զերը խաղալ և արարողութեան շքեղութիւն տալ, Պապը միայն պիտի վճռէ» :

Բարի հարք յԱստուած իրենց ձամբորդութեան համար մեկտեղ աւեր էին դոհարազարդ խոյրեր, արծաթէ դաւազաններ, ոսկեղոյն չուխայէ նափորաներ : Շատ փոքրկութիւն պիտի համարէին այս աղուր բաներն 'ի հանդէս չհանել Միշէլ-Անժի դմբեթին ներքև : Այս նոր դաւանութեան հրատարակութեան ներկայ գլուխուեցան :

Քսաներորդ դարու եպիսկոպոսութիւնն այս խնդիրը նկատողութեան պիտի առնու անշուշտ :

Բաւական չէր 1854 զեկտեմբեր 8ի յանկարծական որոշումը . 1862ին անդրալեւնական դասն երկրորդ համանման դաւանութիւն մ'ունէր յառաջ բերելու : Պապութիւնն որ քան զառաջինն իր աշխարհական իշխանութեան դէմ մեծ սպառնալիք կ'տեսնէր, նորոգ հաստատել կ'ուզէր, ինչ հեռեանք որ ունենար խաղաղական յեղափոխութիւնն աշխարհային թաղաւորութեան մասին, թէ ըստ հոգեւորին ամենազօր էր նա : Եպիսկոպոսներն երկրորդ անգամ հրաւիրուեցան 'ի Ղաաիկան, առաջին անգամուան պէս հեզութեամբ եկան, նոյն եպիսկոպոսական աղուր զվեասաները բերին, շքեղ արարողութեան մը ներկայ գտնուեցան, ուր միայն իրենց քառուս հազար Փրանքի մամլըր վաւեցան, և առանց համադումար ժողով կազմել իշխելու, միշտ պապութեան իբրև խոնարհ ծառայք, որ զայն իրենց գլխէն հազար ոտք վեր կ'բարձրացընէին, քաղաքական յայտարարութիւն մը ստորագրեցին պա-

պերու աշխարհական իշխանութեան հարկին վրայ, չգուշակելով որ այս իշխանութիւնը, հին ժամանակաց արդիւնքը, նոր ժամանակաց պիտոյից առջև պիտի կործանի, պիտի պարտաւորին, կաթողիկ վարդապետութեան հետ համաձայն դտնուելու համար՝ յայտարարելու որ պապութիւնն աշխարհական իշխանութեան կարօտ չէ: Պապութիւնն այս հակասութեանց վրայ, եկեղեցւոյ հին ազնուապետութեան քայքայման վրայ աւելի ևս պիտի բարձրանայ: Անդրալեւնականութիւնը պիտի յաղթանակած լինի:

Հուով գնալու ատեն՝ մեծապայծառ Քրիք այս մտածութիւնները բնաւ չունէր: Արքեպիսկոպոսի մը կեանքն որչափ կարճ է: Ի՞նչ փոյթն էր որ եպիսկոպոսներն ասպղային մէջ իրենց կարգն ու արժանապատուութիւնը պահեն, որ պապերը գերիշխան լինին թէ ոչ: Այժմ է նախ կարտինալ լինիլ, որով հոգն էր դալիքը:

Մեր եպիսկոպոսը կարտինալի փեղոյը ստանալու համար շատ ճարպիկութեամբ վարուեր էր: Լիմուշի համադումար ժողովին դործը շատ ազմուկ հաներ էր պաշտօնական մարդոց մէջ, և կարելի էր ստուգել որ ստորին կարգի լրտեսէ մը չէր կառավարութեան հասած տեղեկագիրը: Թերևս մէկու մը զարմանք չպիտի պատճառենք, եթէ համարձակինք ըսելու որ այդ տեղեկագիրը պարաստողն եղեր էր դերապայծառ եպիսկոպոսը, նոյն ինք Քրիք, և երբորդի մը ձեռօք զըկուած էր ՚ի Քարիզ ուր անտարակոյս մեծ գաղափար մը պիտի տար այն անձին խոհականութեան և չափաւորութեան վրայ, որու համար կարտինալի փեղոյը կ'ընդունէին: Իր օգնականին այլանդակ և մոլեռանդ ճառն ուղղելու համար եպիսկոպոսին բռնած ընթացքն ընդգիտութեանց դէմ վերջին հարուածը սուաւ: Զօրապետը՝ որ արքեպիսկոպոսին պաշտպան և բոլոր բանակցութեան ժիր դործակալն էր, մեծ արժէք սուաւ այնքան ուժգնութեամբ հարուածուող կալիքան քահանային արուած պաշտպանութեան եպիսկոպոսին կողմէ: Խընդրած հաւանութիւնը ստացաւ և եպիսկոպոսին ուղղեալ հեռագիր մ'անոր իմացոյց որ կարտինալ անուանած է:

Մեծ բան էր Քրանսայի կառավարութեան այս հաւանութիւնը, այժմ՝ պէտք էր նաև ստանալ հռոմէական արքունեաց հաւանու-

թիւնը: Լեռներէն ասդին, ուր հոյն ազատականութեան, կալիքականութեան, աստուածապետական յափշտակութեանց դէմ էր, դերապայծառն արժան դատեր էր չափաւոր, հաշտարար, աշատական ողի մը ցոյց տալ: Լեռներէն անդին կ'պահանջուէր եռանդ, բացարձակ անձնուիրութեան դրաւականներ, ոչ միայն առքահանայապետ Պապն, (այս կիտին վրայ այնքան հոգ չունին, ներքին դործ է այն) այլ Պապին՝ իբրև թագաւոր, իբրև թագաւոր հռոմէական վիճակաց: Մանաւանդ՝ կ'պահանջուէր՝ կալիքականութեան, Պօսիւէի, Ֆլէօրիի, Լուզէրնի, Աֆֆրի դէմ, բոլոր այս մարդոց դէմ՝ որ Պապին անխալութեան չհաւտացին, բաւական զզալի ատելութիւն մը:

Մեր արքեպիսկոպոսին ջերմագին ընդունելութիւն ընելու կը պատրաստուէին: Գաղղիական դեսպանատունն այնքան ցանկալի փեղոյըին համար ինդիր մատուցեր էր անոր համար, և այս խընդիրը նպաստաւոր կերպով ընդունուեր էր: Իր գալստեան առաջին օրերը, ամէն տեղ զնաց բազմաթիւ այցելութիւններ ըրաւ: ա) Թեղվիկաց զօրապետին, բ) սուրբ հօր ներքին եպիսկոպոսաց, գ) Քրանսայի դէմ իրենց ատելութեամբ և ոխերիմ անդրալեւնականութեամբ Հուովի մէջ ծանօթ բոլոր կարտինալաց և եպիսկոպոսաց:

Ամէն ինչ սքանչելի կերպով յաջող կ'ըսէր: Բայց յանկարծ Լիմուշի համադումար ժողովին թշուառական ատենաբանն ալ եկաւ: Այս ատենաբան եպիսկոպոսը կարտինալի փեղոյըին վրայ չէր մտածեր: Իր զլխուն մէջ ուրիշ տենչ ունէր. Քրանսայի մէջ կալիքականութիւնը կործանել և արդի կարծեցեալ քաղաքակրթութեան դէմ պատերազմիլ:

Այս մարդն՝ որ վանականի մը պէս յամաւ էր, հաւատաքննչի մը պէս եռանդուն՝ Պապին հետ տեսութիւն ունեցաւ և համադումար ժողովին դործը պատմեց, ըսաւ թէ ի՞նչպէս մետրապօլիտը կերպով մը պաշտպաներ էր ողորմելի քահանայ մ'որ յանդըներ էր պապերուն աշխարհական իշխանութեան դէմ գրել:

Այս խօսքն իր ներդործութիւնն ունեցաւ, արքեպիսկոպոսին կարտինալական փեղոյը մէջը խաղացեր էր:

Արքեպիսկոպոսը՝ որու ՚ի սկզբան ամէն բան կ'յաջողէր պապական քաղքին մէջ՝ բաւական զարմայաւ՝ երբ երկրորդ անգամ Վատիկան այցելութեան գնաց՝ որ ամենքն իրեն հետ պաղ կը վարուին : Ներքին եպիսկոպոսներ , պաշտօնեայ կարտինալներ , անդրալեւնական և միասկետական մեծ դասու կարտինալներ յանկարծ իրեն հետ զգալի զգուշութեամբ վարուելու սկսան :

— Թշնամի մարդ մ'անցած է ասկից , ըսաւ եպիսկոպոսը՝ կասկածոտութեամբ , պէտք է դործը հասկրնալ :

Իր Հռոմի դործակալը՝ տեղեկութիւններ փնտռելու ելաւ , պէտք էր խորամանկութիւն դործածել . բայց վերջապէս՝ իրկուն մը՝ հետեւեալ լուրը բերաւ Նորին վիժեալ Մեծութեան :

— \* \* \* եպիսկոպոսը ձեզի գէմ՝ քսութիւն ըրեր է : Գացեր Պապին յայտներ է թէ համադումար ժողովին մէջ բացէ ՚ի բայ պաշտպաներ էք իր աշխարհական իշխանութեան գէմ՝ զանուող քահանայ մը : Պապը բան մը չըսաւ , բայց զգալի կերպով իր այլալուծիւնը ցցոյց :

Նոյն օրը \* \* \* եպիսկոպոսն ըսաւ սրբազան Պ . . . ին , որ Պապին ներքին եպիսկոպոսներէն մին է .

— Եզական կարտինալ մը պիտի անուանէիք :

Արքեպիսկոպոսը՝ այս սոսկալի յայտնութենէ վար չընկնելու համար՝ իր բոլոր արիւթիւնն օգնութեան կոչեց :

— Հիմակ ինչ ընենք , իմ խեղճ արբաս :

— Ի՞նչ ընելու էք , սրբազան , թողէք որ մըրիկն անցնի . սուտ մեռել եղիք , թող քանի մ'օր ձեզ մեռնան , մի երևիք բնաւ :

— Իբաւունք ունիս :

Եւ սուրբ մարդը Հռոմի հայթայթած բոլոր զուարճութիւններէն հեռանալով իսկոյն՝ գնաց Ժեյէն առանձնացաւ , որպէս զի հօր մ'ուզողութեան ներքեւ՝ Ս . Իգնատիոսի հոգևոր վարժութեանց պարապի :

— Սրբազանը մեծ վարպետութիւն կ'բանեցրնէ ասոր մէջ , ըսաւ արքեպիսկոպոսական դործակալը , իտալացի մ'անդամ՝ այսչափ ճարպիկութիւն չպիտի ունենար :

Այս երանաւէտ մենաւորութիւնն իր պատուը բերաւ լիովին :

Յունիս Յի արարողութեան առջի օրը վերջացաւ : Տօնախմբութեան հետեւեալ օրը՝ ժեզվիզայ զօրապետը Նորին Սրբութեան այցելութիւն մ'ընելու գնաց՝ որպէս զի այս հանդիսին մէջ կատարուած մեծ բաներուն վրայ զինքը շնորհատրէ : Մեծ խանդով խօսեցաւ բարեպաշտութեան գողտրիկ նշաններուն վրայ զոր գաղղիացի եպիսկոպոսներ ցոյց տուած էին իրենց բնակութեան ժամանակ ՚ի Հռոմ :

— Ամենասրբազան հայր , չափազանց հոգևոր մխիթարութիւն ստացանք Նորին Մեծութեան , Սրբազան Քրիքի միջոցաւ , որ է Տ . . . ի եպիսկոպոսը , որ խորին հեղութեամբ եկաւ ՚ի Ժեյէն առանձնացաւ : Ինչ անձնութիւն կ'տածէ Ձեր Սրբութեան և սուրբ աթոռին համար : Մեզի պատմեց թէ Ինքէսի ժողովին ուղեր է վերապահել նշանաւոր ժուլիօյի մոլորութեանց դատապարտութեան դործը , գատապարտութիւն մը զոր Աիմույի համադումար ժողովը նոյն նիստին մէջ կամեր է արձակել : Բայց արքեպիսկոպոսը սուրբ աթոռին և հռոմէական ժողովոց արտօնութիւնները պահպաներ է այնպիսի զօրութեամբ որ համադումարն իր որոշումէն ետ կեցեր է , և այս պահուս արժանընտիր եպիսկոպոսը՝ ինքն անձամբ Ինքէսի մեծաւորին մօտ գնաց որպէս զի անոր ձեռքը տայ այս նորոգչին , Եկեղեցւոյ և սուրբ աթոռին թշնամի ժուլիօյին բոլոր դիրքերը , մանաւանդ այն ժանտալի դիրքը զոր պապերու աշխարհական իշխանութեան գէմ՝ զրած է : Արքեպիսկոպոսը հեղինակին գէմ՝ արդիւման հրաման մ'արձակեց հիմակ , վասն զի իր թեմական քահանայն է :

Սուրբ հօր մէկ ժպիտն իմացոյց վերապատուելի զօրապետին որ իր դատը շահած է :

Երկու օր ետք՝ Աթուլի Երկրագործին մէջ այս սողերը կ'կարգային :

« Հռոմէն մեր ստացած լուրերը շատ կարևոր են , քահանայապետը գաղղիացի եպիսկոպոսաց միշտ նոյն մեծարանքը կ'յայտնէ : Այժմ իսկ մեր ստացած հեռագրէն կ'իմանանք որ սրբազան Քրիք , Տ . . . ի արքեպիսկոպոսը հռոմէական սուրբ եկեղեցւոյ կարտինալ անուանուեր է : Պատն ուղեց անով վարձատրել՝ այն ան-

սահման անձնուիրութիւնը զոր առ սուրբ աթոռն և առ հռոմէական վարդապետութիւնս տածելնին յայտնեցին փառաւորապէս զազդիացի եպիսկոպոսները : Հռոմի զերազահութիւնը հետզհետէ կ'փայլի : Ասլիքականութեան յետին նշանները կ'անհետին : Պասլը Եկեղեցւոյ մէջ կ'իշխէ և բոլոր վիճակները կ'կառավարէ : Մեծ միութիւնը կատարուեցաւ , մէկ հովիւ կայ միայն և անոր բոլորտիքը հլու սպասաւորներ որ պատիւ կ'համարին ունայն արտօնութիւններ ընդ առաջ չքշել :

«Նոյն հեռագիրը կ'յայտնէ նաև որ նոր կարտինալն Էնրէտէ ատեանին ենթարկեց ժուլիօ Քլավիէրի զիբքը : Պապերոսն աշխարհական էլիտանուիւնը , զիբք՝ որու վարդապետութիւնն եպիսկոպոսաց հանգիստաւոր յայտարարութեան կէտ առ կէտ հակառակ է : Նախ աւագամեծար կարտինալը հեղինակին դէմ , որ իր վիճակին մէջ երէց էր , արգիլման վճիռ մ'արձակեւ էր : Ամէն պարկեշտ մարդոց հետ՝ կ'դովենք միայն արքեպիսկոպոսին այս բարեպաշտական եռանդը մատենագրի մը դէմ , որ երկար ատենէ 'ի վեր՝ Եկեղեցին կ'ղայթակղէր : Եկաւ ժամանակն որ այսպիսի մարդոց համար ներողամտութիւնը դատապարտելի ակնառութիւն մը պիտի լինէր : Գաղղիական եպիսկոպոսութիւնը նոր շաւղի մը մէջ կ'մանէ : Այս առաջին դասը չպիտի մոցուի : Մոլորութիւնը պէտք է զիտնայ որ ամէն տեղ պիտի հալածուի , մատնուի և շանթահարի : Եկեղեցին՝ ժամ է արդ՝ անագորոյն պիտի դառնայ» :

Քրիք կարտինալն իր առանձնութենէ ելաւ , կարմիր ամզանը հագնելու համար , հին Հռոմի ծերակոյտի անգամոց ամզանին յիշատակը : Փութաց նա Միջերկրականէն անցնելով 'ի Տ . . . դալու , ուր յաղթական մուտ մ'ըբաւ :

Փառաւոր կոնգակ մ'ուղղեց նոր կարտինալն իր վիճակին կղերական և աշխարհական դասուց : Այս մարդը՝ որ երեք տարի աշխատեւ էր տենդային գործունէութեամբ՝ կարտինալութեան հասնելու համար՝ հետևեալ տուները կ'գրէր , որ սովորաբար կ'ործածուին երբ եպիսկոպոս մը բարձր պաշտօնի մը կ'հասնի .

«Իմ ամենասիրելի եղբարք ,

«Նախախնամութիւնն իր անհասանելի վճիռներով եկաւ՝ այն միջոցին որ մեր առաքելութեան հեղ զբաղմանց կ'պարապէինք , հռոմէական եկեղեցւոյ ամենէն բարձր մէկ աստիճանին կոչել զիս : Ամէն ինչ ըրինք այս պատիւը մերժելու , որու շատերը մեզնէ աւելի արժանի էին : Բայց պէտք եղաւ հնազանդիլ անոր կամաց որ երկրիս վրայ մեզի զԱստուած կ'ներկայացընէ :

«Բայց եթէ այս բարձր պաշտօնն որու բնաւ չէինք խորհեր , շնորհ մ'է որու անարժան լինելնիս կ'խոստովանինք , դարձեալ չենք կարող մերժել սուրբ աթոռին և սրբազան Հօր կապուած անձնուիրութեան պարտաւորութիւնները կատարելու և» :

S . . . ի կրօնական դասուն մէջ այս կոնգակը մեծ համբաւ հանեց :

— Ինչ խորին համեստութիւն , ինչ հեզութիւն : Ո'րչափ կ'անդունէ այս բարի կարտինալը պատիւները : Պէտք եղեր էր որ Պասլը բռնի ընդունել տայ անոր կարտինալի խոյրը . . . :

Իսկ մարդոց մէջ՝ որ միշտ իրաց ճշմարիտ կողմը զիտէին՝ հետևեալ փոքրիկ պարսաւատետրը տարածեցին .

«Իմ ամենասիրելի եղբարք ,

«Նախախնամութեան անհասանելի վճիռներն որ մեր գլխուն վրայ գրին կարտինալի խոյրը \* \* \* Պ. զօրապետն են , որ մեծ ազդեցութիւն ունի արքունիքը : Գաղղիական կառավարութեան հաճելի լինելու համար ազատականութիւն ծախեցինք : Հռոմի հաճելի լինելու համար՝ անդրալեռնական եղանք : Այսչափ նեղութեանց փոխարէն՝ արդար է որ մեր կարտինալի և ատենակալի կացութեան յատկացած վաթսուն հազար ֆրանքի հասոյթն զուսինք :

«Ի հաստատութիւն այսմ մեր օրհնութիւնը կ'տանք» :

Այս ծաղրածու կոնգակին մէկ օրինակը նոյն ինք կարտինալին զրիւկեցաւ՝ փայլուն պահարանով մը , որ կնքուած էր կարմիր

ահագին կնքամոմով մը : Չարամիտ մարդ մը թղթատունը ձգել տուաւ այս թուղթը , որպէս զի ապահով լինի թէ այդ զարդարուն սրահարանով շխտակ կարտինալին ձեռքը հասնի :

Ահա մարդիկ այս կերպով վրէժ առին Պ. Քրիբի փառասիրութենէ և վատութենէ :

Ժ

ՎԵՐՋԻՆ ՀԱԼԱԾԱՆՔԸ

Այն օրն որ հարաւոյ հին մայրաքաղաքը կարտինալին Հռոմէն վերադարձը կ'սօնէր , երբ բոլոր ժողովուրդը՝ տօնի զլեստով հրապարակները , փողոյները կ'շրջէր , որպէս զի իր փառաւոր շքեղութեան մէջ տեսնէ ծիրանաղարդ եպիսկոպոսը , երբոր զանգակները կ'զարնէին միահամուռ բոլոր թեմերուն մէջ , երբ սպիտակ հագուած նորատի օրիորդներ թափորով իբենց զրօշակներուն ներքև կ'միանային , երբոր գպրոյները , վանքերը , կղերանոցները , ամէն տեսակ միաբանական ուխտերը , Յիսուսեան ընկերութեան վերապատուելի հարք՝ որ իրենց ճակատին վրայ յաղթութեան գոռոզութիւնը կ'ցուցնէին , կ'երթային թափորը կազմելու , երկու կառք՝ զոր երկու հովիտ ձիեր կ'քաշէին , և որոց առաջնորդն էին երկու լեւոնցի՝ Սէն-Պէյի ճամբան բռներ կ'երթային :

Այս ծանր կառուց առաջնոյն առջևի կողմը՝ և տեսակ մը խոշոր կաշիէ տառատոկի մը ներքև՝ ծանրազլուխ մարդ մը կար որ գեռ նորատի էր , գունատ և հլուանդոտ գէմքով : Թեթև թիկնոց մը հագեր էր՝ և տաքութենէ պատսպարուելու համար խոշոր տառատոկին տակ կ'սրահաւաքէր , որ արևուն հրակէզ ճառագայթները կ'մնղմէր :

Այս մարդը ժուլիօն էր , Լիմույի համագումար ժողովին առնիծեալը , այն խեղճ քահանայն որ Հռոմէն իսկ եկած արդիւման

շանթով զարնուած էր , մինչդեռ ապագայ կարտինալը Ս. Իգնատիոսի վարժութիւնները կ'ընէր և մահուան , դատաստանին , դժոխոց և արքայութեան վրայ կ'խորհրդածէր :

Հեզ զոհը բերնէն սրտունջ մը չէր հանած : Զինքը քահանայագործութենէ զրկող նամակը հասեր էր այն միջոցին որ սեղանը պիտի ելնէր պատարագ մատուցանելու : Ըստ սովորութեան զիւղին զանգակը հնչեր էր , և երկու երեք ձերուկներ , քանի մը բարեպաշտ կանայք պատարագ լսելու պատրաստ կ'գտնուէին : Որպէս զի մինչև վերջը հնազանդի՝ ժուլիօ մտածեց որ անմիջապէս իր եկեղեցական զլեստները հանէ . բայց այս խեղճ հոգիները գայթակղեցնելու վախցաւ , որ քահանային այս ընթացքը չպիտի կարենային բացատրել , և Գեթսեմանիէն գուրս ելնող Քրիստոսին նման՝ սեղանին առջև գնաց իր կենաց մէջ վերջին անգամ ընծայելու իր սրտին ողջակէզը զոր իր ձեռաց մէջ անարիւն ողջակիլին պիտի միացնէր :

Ժուլիօյի կարգացած գրքին վրայ արտօսը մը չընկաւ , երբ նա խորին երկիւղածութեամբ պատրաստական աղօթքը կ'ընէր : Կնքն իրմով զօրաւոր և արժանի՝ ինքզինքն Աստուծոյ նուիրեց Թերմոփիլէի կրճերուն մէջ շնչասպառ ընկնող զինուորաց պէս՝ որ հայրենեաց համար մեռնելու աննման փառք կ'վայելէին : Ժուլիօ ևս կ'մեռնէր , չէ թէ իր գործարանաց խորտակմամբ որմէ ետև կենդանութենէ զրկուած նիւթին պաղութիւնը կ'հասնի , այլ իր կամքը լիովին մերկանալով , Նախահամարութեան վճիռները պաշտելով զինքը հարուածող վայրենի դատաւճախն մէջ , հոգւոյ խորէն աղօթելով փառասէր եպիսկոպոսին համար՝ որ ծիրանին ծախուաւեր էր այս ամօթալի և յետին հարուածը տալով ժուլիօյի , աղօթելով Եկեղեցւոյ մէջ ունեցած բոլոր թշնամեաց համար , կրօնամոլներուն համար՝ որոց քինասնդիր գրիչը զինքը հաւածեր էր , կաթովիկութեան քահանայապետին համար՝ որ վերջինն էր կրող աշխարհիս վրայ Աեսարաց ծանր պտակը՝ աղէտալի սխալմամբ Հռոմի եպիսկոպոսաց համեստ գտակին միացած :

Բայց իր սիրտն այն ատեն խորտակեցաւ , իր ձայնը դողդոջաց , հոգեվարութեան վիշտերն իր էութիւնն այն ատեն համա-

կեցին՝ երբ մեռելոց աղօթքն արտասանելով՝ պէտք եղաւ խորհիլ տարաբաղդ Լուիզին վրայ՝ որու զերեզմանին այցի գալով այնուհետեւ չպիտի կրնար ծուր գնել և աղօթել :

— Ո՛ր Աստուած իմ, ըսաւ նա իւրովի, մեռելոց յիշատակին քրիստոնէական ժամբողովեան նուիրած քանի մը վայրկեանի մէջ՝ ամէն ինչ կ'անուն ձեռքէս, մինչև անգամ այն դալարաւէտ հողակոյտն որ իմ պաշտեալ Լուիզիս մարմինը կ'ծածկէ : Բայց ընդունէ իմ սրտիս կսկիծներն իբրև յետին աղօթք քահանային որու արդիւրած պիտի լինի այսուհետև սեղանին առջև պատարադելու, թող այս աղգու քառամ մը լինի այն հոգեոյն համար զոր չափէն աւելի սիրեցի և կ'աղաչեմ որ անոր տեսութեան վերստին արժանի լինիմ փառացի կայանը :

Քիչ ատենէն մարտիրոսին ճակտին վրայ հանդարտութիւնն երեցաւ, որպէս թէ յուսոյ հրեշտակն եկաւ զինքը վառելու իր անձկութեանց մէջ : Իր ձայնը հնչական դարձաւ, երբոր աղօթից վսեմագունին ծաղումը յիշելով՝ մտածեց Աւետարանի մարդուն տուած որդեգրութեան իրաւանց վրայ առ Աստուած, և Հայր Բարձր, կրկնելով իբրև սիրոյ յետին մրմունջը զոր մեռնելու մօտ մանկիկ մը մօր մ'ականջին կ'փսփսայ՝ կարծես թէ կարապին երգն էր իր քահանայական պաշտօնէն ՚ի սպառ զրկուած քահանային սուրբ շրթանց վրայ :

Հետեւեալ օրը՝ դեռ արևը չելած՝ Ժուլիօյի մատուկն ու կարասին՝ զոր արդէն զիշերով կառքը դրեր էին՝ Գարպ կ'երթար իրեն հետ, ուսկից Պիրէնեան հովիտներէն մէկուն մէջ անիծեալը պատսպարան մը պիտի գտնէր : Մեծ հոգիները բնաւ բան մը չէն կորուսեր, մինչև անգամ մարդոցմէ արուած աղէտներէն ետքը՝ խաղաղութիւնը կ'գտնեն որ բնութեան և Աստուծոյ մէկ շնորհն է :

ԺԱ

ԳԱՆԲԱՆԻ ՀՈՎՏԻՆ ՄԵՆԱԿԵԱՑԸ

Ժուլիօյի առողջութիւնն որ արդէն սաստիկ դողդեր էր, Լուիզին՝ մահուամբ աւելի սոսկալի ցնցում մը ստացեր էր : Եթէ հոգւոյ զօրութիւն ցոյց տուաւ զինքը քահանայութեան՝ զրկող կոշտ հրամանին առջև՝ իր սուրբ մասունքը պահող զերեզմանին յետին ողջոյնը տալու մտածմունքն իր վրայ մեծ տպաւորութիւն մ'ըրաւ, և իր արդէն խանդարած առողջութիւնը բոլորովին վերստին : Գարպի բժիշկներն անոր խորհուրդ տուին լերան վրայ պատսպարեալ հովիտ մ'ընտրել՝ որ դէպ ՚ի հարաւ նայի, և անոր տեսակ տեսակ դողշութիւններ պատուիրեցին աւելի ծանր վրդովմանց առաջն առնելու, որոց դէմ գիտութիւնն այնուհետև անզօր պիտի գտնուէր :

Ժուլիօ՛ որ Լուշօնի շրջակայից բոլոր լեռնոտ կողմերը դիտէր, առաջին անգամ բարձր Պիրէնեանց կողմերը կ'դար : Խորին, մութ, պատսպարեալ, ահաւելի հովիտներու տեղ, զոր շղթային կեդրոնը տեսեր էր, իրեն լայն, լուսաւոր հովիտներ կ'երևէին, որու բոլորտիքն անտառուտ լեռներ և դալարուտ մարդադետններ կային : Միշտ լեռն էր՝ բայց ոչ այնքան դառնաշունչ, ոչ այնքան կծու ձմեռը, և ամառն ալ զմայլելի թարմութիւն մ'ունենալով՝ որ ուրիշ բանի հետ կարելի չէ բաղդատել :

Ժուլիօ Գանբանի հովիտն ընտրեց, որ նշանաւոր էր իր օդին անուշութեան կողմէ : Բարեբաղդաբար Գանբանէն երկու հազարամեր հեռու փոքրիկ ամառանոց մը գտաւ որ ողջասուն զիրք ունէր և շրջապատուած էր մրգատանով ու փոքրիկ մարդով մը, որու ստորոտէն կ'անցնի կալ գետակը : Այս ամառանոցը վարձու բռնեց, և Մէլէն մեկնէն ու թ օր ետք՝ այս անգորբ առանձնութեան մէջ հաստատուած էր : Անկից դրեց Ա. . . ի եպիսկոպոսին, իր հին բարեկամը, Պ. Լիչին և արիասիրտ Լուպէրին :

Պ. Լիչ պատասխանեց : Կոյն պահուն՝ նա իր ունեցած վիճակէն բարձրագոյնին կ'փոփաքէր, և նոր կարտինալին պաշտպանութիւնն արդէն ապահովեալ էր : Իր նամակէն այս պարսպան գիւրին էր դուշակել . պաղ էր, ցաւ կ'յայտներ ժուլիօյի բռնած ընթացքին վրայ որու արդիւնքն եղեր էր քահանայական պաշտօնէն տխուր արդելումը : Խեղճ տարագրին պաշտպանի մը համակրութիւնը կ'յայտներ որ կարծես թէ վեհանձնութեան մնացորդն էր :

— Այս բարեկամն ալ զիս երեսէ կ'ընողու, ըսաւ ժուլիօ իւրովի :

Ա. . . ի եպիսկոպոսն աւելի պաղութիւն ցցուց, իր մեղանը վատնեց ժուլիօյի խորհուրդ տալով որ երթայ իր արքեպիսկոպոսին առջև խոնարհի, որմէ միշտ կարող էր արդահաստութիւն սպասել :

— Ո՛հ, ողորմելի արարածներ որ չգիտեն ինչ կ'ընեն, ըսաւ ժուլիօ տխրադին : Եւ նամակին ոճէն հասկըցաւ, որ այս մարդը, թէև եպիսկոպոսաց մէջ ինք միայն արիութիւն ունեցեր էր իր բարեկամութիւնը յայտնել, այնուհետև միայն ապարդիւն արդահաստութեան մ'ողորմութիւնն ունէր իրեն ընծայելու և հետևապէս անոր հետ դրակցութիւնը գաղտնեցուց :

Լուպէրի գիրը հասաւ .

«Քեզ սպաննեցին, բարեկամդ իմ, քեզ սպաննեցին : Եթէ չերկնչէի որ զգալիք այլայլութենէդ թերևս առողջութիւնդ վնասէր, պիտի երթայի կարտինալին և անոր պիտի հատուցանէի ակն ընդ ական և ատամն ընդ ատաման, և պիտի յիշեցընէի անոր խոստում մ'որու դէմ չպիտի կրնար քբացել, կարծեմ : Բայց գիտեմ որ չափազանց պիտի տխրէ իր եթէ վրէժխնդրութեան մը պատճառ լինէիր : Ուստի դու ես իմ բազուկս բռնողը : Քու խղճի սրբագին փոփոխութիւններդ կ'յարդեմ : Այն մարդիկ որ այս աշխարհիս մէջ ահ ու դող կ'ազգեն պարտաւոր են վախնալ արդարութենէ մը, մինչև վերջին արդարութեան օրը, որ վատերը, մատնիչներն և իրենց եղբարքը ծախողները կ'պատմէ :

«Իմ վրայ կ'առնում անոր ցոյց տալ իր չափը . բայց արտօրալու հարկ չկայ . Պ. կարտինալին պիտի թողում իր մեղրի ամիսը :

«Սիրելի բարեկամ, հոյ տա՛ր առողջութեանդ որ մեղի համար թանկագին է :

«Լուպէր քեզ սրտովին կ'ղրկէ : Երբոր իրմէ պէտք ունենաս, փոյթ չէ՛ ինչ գործի համար, նշան մ'ըրէ, և քու քովդ պիտի թուի : Իմ մանր խնայութիւններս, իմ բազուկս, իմ կեանքս, ամէն ունեցածս քուկդ է : Իմ քսակս քեզի կ'յանձնեմ անձիս հետ :

«Լիովին քոյդ .

«ԼՈՒՊԵՐ» :

Ժուլիօ չպատասխանեց ոչ խորհրդատու եպիսկոպոսին, ոչ փառասէր պաշտօնաւորին՝ որ իր կարևորութեամբը շփացած էր : Ասոնց համար ալ անիծեալ մ'էր : Բայց Լուպէրին գրեց .

«Սիրելի բարեկամ, մէկդի թող այդ չարասէր խորհուրդներդ կարտինալ ֆրէքի դէմ : Նա այլ ևս իմ թշնամիս չէ . մի միայն Նախախնամութեան գործին եղաւ, այլ ոչ ինչ : Քաջ կ'գուշակես, երբոր կ'զգաս որ ինձի համար մահացու կսկիծ մը պիտի լինէր եթէ իմանայի որ յանդիմանական խօսք մ'ողղեր ես անոր իմ պատճառաւ : Թերևս պիտի կարծէ որ իմ հաւանութեամբս կ'հետևիս ընթացքի մը զոր իբրև քրիստոնեայ և իր արժանապատուութեան հոգածու մարդ մը կ'գսրովեմ :

«Աւ իս բարեկամութիւնդ քեզ կ'մոլորէ : Այդ ազնիւ զրացումը պէտք չէ որ քեզի վատ գործի մը յորդորէ :

«Էլիմակ որ քեզի փոքր ինչ յանդիմանեցի, պարտիմ շնորհակալ լինիլ քեզ աղւոր և ջերմադին զրոյդ համար : Այդ նամակը միայն եկաւ իմ առանձնութեանս սփոփանք բերաւ : Աերստին պիտի կարգամ զայն . ուրիշ զիրեր ալ պիտի դրես ինձ, և մարդոց հետ այս վերջին յարաբերութիւնս, սրտիս այս վերջին փոխանակութիւնը քոյդ հետ՝ խորին մենաւորութեան մը տխրութեանց թեթև սփոփում մը պիտի լինի :

«Մեծապէս շնորհակալ եմ այդ վեհանձն աստուծոյ թեմանց  
համար : Յուսամ որ անոնց դիմելու պէտք չպիտի ունենամ :  
Բայց քաղցր է ինձ դիտանալ որ երկրիս վրայ մարդ մը կայ որ իր  
ճակտին քրտինքն ինձ կ'ընծայէ : Մնաս բարեաւ , բարեկամդ իմ :

«Անձնու էրդ .

«ԺՈՒԼԻՕ» :

Հանդարտ հովտին մէջ՝ ուր ժուլիօն առանձնացաւ , մեծ դէպք  
մ'եղաւ իր դալուստը : Երբոր կիրակի օրեր՝ լեռնաբնակ ժողո-  
վուրդներն իրենց սնակներէ իջնելով՝ եկեղեցւոյն սուղե կ'իջրմ-  
բուէին փոքրիկ զանդակին ձայնին , քահանայն՝ որ կրօնական զգեստ  
չէր կրեր , այլ միայն սև թիկնոց մը , այլ և այլ խմբերէն կ'անց-  
նէր և եկեղեցւոյ միջավայրին ծայրը՝ առաջնին մօտ կ'կենար :  
Ան՝ ժուլիօ լին , երկիւղած՝ երբոր ժամերդ թիւնը սկսէր՝ պա-  
տարադիչ քահանային աղօթից կ'հետեւէր ամենէն խոնարհ հա-  
ւատացելոյ մը բարեպաշտական ուշադրութեամբ :

Գաշտային ժողովուրդներն այնքան կրօնամոլ չեն , և՛ ՚ի բայ  
առեալ հինգ վեց մոլեռանդ կանայք որ Գանրանի մէջ կ'ներկա-  
յացընէին պառաւ տիկին Քարբէտի գեղեցիկ իտեականը , ոչ ոք  
այս անոյշ , բարեսէր և հեղ մարդուն դէմ ատելութեան , չա-  
րակամութեան ակնարկ մը չնետեց :

Կախ մտածեց որ եկեղեցական պճղնաւոր հագած ներկայանայ  
կիրակի օր , խորանին ոտքը կենայ և անկից պատարազը մտիկ ը-  
նէ : Արդելում մը իշխանութեան լոկ արտաքին դործողութիւն  
մ'է : Եկեղեցւոյ խորհրդոց մասնակցութեան իրաւունքէ չզրկեր :  
Ինքնին ազա կ'բերէ արդելումն՝ երբոր եկեղեցականի մ'եպերելի  
դործոց համար կ'տրուի : Ժուլիօյի այնքան սուրբ և քրիստոնեայ  
կենաց մէջ բնաւ այսպիսի բան մը տեսնուած չէր : Անտարակոյս  
եթէ ժուլիօ կիրակի օր պատարադի ատեն սպասաւորէր , բնաւ  
դժարը չպիտի դար , քանի որ քահանայական նուիրապետութեան  
մէջ առաջին ընծայումն է : Ըսենք նաև որ իրեն շատ քաղցր  
պիտի թուէր պատարադիչ քահանային մօտ՝ փոքրիկ դպրին տեղն  
անցնիլ , և դինին ու ջուրը ներկայացընել : Այս ամենը բնաւ

նուաստութիւն մը չպիտի երևէր այս բարձր իմացականութեան :  
Այս ամենը կարելի պիտի լինէր եթէ ուրիշ ժողովրդապետ մը  
դանուէր ՚ի Գանրան քան թէ Պ. Պարնապէն , որ Կախէն էր-  
կրօնաբան ամենէն ջերմ բաժանորդներէն մին էր և Պիրէնեան  
լեռանց մէջ ամենէն վաւուրն անդրաբնականը : Իր աչքին  
Սաղայէլի մէկ արբանեակն էր Կախէն ներքև ընկնող և իր գրեանց  
համար քահանայութենէ զրկուող կրօնաւոր մը :

Թէև ժուլիօ անձայն էր՝ իր ներկայութիւնն եկեղեցւոյն մէջ՝  
զրկութեան առիթ կ'լինէր՝ ամէն կիրակի՝ այս Պ. Պարնապէ ե-  
րէցին համար : Եթէ ժուլիօ՝ ինչպէս ուրիշ մի շատ ողորմելի  
քահանաներ , ստորին կարգի չէլօղի մը համար փափկասիրտ ե-  
ղած , և դայթակղութեան մը պատճառաւ պաշտօնէ արդիւուած  
լինէր , գլխաւորաբար երէցը թերևս ներողամիտ դանուէր : Բայց իր  
վարդապետութեանց պատճառաւ աղարտած մարդ մը ատելութե-  
նէ զատ բան մը չէր կրնար դանել :

Այս չարակամութեան զգացումն երէցին վրայ այնքան զղալի  
կ'երևէր որ՝ սրսկման ատեն՝ երբ գեղայիք եկեղեցւոյ միջավայրը  
ծուրը դրած էին , և թէ ժուլիօ՝ անոնց մէջ կեցած՝ կ'ծուէր խաչ  
հանելով՝ վարպետ Պարնապէի ակնարկը կարծես թէ բոցեր կ'ար-  
ձակէր , և քանի մ'անգամ այնպէս պատահեցաւ որ երեսն ՚ի  
վար լիաջուր մշտիլը սրսկեց :

Գիւրլին է երևակայել որ քարոզի ատեն՝ երէցին բերնէն ինչ  
յայտնի ակնարկութիւններ կ'ելնէին ժուլիօյի դէմ : Աստուծոյ և  
Պապին թշնամիները , յեղափոխութեան կուսակից քահանաները ,  
Սուրբ Պետրոսի տասնորդին համար բարի կամօղիկաց եռանդը ,  
Լուրտի քարանձաւը բարեյաջող առիթներ էին նախատինք տե-  
ղալ այն անձին դէմ զոր չէր յիշեր երբէք — Լիմուլի համա-  
դումարին ակնարկութիւն ընելով — այսինքն անխեղութիւն :

Որովհետև մեր կրօնամոլը միանգամայն փառասէր էր , և վի-  
ճակի մ'առաջնորդութեան աչք ունէր , իր թեմին մէջ ժուլիօյի  
բնակութենէ օգուտ քաղելու ջանաց՝ որպէս զի իր անբաւ եռանդը  
յոյց տայ : Գարպի եպիսկոպոսարանը դնաց նա , անդ իբրև հա-  
ւատոյ ախոյեան կանգնելով՝ ըսաւ թէ գժբաղդութիւն մ'է իրեն

Համար իր թեմին մէջ այնպիսի մարդ մը պահել որ Հռոմի վճիռն երուն դէմ կենալուն հասարակաց դայթակղութիւն կ'պատճառէր : Մեծ ցաւ ցցուց որ քաղաքային օրէնքը՝ որ նպատաւոր էին մոլորութեանց , կ'ներէին այս մարդուն որ իր ներկայութեամբը պղծէ հաւատացելոց ժողովը , և յայտարարեց որ՝ եթէ Թուլիօ՝ իր տկար կազմութեան նայելով՝ իր թեմին մէջ մեռնէր , զանի չպիտի թաղել տար՝ եթէ իր մոլորութեանց մասին բացորոշ յետս կոչում մը ստանալու չյաջողէր :

Պանդերի առաջին կրօնական ժողովին մէջ՝ Պ. Պարնասպէ փութաց նոյն ուժղնութեամբ խօսիլ Թուլիօյի դէմ՝ վիճակին բոլոր երէցներուն առջև : Ոմանք՝ որ այս մարդը կ'ճանչէին , այսպիսի գեղեցիկ եռանդեան մը նպատակը տեսան , բայց միւսները , Բոնուրկի ճշմարիտ ոչխարներ , բարի դատին ազդու ախոյեանը պաշտպանեցին , և բոլոր այս կղերին համար , որ բնասպէս բարի է և պարկեշտ՝ Գանբանի մենակեացը դռողութեան հրէշ մը , Եկեղեցւոյ և Պատին դէմ աստտամբ մ'երեցաւ՝ զոր պարտ էր ոտից ներքև ճղմել :

Թուլիօ՝ իր սովորական երկայնմտութեամբն այս ատելութեանց հանդուրժեց : Եկեղեցական ամենազօր նուիրապետութեան առջև մեծ մնացեր էր , և բնաւ փոյթ չէր ըներ այն թեթև խայթուածքներուն համար որ այլանդակ կուսակցութեան մը գրգռութիւններէն՝ մոլեռանդութեան մէջ ընկած էին և չէ թէ սրտի չարութենէ :

Սակայն իր անոյշ և սիրող հոգին տազնապ զգաց վերստին հալածանք կրելուն՝ իր խեղճ եղբարց կողմէ՝ իրեն պէս ցաւաղին մարդիկ՝ փարիսեցիութեան և տիրապետութեան ներքև ճնշուած մարդիկ՝ ինչպէս որ ինք ճնշուած էր : Անոնց համար մարտեր էր և եթէ իր ձայնն եկեղեցւոյ մէջ լսելի լինէր , անտարակոյս զանոնք պիտի ազատէր ներկայ ստրկութենէ : Այն որ իրենց ազատարարը լինիլ ուզեր էր ամենէն չափաւոր մարդոց աչքին խեղճ յիմար մը կ'երևէր , իր խորհրդոց մէջ մոլորած , իսկ կրակոտ գլուխներուն առջև՝ լոկ Եկեղեցւոյ թշնամի և հաւատաքննչաց ձեռքը յանձնուելու արժանի մարդ մ'էր :

Մարդկութեան մէջ օրէնք մ'է , քառող և աղատող զոհը միշտ նզովք կ'կրէ :

Օդոստոս և սեպտեմբեր ամիսները Գանբանի ամառանոցն անցան : Թուլիօ հինգ վեց ժամու չափ դիր կ'դրէր ամէն օր : Հանձարի տէր մարդոց հեշտութիւնն է մտքի մեծ աշխատութիւնը : Եթէ երկունքն երբեմն վշտաղին է և բացատրութիւնը տկար , եթէ գրեչն իր յայտարարութեանց մէջ կ'վարանի որ ստէպ ստուերաղիր մը միայն կ'երևին , ինչ սուրբ ուրախութիւն զգայ խորհող արուեստագէտն երբ իր իտէականին կ'հասնի : Թուլիօյի գրադիտական տաղանդին մէջ շատ բանահիւսութիւն կար :

Այս գրչէն մեզի մնացածը Լամնէի աղւոր էջերը մեզի կ'յիշեցընեն աւելի փափուկ գոյնով մը : Նա սիրեր և տառապեր էր : Լամնէ երբեք սրտովն չէր ասրած , թէ և իր գրակցութիւնը կը ցուցնէ՝ հրային հոգւոյ մը մօտ՝ ամենաքաղցր սիրոյ զգայուն սիրտ մը :

Մեր գտած հատուածները՝ որ խառնուած էին այն թղթերուն հետ որով այս պատմութիւնը գրուեցաւ , կարծես թէ գրքի մը կ'վերաբերին զոր քրիստոնէութեան ճակատագրին վրայ կ'ուզէր գրել : Այս էջերէն մէկ քանին մեր ընթերցողաց կ'ընծայենք , թերևս այս ազնիւ և քաղցր հանձարին ներշնչուած յետին էջերն են :

ԺԲ

ԹՈՒԼԻՕՅԻ ՎԵՐՋԻՆ ԷՋԵԲԸ

«Իմ մենաւոր լուութեան մէջ՝ առանձին Աստուծոյ առջև՝ երբ իմ մտածութեանցս անդորրութիւնն աշխարհային աղմուկ մը չէր վրդովէր , հարցուցի իւրովի , թէ ինչ պիտի լինէր Եկեղեցւոյ ապաղայ վիճակը :

«Եթէ իմ տեսած իս վրայ հիմնէի իմ կարծիքս , եթէ մեր դատուն յաջորդող դարերը դատէի , տասնիններորդ դարու կաթոլիկ

կղերին հետեւած ողորմելի մեթոտին նկատմամբ, պիտի ըսէի, այս ժամանակիս մէկ ազգաւ խորհողին հետ, թէ կաթողիկոսութիւնն երկայն կեանք չունի:

«Տանու թերոգ դարուն առաջ բերած մեծ յուզմունքէն ետքը, կատկածներով լի սերնդի մ'առջև՝ որ քրիստոնէութեան սահմանական տարերքը կազմող վարդապետութեանց ներհակ դադափարներով տողորուած էր, կղերը՝ փոխանակ բանաւոր մեթոտին հետ աւելլու որ այնքան յաջողութիւն ունեցաւ՝ ֆէնէլժոնի և Պօսիւէի ժամանակ, բողոքականները դարձնելու, կղերն աւելի պատշաճ և կոփամարտութեան լաւադոյն մեթոտ համարեց ցուլն եղջիւրներէն բռնել և իր խոշոր ձայնով անոր պոռալ:

«— Հրէշ, քեզ պիտի տապալենք: Ա՛հ, դու բանականութիւն կ'ուզես, քեզ պիտի ստիպենք, փոքր առ փոքր, մեր ամենէն ապուշ հաւատալիքը քեզ կ'լլել տալու: Գու իմացականութեանդ դերազանցութիւնը կ'հոչակես, կ'հոչակես աշխատանքդ, դիւտերդ, նոյնք պիտի կարգանք այդ կարծեցեալ քաղաքականութեան գէմ՝ որով անչափս կ'պարծիս. պիտի երկինք բարձրացնենք այն դարերը՝ ուր մարդկային ազգը՝ քահանային առջև ծունր դնելով, որ իրեն Սատանին վախը կ'ազդէր, օրհնեալ ջրով կ'սրսկուէր որպէս զի չար ուրին վռնտէ: Այնքան բարձր պիտի խօսինք՝ մեր եպիսկոպոսաց բերնով կոնդակներու մէջ, մեր քարոզիչներու բերնով իրենց քարոզներու մէջ, մեր ժողովրդապետաց բերնով իրենց ողբոց մէջ, թէ ազատութիւնը չարիք մ'է, թէ իրաւունք մը միայն կայ, այս է Աստուծոյ իրաւունքը, որ անտարակոյս քահանային բերնով պիտի սահմանուի, որ նախ կանայք, ապա իրենց որդիքը վերջապէս մեզի պիտի հաւանան, և բոլոր այս դուռը սերունդը մեր ոտից առջև պիտի խոնարհեցնենք, Սաղանը պիտի վերահաստատենք, նոյնպէս իր նենդութիւնները, իր զորութիւնը, հետեւապէս՝ իր ոյժը նոյն իսկ Աստուծոյ գէմ, ինչպէս միջին դարուն՝ չարին Աստուծոյ պիտի ընենք՝ որ յաւիտենական անդունդները կ'բանայ, այնքան պիտի սպառնանք Սաղայելին միջոցաւ, որ պիտի յաջողենք ստիպել մարդիկը գալ մեր ձեռքը բռնել և մեզի ըսել. Գթութիւն, մեզ փրկեցէք»:

«Այս վայրագ յանդիմութեան յատակագիծը՝ զոր կարծես թէ անըջատես վանականի մը գլուխը յղացած լինի, ծամապահութեանէ և երկար հսկումներէ ետև՝ որ բան լապուշանայ կ'տանին, քահանայական սերունդ մը պիտի հրապուրէր, հրապառ, իր ամբողջութեամբը սիրոյ այն ներքին ուրախութիւններէն զրկուած սերունդ մը: Այս քահանայական դասը՝ աննպային եռանդով ընդունեց այս յատակագիծը աշխարհը դարձնելու համար: Քրիստոսի աշակերտները՝ վարդապետին խօսքերը շուտ մը մոռնալով՝ իրրեւ առած ընդունեցին. երկնից հուրը թափել տանք այս յանցաւոր սերունդին վրայ: Եւ ահա՛ իրարու հետ կ'մրցին՝ արեւելեան ֆաբրիկներուն պէս կ'բորբոքին, տկար և խանդապին բնաւորութեան տէր մարդիկը միստիքականութեան մղելով, պաշտաման մ'ամէն չափազանցութեանց տանելով, պաշտօն մ'որ արդէն լի է սնտախ և հակաքրիստոնեայ վարժութիւններով՝ որ միջին դարու երկոտասան դարուց յատուկ է:

«Իրաւի, ինչ կարելի է յուսալ այսպիսի զրութիւններէ և այսպիսի մարդիկներէ:

«Կաթողիկոսութեան ընդունած այսպիսի կացութեան մը տրամաբանական անվրէպ հետեւութիւնն է, կամ արդի աշխարհը պէտք է որ ընկրկի և Յանուսի գէմքը պաշտելու զիջանի, որ ետին կը նայի, կամ պէտք է որ կղերը ներկայ քաղաքակրթութեան հետ առջևէն քաշելու յանձն առնու: Այս սոսկալի երկսայրաբանութեան միջին ճամբայ մը չեմ տեսներ:

«Ընկրկիլ, պիտի ըսէ աշխարհը, որ այնքան իրաւամբ կ'պարծի իր դիւտերուն, իր ամենօրեայ աշխատութեանց վրայ, ապագային մէջ տեսած բարօրութեան և մեծութեան հորիզոններուն վրայ, ադիտութեան դարերուն դառնալու համար: Այդ կարելի չէ: Մեր ունեցածը հազարապատիկ աւելի կ'աժէ: Ինչ եղական դադափար: Անշահ փաստ մ'է զոր շահիլ կ'ուզեն, անշուշտ, քանի մը յիմարներու հաճոյք պատճառելու փափաք չունինք:

«Քալել, կ'ըսէ կղերը, այսինքն նիւթական աշխարհին վրայ մեր տիրապետութենէ՝ հրաժարիլ, մնաս բարեւա ըսել այս աստուածապետական դրութեան, որ ամէն ինքնակալ Եկեղեցոյ արտա-

քին եպիսկոպոս կ'ընէ , այս բանս խնդրել , մեզնէ անկարելին խըն-  
դրել է . մենք այդ բանը չենք ուզեր :

« Աւրեմն ո՞վ պիտի տայ : Աչ ոք :

« Մի՞թէ պատերազմը յա խտենակա՞ն պիտի լինի :

« Անտարակոյս ս'չ , պարտեալ մը պիտի գտնուի :

« Բայց եթէ կարծենք թէ այս պարտեալն ամբողջ ժամանակ  
մը լինի , մտային զարգացմամբ ամենէն զօրաւորն երևցող մարդ-  
կային ազդի պատմութեան մէջ , չափազանց դիւրահաւան պիտի  
համարուինք :

« Աւրեմն կղերը պիտի յաղթուի անվրէպ :

« Շայրայեղ պահանջմանց և յանդուգն լեզուէ մ'ետք՝ ինչ-  
պէս որ կ'տեսնուի ամէն օր հրատարակութեանց մէջ , զոր իր  
համակրութեամբ և ոսկիով կ'պահպանէ , յուսահատութեանց շքե-  
ջանը պիտի դայ : Աղերը չկրնար դիտել այն պարագն որ օր ըստ  
օրէ իր շուրջը կ'բացուի , գուեհիկ ամբոխ մ'իր ետեէն կ'երթայ  
տաճարը , մանուկը՝ մօր ձեռօք առաջնորդուելով՝ անոր պատկա-  
ռանք կ'չուայլէ : Այնը զանի իբրև առաջնորդ կ'բռնէ և իր ամե-  
նէն դաղանի խորհուրդներն անոր կ'բանայ . կան նաև մարդիկ որ  
անոր կ'երթան ու կ'ըսեն . Առանց ձեզի՝ ընկերութիւնը քանի մը  
օրուան մէջ պիտի կործանի : Այնուհետև ինչպէս կարելի է որ  
կղերն ինքզինքն երեսէ ձգուած համարի , մանաւանդ երբ մեծ աղ-  
գեցութեան մ'ամէն արտաքին նշանները կ'պահէ . . . :

« Սակայն կղերը՝ օր մը պիտի տեսնէ այս աղէտալի պատրա-  
նայ ջնջումը . պիտի տեսնէ որ մանուկը , պատանի գառնալով՝  
կ'փութայ մոռնալու մինչև քրիստոնէի նշանն որ իրեն սորվեցու-  
ցեր էին : Պիտի տեսնէ որ մարդը՝ այն մարգն որ միայն աշխար-  
հի ճակատագիրը կ'ուզէ , իր հաւատքէն բան մը չէ պահած ,  
որ մանկային ուսում մ'եղած է , և երբէք իր բնակութեան սրբա-  
վայրը չէ մտած : Պիտի տեսնէ որ կինը՝ կրօնական մեծ խնդրոյ մէջ  
լքեալ , ինքնին չկրնար՝ իր լաւ բնազդումներով , իր սիրոյ և ա-  
զօթից պիտոյքով՝ եկեղեցին կազմել :

« Եւ երբ այս սոսկալի իրողութիւնները քահանային երևին ,  
երբ ազատ մտածութիւնը , ամբողջ գարու մը յամառութեանց և

սխալանաց միջոցաւ մեծնալով՝ ապաղայ սերնդոց մէջ արշաւէ ,  
այսօրուան անվարելի եկեղեցական միաբանութեան մէջ մուտ  
դանէ , այն ատեն այս քահանայական դատուն մէջ ձայն մը պի-  
տի ելնէ խոնարհ և անկեղծ որ պիտի գոչէ . Խաբուեցանք : Աշ-  
խարհն եկեղեցականութեան հաճոյից համար չլինուեցաւ , քահա-  
նայութիւնը շինուեցաւ որ աշխարհին օգնէ դէպ 'ի բարին : Այն  
օրն՝ եթէ յարութիւնը կարելի է , պիտի դադար առնու կղերն  
այն խաբէական ճամբուն մէջ ուր ընկած է կուրօրէն : Բայց մին-  
չև որ կղերն այս անկարողութիւնը խոստովանի , մինչև որ պա-  
պերը , կարտինալները , եպիսկոպոսները , այս քահանաները յանձն  
առնուն փոքրնալու , Պալիլեայի ձկնորսներուն պէս առաքեալ լե-  
նելու , հեղ քարողիչներ գառնալու՝ սպաղայ աշխարհին մեծ քա-  
ղաքաց մէջ , ինչպէս Պետրոս 'ի Հռոմ՝ երբ համեստութեամբ նո-  
րածին եկեղեցւոյն մէջ իր կնիկան հետ կ'ապրէր , ինչպէս Պօղոս  
'ի Արնթոս , երբ զինուորական դործարանի մը մէջ օրողչէքով  
կ'աշխատէր , ինչ սոսկալի պատառումներ , ինչ պայքարներ պի-  
տի ծագին յուսահատութենէ՝ նուիրապետական դրութեամբ կաղ-  
մուած այս կրօնական խումբին մէջ :

« Արօնական միաբանութեանց մեծ դժկամակութիւնն է ըսել որ  
սխալած են , մինչև անգամ երբ խնդիրն մի միայն այնպիսի մարդ-  
կային իրաց կարողին վերաբերի , ինչպէս գիտութեան : Արիստո-  
տէլի այլանդակ դպրոցական դրութիւնը գահընկեց ընելու հա-  
մար պէտք եղաւ երեք դար մաքառիլ . հզօր միաբանութիւն մը  
զանի պաշտպաններ էր : Ինչ պիտի լինի եթէ գործը կրօնական  
իրերու վրայ դառնայ : Նոր օրինաց եկեղեցւոյ անսխալութեան  
ներքև պատասպարուելու վարող դպրաց ինքնասիրութիւնն ս'ըչափ  
պիտի վերաւորի երբ հարկ լինի իրենց խոստովանելու որ սխա-  
լական , շատ սխալական եղած են , և թէ իրենց դժբաղդ յամա-  
ռութիւնը նոյն իսկ Եկեղեցին անդունդին եղըր տարաւ :

« Ա՛հ , ս'չ , քահանայք , իմ եղբարքս , որչափ որ ձեր առանձ-  
նական առաքինութեանց պատճառաւ պատկառելի էք , սակայն  
անսխալական չէք : Քրիստոնէական դառնութիւնը կ'յայտարարէ  
թէ Յիսուս Քրիստոս Եկեղեցւոյ մէջ տեղն է մինչև դարոց վախ-

ճանը , այսինքն չպիտի թողու որ դաւանական սխալմունքն իր մէջ տիրապետէ . արդէն փառաւոր արտօնութիւն մ'է Աստուծոյ ողորդման մնայուն պաշտպանութիւնն Եկեղեցւոյն վրայ : Աւելի զեղեցիկ համարեցիք ձեր վրայ առնուլ , դուք որ Եկեղեցին չէք , այլ Եկեղեցւոյ մէկ մասը , ինքզինքնիդ անսխալական հրատարակելու պաշտօնը : Եկեղեցւոյ մէջ՝ անսխալական պատուութիւն ծախեցիք , ամէն վիճակի մէջ՝ եպիսկոպոսն անսխալական , ամէն խոստովարանի մէջ՝ երէցն անսխալական , սակայն այդ ձեր ամբարտաւան պահանջման համար պիտի պատժուիք : Մարդս որչափ բարձրանայ , այնքան քահանայական խնամաատրութենէ նուազ պէտք պիտի ունենայ : Արդէն քրիստոնէութեան առաջին տարիները՝ այն ժամանակները՝ երբ մարդկային միտքը դեռ ևս կ'իջարկէր շատ բաներու վրայ , այս խնամաատրութիւնը հազիւ ծանօթ էր : Աւետարանն երկայն ժամանակ մեծ ազատագրութեան միջոց մ'էր , մարդս սիրոյ օրինաց ներքեւ դնող օրէնք մը , որ ազատութեան օրէնք մ'է . պէտք եղաւ բարբարոսութեան բերած բոլոր աղէտքն ու ստորնութիւնները , որպէս զի քահանայն՝ որ թէ՛ կենաց իրերուն և թէ՛ հոգւոյ շահուց առաջնորդ էր , Աստուծոյ և մարդուն մէջ անհրաժեշտ միջնորդ դառնայ ամէն ժամ :

«Որչափ քաղաքակրթութիւնը յառաջ երթայ , այնքան քահանայական մարմնոյն արտաքին ներգործութիւնը պիտի տկարանայ , ինչպէս որ պիտի տեսնենք : Բայց միթէ քահանայն այս զոհողութիւնը պիտի կամենայ ընել . միթէ մարդկային հոգւոյ այս ծանր ու օրինաւոր ազատագրութիւնը պիտի հասկընայ , ինչպէս որ այս ժամուս չհասկընար զժբազդաբար քաղաքային , քաղաքական և ընկերական ազատագրութիւնը , և որու մէջ միայն կ'յամառի տեսնել մարդկային գոռողութեան յեղաշրջում մը , յանուն Սատանի ապստամբութիւն մը Աստուծոյ դէմ :

«Ինչպէս իզմէ առաջ բարեխորհուրդ մարդիկ՝ ես ալ երկարատեւ մտածեցի թէ կարելի էր կղերը պատրաստել ընկերական նոր կենաց : Ահա այս է մեր ճգնաց պատճառը ժամանակակից հրատարակութեանց մէջ : Չյաջողեցանք , բոլորովին չյաջողեցանք : Ուրիշներ պիտի դան նոյն յոյսերով , նոյն պատրանք , մի

և նոյն արդեւքը պիտի դանեն : Ո՛րչափ ժամանակ պէտք է քահանային իր նոր դերը հասկընալու համար : Մինչև այն առնն՝ ամէն հաշտութեան փորձերն անոր և նոր թուականին մէջ անգոր պիտի մնան : Մարդ կրնայ համոզուիլ ճշմարտութեան , կրնայ շահն ու ինքնասիրութիւնը զոհել , բայց դաս մ'անձնատուր չլինիք , չկրնար զիջանիլ ամենէն թեթեւ արտօնութիւնը զոհել , միայն թէ երկայն ու սոսկալի աղէտք վրայ գալով՝ իր անհաշտելի ընդդիմութիւնները խորտակէ : Այն առնն վերջին պայքար մը պէտք է : Բայց միայն պարտեալներ կան , ուրիշ հիմանց վրայ կ'սկսին տապալեալ հին շէնքը :

«Ահա այս է ապագան :  
«Ինչպէս պիտի կատարուի այս կործանումը , միթէ յեղափոխութեանց պէս յանկարծական պիտի լինի . միթէ ծանր պիտի լինի ընկերական զարգացմանց պէս որ դարերով կ'իրանան :

«Ահա այդ Աստուծոյ մէկ զաղանիքն է :  
«Սակայն ինչ որ զաղանիք չէ , մարդկային ողորդ յաղթութիւնն է , որ աստուածայետութեան սարդի ոստայնին մէջ չպիտի բռնուի երբէք , դասու մը վճռական ցածութիւնն է որ դեռ այսօր զօրաւոր է , որ՝ երկայն ժամանակ ժողովրդոց անյայտ մնացած նենդութիւններով՝ իր անձնական շահերը նոյն իսկ կրօնից շահուց հետ միացուց :

«Այս պիտի կործանի անյաբիր :  
«Բայց Աւետարանի միջոցաւ մեզի հասած ճշմարտութիւնն անկորնչելի է» :

Ժ.Գ.

ԺՈՒԼԻՕՅԻ ՆԱՄԱԿՆ ԱՌԻ ԼՈՒՊԷՐ

Գաւթաւ 10 հոկտեմբեր 1862

«Սիրելի բարեկամ ,  
«Սեպտեմբեր ամսուն վերջն ինձի վնասակար եղաւ : Մեր նա-

Հանդիսն երևելի մէկ բժիշկը զիս կ'նայի : Ա՛գիտեմ թէ այս արօժանի մարդն որչափ ճիգ կ'ընէ իր երկիրները ծածկելու համար : Ինձի հետ իբրև գուեհիկ հիւանդ կ'վարուի . իրաւունք ունի : Զիս բժշկելու միջոց մը պիտի լինէր այս՝ եթէ հնար լինէր բուժել այն այլանդակ նիւթական և բարոյական ցնցումներն որ ժամանակէն առաջ կ'սպաննեն : Ստէպ տիարութիւններ ունիմ : Չորս օր կայ որ բոլոր կէսօրէն ետք՝ մարած մնացի գրանդին վրայ , և իբրև մեռեալ անկողին տարուեցայ : Այժմ աւելի աղէկ եմ , մինչև իսկ բաւական ուժեղ քեղի գրելու համար . վասն զի երբեմն դէպ 'ի կենդանութիւն կ'դառնամ յանկարծակի , բայց եթէ իմ հո.թիւնս հետզհետէ սկիւրանայ չեմ համարձակիր ըսելու որ վաղը պիտի կարենամ քեղի գրելու :

«Խեղճ Լուպէր , դու միակ բարեկամն ես , իմ սիրտս դէպ 'ի քեզ կ'զիմէ այնպիսի մէկ ժամու մէջ երբ անորոշ կայծ մը կարծես թէ մեռնողներուն ցոյց կ'տայ լաւազոյն կենաց ոսկեղէն դռները : Պէտք է այս ըսածս ըմբռնես , չեմ երկնչեր մեռնելու : Աշխարհի յառաջադիմական վերաշինութեան գործը՝ աւետարանական վարդապետութեամբ , անկասար կ'ընողում : Բոլոր այս դարուս վերջը՝ և թերևս քսաներորդ դարուն ալ , այդ վերաշինութիւնը պիտի ուշանայ և թերևս վտանգի : Իզմէ ետքը վերատին պիտի սկսի : Յառաջադիմութիւնն 'ի կրօնս՝ նոյն իսկ կրօնի մէկ օրէնքն է ինչպէս որ է ամէն կենդանութիւն ունեցող բաներուն համար : Ինչ որ մեռեալ է միայն չյառաջանար : Քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ մտայի քահանայ մը հասկըցեր էր այս օրէնքն և բանաձևեր էր , այս է Աէնասն տը Լէրէն : Անկէ 'ի վեր բոլորովին մոռցուեցաւ :

«Պէտք է այս դադարաւորին վերադառնալ , զայն ամենուրեք տարածել , դարբոցական տեսութիւն մ'ընել զայն : Օրին մէկը պիտի գտնուին քահանաներ որ յառաջադիմութեան դրօշակը պիտի սլարդեն և մարդիկ Աւետարանին պիտի գառնան այն օրն որ՝ զայն քարոզելու պաշտօն ունեցողները՝ պիտի յայտարարեն թէ կրօնական յառաջադիմութիւնն ընկերական յառաջադիմութենէ չեն դատար : Այս երկու կարգերը պէտք է որ իրարու ձեռք տան և

միասին քալեն : Մարդկութիւնը՝ նպատակաւ սլարդ՝ կրկնապատիկ է իր տարերօք : Անսահմանութեան հետ իր յարաբերական կեանքն աշխարհի հետ յարաբերական կեանքը չէ , որ սահմանեալ է : Որչափ մին նոյնչափ միւսը ներելի չէ ժխտել :

«Քանի մը ճշմարտութեանց՝ որ Եկեղեցւոյ փրկութիւնն են , քիչ մը լոյս առի : Արդէն տեսար որ Հոռոմ զանոնք չհասկըցաւ , զիս աղարտեց , իր իշխանները զիս դատապարտեցին , իր դպիրները զիս վերաւորեցին : Իմ վիշտերս , իմ արտաքս , իմ արիւնս չեն կրնար ապարդիւն լինիլ : Իմ ժառանգութիւնս ուրիշներու պիտի անցնի : Եթէ երբեք՝ իմ գրած թղթերէս մին որոց մէջ իմ մտածութիւններս նշանակեցի , հաւատացող բնութեան տէր մարդու մը ձեռքն անցնի , ճշմարտութեան բողոքները չպիտի ընդհատին :

«Ուրիշ դարեր պիտի տեսնեն արևուն պայծառութիւնն որու ազօտ արշալոյսը միայն ընդշմարեցինք :

«Արևոր է վերստին ըսել այս բանս : Իմ ժամանակիս եպիսկոպոսայ կողմէ անիծուեցայ . պէտք էր որ անիծուէի : Անոնք քանի մը Աեսարներու բազկաւ պաշտպանուած կաթոլիկութիւնը միայն կ'ըմբռնեն , ոմանց առջև կ'ողողողան և անոնց պաշտպանութիւնն ու ոսկին կ'մուրան , ոմանց վրայ ալ կ'տիրապետեն և կ'ահաբեկեն :

«Ստրուկներ կամ բռնաւորներ լինելով այս աշխարհիս տիրող իշխանութեան՝ կարող էին թողուլ որ ըսուի թէ Եկեղեցւոյ համար լսի մէկ մեծութիւն և մէկ ոյժ կայ , այսինքն երկրային բաներէ կատարեալ անկախութիւն մը : Իրենց յանցապարտ սխալանաց մէջ տրամաբան եղան . ես ալ տրամաբանօրէն անոնց դէմ չմրմուացի , իմ քարոզած վարդապետութեամբս արժան գտայ որ զո՛հ երթամ :

«Գու՛ Լուպէր , բռնապէս բաժնուեցար այս մարդերէն որ քեզ մերժեցին : Այդ ընթացքը բնաւ չսիրեցի . բայց քու կրակոտ բնաւորութիւնդ զիջանիլ չզիտէ : Գու աստելութեամբ զինուելու ստիպուեցար : Այսօր կ'ինդրեմ՝ միայն որ փոքր ինչ մարդիկը մուսնաս մի միայն քեզ նկատելու համար : Քու անկեղծութենէդ կը

յուսամ որ Աստուծոյ պիտի դառնաս . ասոր համար միայն քու  
յատուկ սիրտդ քննէ :

« Լուսէր , երբեմն ժուլիօյի վրայ մտածէ : Ոչ ինչ չաղբեր  
ինձ որ այս դիրս վերջինը չպիտի լինի որ քեզի կ'ղրեմ : Իմ բո-  
լոր թղթերս քեզի հաւատարմօրէն պիտի յանձնուին : Քեզի կը  
թողում իմ զիրքերս , իմ կահ կարասիս , իմ բոլոր հաւաքա-  
ծոյքս : Միւզէն զրկէ ինչ որ չես կամիր իբրև յիշատակ պահել :  
Աղքատներուն կ'կտակեմ արժէթղթեր որոց հասոյթը կ'ընդու-  
նէի : Ասոնք են քահանային բնական ժառանգներն երբ ինք ազ-  
քատիկ ընտանիք մը չունի : Ապսպրեցի որ իմ հանդէս հողին  
վրայ քար մը , արձանադիր մը չդնեն :

« Գու ալ հոգ պիտի տանիս այս մասին :

« Մնաս բարեաւ » :

ԺԳ

ՊԻԿՕՐԻ ՀԻԻԱՆԳԱՆՈՅԸ

Ժուլիօյի ախոր 'սախաղպայուսները զինքը չէին խաբած : Ձին-  
քը սառապող հիւանդութիւնն օր ըստ օրէ կ'ձանրանար , մար-  
մրութն աւելի յաճախ կ'պատահէին : Բժիշկը՝ անոր խորհուրդ  
սուաւ՝ այն միջոցին որ ձիւները պիտի պատէին Պիլէնեան հո-  
վիտները , Գանբանէն հեռանալ , ուր օգնութեան կարօտ պիտի  
մնար , և ձմեռն երթայ Պիլիօր հաստատուի : Ժուլիօ հասկըցաւ  
թէ ինչ կ'նշանակէր այս խորհուրդը : Հաւանեցաւ : Իր վերջին  
պատրաստութիւններն ըրաւ և Պիլիօրի հիւանդանոցը փոխադրուե-  
ցաւ : Ժուլիօ Քլայվիէրի ահագին հարստութենէ մնացածը չէր  
բուեր իր վիճակին պահանջած ծախսը հոգալու : Ժուլիօ՝ իր  
ժառանգաց՝ աղքատաց մնաս շտալու համար՝ զնայ աղքատաց տունը  
մնունելու :

Հիւանդանոցի բարեսէր քորը մեծ փոյթով ընդունեցին երևելի

հիւանդը , տաքուկ սենեակ մը տուին անոր , որմէ հեռուն երկար  
հովիտը կ'տեսնուէր և զայն սուղող Ասիլ գետը : Կոյեմերի  
վերջին օրերը՝ Ժուլիօ աւելի լաւ վիճակի մէջ գտնուեցաւ : Եր-  
կու երեք անգամ իր սենեկէն դուրս կըցաւ ելնել և իր բնակած  
գատիկոնին նրբադաթին մէջ քիչ մ'ատեն պտըտիլ :

Օր մ'որ սովորականէն աւելի պտըտելէն ետև՝ իր խոցը վե-  
րագարձաւ՝ անդ դտաւ քոյր Թէրէզ՝ որ ութ օրէ 'ի վեր յատ-  
կապէս իրեն սպասուորելու յատկացած էր : Արդէն դիտեր էր  
որ այս քոյրը զինքը կ'խնամէր այնպիսի մտացի , սիրաւէտ և դո-  
բովալիւր եռանդով զոր հիւանդները կ'փափաքին տեսնել իրենց  
մօտեցողներուն վրայ :

Քոյր Թէրէզ անոր փոքրիկ ճաշ մը պատրաստեր էր այնպիսի  
բաներով զոր ժուլիօ կ'սիրէր :

— Ո՛հ , ս'ըչափ աղէկ էք այսօր , ըսաւ անոր մեծարելով :

— Այո՛ , քոյր իմ , աւելի աղէկ , շատ աղէկ եմ : Ա՛յնչափ  
լաւ կ'խնամես զիս :

— Ո՛հ , եթէ Աստուած իմ աղօթքս լսելու հաճի :

Եւ քանի մ'արտօր թափեցան հիւանդապահ աղջկան աչերէն :

Ժուլիօ տեսաւ այս արտասքն ու սիրաբ շարժեցաւ :

Ինչո՞ւ այսչափ համակրութիւն կ'ազդէր սոյն խեղճ քորջ , որ  
սովորած էր արդէն տեսնել բազմաթիւ ծիրակաւն ախտով մար-  
դոց մեռնիլը՝ երբ տերևները կ'թափէին :

— Ուրեմն շատ կ'աղօթես ինձի համար , քոյր Թէրէզ :

— Ո՛հ , այո՛ , պարոն արեղայ , շատ կ'աղօթեմ ձեզի համար :

— Շնորհակալ եմ , աղջիկս . երկրիս վրայ դու վերջին անձն  
ես որու վրայ համակրական զգացում մը կ'տեսնեմ : Շատ շնոր-

հապարտ եմ այս ընթացքիդ համար , նոյնպէս այդ անձնուիրու-  
րութեանդ որ երբեմն կ'վախնամ թէ , կարողութենէդ աւելի վեր է :

— Շատ իրաւունք ունիք իմ աղօթից և իմ անձնուիրութեան :

— Ես չեմ հասկընար միտքդ , աղջիկս :

Այս միջոցիս Թէրէզի այտերը սաստիկ կարմրեցան , և որ-  
պէս թէ բերնէն զազանիք մը պիտի սարգէր .

— Քաջ կ'դիտեմ որ զիս շնանչէր էք :

— Ո՛չ, չճանչեցի քեզ, աղջիկս. կարծեմ թէ քեզ առաջին անգամ այս տեղ կ'տեսնեմ:

— Ես շատ մը ճանչեցի ձեզ Գանբանէն եկած օրդ: Շատ երջանիկ եղայ՝ երբ՝ ութ օր կայ՝ ինձ բսին թէ ձեզ պիտի սպասուորեմ: Բայց՝ ձեր քովը դալէս 'ի վեր՝ ամէն ջանքս ըրի, որ ո՛վ լինիլս, և ինձի համար ըրածնիդ ձեզի յայտնեմ, բայց չհամարձակեցայ: Ձեզի պարտաւոր եմ կեանքէս աւելի թանկագին բան մը:

Թուլիօ մտածեց որ քոյր Թէրէզ՝ երբ 'ի Տ . . . փոխանորդ՝ կամ 'ի Սէնդ-Ալանտէն հովիւ էր, առիթ ունեցած էր խոստովանութեան ժամանակ իրմէ խորհարգներ ընդունելու: Այս մտօք անոր սբատասխան տուաւ.

— Աղջիկս, քանի երջանկութիւն կ'ըզանք երբ մեր պաշտօնին մէջ բարիք ընելու կ'յաջողինք:

Հետզհետէ Թէրէզ քոյրը կ'այլայլէր: Գունատ էր և դողդօջուն: Աերջապէս չկրնալով դիմանալ՝ սկսաւ յորդ արտօսք թափել, և Թուլիօյի առջև ծունր դնելով՝ և ձեռները բռնելով՝ անոր ըսաւ.

— Ախ հովտէն եկող աղջիկն եմ ես, որու սբատիւն ազատեցիք: Այժմ գատեցէք թէ ո՛րչափ կ'սիրեմ ձեզ:

— Խեղճ աղջիկ, Աստուած մեծ շնորհներ պարգևեց քեզ, և զիս կ'սիրէ որ իբրև միթարութեան հրեշտակ քեզ ինձի զրկեց: Փա՛ռք քեզ Աստուած, այս աղջկան թևերուն մէջ պիտի մնանիմ. զիս երեսի վրայ չթողուցիր:

— Ո՛չ, ո՛չ, չպիտի մեռնիր. նայեցէք, աւելի աղէկ էք. յուսացէք: Ա՛հ, եթէ կարենայի իմ այս անօղուտ, աննշան կեանքս տալ ձեր թանկագին կենաց համար:

— Թէրէզ, աղջիկս, կ'սխալիս: Ես շատ մտածեցի, շատ դրեցի: Աստուած այս բոլոր բրածս պիտի վարձատրէ անշուշտ իմ ունեցած խորհրդոց մաքրութեան համար: Իմ գործերէս ի՞նչ պիտի մնայ: Գու, զաւակս, քու եղբարցդ տաւապանքը սփոխելու նուիրուեր ես: Աստուծոյ դատաստանին առջև Թուլիօ զրազէտն այնքան մեծ արժանիք չպիտի ունենայ որչափ զթութեան քոյր Թէրէզը:

— Պէտք է որ սպրիք, և պիտի սպրիք, ես ինչպէս լաւ պիտի խնամեմ:

Եւ այն օրէն՝ Թէրէզ այժմ ծանօթ և սիրեցեալ, իր սիրաւիան հիւանդին համար կտոր կտոր կ'լինէր: Այս խնամքն սպարդիւն չմնացին: Թուլիօ քանի մը շաբաթ ևս սպրեցաւ: Իր սիրան այս վերջին սիրով բացուեցաւ. տենդէն տեսած աղօտ երազներն իրենց հրասլոյրն ունէին. երբեմն կարծէր գտնել Աուիզը Թէրէզին մէջ. իր մտաց մէջ անոնց նկարներն իրարու հետ կ'շփոթէին: Անոնց կ'ժպտէր և Թէրէզ ստեպ Թուլիօյի այսպէս մըրբ մնջելը կ'լսէր. — Անոյշ բան է սպրիլ երբ մարդ սիրուած է:

Բայց որչափ որ հիւանդութիւնը ծանր կ'յառաջանար, դարձեալ անընդհատ էր: Թուլիօ՝ իր քահանայական կենաց մէջ՝ օր մը չէր անցուցած առանց իր աղօթքն ընելու. ժամանակը հասաւ այս իր ըզեղին համար շատ յողնեցուցիչ աղօթքը զանց ընել: Եւ բժիշկը՝ զլուխն օրելով տխրադին, քրօջն ըսաւ.

— Թերևս քիչ ատենէն զանի պիտի կորուսես:

Երբոր Թուլիօ Գանբանէն հեռացեր էր՝ երէցը Պիօր եկեր էր կրօնական եռանդ ցոյց տալու. հիւանդանոցի ողորմաբաշխին և վերակայուհիին այցի եկեր էր: Միտիբական կերպարան մը դասելով հեռեկալ հրաշալի բաները խօսեր էր.

— Թէ Հռոմ այս քահանային զիրքը դատապարտեր էր, թէ կարիպալտիի գործակից յեղափոխական մ'էր նա, թէ Գրան-Մասօններու և սուրբ աթոռին բոլոր թշնամեաց հետ յարաբերութիւն ունէր, թէ Հռոմի խռովութեանց մասնակից եղեր էր, թէ ինք՝ իբրև հովիւ՝ եթէ Թուլիօ իր թեմին մէջ մնար, չպիտի կարենար խղճի մտօք անոր արձակում տալ, առանց կանխաւ իր մոլորութեանց յետս կոչումն ընդունելու, թէ վերակացուհի մը, ողորմաբաշխ մը մեծ մեղք պիտի գործէին եթէ ամէն պէտք եղած միջոցներն 'ի գործ չդնէին այն վայրկեանին որ այս քահանայն՝ բոլոր բժշկաց կողմէ դատապարտուելով՝ մեռնելու մօտ գըտնուէր:

Վերակայուհին լաւ կ'ին մ'էր, որչափ լաւ նոյնչափ միամիտ: Այս գործին մէջ ճիւղներ տեսաւ: Ողորմաբաշխը կ'ուզէր յա-

ուսմանալ, պէտք էր լաւ անուն սունուլ և ասոր համար եռանդ  
ցոյց տալ: Աստի միասին խորհրդակցեցան, և օրին մէկը՝ հիւ  
ւանդին սենեակը մտան ծանր կերպարանքով մը: Թէրէզ քոյրն  
անդ չէր:

— Խօսէ, մայր իմ, ըսաւ ողորմաբաշխը:

— Գու քահանայ ես, պարոն շնորհաբաշխ, գու խօսէ պարոն  
արեղային:

— Սիրելի եղբայր իմ, ձեր մօտ դժուարին պաշտօն մ'ունիմ  
կատարելու . . . :

Ժուլիօ անոր խօսքն ընդհատեց:

— Բնաւ դժուարին չէ, պարոն արեղայ, անշուշտ եկած էք  
ինձ ըսելու որ մահուան պատրաստուիմ: Ամէն ժամ կ'մտածեմ  
այս պարտաւորութեանս վրայ: Յուսամ որ՝ երկու երեք օրէն  
միտքս բաւական ազատ կ'լինի որ կարենամ հաղորդ ընդունիլ:  
Աստի բարի առաքեցաք: Բայց այժմ պատրաստ չեմ:

— Իմ նպատակս այդ չէ:

— Ի՞նչ է ուրեմն:

— Բայց ձեր գրուածները ձեր կարծիքը . . . :

— Սիրելի պարոն շնորհաբաշխ, այդ ձեր ձեռնհասութեան  
չպատկանիր: Իմ վիճաբանութիւններս հռոմէական ուխտերուն  
հետ՝ իմ խոստովանաճօր հետ բնաւ վերաբերութիւն չունին,  
քանի որ կաթոլիկ գաւանդութեան վերաբերող խնդիր չէ այս:

— Սակայն յետս կոչում մը թերեւ . . . :

Ժուլիօ ոտք ելաւ, ծանր այլ անոյշ և հանդարտ կերպարան  
մը դասեց, և խօսք մ'անդամ չարտասանեց:

— Կ'ուզէի ըսել որ յետս կոչում մը . . . :

— Պարոն, պարտաւոր էիք իմ լուութեանս նշանակութիւնը  
հասկընալ:

Ողորմաբաշխն ու մեծաւորուհին քաշուեցան:

Այն ատեն՝ Պիլօրի փոքրիկ քաղքին մէջ՝ ընդհանուր ձայն մը  
ելաւ թէ Ժուլիօ արեղան հաղորդիլ կ'մերժէր և իբրև անհաւ  
ւատ մեռնիլ կ'ուզէր:

— Շատ աղէկ գուշակեր էինք, կ'կրկնէին միաբերան Աստուծոյ:

Էրկարհոնիւն ընթերցողները, թէ այս թշուառը Լուսնի մը,  
Լամնէի մը պէս պիտի մեռնէր: Եկեղեցւոյ բոլոր թշնամիք այս  
վախճանը կ'ունենան: Ահա այս ալ Աստուծոյ կողմէն կ'հարուա  
ծի, իր ծաղիկ հասակին մէջ կ'ընտրուի, և պիտի մեռնի մեղաւոր:  
Մեծաւորուհին Թէրէզը կանչել տուաւ, պատմեց անոր թէ  
Ժուլիօյի հետ ինչ ահուելի խօսակցութիւն ունեցեր էին ինքն ու  
ողորմաբաշխը, և թէ ինչպէս հիւանդը մերժեր էր իր սխալանքը  
յետս կոչել, յայանելով թէ այս բանս իր խոստովանաճօրը չէր  
վերաբերեր:

— Ա՛հ, իմ սիրելի աղջիկս, այս թշուառ մարդուն համար  
աղօթենք, ինչ գայթակղութիւն պիտի լինի եթէ առանց հաղոր  
դութեան մեր հիւանդանոցը մեռնի:

— Աստուած իմ, ինչ կ'ըսէք, մայր իմ, այնքան բարեպաշտ,  
այնքան բարի է, որ անտարակոյս իբրև քրիստոնեայ պիտի փա  
փարի մեռնելու:

— Բայց իբրև քրիստոնեայ մեռնելու համար պէտք է որ իր  
մուրումնները ժխտէ:

— Ես, մայր իմ, տղէտ աղջիկ մ'եմ, ես չկարգացի Ժուլիօ  
արեղային դիւբերը, բայց Տ . . . ի քահանայի մ'ըսաւ, երբ զինք  
տեսնելու եկեր էր, թէ կաթոլիկ եկեղեցւոյ և ոչ մի գաւանդ  
ութեան վրայ բան դրած ունի:

— Այո՛, ողորմաբաշխին ալ այդպէս ըսաւ: Բայց վերջապէս  
Պապին աշխարհական իշխանութեան գէմ է, հետևապէս հերե  
տիկոս մ'է:

— Կարծեմ թէ պէտք էր հանդարտ թողուլ այս խեղճ քա  
հանայն:

— Կ'բանադատես, կարծեմ միթէ իր կողմը պիտի բռնէ իր:

— Չեմ զիտեր թէ ինչ ըսել կ'ուզէք: Իմ խնամած բոլոր  
հիւանդներուս կողմը կ'բռնեմ:

— Լաւ, լաւ, աւելի աղէկ կ'ընես եթէ լուես և աղօթես առ  
Նօթր-Տամ աը Լուրա, անոր հողոյն փրկութեան համար:

— Պիտի լուեմ, մայր իմ:

Ողորմաբաշխին և մեծաւորուհին այցելութեան հետևեալ օրը՝

Թուլիօ աւելի անհանդիստ եղաւ : Քոյր Թէրէզն անդ էր . իր աչքն որ նշանաւոր անուշութիւն մ'ունէր , Թուլիօյի նկուն և հանդարտ աչաց մէջ կ'ընկղմէր : Այս երկարատե նայուածքը՝ խորին լուութեան մը ժամանակ , նշանակութիւն մ'ունէր , բարի կրօնաւորներն բոլոր մտատանջութիւնը , բոլոր նախազգածութիւններն և վաւարուն փափաքը կ'այտնէր :

— Թէրէզ , դու բան մը կ'ինդրես ինչէ , ըսաւ վերջապէս Թուլիօ : Այդ բարեմօյն նայուածքէդ կ'զուշակեմ : Նայինք , լաց պէտք չէ : Միտքդ կ'զուշակեմ . կ'կարծես թէ ժամանակն է , այնպէս չէ : Լաւ ուրեմն , հիմակ ուզածդ պիտի ընեմ :

— Ո՛հ , շնորհակալ եմ , ըսաւ Թէրէզ իր արասուքը սրբելով , ինչի համար բան մը պիտի ընես :

— Այո՛ , Թէրէզ , առաջ Աստուծոյ և ապա քեզի համար :

— Երթամ պիտի կոչելու հայր ողորմաբաշխը :

— Ո՛չ , զաւակս , այդ մարդն իբրև քահանայ կ'յարդեմ , բայց իմ վստահութիւնս չ'լայելեր : Խնդրեմ , շնորհ ըրէ Պօրտէր արքան կոչել տալու :

Բարի քոյրը փութաց այս յանձնարարութիւնը կատարելու : Բայց նախ իմաց տուաւ մեծաւորութիւն :

— Շատ աղէկ , կ'ըսէ մեծաւորութիւն , բայց պէտք է որ վերջին օծումն ողորմաբաշխը տայ , և հանդիսապէս իր սխալանայը վրայ դըջայ : Ապա թէ ոչ . . . :

Պօրտէր արքան եկեղեցական մ'էր որ Պիլօրի մէջ քաշուած կ'ապրէր : Տեղոյն մէկ պատուաւոր ընտանիքէն էր : Գարպի կղերանոցին մէջ փիլիսոփայութեան դաս տուեր էր : Թեմական իշխանութեան և իր մէջ վէճ ծաղկելուն՝ 1826ին Գրանսայէն հեռացեր էր : Հիւսիսային Ամերիկա երթալով վայրենի բնակիչներուն Աւետարանը քարոզեր էր : Այս ճամբորդութիւններէն դառնալով՝ հայրենի երկրին սէրը ղենքը Պիլօրի մէջ բնակելու յորդորեր էր : Քաղքին մէկ կրօնական հասարակութեան մէջ պատարագ կ'ընէր , հիւանդները կ'սոստովանեցընէր , աղքատները կ'այցելէր , քանի մը հին բարեկամաց հետ կ'տեսակցէր քաղքին մէջ , և քահանաներէն հեռու կ'իկնար :

Եթանասուն տարեկան , նրբամիտ , խոհական բնաւորութեամբ մարդ մ'էր , քիչ կ'խօսէր , և երբէք չէր դրեր : Սակայն շատ կարգացեր էր , և որ լաւադոյնն էր , աշխարհիս մէջ շատ բան տեսեր էր և լաւ տեսեր էր : Ճամբորդութիւններն իրեն շատ մեծ օգուտ բերեր էին :

Պօրտէր արքան զօրաւոր բնաւորութիւն , ինքնիշխան և անթափանցելի էր : Արտաքուստ անոր վրայ ուրիշ բան չէր տեսնուեր եթէ ոչ հըու , կանոնաւոր , իշխանութեան ակնածու քահանայ մը : Իսկ ի ներքուստ կրակոտ հոգի մը , յանդուզն իմացականութիւն , ճշմարտին խուզարկու հանձար մը կ'պահէր , որ սկեպտիկականութեան սահմանը կեցեր էր :

Շերունին՝ Թէրէզ քոյր առաջնորդութեամբ՝ քիչ ատենէն հիւանդին անկողնոյն մօտեցաւ :

Քոյրը քաշուեցաւ :

— Շատ մի հեռանար , քոյր իմ , ըսաւ Թուլիօ :

— Հայր իմ , ըսաւ նա Պօրտէր արքային , ձեզ բերել տուի : Ձեր վրայ վստահութիւն ունիմ : Ա՛զգամ որ քանի մ'օր ունիմ ևս ապրելու , թերևս քանի մը ժամ : Շատ քննեցի զիս մաշեցընող հիւանդութեանս այլ և այլ հանդամանքն ինձ սիրական անձի մը վրայ , ուստի բնաւ յոյս մը չունիմ : Եկեղեցական եմ : Աստուծոյ , առաքելական և հոռմէական եկեղեցւոյ մէջ ծնած եմ , կ'ուզեմ անոր ծոցը մեռնիլ : Ա՛հա տամ անոր վարդապետած այլ չըրած դաւանութեանց և անոնց աւանդապահը կ'ձանչեմ : Թամանակից վիճաբանութեանց խառնուեցայ , նոյնպէս կղերին մարդկային շահուց դրդուած խնդիրներուն : Պապերուն աշխարհական իշխանութեան յայտնի հակառակորդ մ'եմ : Այսօր անօգուտ , մինչև անգամ վտանգաւոր կ'զսնեմ այդ իշխանութիւնը՝ քանի որ պապութեան բարոյական ազդեցութիւնը կ'ընչէ : Ես երբէք եկեղեցւոյ մէկ դաւանութեան դէմ չեմ յարձակած , և եթէ 1854 զեկտեմբեր թիւն՝ Հուովի մէջ հրատարակուած վարդապետութեան չեմ հաւտար , պատճառն այն է որ Պապն իշխանութիւն , իրաւունք չունի եկեղեցւոյ մէջ վէճի ներքև ընկած խնդիր մը դաւանութեան վերածել , և ասկից զատ՝ իր դաւանական վէճուն ընդ-

Հանրական ժողովէն դուրս արձակեց, որ միակ ձեռնհաս է այս նիւթերու մասին, ՚ի բաց առեալ այն ստիպողական որոշումներն այնպիսի խնդրոց վրայ որ արդէն ընդհանրական ժողովներով լուծուած են: Այս բաներուս վրայ իմ խիղճս հանդարտ կ'զտնեմ: Այժմ, հայր իմ, փառասէր միաբանութեան մը դէմ սաստիկ յարձակեցայ, միաբանութիւն մ'որ Եկեղեցւոյ վրայ կ'տիրապետէ և զայն կառավարելու պաշտօնը ստանձնած է: Իմ անբաղդ քրոջս հետ յափշտակութեան զոհ ընկնելուս համար չէ որ հակառակ եմ այդ միաբանութեան այլ անոր համար որ շատ ծանր, պժղալի բաներ անսայ անոր մէջ: Անոր ոգին հարուածեցի: Իմ գրուածքս էնդէպէս ներքև ընկան: Գիտեմ որ շատ լուսամիտ էք և յուսամ որ մեղք մը չէք համարիր ինձ եթէ հռոմէական միաբանութեան մը վճիռներն առ ոչ ինչ գրեցի: Մարդկային միտքն ուր պիտի մնար եթէ անոնց մէջ անվրիպելի չափ մը գտնել կարճէր: Կարող եմ Աստուծոյ առջև երևիլ՝ հանդարտ խղճով՝ այն քահանայից նզովքով որ զիս ահիճեալ անուանեցին: Ի՞նչ կերպով պատասխանատու կրնամ մնալ կարծեցեալ գայթակղութեան մը ինչպէս որ կ'ըսեն, Եկեղեցւոյ մէջ, երբ իրենց առաջնորդաց հաւատացեալները պարտաւոր էին դիտնալ որ Եկեղեցին ամէն ժամանակ ազատ վիճաբանութեան ձգած է կասկածելի խնդիրները: Հայր իմ, հիմակ ձեր վճիռն արձակեցէք: Ըսէք ինձ թէ արդեօք ամբարտաւան մարդ, Եկեղեցւոյ դէմ ապստամբ եղայ: Ձեր առջև պիտի խոնարհիմ և պարզօրէն յետս պիտի կոչեմ այն սխալմունքս՝ ուր ընկած կրնամ լինիլ միամտօրէն:

— Ո՛չ, եղբայր իմ, վրայ բերաւ ծերունին որոշ այլ անոյշ ձայնով մը, ո՛չ, յետս կոչելու բան մը չունիս: Քեզ շատ լաւ կ'ձանչեմ, գրուածներդ կարդացեր եմ. և եթէ կաթոլիկութիւնը՝ ինչպէս որ միջին դարը շիներ էր, կարենար ազատիլ՝ քու պարզ հաւատքդ, քու ազնիւ անձնուիրութիւնդ ունեցող մարդիկ կրնային ազատել: Ձեռ գրած տող մ'որ անաչառ ուղղափառութեան գրողը չկրէ, անգրալեռնականութեան աղէտաբեր դպրոցին նախապաշարումներէն ազատ, անգրալեռնականութիւնն որ Եկեղեցին դէպ ՚ի անդունդն առաջնորդելու պաշտօնը ստանձներ է:

Անձ, եղբայր իմ, ես ալ քեզի պէս կաթոլիկութեան այս հրատապ խնդիրները քննեցի, քննեցի պապութեան, Եկեղեցւոյ հողէն իշխանութեան խնդիրները մարդկային ընկերութեանց մէջ: Այդ սոսկալի խնդիրներուն խորը մտայ, և երբ դու, վեհերասատուածաբան մը, ուղղափառութիւնը պահպանելու կ'ընայիր, և վարդապետութեան անողորբելի շրջանին մէջ փակուելով՝ բանականութեանդ չէիր ներեր նոյն իսկ Եկեղեցւոյ բնութիւնը քրննելու, նոյնպէս աշխարհի ապագայ ճակատագիրը, ես քեզնէ աւելի յանդուգն, իմ տրամաբանութեանս մէջ տելի անաչառ գտնուելով, և հանդարտ աչքով անդնոյց խորութիւնը չափելով, կ'հարցընէի իւրովի թէ այս կրօնական հիմնարկութիւններէն ի՞նչ պիտի մնան, երբոր դարերու մաղէն անցնին, և մարդկային բանականութիւնը՝ իր կատարեալ զարգացման հասնելով՝ ամէն բան լուսատու պայծառութեանց մէջ պիտի տեսնէ: Այն յիմարներն որ քեզի դէմ ատելութեամբ վարուեցան, որ քեզ հալածեցին, անիծեցին, քեզ Եկեղեցւոյ մէկ ազատարարը պիտի հռչակէին եթէ միայն կասկածէին թէ պիտի դայ որ մ'ուր բարեբաղդութիւն մը պիտի համարուի՝ քրիստոնէական նշանակին համար, որ մարդկութիւնը Քրիստոսը հռչակէ՝ իբրև իր վսեմ յայտնիչներէն մին և ճանչէ որ իր սիրոյ օրէնքը յախտնապէս անկորնչելի և զեղեցիկ օրէնքն է: Իրաւ, եղբայր, երբէք միտքդ չհասաւ մինչև այն յանդիմութեանց որ բոլոր քրիստոնէութեան երևոյթական բացասութիւնն է, և թերևս օրին մէկն անոր նուիրագործումը լինին՝ այն դիտութեանց առջև որ զԱստուած պիտի ուրանայ, պիտի ուրանայ աննիւթ հոյին և բարոյական իրաւունք ու պարտիք՝ նիւթական կենաց վայելմանց և պիտոյից շրջանէն դուրս: Ահա ասոնք եղան շատ տարիներէ՝ ՚ի վեր իմ իմացակառնութեան երկար և վշտալի հոգերը: Առաջին անգամ քեզի միայն զանոնք կ'յայտնեմ: Ի՞նչ փոյթ. քու ընթացքիդ բոլորովին ներհակ ճամբայ մը բռնեցի. դու կրօնական վիճաբանութեանց մէջ մտար, ես անկից հեռացայ. հրատարակութիւնը քեզի համար իր սքանչացումներն ու պատրանքն ունեցաւ, ես սոսկումով կ'սորջէի այն կոխներէն որ բանի մը չեն ծառայեր և որոց վախճանն

է միշտ խորտակումը տկարին որ իրուունը ունի, զօրաւորին ու  
 ախից ներքեւ որ վատ դատ մը կ'պաշտպանէ: Գու չվախեցար նշա-  
 ւակ լինելու. ես ընդ հակառակն գողի մէջ էի որ չկասկածին  
 թէ ռամկէն տարբեր կ'խորհիմ: Վասն զի գու, քու ազնիւ և  
 հպարտ սրտովդ, կարծեցիր թէ մարդիկը լուսաւորելու միջոցն  
 է ճշմարտութիւնն անոնց յայտնել, մինչդեռ փորձառութիւնն ինձ  
 սորվեցուց որ զանոնք վառող զգացման մը ներքեւ ճշմարտութիւնը  
 քողարկելով կարելի է որսալ: Ուստի, բարեկամք իմ, մարտի-  
 ըոս պիտի մեռնիս, քահանայից կողմէ գատապարտեալ, մինչդեռ  
 ես Եկեղեցւոյ ծոցը հանդարտ կ'ապրիմ, թէև զայն քեզնէ աւելի  
 խստութեամբ կ'գատեմ: Գու պատմութեան մէջ պիտի ապրիս,  
 ես չպիտի գանուիմ պատմութեան մէջ: Բայց դու պիտի գանուիս  
 ապուշ աղտերով զոր կրօնամոլութիւնը հռչակաւոր անուններու կը  
 քսէ, երբոր իմ խոհեմութիւնս չեն ունենար: Հաւատոյ ամէն  
 մեծ պատրանքը քու հետք կ'տանիս, իսկ ես իմ պատրանքս և  
 ծիրանի յոյսերս կորուսի: Իմ սոսկալի կասկածանաց լուծումը  
 թողուցի այն դերսողոյն ժամուն երբ նոր կեանք մը կ'սկսի: Քսան  
 տարիէ 'ի վեր այս հանդիստը միայն կարող եղայ գանելու: Ո՛-  
 ժուլիօ, որչափ կ'փափաքէի քեզի պէս մեռնելու: Իբրև ճշմա-  
 րիտ հաւատաւոր պիտի մարիս, և հողիդ Աստուծոյ պիտի սլա-  
 նայ՝ յուսոյ և սիրոյ հրեշտակին ձեռք: Ես արդէն կ'դողամ, իբ-  
 րև սկեպտիկեան պիտի մեռնիմ, իբրև խնդրակ ճշմարտին, որ  
 բարեբաղդօրէն հաւատ մը հաստատելու ապուշ գողութիւնը  
 չունեցաւ, բայց դժբաղդութիւնն ունեցաւ բաւական ստոյգ բաներ  
 չտեսնելու և իր մտքին ըսելու. «Հանգարտէ՛, աւասիկ ճշմար-  
 տութիւնը, նկատէ՛ զայն»: Գիտեմ որ այս լեզուն գործածելով  
 քեզի զայթակղութիւն չեմ պատճառեր. դու չպիտի մերժես այս  
 խեղճ կասկածոտը զոր իբրև հողոյդ հայրն ընտրեցիր նոյնպէս  
 իբրև մխիթարիչ ծայրագոյն ժամուն: Բայց քու մէկ եղբորդ տա-  
 ռասպանաց խոստովանութիւնն այս խնդիրներուն վրայ, որ անտա-  
 րակոյս մի և նոյն անաղորոյն մթութիւններով քու առջևդ ելան,  
 պիտի ցոյց տայ որ այս խնդիրներն ոչ միայն քու այլ ուրիշնե-  
 րուն իմացականութիւնն ալ յուզեցին: Այս փորձերուն վրայ շատ

չվշտանանք: Ձեռն կրնար թշնամանել զԱստուած: Մինչև անգամ  
 յարգական նուէրներ են որ ուղղակի անոր կ'ուղղուին: Միթէ  
 կարելի է ճշմարիտը փնտռել առանց զԱստուած փնտռելու: Ես  
 ալ իմ հողիս քու հողոցդ մէջ ահա թափեցի: Այս բաները  
 միայն հողեվարի մը կրնանք հաղորդել: Եթէ թղթի աւանդենք՝  
 այս աշխարհիս մէջ մատնուելու, և մահուանէ ետև՝ կրօնամոլ-  
 ներու ձեռք մեր ոսկորտիքը դերեզմանատունէն դուրս նետուելու  
 վտանգին կ'ենթարկինք: Իսկ նոր օրինաց դպիրներուն վճիռնե-  
 րուն և քու անուանդ դէմ իրենց արձակած նզովից դալով, դու  
 ինքնին դիտես որ ասոնք միայն բարեկարգութեան վերաբերող  
 պատիժներ են: Աստուած երբէք չգործադրեր այն բարբարոս ար-  
 դարութեան գատավճիռներն որ մինչև անգամ մտածմունքը կ'հա-  
 լածէ: Այս ամենն իր ժամանակն ունեցաւ, և եթէ այս կրօնական  
 աշխարհին մէջ այսքան կատաղութիւն կ'երևի, որ քեզ այսչափ  
 անդթութեամբ հալածեց, ապացոյց մ'է որ իր անկարողութեան  
 յետին յայտարարութեան հասած է: Ո՛չ, Աստուած բնաւ չհաս-  
 տատեց անոնց նզովքը: Ո՛չ, դու քահանայ, դու մարտիրոս,  
 բնաւ անիծեալ չես: Այս դարուս մէջ ամենէն մեծն ես, վասն  
 զի տառապեցար: Աստուած քեզ տաղանդ և աւաքինութիւն շնոր-  
 հեր էր, Եկեղեցւոյ բարձր պաշտօններու կրնայիր դիւրաւ հաս-  
 նիլ, որոց համար առ ճշմարտութեան և ներքին համուզումս զո-  
 հողութիւն մը չպահանջուէր: Այս ամենն օտնակոխ ըրիր: Գու  
 ճշմարտութիւնը սրբութեամբ սիրեցիր: Սպասէ ազատութեան,  
 որ օրինաւոր վարձք մ'է, անոր համար պատերազմողաց:

Այս տեղ քահանայն լուեց, ժուլիօ խնդրեց որ մտիկ ընէ իր  
 կենաց սխալմունքն որոց համար հողեւոր արձակում կ'փափաքէր:

Այս խոստովանութենէ և իր գլխուն վրայ արտասանուած նե-  
 րողութենէ ետքը՝ կարծես թէ ժուլիօ տեսակ մը սքանչացման  
 մէջ ընկաւ: Յանկարծ օտարական մը ժուլիօյի սենեակը կ'մտնէ  
 արտորնօք, դէպ 'ի անկողինը կ'յառաջանայ և հողեվարին ձեռքը  
 կ'բռնէ:

Քոյր Թէրեզին դէմքը սաստիկ կ'կարմրի: Ա՛կքի կ'ընկնի դամ-  
 բանական անկողնոյն ոտքը: Ժուլիօ նայեցաւ: Այս վերջին այցե-

լուն՝ կենաց վերջին բարեկեցութիւնները տրուելու ժամուն՝ Լուսինն է :  
Շտապաւ Բարեկէս եկեր էր : Իր բարեկամին նամակը , սոսկալի  
նախազգացումներ իրեն աղղեր էին :

Ժուլիո զանի կ'ձանչէ :

— Գո՛ւ ես , Լուսին :

— Այո՛ , բարեկամի իմ : Բարեբաղդ եմ որ վերստին քեզ կը  
տեսնեմ :

Ժուլիո կարծես թէ նոր ոյժ առաւ , և Լուսինն ու Թէրէզը  
զէպ իրեն քաշելով՝ ըսաւ անոնց մեղմիկ .

— Խեղճ հողիներ : Աստուած ձեզ կ'միացընէ իմ մահուան ան-  
կողնոյս մօտ : Լուսին , մտի՛կ ըրէ ինձ : Թէրէզ իր և քու յան-  
ցանքդ քաւեց ինքզինքը նուիրելով մարդկութեան որ իր անձին  
մէջ կ'տառապի : Գու , որդեակ իմ , այսուհետեւ անզայելի առիւծ  
մը մի մնար : Գեւ ևս աղւոր պաշտօն մը կայ կատարելի քահա-  
նայութեան մէջ . ամէն ջանք ըրէ այդ քահանայական պաշտօնը  
սկսելու վերստին : Մարդկութեան հողին կ'տառապի : Քահանան՝  
մինչև անգամ այն տխուր ձևապաշտութեան մէջ որով կրօնա-  
կան աշխարհը հեղձամղձուկ կ'լինի , կարող է այս հողոյն բա-  
րեք ընել : Այս աշխարհիս մէջ ամենէն ազնիւ պաշտօնն է այդ :

Այնուհետև Ժուլիո մահուան տաղնապի մէջ ընկաւ ուր կ'ե-  
րևի թէ վերջին պայքարը կ'սկսի որմէ ետքը հողին մարմնէն կը  
բաժնուի : Ապա վերստին ինքզինքին դալով՝ քոյր Թէրէզը կոչեց .

— Աղջիկս , եկուր աստ : Քիչ մը զիս վերցուր . . . կ'զգամ  
որ կ'քայքայիմ . . . : Ձիս թևերուդ մէջ բռնէ , այդ տեղ կ'ու-  
զեմ մեռնիլ . . . իմ ամենասիրելի Լուիզիս տեղը պիտի բռնես :

Ապա իր հաւատարիմ բարեկամին գրեթէ սառած ձեռքը կար-  
կառելով .

— Լուսին , շատ անգամ ըսած ես ինձ որ կեանքդ ինձ պար-  
տաւոր ես : Յիտալիա՛ գու ալ իմ կեանքս աղատեցիր : Սակայն  
դեռ բան մը կ'պահանջեմ քեզնէ : Հողիդ կ'ուզեմ Աստուծոյ ըն-  
ծայել անոր առջևն ելնելով : Մնաս բարեաւ . . . բարի է . . .  
շատ բարի է անոր հաւտալը :

Եւ թեթև շունչ մը՝ անոյշ հովի մը սկս՝ հողեվարին դունատ

շուրթերէն թուելով քոյր Թէրէզին երեսն անցաւ . . . Ժուլիո  
կ'մարէր :

Իր կերպարանն այլափոխեցաւ , իբրև հողոյն ցոլացմամբ որ  
մարմնէն կ'հեռանայ և յաւիտենականութեան սեմին վրայ ճշմար-  
տութիւնը կ'տեսնէ :

Քահանայն՝ այս մեծ տեսարանիս ականատես՝ Ժուլիոյի գէմքին  
վսեմ երևոյթէն ապշելով՝ վերջին օրհնութիւն մը տուաւ և ծունր  
զննելով՝ զոչեց .

— Օրհնեալ է անունդ , Տէ՛ր : Գու միայն ես արդար : Յաւի-  
տենական խաղաղութիւն շնորհեցիր ԱՆԻԾԵԱԼԻ՛ն :

ՎԵՐՁ



# ՅԱՆԿ ԳԼԽՈՅ

## ՄԱՍՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

### ՄԵԾ ԹԱՏԻԸ. ՄԵԾ ՊԱՅԻՍԱՐԸ

	Երես
Ա. Լուիզ 'ի Բարիզ . . . . .	3
Բ. Ազատ երկիր . . . . .	8
Գ. Գարձեալ մարդաստանութիւն մը . . . . .	15
Դ. Կաթողիկոսութիւն և Ազատութիւն . . . . .	32
Ե. Քահանայական զնչուներ . . . . .	34
Զ. Նախ զըսարտեցէք . . . . .	40
Է. Մարիօն լա Շանայիզ . . . . .	47
Ը. Սպասարկու սարկաւազը . . . . .	59
Թ. Սէնդ-Էօստաշի բանախօսութիւնք . . . . .	63
Ժ. Երեկոյթ մ'ի տուն տիկին Գիւրապէլի . . . . .	68
ԺԱ. Քահանայից ամուսնութեան խնդիրը . . . . .	74
ԺԲ. Լուսէրի դատաւարութիւնը . . . . .	82
ԺԳ. Խզեալ բարեկամութիւն մը . . . . .	87
ԺԴ. Տեսարան մ'ի տուն Պարամինոս Եպիսկոպոսի . . . . .	90

## ՄԱՍՆ ՈՒԹԵՐՈՐԴ

### ՈՂՋՍԿԷՋԸ

Ա. Եպիսկոպոսական զիւանադիտութիւն . . . . .	100
Բ. Բարի՛զ, Բարի՛զ . . . . .	103
Գ. Պապերուն աշխարհական իշխանութեան զիրքը . . . . .	108
Դ. Կայծակը . . . . .	113
Ե. Քահանայ մարդը . . . . .	124
Զ. » » . . . . .	124
Է. Լիմույի կրօնագումար ժողովը . . . . .	132
Ը. Վի՛շտ . . . . .	144
Թ. Կարտինալի խոյր մը . . . . .	150
Ժ. Վերջին հալածանքը . . . . .	160
ԺԱ. Գանբանի հովտին մենակեացը . . . . .	163
ԺԲ. Ժուլիօյի վերջին էջերը . . . . .	169
ԺԳ. Ժուլիօյի նամակն առ Լուսէր . . . . .	175
ԺԴ. Պիլօրի հիւանդանոցը . . . . .	178

1655  
1656  
1657  
1658

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0835312

